

**ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ
ՈՒ
ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՎԻԼՍՈՆԻ
ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃԻՌԸ.
քննական հայացք 100-ամյա հեռավորությունից**

Երևան
Լուսակն
2020

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Ս 410

Հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհուրդը

Առաջաբանի ու վերջաբանի հեղինակ և խմբագիր՝
պատմագիտության դոկտոր **Գևորգ Ս. Խուրդինյան**

Հեղինակներ՝

պատմագիտության դոկտորներ **Արմեն Յ.Մարուքյան, Սամվել Ա.Պողոսյան, Արարատ Մ.Հակոբյան, Գայանե Գ.Մախմուրյան, Խաչատուր Ռ.Ստեփանյան**
պատմագիտության թեկնածուներ **Լիլիթ Հ.Հովհաննիսյան, Արամ Ս.Սայիյան, Քրիստինե Ֆ.Մելքոնյան**

Ս 410 ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ՈՒ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՎԻՍՈՆԻ ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃԻՐՈՇ. քննական հայացք 100-ամյա հեռավորությունից,
հեղ. Ա. Յ.Մարուքյան, Ս.Ա. Պողոսյան, Ա.Մ. Հակոբյան և ուրիշներ,
խմբ. Գ.Ս. Խուրդինյան, Երևան, «Լուսակն» հրատ., 2020, 252 էջ:

Պատմագետների մեծ խմբի գիտական պրպտումների արդյունքում ստեղծված այս կոլեկտիվ աշխատությունը Սևրի պայմանագրի ու Հայաստան-Թուրքիա միջպետական սահմանի մասին ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռի քննական վերլուծության փորձ է, որը ձեռնարկվել է Հայաստանի ու հայության համար ուղենշային նշանակություն ունեցող այդ իրադարձությունների 100-ամյակի հերոսական ու ողբերգական տարում: Քաղաքական կապանքներից զերծ և քննական պատմագիտության լավագույն ավանդույթներով շարադրված այս աշխատությունը նախատեսված է մասնագետների և պատմությամբ ու քաղաքականությամբ հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-882-90-1

© «Լուսակն» հրատ., 2020

*Նվիրում ենք 2020 թվականի աշնան դաժան արհավիրքի օրերին
իրենց կյանքի գնով Արցախի հայությանը ցեղասպանությունից
փրկած 18-20 տարեկան շարքային զինվորների պայծառ
հիշատակին, որոնց անօրինակ սխրանքը հավերժ կմնա
հայ ժողովրդի հիշողության մեջ*

Աշխատությունը լույս է տեսնում
Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության
Ազգային կենտրոնական վարչության անդամ դոկտոր
Ժիրայր Պասմաճյանի և տիկին Հասմիկ Պասմաճյանի
հովանավորությամբ

Առաջաբան

Սևրի պայմանագրի ու Հայաստան-Թուրքիա միջպետական սահմանի մասին ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռի 100-ամյակի տարում անցյալն ու ներկան այնպես միախառնվեցին իրար, որ մենք բախվեցինք ոչ միայն Թուրքիայի քաղաքական հակազդեցությանը, այլև պատերազմի միջոցով մեզ կրկին հայրենագրկում պարտադրած թուրք-ադրբեջանա-ահաբեկչական դաժան ռազմարշավի փաստին:

Այսօր, երբ արդեն ծանր հարվածներ ենք ստացել 1920-ականների «մուրճն ու սալը» հիշեցնող՝ ավելի բարդ ու բազմազուլխ ուժի բևեռներից, հարկավոր է նոր հայացք նետել 100-ամյա հեռավորություն ունեցող իրադարձություններին՝ անցյալի ու ներկայի խորքային կապն ու փոխպայմանավորվածությունը բացահայտելու համար: Որովհետև տիպաբանորեն նույնական թվացող զարգացումները տարբեր դարաշրջաններում ծավալվում են ազդող ու հակազդող ուժերի այլ հարաբերակցության հիման վրա: Այդ պատճառով անավարտ գործընթացի համատեքստում քննության առնվող պատմության դասերը, տեղափոխվելով ներկա իրողությունների հարթություն, մեր եռացող ազգային ինքնագիտակցությունը մոտեցնում են այն **բիֆուրկացիոն կետին**, որտեղ կուտակվել են ինչպես անցյալի հանդեպ ցավագին վախեր, այնպես էլ նոր հնարավորությունների ուրվագծեր: Նման պայմաններում մեր ազգային-պետական համակարգի անկայունության մեծացումը նրա կարգաբերման ավելի բարձր մակարդակին հասնելու հնարավորություն է ստեղծում, քանզի թույլ է տալիս ազատվել այն պարզունակ-զավառական մտակաղապարներից, որոնց միջոցով մինչ օրս գնահատում ենք մեզ շրջապատող աշխարհը:

Բայց անցյալի դասերը ներկայի ոսպնյակով ընկալելու մեր ունակությունը պարզ կդառնա միայն այն ժամանակ, երբ պատմության վերընթերցման միջոցով խորությամբ կհասկանանք նախկին ու ներկա անհաջողությունները միավորող՝ **պետականորեն ինքնակազմակերպվելու** խրոնիկ անկարողության պատճառները: 1920 թվականին մեր պետական օրգանիզմը նոր էր միայն ձևավորվում, ուստի նրան մատուցված՝ Սևրի շքեղ տեսլականը հիմնականում քաղաքական ընտրախավի երազանքն էր, իսկ 2020 թվականին մենք ունեինք ազատագրված հող, որը շուրջ քառորդ դար գրեթե անմշակ թողնելուց հետո նորից հանձնեցինք թշնամուն: Ուստի եթե մեր կորուստն արժեք է մեզ համար, ապա դրա մեծության գիտակցումից բխող անսահման ցավը թույլ կտա **գրքային պատմությունն անցկացնել ապրված**

պատմության միջով և դրանց տարածամասնակյա հատույթում ուրվագծել ցանկալի ապագայի հեռանկարները:

Սևրի պայմանագիրն ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը մեր իրավունքների ճանաչումն էին՝ առանց դրանց իրացման գործուն աշխատակարգերի, որոնք ինքներս պետք է ստեղծեինք սեփական բանակի ուժերով: Քանզի դրանցից մոտ մեկ տարի առաջ Պողոս Նուբարը վստահելի մարդու միջոցով հասկացրել էր ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանին, որ իրենից ակնկալվող **փաստաթուղթը** կարող է **ազատագրված հողի** վերածվել միայն «իսկական արժեք» ներկայացնող բանակի միջոցով: Բայց քանի որ նոր միայն ստեղծված այդ բանակը, փաստորեն, դեռևս մերը չէր՝ ազգային սպայակազմի ու կանոնավոր զորքի փոքրաթիվ լինելու պատճառով, 1920 թ. աշնանը օտար ու թշնամական ուժերը, առանց մեծ դժվարության, գտան նրա քայքայման ուղիներն ու աշխատակարգերը: Իսկ ինչո՞վ բացատրել պետության ու նրա առանցքային կառույցների՝ 1920 թվականի միանգամայն հասկանալի թուլության ու խոցելիության՝ 2020 թվականին նույնպես պահպանվելու իրողությունը: Միգուցե մեզանում խոր արմատներ գցած օտարամոլության համախտանիշո՞վ, ինչը՝ հերոսաբար կռվող զինվորներին լքած մեր «պարոնայք սպաներին» կրկին դարձրեց օտարի խաղալիքը, բայց այս անգամ նրանց մեջ չգտնվեց Մագանովի նման մեկը, ով կարող էր **պատիվ ունենալ** սերունդների առաջ:

Օտարին սիրելը, անշուշտ, վատ բան չէ, սակայն սիրո քաղաքականացումը մահացու մեղք է, սեփական մարմինը, տվյալ դեպքում՝ հայրենիքը հանձնելու եղանակ: Բայց բոլոր նրանք, ովքեր 2020 թվականին կրկնեցին իրենց բուլշևիկ նախահայրերի 1920 թվականի դավաճանությունը, այսօրվանից պետք է գիտակցեն, որ ակնհայտորեն սխալ գնորդ են ընտրել իրենց վաճառելու համար: Գլոբալ ու տարածաշրջանային ուժերի այն ժամանակավոր համադրությունը, որի արդյունքում մենք հայտնվեցինք Լոնդոնի ու Երուսաղեմի օրհնությունը ստացած՝ նոր Լենին-Աթաթուրք գործարքի **նավթաբույր աքցանի** մեջ, արագորեն փլուզվում է տարեվերջյան բարենպաստ քամիների ազդեցությամբ: Ուստի երբ Լենինի ու Աթաթուրքի գործի ժառանգորդները նորից սկսում են կասկածանքով նայել իրար և հավատարմության երդումներ կորզել մեկը մյուսից, ոչ միայն Արցախը, այլև Հայաստանի Հանրապետությունը սակարկման առարկա դարձնող նրանց հեռահար ծրագիրը դիվանագիտորեն ամրագրելու փորձերը տեղապտույտ են ապրում: Անկախ Հայաստանն՝ իբրև մեր ազգային կամքի կենտրոն, օգտվելով բարենպաստ դարձող իրավիճակից, կարող է վերջնականապես կոտրել անցած ամիսների բացասական զարգացումների շղթան՝ հավա-

տարին մնալով ոչ միայն Արցախի ազատագրման խնդիրն, այլև հայկական հողերի վերամիավորման սերյան առաջադրանքին :

20-րդ դարի դասական աշխարհաքաղաքականության չափորոշիչներով Սևրի պայմանագիրն ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը ծովային աշխարհաքաղաքական ազդակի՝ մայրցամաքի խորքը թափանցելու՝ իրական ուժերով չամրապնդված հայտեր էին, որոնք պետք է ավարտվեին Արարատի գագաթը բարձրանալու անկարողության մասին խոստովանությամբ, քանի որ ռուս-թուրքական «մուրճի ու սալի» արանքում հայտնված Հայաստանին օգնելու անկեղծ ցանկություն չկար: Իսկ 2020 թ. աշնանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ձեռնարկված ագրեսիան, այդ նույն գլոբալ ուժի լոնդոնյան թևի ջանքերով «մուրճի ու սալի» միջև ձեռք բերված **ժամանակավոր ու խախուտ** համաձայնության արդյունքն էր: Մինչդեռ՝ ԱՄՆ նախագահական ընտրություններից հետո օվկիանոսից այն կողմ տեղափոխվող գլոբալ կամքի կենտրոնի համար անընդունելի են ոչ միայն 1921 թ. Մոսկվայի ռուս-թուրքական գործարքը հիշեցնող փաստաթղթերը, այլև 1923 թ. Լոզանի պայմանագրով ազատ ու անազատ աշխարհների միջև հաստատված սահմանագիծը: Ուստի անազատ աշխարհի սահմանապահը դարձած ԽՍՀՄ իրավահաջորդը զգում է իր ազդեցության գոտիների մոտալուտ կորստյան վտանգը, իսկ Թուրքիա կոչվող հին հանցագործն արդեն մտածում է իր հին տերերի մոտ վերադառնալու մասին: Արդեն տեսանելի ապագայում քաղաքակրթական նոր համախմբումների փնտրտուքը փոխադարձ ապահարզանի մասին մտածող այս **աշխարհաքաղաքական դինոզավրերի** փոխարեն բացելու է առաջընթացը քաղաքակրթորեն ընկալելի դարձնող կենսունակ **կաթնասունների** ճանապարհը: Ուստի թող ժամանակից շուտ չոգևորվեն անցյալի կարոտախտով տառապողները. ո՛չ ԽՍՀՄ-ի նման որևէ լուրջ ինտեգրացիոն միավորման վերականգնում է լինելու, և ո՛չ էլ Մեծ Թուրան է ստեղծվելու, քանզի 1920 թ. Սևրի պայմանագրով ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռով ձևակերպված ազատ աշխարհի հաղթարշավի բանաձևն անպայման տեղափոխվելու է մեր տարածաշրջան:

Ամբողջ խնդիրն այն է, թե մենք՝ որպես ազգ ու պետություն, որքան կօգտվենք դրանից: Մնալով «դինոզավրերից» մեկի գրպանում՝ հնարավոր է՝ վերածվենք անպետք ու ճնրթված թղթի կտորի, քանզի Ռուսաստանին զսպելու քաղաքականությանը զուգընթաց՝ տարածաշրջանի փոքր երկրների միջոցով հունավորվող՝ Թուրքիային զսպելու քաղաքականության ծավալման հետևանքով առաջիկայում Հունաստանը, Կիպրոսը, Իրաքի կազմում ընդգրկված ինքնավար Քուրդիստանը և անգամ Սիրիան ու Վրաստա-

նը վերածվելու են Սևրի քարտեզի վերաբացման գործընթացի ակտիվ սուբյեկտների: Իսկ արդեն Կրեմլի դարպասները բախող՝ Ռուսաստանի նոր ընտրախավը, որը չի թաքցնում հայ ժողովրդի հանդեպ իր համակրանքը, անպայման վերհիշելու է այն իրողությունը, որ Սևրի պայմանագրով Հայաստանի Հանրապետության սուվերենությանը հանձնված հողերն Առաջին աշխարհամարտի ընթացքում ռուս զինվորի ձեռամբ Թուրքիայից խլված այն տարածքներն են, որոնց ազատագրման համար իրենց նախնիների թափած թանկագին արյունը ջրի է վերածվել լեռնիների ու ստալինների կողմից: Ուրեմն տարածաշրջանում սկիզբ առած մեծ փլուզումների նախնական հանգրվանում ուրվագծված Թուրքիայի կրկնակի խաղի հնարավորությունները միջնաժամկետ հեռանկարում չեն կարող խոչընդոտել Հայկական հարցի անխուսափելի վերաբացմանը: Դրան պատրաստ լինելու համար մենք պետք է 100-ամյա հեռավորությունից նոր քննական հայացք նետենք անցյալին, որպեսզի բացահայտենք այն **կրկնվող օրինաչափությունները**, որոնց բախվելու ենք տեսանելի ապագայում:

Առաջնորդվելով այդ նպատակադրմամբ՝ պատմագետների կարող ուժերից կազմված **հեղինակային խումբը**, որը նախածեռնել է ներկա կոլեկտիվ աշխատության ստեղծումը, ամենևին էլ չի զբաղվել պատմության հանրահայտ փաստերի վերաշարադրմամբ: Դրանց վրա նստած փոշու հաստ շերտի տակ հեղինակները փնտրել են անցյալում թաքնված իմաստներ ու օրինաչափություններ, որոնց խորքային ընկալման կարիքն ունի հայոց նոր սերունդը:

Աշխատության շարադրանքը սկսելով Հայկական հարցի ձևավորման ու անցած ուղու վերաբերյալ համառոտ ակնարկով՝ հեղինակները ցույց են տալիս, որ Հայկական հարցի նախնական սուբյեկտը պաշտոնական գրագրության մեջ ու քարտեզներում Հայաստան (Արմենիա կամ Էրմենիստան) կոչվող երկիրն էր՝ Արևմտյան Հայաստանը: Միայն Հայկական հարցի միջազգայնացումից հետո է Թուրքիան փոխել այդ երկրի անվանումը՝ նախ՝ Արմենիա-Էրմենիստանը քարտեզներից ջնջելու և ապա՝ նրա բնակչությանը ֆիզիկապես ոչնչացնելու համար: Բայց շնորհիվ այն իրողության, որ նախքան Սևրի պայմանագիրն ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռն ընկած՝ ավելի քան 40-ամյա ժամանակահատվածում միջազգային դիվանագիտության փաստաթղթերում ամրագրվել է Արևմտյան Հայաստանում ապագա հայկական պետության իրավական կարգավիճակի ու տարածքային-աշխարհագրական ընդգրկման վերաբերյալ պատկերացումների ողջ հոլովույթը, յուրաքանչյուր ընթերցողի մոտ հարց է ծագում՝ իսկ ո՞ր

անհետացավ այն Արմենիա-Էրմենիստանը, որը գտնվում էր նախկին Օսմանյան կայսրության տարածքում:

Ապագա հայկական պետության իրավական կարգավիճակի ու տարածքային-աշխարհագրական ընդգրկման վերաբերյալ ստեղծված դիվանագիտական ահռելի գրագրության քննությունը վկայում է, որ 1878-1920 թթ. նրա համար միջազգայնորեն ամրագրված բարենորոգումների կամ ինքնավարության պահանջները Հայաստանի (Արևմտյան Հայաստանի) ու նրա ժողովրդի իրավունքների փաստացի ճանաչման քայլեր էին, որոնց հիման վրա մշակվեց Առաջին աշխարհամարտում հաղթանակած տերությունների ներկայացուցիչների՝ 1920 թ. ապրիլին Սան Ռեմոյում ընդունած որոշումը՝ մասնակիորեն ճանաչված, բայց ցեղասպանության հետևանքով իր բնակչության մեծ մասից զրկված երկիրը 1918 թ. Հարավային Կովկասում ստեղծված Հայաստանի Հանրապետությանը միավորելու մասին: Դրանով Սան Ռեմոյի կոնֆերանսը դարձավ ոչ միայն Սևրի պայմանագրի, այլև Վ. Վիլսոնի իրավարար վճռի քաղաքական մեկնակետը: Իսկ Սևրի պայմանագրի վավերացված չլինելու իրողությունից ամենևին էլ չի բխում, որ դրանում ամրագրված՝ Հայաստանի ու հայության իրավունքները կորցրել են իրենց ուժը: Իրականությունն այն է, որ առ այսօր դրանք այդպես էլ մնացել են արևախա:

Աշխատության հեղինակները առարկայական փաստերով ցույց են տալիս, որ Հայաստան-Թուրքիա սահմանի հարցով իրավարարությունը մեկնարկել է դեռ Սևրի պայմանագրի ստորագրումից ամիսներ առաջ, և Սան Ռեմոյի կոնֆերանսի որոշումը միջազգային-իրավական միանգամայն ինքնուրույն գործընթացի սկիզբ էր մի կողմից Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի՝ որպես հաղթող դաշնակիցների քառյակի և մյուս կողմից ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի միջև, ով, ի պատասխան իրեն ուղղված 1920 թ. ապրիլի 25-ի պաշտոնական առաջարկի, արդեն 1920 թ. մայիսի 17-ին տվել էր այդ առաքելությունն իրականացնելու իր համաձայնությունը: Ընդ որում, Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի պնդմամբ հենց Սան Ռեմոյում է տեղի ունեցել, այսպես կոչված, **Մեծ Հայաստանի** ստեղծման նախնական նախագծի փոխարինումը **Փոքր Հայաստանի** ծրագրով, քանի որ Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքի ի հարցը դուրս է բերվել հայ-թուրքական սահմանագծման միջազգային իրավարարի իրավասություններից: Որովհետև Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի դիրքորոշումների հիմքում շարունակում էին մնալ Ասիական Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի բաժանման վերաբերյալ Ռուսաստանի հետ ստորագրած գաղտնի համաձայնագրերը: Տարբերությունն

այն էր, որ նշված տարածքներն արդեն ոչ թե անցնելու էին պատերազմից դուրս եկած Ռուսաստանին, այլ միացվելու էին Հայաստանի Հանրապետությանը: Ղա ցույց է տալիս, որ՝

ա) բացարձակապես անհիմն է ներկայումս օտար քաղաքագիտական շրջանակներում պահպանվող այն տեսակետը, համաձայն որի՝ Սևրի պայմանագիրն ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը Մեծ Հայաստանի ստեղծման հայկական առավելապաշտական ծրագրերի մարմնացումն էին,

բ) գաղտնի պայմանագրերով Ռուսաստանին վերապահված տարածքների անցումը Հայաստանի Հանրապետությանը ապահովում էր Օսմանյան Հայաստանի (Արևմտյան Հայաստանի) և Ռուսական կայսրության տարածքում իր անկախությունը հռչակած Հայաստանի (Արևելյան Հայաստանի) վերամիավորումը:

Հեղինակային խումբը, անցնելով Սևրի պայմանագրի բովանդակային քննությանը, հողված առ հողված ներկայացնում է Հայաստանին ու հայությանը տրված բոլոր իրավունքները՝ հայրենիքի նկատմամբ իրավունքի վերականգնումից մինչև անհատական ու գույքային իրավունքներ: Բացահայտվել են նաև Սևրի պայմանագրի՝ պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն նախատեսող հողվածները, որոնք իրավական հիմք էին ստեղծում Թուրքիային պատասխանատվության ենթարկելու համար՝ առանց գործածելու ավելի ուշ շրջանառված «ցեղասպանություն» հասկացությունը: Հեղինակները սպառնիչ պատասխան են տալիս նաև Սևրի պայմանագրի՝ իբր Լոզանի պայմանագրով փոխարինման մասին պատմագիտական հին ձեռնածությանը՝ մանրամասն ներկայացնելով ինչպես Սևրի պայմանագիրը վերանայելու 1921 թ. ձախողված փորձը, այնպես էլ դրա հարաբերակցությունը Լոզանի պայմանագրի հետ:

Ուշագրավ են հատկապես ամերիկյան գաղտնագերծված արխիվների լայն օգտագործմամբ իրականացված՝ Հայաստանի սահմանների հարցով Վ. Վիլսոնի կոմիտեի գործունեության ու նրա ներկայացրած գեկուցման հանգամանալից քննությունը և դրա հիման վրա ձևակերպված իրավարար վճիռի միջազգային-իրավական լեգիտիմության փաստարկված հիմնավորումը: Ի տարբերություն Սևրի պայմանագրի 89-րդ հողվածի, որով Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի հստակեցման հարցը թողնվել էր ԱՄՆ-ի՝ որպես պետության որոշմանը, Սան Ռեմոյի կոնֆերանսը հայ-թուրքական սահմանի գծման առնչությամբ դիմել էր ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին՝ առաջարկելով նրան դառնալ իրավարար: Միջազ-

գային իրավունքի տեսանկյունից տարածքային վեճերում յուրաքանչյուր պետություն առաջնորդվում է իր շահերով: Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նկատում են սույն աշխատության հեղինակները, Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի որոշման հարցը իրավական տեսանկյունից եղել է ոչ թե ԱՄՆ-ի՝ որպես պետության, այլ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի՝ որպես **միջազգային իրավարարի** իրավասության ներքո: Այսինքն՝ Սան Ռեմոյի կոնֆերանսի ընդունած՝ դաշնակից ուժերի Գերագույն խորհրդի որոշումն ու դրանից բխող դիմումը ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին և վերջինիս հրապարակած իրավարար վճիռը բացարձակապես անխոցելի են իրավական տեսանկյունից և անբեկանելի ու անժամանցելի՝ գործադրման ժամկետների առումով:

Զբավարարվելով Սևրի պայմանագրի ու Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի բովանդակային քննությամբ՝ աշխատության հեղինակները մանրամասն ներկայացնում են այդ փաստաթղթերի վերաբերյալ առանձին տեղությունների դիրքորոշումներն ու մանավանդ Խորհրդային Ռուսաստանի հետևողական պայքարը՝ Սևրի պայմանագրի տապալման համար: Նորահայտ փաստերի միջոցով ցույց են տրվում նաև Հայկական հարցը քրդական հարցով հակակշռելու և ապա դրանք միավորելու, իսկ վերջում երկուսն էլ զոհաբերելու Մեծ Բրիտանիայի քաղաքականության բարդ հոլովույթի նրբերանգները:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի Հայ Ղատի հետապնդման գործընթացում Սևրի պայմանագրի ու Վ. Վիլսոնի իրավարար վճռի արժարժույթների շուրջ 100-ամյա պատմության համառոտ քննությունը սույն աշխատության հեղինակների կողմից, որն իրականացվել է ինչպես սփյուռքահայ քաղաքական մտքի, այնպես էլ Սփյուռքի տարբեր կառույցների քաղաքական ձեռնարկների հետազոտության միջոցով: Անշուշտ, այդ պայքարի բոլոր հանգրվանները պատշաճ կերպով ներկայացված չեն այս կոլեկտիվ աշխատության մեջ: Դեռ լուրջ խնդիրներ կան, մանավանդ 1970-1980-ական թվականների Զինյալ պայքարի պատմության բացահայտման առումով, բայց դա նախ առանձին ու հատուկ ուսումնասիրության և ապա միայն պատմության ընդհանուր հյուսվածքի մեջ ներառվելու կարիք է զգում:

Վերջում հեղինակային խմբի կողմից հետազոտության են ենթարկվում նաև Հայաստանի անկախության վերականգնումից՝ 1991 թվականից հետո, Սևրի պայմանագրի ու Վ. Վիլսոնի իրավարար վճռի կիրառման իրավաքաղաքական հնարավորությունները: Հայ դիվանագիտության ու հայկական Սփյուռքի առջև բացվող հեռանկարների համառոտ քննութ-

յամբ հեղինակներն ավարտում են կոլեկտիվ աշխատությունը՝ հետագա եզրակացությունների ասպարեզ բացելով Հայ Ղատի պայքարը շարունակող նոր սերնդի համար: Իսկ վերջինիս գաղափարաքաղաքական համառ փնտրտուքը հունավորելու համար այդ հեռանկարների նախնական ուրվագծերը ներկայացվում են **իրավունքի ուժ** և **ուժի իրավունք** հակաթեզի վրա կառուցված վերջաբանում:

Գլուխ առաջին

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ՝

Սան Ստեֆանոյի պայմանագրից մինչև Սան Ռեմոյի կոնֆերանս

Մուտք

Հայկական հարցի ձևավորումից մինչև նրա քաղաքական լուծման սկզբունքները բանաձևած Սևրի պայմանագիրն ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռն ընկած ավելի քան 40-ամյա ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանում ապագա հայկական պետության իրավական կարգավիճակի ու տարածքային-աշխարհագրական ընդգրկման վերաբերյալ միջազգային դիվանագիտության պատկերացումների հուլովույթը համակողմանի քննության կարիք ունի:

Այդ ընթացքում ընդունված բարենորոգումների տարբեր նախագծերում, ինչպես նաև ստորագրված ու վավերացված միջպետական համաձայնագրերում **Հայաստան (Արմենիա)**¹ երկրանունով բնորոշված Արևմտյան Հայաստանում հայկական ինքնավար կամ անկախ պետության սահմանների շուրջ միջազգային դիվանագիտության դիրքորոշումները ամբողջական պատկերացում են տալիս մեր ժողովրդի քաղաքական ձգտումների միջազգային ընկալումների վերաբերյալ:

Հայկական հարցը միջազգային դիվանագիտության քննարկման առարկա դարձավ Սան Ստեֆանոյի կոնֆերանսում ու Բեռլինի կոնգրեսում ընդունված միջազգային համաձայնագրերում: Այն առաջ քաշվեց արևմտահայության վիճակը բարելավելու, նրա անվտանգությունը երաշխավորելու և քաղաքական ու իրավական որոշակի կարգավիճակ ապահովելու նպատակով: Հայկական կողմի սկզբնական ձգտումներն ուղղված էին Հայաստանի ինքնավարությանը, ինչն ի վերջո կհանգեցներ անկախության: Օրինակ էր ծառայում բալկանյան երկրների կամ Լիբանանի հաջողված փորձը: Սակայն տվյալ պատմաշրջանում մեծ տերությունները, մրցելով Օսմանյան կայսրությունում իրենց ազդեցության ամրապնդման համար, դեմ էին ար-

1 Մինչև 1918 թվականը միջազգային դիվանագիտության կողմից Հայաստանը (Արմենիա) Արևմտյան Հայաստանի հետ նույնացնելու իրողությունը վկայում է, որ նախքան Հարավային Կովկասում ձևավորված Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը տվյալ երկրի տիտղոսը կրող ազգի իրավունքների իրացման խնդիրը միջազգային իրավունքի դաշտում էր, ուստի Հայոց ցեղասպանության իբրև պատմական փաստի անհերքելիությունը և Սևրի պայմանագրի ու Վ. Վիլսոնի իրավարար վճռի առկայությունը վկայում են այդ իրավունքի իրացման խնդրի **անժամանցելիության մասին:**

տահայտվում Հայաստանի ինքնավարությանը կամ անկախությանը: Նրանք լավագույն դեպքում հույս ունեին սուլթանին ստիպելու որոշակի բարենորոգումներ իրականացնել իր տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում, քանի որ մինչև Առաջին աշխարհամարտը Օսմանյան կայսրության մասնատման փոխհամաձայնեցված ծրագրեր չու-
նեին: Ուստի եվրոպական տերությունները Հայկական հարցին անդրադառ-
նում էին միայն սեփական տնտեսական ու քաղաքական արտոնություն-
ներն ապահովելու, ինչպես նաև հայկական բարենորոգումներով Ռուսաս-
տանի միջամտությունը և հայկական նահանգների գրավումը կանխելու
նպատակով: Իր հերթին Ռուսաստանը դեմ էր Հայաստանի ինքնավարու-
թյանը, որով կարող էր փակվել դեպի հարավ իր նվաճումների ճանապարհը,
ինչպես նաև այն կարող էր «վատ օրինակ» ծառայել արևելահայության հա-
մար: Մյուս կողմից՝ նրան ձեռնտու չէին նաև բարենորոգումները, քանի որ
արևմտահայերի ծանր վիճակը միշտ կարող էր հնարավորություն տալ մի-
ջամտելու օսմանյան պետության ներքին գործերին: Բայց եթե մինչև Առա-
ջին աշխարհամարտը մեծ տերությունները դեմ էին արտահայտվում
Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարին, ապա իրավի-
ճակը սկսեց փոխվել մեծ պատերազմին Անտանտի տերությունների նա-
խապատրաստության ընթացքում և նրանց դեմ Թուրքիայի հանդես գա-
լու հետևանքով:

1. Հայաստանի (Արևմտյան Հայաստանի) սահմանների ու կարգավիճակի միջազգային-քաղաքական ընկալումները 1878-1895 թթ.

19-20-րդ դարերում հայ հասարակական-քաղաքական մտքի որո-
նումների և հերոսական ու զոհաբառ հայ ազգային-ազատագրական
պայքարի թելադրանքով շուրջ 40 տարվա ընթացքում բյուրեղացել է Հայ-
կական հարցի առարկայի՝ Արևմտյան Հայաստանի ազատագրության
խնդրի քաղաքական բովանդակությունը: Այդ ճանապարհին ծրագրային
մակարդակով շարունակաբար բարձրացվել է ապագա ազատ Հայաս-
տանի քաղաքական կարգավիճակը՝ բարենորոգումներից մինչև ինքնա-
վարություն և անկախություն, իսկ մյուս կողմից զգալիորեն սահմանա-
փակվել են նրա սահմանների վերաբերյալ նախնական և դեռևս ոչ
հստակ պատկերացումները:

Ի սկզբանե հայ գործիչների գլխավոր նպատակն ու նաև երազանքը
պատմական Մեծ ու Փոքր Հայքերի, ինչպես նաև Կիլիկիայի միավոր-

մամբ լայնարձակ Հայաստանի ստեղծումն էր: Այդ ընդհանուր տեսլականի կենսունակությանը նպաստում էր նաև այն հանգամանքը, որ պատմականորեն հայկական համարվող այդ տարածքների մեծ մասում մինչև Հայոց ցեղասպանությունը հայերը կազմում էին բնակչության մեծամասնությունը: Մեծ եղեռնի հետևանքով հայկական տարածքների զգալի մասն ամբողջությամբ հայաթափվեց, իսկ մեծ տերությունները, փաստացի կերպով օրինականացնելով թուրքերի իրականացրած աննախադեպ ծանր հանցագործությունը, Առաջին աշխարհամարտի արդյունքներն ամփոփելիս որոշեցին Հայաստանի Հանրապետությանը հանձնել Արևմտյան Հայաստանի տարածքների մի մասը միայն: Այսինքն՝ Հայոց ցեղասպանության հետևանքով ծովից ծով Հայաստանի և անգամ վեց վիլայեթների երազանքից մնաց միայն Վիլսոնի սահմանագծած Հայաստանը: Ուստի պատմական ու քաղաքական Հայաստանների անհամապատասխանության փաստի հիման վրա այսօր էլ մեր որոշ հարևանների կողմից միջազգային դիսկուրսում հայերին վերագրվող առավելապաշտության (մաքսիմալիզմի) մասին շահարկումները մանրակրկիտ քննության կարիք ունեն Հայկական հարցի պատմության ընկալման դիաքրոնիկ ու սինքրոնիկ հարթություններում: Դրանք խիստ անհրաժեշտ են մանավանդ Սևրի պայմանագրի 100-ամյակի օրերին՝ ողջ աշխարհին ցույց տալու համար այն անհերքելի իրողությունը, որ իրականում այդ պայմանագրում ամփոփված էր ոչ թե մեծ, այլ փոքր Հայաստանի տեսլականը: Ուստի մինչև Սևրի պայմանագիրը Հայկական հարցի՝ շուրջ չորս տասնամյակ տևած հողվույթը հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել և մեկ միասնական պրոցեսի մեջ դիտարկել 1878 թվականից մինչև Սևրի պայմանագիրն ընկած 40-ամյա ժամանակահատվածում հայոց հավակնությունների միջազգային-քաղաքական ընկալումները:

Պետք է նշել, որ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական բանակի հաղթանակները և դրանց հայ գեներալների աստղաբույլի փառավոր մասնակցությունը զգալիորեն բարձրացրին հայերի ազգային ինքնագիտակցությունը: Ե՛վ պոլսահայ վերնախավը, և՛ գաղթաշխարհի հայությունը, և՛ արևելահայությունը սկսեցին մտածել Արևմտյան Հայաստանի ինքնավարության մասին, իսկ ավելի համարձակները բարձրաձայնում էին նաև այդ ինքնավարության մեջ Կիլիկիան ներառելու անհրաժեշտությունը:

Հայաստանի ապագայի վերաբերյալ քննարկումները սկսվել էին արդեն պատերազմի նախօրյակին, երբ Արևելյան հարցը կրկին դարձել էր մեծ տերությունների ուշադրության առարկան: Ուստի երբ 1876 թ. դեկ-

տեմբերի 11-ին Կ. Պոլսում մեծ տերությունների դեսպանաժողովը քննարկում էր բուլղարական հարցը, հայ գործիչները փորձեցին հիշեցնել նաև արևմտահայության մասին: Դեսպանաժողովից մեկ օր առաջ Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովը որոշում էր ընդունել պահանջելու, որ արևմտահայության համար նույնպես բարենորոգումներ իրականացվեն²: Բանն այն է, որ մինչ այդ՝ 1877 թ. հոկտեմբերի 21-ին, Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովի պատգամավորների մեծ մասը Ղալաթիայի Կեդրոնական վարժարանում գաղտնի խորհրդակցություն էր գումարել և որոշել Հայկական հարցը ներկայացնել Ռուսաստանի դատին: Ռուսական բանակներն արդեն իսկ գրավել էին Արևմտյան Հայաստանի մի մասը և հաջողությամբ առաջ էին շարժվում: Հետևաբար անհրաժեշտ էր արագ կողմնորոշվել և առաջարկել լուծումներ, որոնք կապահովեին արևմտահայության հնարավորինս բարեկեցիկ ու անվտանգ ապագան: Ուստի նրանք Ներսես վարդապետ Բարդուղյանի միջոցով Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ին էին ուղարկել արևմտահայության ձգտումներն արտահայտող առաջարկներ՝ խնդրելով դրանք ներկայացնել ռուսական իշխանություններին: Դրանցում արևմտահայության համար նախատեսվում էր երեք հնարավոր տարբերակ.

1. Մինչև Եփրատն ընկած տարածքը, որը պատմական Մեծ Հայքն է, Թուրքիային չվերադարձնել և թողնել Ռուսաստանին: Փակագծերում նշվում էր, որ այս առաջարկն այնքան էլ ցանկալի չէ, սակայն եթե Ռուսաստանը գրավի Հայաստանը, ոչինչ անել չեն կարող, ուստի և խնդրում էին, որ հնարավորության դեպքում քաղաքների ու գյուղերի ազգային ներքին վարչական ձևը չփոխեն:

2. Եթե Հայաստանը չէր անցնելու Ռուսաստանին, ապա խնդրում էին Հայաստանին տալ այն շնորհներն ու արտոնությունները, որոնք տրվելու էին Բուլղարիային ու բուլղարներին՝ ռուսական կայսեր պաշտպանությանը ու հովանավորությանը:

3. Եթե Հայաստանը վերադարձվելու էր Թուրքիային, խնդրում էին երաշխիքներ պահանջել երկրի բարեկարգման ու հպատակների հավասարության համար, և այդ երաշխիքները պետք է լինեին Հայաստանում ռուսական զորքերի ներկայության պայմաններում կատարվող բարենորոգումները:

Հայոց ազգային ժողովի պատգամավորները խնդրում էին, որ կաթողիկոսը պատգամավորություն ուղարկի մեծ տերությունների մոտ՝ Հայկական հարցը դեսպանաժողովում բարձրացնելու համար: Առաջարկում

² Տե՛ս «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1876-1877», Կ. Պոլիս, էջ 329:

էին մյուս տերութիւններին ներկայացնել իրենց առաջարկների միայն երկրորդ և երրորդ կետերը, իսկ միայն ռուսական պաշտպանության ու երաշխիքների փոխարեն պահանջել եվրոպականը³:

Այսպիսով՝ արևմտահայ վերնախավը ապագա հայկական ինքնավարության մեջ ներառում էր միայն պատմական Մեծ Հայքի տարածքը՝ Երզրումի, Վանի, Դիարբեքիի նահանգները: Նրանք դեռևս հավակնություն չէին դրսևորում Փոքր Հայքի տարածքում ստեղծված Սեբաստիայի նահանգի նկատմամբ, խոսք չկար նաև Կիլիկիայի մասին: Այս պահանջների մեջ ներառված էին ռուսական բանակների կողմից հնարավոր գրավման ենթակա հողամասերը, որովհետև նրանք հասկանում էին, որ մեծ տերութիւնները կարող են քննարկել միայն այն տարածքների խնդիրը, որոնք պատերազմի իրավունքով էին գրավվել:

1878 թ. փետրվարին գերիների փոխանակությամբ զբաղվելու պատրվակով Ադրիանապոլիս ժամանեցին Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովի առաջին և երկրորդ ատենապետեր Ստեփան փաշա Ասլանյանը և Հովհաննես Նուրյանը: Նրանք պատրիարք Ներսես Վարժապետյանի հանձնարարությամբ գաղտնի հանդիպում ունեցան ռուսական դեսպան Նիկոլայ Իգնատևի հետ և ներկայացրին հունվարի 31-ին պատրիարքի գրած նամակը, որով նա Ռուսաստանի աջակցությունն էր խնդրում՝ հայերին ինքնավարություն տալու համար: Հայ պատվիրակները ցանկություն էին հայտնում ստանալու Լիբանանի կարգավիճակին նմանվող ինքնավարություն⁴:

Իր զեկուցագրում Ն. Իգնատևը նշում էր, որ ինքնավարության ձգտումներով ու խնդրանքներով հայերը բավական ծանր դրության մեջ էին դրել իրեն: Նրան զարմացրել էր, որ պատրիարքը բացահայտորեն շնորհավորական ուղերձ էր հղել ռուսական բանակի հրամանատարին, իսկ թուրքական պետության բարձրաստիճան հայ պաշտոնյաներ Ս. Ասլանյանը և Հ. Նուրյանը այցելել էին իրեն: Նրանք ներկայացրել էին հայերի ծանր վիճակը և Հայաստանի համար ինքնավարություն էին խնդրել Սեբաստիայի, Վանի, Մուշի և Երզրումի նահանգների տարածքում՝ առաջարկելով, որ դրանք որոշ ժամանակ զբաղեցվեն ռուսական բանակի կողմից⁵: Ինչպես տեսնում ենք, Սեբաստիայի նահանգը ևս արդեն ներառվել էր հայկական պահանջների մեջ:

3 Տե՛ս **Սարուխան**, Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), հատ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 260-262:

4 Տե՛ս **Գարիկեան Խ.**, Հայկական հարցը Արեւելեան հարցի մէջ (1860-1880), Պէյրութ, 1962, էջ 172:

5 Տե՛ս Сан-Стефано. Записки гр. Н. П. Игнатъева с примечаниями А. А. Башмакова и К. А. Губастова, «Исторический Вестник», апрель, 1915, т. 140, էջ 52:

1878 թ. փետրվարի 13-ին Կ. Պոլսի Ազգային ժողովի Ձեռնհասության դիվանի ատենապետ Մատթեոս Եպիսկոպոս Իզմիրլյանը կաթողիկոսի մերձավորներից Վահրամ Եպիսկոպոս Մանկունուն ուղարկած նամակում նկարագրում էր պոլսահայերի միասնականությունը: Առանց քաղաքական ու կրոնական վեճերի՝ բոլորը ձգտում էին հասնելու Հայկական հարցի լուծմանը: Միակ տարբերությունն այն էր, որ հայ կաթոլիկներն ու բողոքականները ցանկանում էին Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի միջնորդությամբ բարձրացնել նաև Կիլիկիայի ինքնավարության հարցը⁶: Այսպիսով՝ հայկական որոշակի շրջանակների կողմից Կիլիկիան ևս դիտարկվում էր որպես հայկական ինքնավարության մաս:

Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ ռուսական հովանու ներքո Արևմտյան Հայաստանում, իսկ Բրիտանիայի ու Ֆրանսիայի հովանավորությամբ Կիլիկիայում կարող էին ստեղծվել հայկական ինքնավարություններ:

Պոլսահայ գործիչներից Խորեն Նարբեյը գտնում էր, որ պետք է բոլոր գործողությունները համաձայնեցնել Ռուսաստանի հետ, նպաստել, որ Արևմտյան Հայաստանում ուժեղանան Ռուսաստանի դիրքերը, կամ այն մնա ռուսական գրավման տակ, իսկ այնտեղ ընդհանուր կառավարիչ նշանակվի ականավոր ռազմական ու պետական գործիչ Միքայել Լորիս-Մելիքովը, որի ղեկավարած ռուսական Կովկասյան կորպուսն էր ազատագրել Արևմտյան Հայաստանի զգալի մասը: Խ. Նարբեյի կարծիքով՝ հայերը պետք է փորձեին ինքնավարություն ձեռք բերել Կիլիկիայում⁷: Նա վստահ էր, որ ռուսները թույլ չէին տա Արևմտյան Հայաստանում ինքնավարություն ստեղծել, որպեսզի հայկական պատնեշը չխոչընդոտեր իրենց հետագա նվաճողական ծրագրերի իրականացումը: Այդ ծրագրին հետևել նրան խորհուրդ էր տվել ինքը՝ գեներալ Մ. Լորիս-Մելիքովը⁸: Սակայն պոլսահայ գործիչները կտրականապես դեմ էին Արևմտյան Հայաստանը ռուսական տիրապետության տակ թողնելու և միայն Կիլիկիայում ինքնավարություն պահանջելու գաղափարին: Նրանց այդ պահանջը համահունչ էր Մեծ Բրիտանիայի շահերին: Հետաքրքիր է նշել, որ 1877 թ. վերջերից բրիտանացիները քննարկում էին Միջերկրականի արևելքում որևէ տարածք ռազմակալելու խնդիրը, որպեսզի փակեին ռուսական նավատորմի ճանապարհը դեպի Սուեզի ջրանցք: Ռազմական ու քաղաքական փորձա-

6 Տե՛ս «Վաերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», գիրք Ժ, փաստաթղթերի և նիւթերի ժողովածու, կազմող՝ **Ս. Ա. Բէիրուդեան**, Եր., 2002, էջ 208-211:

7 Տե՛ս **Զօպանեան Ա.**, Ստեփան Փափագեանի յուշատետրը, «Անահիտ», Փարիզ, 1907, N 6-9, էջ 151:

8 Տե՛ս նույն տեղում, N 10-12, էջ 162:

գետների ուշադրության կենտրոնում էին Գալիպոլին, Կրետեն, Հռոդոսը, Կիպրոսը, Եգիպտոսը, Ալեքսանդրետը և Դոդեկանեզյան կղզիներից Ստամպալիան: Ի վերջո լավագույն տարբերակներ դիտվեցին Կիպրոսը և Ալեքսանդրետը: Դրանք փակում էին ռուսական հետագա առաջխաղացման ճանապարհը ոչ միայն Կ. Պոլսով, այլ նաև Հայաստանով: Բրիտանիայի ԱԳ նախարար Ռոբերտ Սոլսբերին և Օսմանյան կայսրությունում բրիտանական դեսպան Հենրի Լայարդը հակված էին Ալեքսանդրետում հաստատվելուն, սակայն վարչապետ Բենջամին Դիզրայելին ի վերջո որոշեց գրավել Կիպրոսը⁹:

1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) Սան Ստեֆանոյում՝ հայազգի Տատյան բեյի ապարանքում, ստորագրվեց ռուս-թուրքական հաշտության պայմանագիրը¹⁰: Սան Ստեֆանոյի պայմանագրով անկախացան և իրենց տարածքներն ընդարձակեցին Չեռնոգորիան, Սերբիան և Ռումինիան, ինքնավարություն ստացավ Բուլղարիան: Սակայն Արևմտյան Հայաստանի մեծագույն մասն այդ պայմանագրով կրկին դատապարտվում էր մնալու թուրքական տիրապետության տակ: Հասկանալով, որ հայ ժողովրդի վիճակն անտանելի է սեփական հայրենիքում, և հայերն իրենց հույսերը կապում են Ռուսաստանի հետ, ռուս դիվանագետների պահանջով պայմանագրում հատուկ կետ մտցվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու վերաբերյալ: Այդ հոդվածը պայմանագրում ներառելու համար մեծ ջանքեր գործադրեց նաև օսմանյան պատվիրակության անդամ Սարգիս բեյ Համամջյանը¹¹:

Պայմանագրի 16-րդ հոդվածը նախատեսում էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բ. Դուռը պարտավորվում է հայաբնակ մարզերում անհապաղ կենսագործել տեղական կարիքներից բխող բարելավումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»¹²:

Ինչպես տեսնում ենք, 16-րդ հոդվածով նախատեսվող անորոշ բարելավումներն ու բարենորոգումները (ռեֆորմները) չափազանց հեռու

9 Տե՛ս Schumacher Leslie Rogne, A “Lasting Solution”: The Eastern Question and British Imperialism, 1875-1878, Minnesota, 2012, էջ 188-190:

10 Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)» (այսուհետ՝ «Հայաստանը փաստաթղթերում»), խմբ. Զ Կիրակոսյան, Եր., 1972, էջ 83-98:

11 Տե՛ս Սարուխան, նշվ. աշխ., էջ 272:

12 «Հայաստանը փաստաթղթերում», էջ 92:

էին հայերի սպասած ինքնավարութիւնից: Խոսք չկար նաև Հայաստանի սահմանների մասին:

Պայմանագրի 19-րդ հոդվածով Օսմանյան կայսրության կողմից վճարվելիք խոշոր ռազմատուգանքի մի մասի դիմաց Ռուսաստանին էին միացվելու հայկական որոշ տարածքներ՝ Արդահանը, Կարսը, Բայազետն ու Ալաշկերտի հովիտը և Բաթումը¹³: Դրա շնորհիվ այդ տարածքների հայությունը կփրկվեր ֆիզիկական ոչնչացման վտանգից և զարգացման քիչ թե շատ բարենպաստ պայմաններ կունենար, ինչպես նախկինում Ռուսաստանին անցած հայկական մյուս տարածքների բնակչությունը:

Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը գրեթե ամբողջությամբ համապատասխանում էր 1877 թ. հոկտեմբերի 21-ին Ղալաթիայի Կեդրոնական վարժարանում գումարված գաղտնի ժողովի որոշեցրած երրորդ տարբերակին, որն ուղարկվել էր կաթողիկոսին: Այդ նախագիծը վստահաբար քննարկվել էր նաև արևելահայ գործիչների կողմից: Դրանում ներկայացված էին նաև այն բարենորոգումները, որոնք կարող էին բավարարել հայերին: Ըստ այդ նախագծի՝ անհրաժեշտ էր ուստիկանությունը կազմել մեծ մասամբ հայերից, թույլ տալ հայերին զինվորական կրթություն ստանալ, քրդերին ու չերքեզներին հեռացնել Հայաստանից կամ պարտադրել նստակեցության անցնել, նրանց չընդգրկել ուստիկանության կազմում, կուսակալներ ու գավառապետեր նշանակել հայերին: Միայն այդ կետերի իրագործումից հետո ռուսական զորքերը պետք է հեռանային Հայաստանից: Սակայն Սան Ստեֆանոյի պայմանագիրը դեռևս պետք է քննարկվեր մեծ տերությունների կոնգրեսի կողմից: Ուստի Բեռլինում հրավիրվեց մեծ տերությունների ներկայացուցիչների վեհաժողով, որտեղ վերջնական տեսքի էր բերվելու ու ստորագրվելու էր ռուս-թուրքական պայմանագիրը:

Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը հույս ուներ, որ Բեռլինում հայերին կտրվի այն, ինչ չէր տրվել Սան Ստեֆանոյում՝ ինքնավարություն: Որոշվեց Եվրոպա ուղարկել պատվիրակություն, որի նախագահ նշանակվեց նախկին պատրիարք Մկրտիչ Խրիմյանը: Կազմվեց ինքնավարության ծրագիր, որի հեղինակն էր պոլսահայ նշանավոր պետական գործիչ, օսմանյան սահմանադրության համահեղինակներից Գրիգոր Օտյանը: Այն կոչվում էր «Ծրագիր Կազմակերպական կանոնագրի Օսմանեան Հայաստանի»: Այդ ծրագրով ինքնավար Հայաստանի կազմում պետք է ընդգրկվեին հիմնականում Մեծ Հայքի տարածքները. «Թրքական Հայաստանը կը բովանդակէ ըստ ներփակ քարտէսին Էրզրումի եւ Վանի վիլայէթները, Տիարապէթիի վիլայէթին հիւսիսային մասը, այսինքն՝ Խարբերդի

13 Տե՛ս նույն տեղում, էջ 93-94:

սանճաքին արելելեան մասը (իբր սահմանագիծ ունենալով արելելքէն՝ Եփրատը), Արկանայի սանճաքը եւ Սղերդի սանճաքին հիւսիսային մասը, որ Մեծ Հայաստանի թրքական մասը կը կազմեն, ինչպէս եւ Ռիզէի նաւահանգիստը՝ Պաթումի եւ Տրապիզոնի միջեւ՝ վաճառականութիւնն ու արտածութիւնը դիւրացնելու համար»¹⁴:

Այսպիսով՝ պատրիարքարանի կողմից առաջ քաշվեց նախագիծ, որով պետք է փորձեին ինքնավարություն ձեռք բերել օսմանյան լծի տակ գտնվող նախկին Մեծ Հայքի տարածքում: Այդ երկրամասի զգալի մասն արդէն իսկ գտնվում էր ռուսական գրավման տակ: Դրա շնորհիվ ռուսական գորքի հեռանալուց առաջ, ըստ պոլսահայ գործիչների, հնարավոր կլինէր ստեղծել ինքնավար պետություն՝ սուլթանի գերիշխանության ներքո: Փոքր Հայքի և Կիլիկիայի հարցերը թողնում էին ավելի նպաստավոր ժամանակի: Այս ծրագրի և ընդհանրապէս Մ. Խրիմյանի պատվիրակության գործունեության մասին տեղեկացված էր սուլթանական կառավարությունը, որը գաղտնաբար հովանավորում էր տվյալ գործընթացը՝ փորձելով բարենորոգումների խնդրի շրջագծում պահվող Հայկական հարցն օգտագործել կայսրության անդամահատման ռուսական ծրագրերի խափանման համար: Սուլթանական իշխանությունները մտահոգված էին, որ, Սան Ստեֆանոյի համաձայնագրի 25-րդ հոդվածի համաձայն, ռուսական զորքերը դուրս էին գալու Արևմտյան Հայաստանից վեց ամսվա ընթացքում¹⁵: Այս կետը պայմաններ էր ստեղծում հայկական տարածքները հետագայում որևէ պատճառաբանությամբ (օրինակ՝ բարենորոգումների անբավարար իրականացումը) Ռուսաստանի տիրապետության տակ պահելու համար: Հետևաբար քանի դեռ թուրքերը վստահ չէին, որ ռուսական բանակը կհեռանար Արևմտյան Հայաստանից, պատրաստ էին գաղտնաբար խրախուսելու հայկական բարենորոգումների կամ նույնիսկ ինքնավարության նախագծերը: Գերադասելի էր ինքնավար Հայաստան Օսմանյան կայսրության կազմում, քան հայկական բոլոր տարածքների անցումը Ռուսաստանին: Սակայն Բեռլինի վեհաժողովի նախօրեին Մեծ Բրիտանիայի և Օսմանյան կայսրության միջև Կ. Պոլսում կնքված պաշտպանական համաձայնագրով, որով անգլիացիները տիրացան Կիպրոսին, թուրքերը երաշխիքներ ստացան, որ ռուսները դուրս են գալու Արևմտյան Հայաստանից: Ուստի սուլթանը անմիջապէս պահանջեց պատրիարքից հետ կանչել հայկական պատվիրակությանը: Չնայած Ներսէս Վարժապետյա-

14 «Անահիտ», Փարիզ, 1907, N 6-9, էջ 145:

15 Տե՛ս «Հայաստանը փաստաթղթերում», էջ 96:

նը չենթարկվեց սուլթանական պահանջին, սակայն հայ պատվիրակները Բեռլինում որևէ հաջողություն չարձանագրեցին:

Ըստ Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից Բեռլինի կոնգրեսի համար կազմված Արևմտյան Հայաստանի մասին տեղեկագրի ու վիճակագրության՝ Արևմտյան Հայաստանն ընդգրկելու էր.

1) Երզրումի և Վանի վիլայեթները, բացի այն տարածքներից, որոնք Սան Ստեֆանոյի պայմանագրով անցնելու էին Ռուսաստանին: Այդ վիլայեթների բազմամարդ կենտրոններն էին Կարինը (Երզրում), Բաբերդը, Երզնկան, Մանազկերտը, Մուշը, Բաղեշը (Բիթլիս) և Վանը:

2) Դիարբեքիի վիլայեթի հյուսիսային մասը, այսինքն՝ Խարբերդի սանջակի արևելյան մասը (որի սահմանն արևմուտքից Եփրատն էր), Արդանայի սանջակը և Սղերդի սանջակի հյուսիսային մասը: Բազմամարդ կենտրոններն էին Խարբերդը, Ակնը, Չնշկածագը, Բալուն և Սղերդը: Այդ տարածքներում ապրում էր 2.062.300 բնակիչ, որից հայ՝ 1.330.000, թուրք՝ 530.000, քուրդ՝ 120.000, այլ ազգեր՝ 82.000¹⁶:

Հայկական պահանջներից դուրս էին թողնվել այն գավառները, որոնցում մահմեդականները մեծամասնություն էին, ինչի շնորհիվ ինքնավար Հայաստանի բնակչության շուրջ 70 տոկոսը, այսինքն՝ բացարձակ մեծամասնությունը, կազմելու էին հայերը:

Այսպիսով՝ Բեռլինի վեհաժողովին ներկայացված հայկական տարածքային պահանջների մեջ չէին ներառվել Կիլիկիան, Սվազի վիլայեթը (Սեբաստիան), Դիարբեքիի նահանգի արևմտյան և հարավային որոշ տարածքներ: Միաժամանակ հայկական պահանջների մեջ էր Սև ծովի ափին գտնվող Ռիզե նավահանգիստը: Սակայն իրադարձությունները չընթացան հայ գործիչների համար հուսատու հունով: Բեռլինում կտրականապես մերժվեց ինքնավար Հայաստան կազմավորելու հայկական պահանջը: Եթե 1878 թ. հայերը ինքնավարության հույս ունեին, ապա Բեռլինի պայմանագրից հետո անօգուտ քննարկումների և շահարկումների առարկա դարձավ միայն Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու հարցը:

Մեծ Բրիտանիայի նախաձեռնությամբ Կ. Պոլսում 6 մեծ տերությունների դեսպանները 1880 թ. հունիսի 11-ին համիմաստ նոտաներ ուղարկեցին սուլթանին՝ հիշեցնելով Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի մասին: Նրանք առաջարկում էին հայաշատ նահանգներում գեներալ-նահանգապետ նշանակել տերությունների հավանությանն արժանացած որևէ անձի, իսկ Հայաստանի չորս նահանգներում (Վանի, Դիարբեքիի,

16 Տե՛ս «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», էջ 221-222:

Էրզրումի, Սեբաստիայի) կենտրոնական նահանգական խորհուրդ հաստատել¹⁷: Այս փաստաթղթով մեծ տերությունները Հայաստանի մասեր էին համարում պատմական Մեծ և Փոքր Հայքերի տարածքները: Դրանում Կիլիկիայի մասին խոսք չկար:

Հայաստանի տարածքային ընդգրկման մասին նույն պատկերացումները պահպանվեցին նաև 1895 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագրում: Սասունի հայության 1894 թ. կոտորածին հաջորդած մթնոլորտում Կ. Պոլսում բրիտանական, ռուսական և ֆրանսիական դեսպանները 1895 թ. մայիսի 11-ին սուլթանին ներկայացրին բարենորոգումների ծրագիր: Ըստ դրան հրաժեշտ էր Արևմտյան Հայաստանի 6 նահանգներում (Էրզրում, Բիթլիս, Սեբաստիա, Դիարբեքիր, Խարբերդ և Վան) ամրապնդել կենտրոնական իշխանությունը, բարեփոխել կառավարման համակարգը, դատական ու հարկային գործը, ապահովել հասարակական կյանքի, արտադրության ու տնտեսության զարգացումը, քրիստոնյաներին պաշտպանել քրդերի կամայականություններից¹⁸:

Քանի որ Օսմանյան կայսրության իրականացրած վարչական նոր փոփոխությամբ հայկական նախկին 4 նահանգներն արդեն դարձել էին 6 (Վանից առանձնացվել էր Բիթլիսը, Դիարբեքիրից՝ Խարբերդը), մեծ տերությունների մոտ ու հայ իրականության մեջ հետզհետե ամրապնդվեց այն գաղափարը, որ Արևմտյան Հայաստանը **6 վիլայեթների** (Էրզրում, Բիթլիս, Սեբաստիա, Դիարբեքիր, Խարբերդ և Վան) տարածքն է: Սրանով պատմական Մեծ և Փոքր Հայքերի տարածքները, փաստորեն, ճանաչվեցին հայերի հայրենիքի անկապտելի մասեր:

2. Առաջին աշխարհամարտի նախօրեին Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման փորձերը և դրանց արդյունքները

1912 թվականին, երբ Բալկանյան պատերազմի հետևանքով կրկին սրվեց Արևելյան հարցը, հայ գործիչների կողմից Արևմտյան Հայաստանում բարենորոգումների խնդիրը հերթական անգամ դրվեց միջազգային դիվանագիտության սեղանին: Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի կոնդակով ձևավորվեց ազգային պատվիրակություն՝ Պողոս

17 Տե՛ս **Կիրակոսյան Զ.**, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Եր., 1980, էջ 117:

18 Տե՛ս «Հայաստանը փաստաթղթերում», էջ 131, 136:

Նուբարի գլխավորությամբ: Վերջինիս՝ Եվրոպայում սկսած բանակցությունները բավականին անհանգստացրին օսմանյան իշխանություններին: Ուստի մեծ տերությունների միջամտությունից խուսափելու համար Քյամիլ փաշայի կառավարությունը կազմեց հանձնաժողով, որը 1912 թ. դեկտեմբերին ներկայացրեց 21 կետից բաղկացած բարենորոգումների ծրագիր¹⁹: Սակայն այդ նախագիծը բարենորոգումներ էր նախատեսում հայկական վիլայեթներից միայն չորսում՝ Վան, Բիթլիս, Դիարբեքիր և Խարբերդ, իսկ Էրզրումն ու Սեբաստիան դուրս էին մնում: Ծրագիրն անընդունելի համարեցին հայկական բոլոր քաղաքական ուժերն ու հոսանքները: Հայկական կողմը չէր հավատում թուրքական խոստումներին, միաժամանակ դեմ էր Էրզրումի և Սեբաստիայի նահանգները նախագծից դուրս թողնելուն: 1913 թ. հունվարի 10-ին իթթիհադականները Էնվերի գլխավորությամբ պետական հեղաշրջում իրականացրին և տապալեցին Քյամիլ փաշայի կառավարությունը: Նոր կառավարության ղեկավար դարձավ Մահմուդ Շևքեթ փաշան, որը հրաժարվեց Արևմտյան Հայաստանում որևէ բարենորոգում իրականացնելուց:

Հայ ազգային պատվիրակությունը գործնական քայլեր կատարեց եվրոպական ու ռուսական հասարակական-քաղաքական շրջանակներին Արևմտյան Հայաստանում բարենորոգումների նկատմամբ դրականորեն տրամադրելու ուղղությամբ: Օսմանյան կայսրության գլխավոր պաշտպան Գերմանիայի դիմադրությունը թուլացնելու նպատակով Պ. Նուբարը բանակցությունների ընթացքում փորձում էր նրա ուշադրությունը հրավիրել Կիլիկիայի վրա, որտեղ այդ տերությունը տնտեսական ու ռազմաքաղաքական մեծ շահեր ուներ: Հայ գործիչն առաջարկում էր Գերմանիայի վերահսկողությամբ այնտեղ ևս բարենորոգումներ իրականացնել²⁰: Ինչպես տեսնում ենք, ժամանակի հայ քաղաքական գործիչները հնարավոր ամեն տարբերակ օգտագործում էին, որպեսզի Կիլիկիայում նույնպես բարենորոգումներ իրականացվեին, կամ էլ այն որևէ տերության ազդեցության տակ անցներ: Դա հնարավորություն կտար ապահովելու տեղի հայերի անվտանգությունը, տնտեսական ու մշակութային զարգացումը:

Պ. Նուբարը և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը համատեղ ջանքերով կազմեցին հայկական բարենորոգումների նախագիծը: Այն հավանության արժանացավ ռուսական կառավարության կողմից և Կ. Պոլսի

19 Տե՛ս «ժողովածու դիպլոմատիքական դոկումենտների: Բարենորոգումները Հայաստանում (1912 թ. Նոյեմբեր 12-ից մինչև 10 Մայիս 1914 թ.)», թարգմ.՝ Ս. Աւագեան, Թիֆլիս, 1915, էջ 14-15:
20 Տե՛ս «Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)». Материалы политического архива Министерства иностранных дел Кайзеровской Германии. Сборник документов. Редактор В. Микаелян, Ер., 1995, էջ 30-32:

ռուսական դեսպանատան թարգման Անդրեյ Մանդելշտամի կատարած աննշան փոփոխություններով, որպես ռուսական ծրագիր, ներկայացվեց մեծ տերությունների քննարկմանը:

Ըստ Ա. Մանդելշտամի նախագծի՝ ստեղծվելու էր միասնական Հայաստան երկրամաս, որի մեջ մտնելու էին Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Սեբաստիայի, Դիարբեքիի և Խարբերդի վիլայեթները: Երկրամասից դուրս էին թողնվելու այդ վիլայեթների գերազանցապես ոչ հայաբնակ ծայրագավառները՝ Հաքքիարին ամբողջությամբ, Սդերդի, Բշերիկի (գավառակ Դիարբեքիի նահանգում, Սասունից հարավ) և Մալաթիայի հարավային մասերն ու Սեբաստիայի հյուսիսարևմտյան հատվածը²¹: Փաստորեն, Հայաստանի սահմաններից դուրս էին թողնվելու հիմնականում քրդերով, ասորիներով, թուրքերով ու հույներով բնակեցված ծայրամասերը, ինչի շնորհիվ հայերը կազմելու էին բնակչության բացարձակ մեծամասնությունը:

1913 թ. հունիսի 30-ին Ռուսաստանի, Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի Կ. Պոլսի դեսպանները քննարկեցին հայկական բարենորոգումների հարցը: Ռուսական դեսպան Մաքսիմ Գիրսը նրանց ներկայացրեց Ա. Մանդելշտամի կազմած նախագիծը²²: Նրանք որոշեցին հարցի քննարկումը հանձնարարել դեսպանատների ներկայացուցիչներից կազմված հատուկ հանձնաժողովին²³:

1913 թ. հուլիսի 3-ին Կ. Պոլսի Ենի Բյոյ արվարձանում ավստրո-հունգարական դեսպանատանը, սկսվեց հայկական բարենորոգումների հարցի քննարկումը վեց տերությունների դեսպանատների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի կողմից: Թուրքական կառավարությունը, տեղեկանալով, որ տերությունների ներկայացուցիչները քննարկում են հայկական բարենորոգումների հարցը, հապշտապ կազմեց և հուլիսի 1-ին դեսպանատներին ներկայացրեց բարենորոգումների իր ծրագիրը²⁴: Այն նախատեսում էր բարենորոգումներ իրականացնել կայսրության ամբողջ տարածքում: Թուրքիան բաժանվելու էր վեց սեկտորների՝ եվրոպացի ընդհանուր տեսուչների գլխավորությամբ: Տեսուչները նշանակվելու էին օսմանյան կառավարության կողմից՝ սուլթանի հաստատմամբ, այսինքն՝ ամբողջությամբ կախված էին լինելու կառավարությունից: Հայկական նահանգներն ընդգրկվելու էին III (Սեբաստիա, Էրզրում, Տրապիզոն) և V (Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքի) սեկտորներում: Բաժանումն այնպես էր ար-

21 Ст. в «Сборникъ дипломатическихъ документовъ. Реформы въ Арменіи (26 Ноября 1912 года - 10 Мая 1914 года)», Петроградъ, 1915, էջ 61:

22 Ст. в ԱԼՕ, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 314-329:

23 Ст. в «Հայաստանը ... փաստաթղթերում», էջ 241:

24 Ст. в Մատենադարան, Ա. Ակոյաճյանի ֆոնդ, թղթապանակ 5, վավերագիր 1180, էջ 7:

ված, որ հայկական տարածքները ոչ միայն բաժանվում էին երկու մասի, այլև դրանց էր միացվում հիմնականում մահմեդականներով բնակեցված Տրապիզոնը: Այդպիսի բաժանմամբ ստեղծված սեկտորներում հայերը բացարձակ մեծամասնություն չէին կազմելու:

Երկարատև քննարկումները և դիվանագիտական պայքարը ավարտվեցին հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրմամբ: 1914 թ. հունվարի 26 (փետրվարի 8)-ին Կ. Պոլսում մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան և ռուսական հավատարմատար Կոստանդին Գուլկևիչը ստորագրեցին ռուս-թուրքական համաձայնագիր՝ հայկական բարենորոգումների վերաբերյալ: Ըստ համաձայնագրի՝ Արևմտյան Հայաստանը բաժանվեց երկու երկրամասի՝ ա) Սեբաստիա, Էրզրում, Տրապիզոն և բ) Բիթլիս, Վան, Խարբերդ, Դիարբեքի²⁵: Փաստորեն, Արևմտյան Հայաստանի բուն հայկական 6 նահանգներին էր միացվում նաև Սև ծովի հարավարևելյան հատվածում գտնվող Տրապիզոնի նահանգը: Չնայած դեռևս Բեռլինի վեհաժողովի նախօրյակին հայկական պահանջների մեջ էր Տրապիզոնի նահանգի մաս կազմող Ռիգե նավահանգիստը, սակայն հայկական կողմը երբեք նկրտումներ չէր դրսևորել ամբողջ նահանգի նկատմամբ: Այդ նահանգում քրիստոնյա հայերը փոքրամասնություն էին, չնայած այնտեղ ապրում էին մեծաթիվ մահմեդականացած համշենցիներ: Տրապիզոնում զգալի թիվ էին կազմում նաև հույները և մահմեդական լազերը: Մինչդեռ, Տրապիզոնը միացնելով Էրզրումի ու Սեբաստիայի նահանգներին, թուրքական կողմն իր համար փորձում էր ապահովել մահմեդական մեծամասնություն:

Այսպիսով՝ Առաջին աշխարհամարտի նախօրեին Արևմտյան Հայաստանը բաժանվեց երկու երկրամասերի կամ սեկտորների, որոնցում ընդգրկվեցին 7 նահանգներ՝ Սեբաստիա, Էրզրում, Տրապիզոն, Բիթլիս, Վան, Խարբերդ, Դիարբեքի: Այդ երկու երկրամասերում հայերը կազմում էին բնակչության հարաբերական մեծամասնությունը: Կիլիկիայի վերաբերյալ հայկական ծրագրերին դեռևս ընթացք չէր տրվում, իսկ հայկական կողմը այդ հարցը բարձրաձայնելու համար սպասում էր միջազգային ավելի նպաստավոր իրավիճակի: Այդպիսին էր իրավիճակը նախքան 1914 թ. սկսված Առաջին աշխարհամարտը և Օսմանյան կայսրության հանդես գալը Անտանտի (Ռուսաստան, Բրիտանիա, Ֆրանսիա) երկրների դեմ:

25 Տե՛ս «Сборникъ дипломатическихъ документовъ. Реформы въ Арменіи», էջ 162: Տե՛ս նաև «ժողովածու դիվանագիտական դոկումենտների», էջ 102:

3. Դիվանագիտական պայքարը Առաջին աշխարհամարտի տարիներին

Առաջին համաշխարհային պատերազմը նոր իրադրություն ստեղծեց աշխարհում, ինչը հայ գործիչներին լուրջ մտահոգության առիթ տվեց, քանի որ արևմտահայությանը սպասվում էին նոր կոտորածներ: Մյուս կողմից՝ պատերազմը հայերի մեջ հույսեր արթնացրեց, որ Օսմանյան կայսրության պարտությունը թույլ կտա ինքնավարություն ձեռք բերել Արևմտյան Հայաստանում ու Կիլիկիայում:

Արդեն 1914 թ. օգոստոսի 5-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը նամակով դիմեց Կովկասի փոխարքա Իլլարիոն Վորոնցով-Դաշկովին, որպեսզի Ռուսաստանը հովանավորեր ու պաշտպաներ արևմտահայերին: Փոխարքան սեպտեմբերի 2-ի գաղտնի հեռագրով պատասխանեց, որ դիմումը փոխանցել է կառավարությանը, և վարչապետ Իվան Գորեմիկինը վստահեցրել է, որ ռուսական կառավարությունը ոչ մի դեպքում չի գնա զիջումների Հայկական հարցում, և թուրքերը հայկական նահանգներում կիրականացնեն բարենորոգումներ՝ ռուսական նախնական ծրագրի համաձայն՝ Ռուսաստանի հովանու ներքո²⁶: Ինչպես տեսնում ենք, ռուսական իշխանությունները խոստանում էին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնել այն նախնական ծրագրի համաձայն, ըստ որի՝ հայկական վեց նահանգները միավորվելու էին մեկ միասնական երկրամասի մեջ, որտեղ հայերին տրվելու էին ավելի մեծ իրավունքներ, քան 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով էր նախատեսված:

Սեպտեմբերի 5-ին Էջմիածնի դիվանական խորհրդի արտակարգ նիստում քննարկվեց պատերազմին Թուրքիայի մասնակցության դեպքում առաջ եկող մարտահրավերներին դիմագրավելու, Արևմտյան Հայաստանի համար ավելի լայն բարենորոգումների կամ ինքնավարության նախագիծ մշակելու խնդիրը²⁷: Ի վերջո, հայ գործիչներն ընտրեցին Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ ինքնավարություն ձեռք բերելու տեսլականը:

Նոյեմբերի 8-ին Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին ուղարկած նամակում Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն հստակ ներկայացնում էր հայության ձգտումները: Նա հույս էր հայտնում, որ Ռուսաստանն ինքնավարություն կշնորհի Հայաստանին վեց վիլայեթների և

26 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 86, թ. 1-2:

27 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 72, թ. 3-4:

Կիլիկիայի սահմաններում²⁸: Բարենորոգումների՝ նախկինում առաջ քաշված նախագծերը բավարար չէին հայության ապագան կառուցելու համար, հետևաբար, օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից, հայ հոգևոր ու քաղաքական ղեկավարությունը ցանկություն ուներ իրականություն դարձնելու հայկական ինքնավարության գաղափարը:

Ռուսաստանի հովանու ներքո Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ ինքնավարություն ձեռք բերելու խնդրանքով կաթողիկոսը դիմել էր նաև Նիկոլայ Բ կայսրին, երբ 1914 թ. նոյեմբերի 29-ին Թիֆլիսում նրա կողմից ընդունելության էր արժանացել: Ցարը դիվանագիտորեն պատասխանել էր, որ «չափազանց պայծառ ապագա է սպասվում հայերին, և հավատում է, որ Հայաստանը ապագայում չի հետևի Բուլղարիայի օրինակին»²⁹: Այստեղ Նիկոլայն ակնարկում էր այն փաստը, որ Բուլղարիան ազատագրվել էր Ռուսաստանի ջանքերով, սակայն հետագայում որդեգրել էր հակառուսական կողմնորոշում: Զգալի թվով ռուս գործիչներ հայկական ձգտումները նոր բուլղարական վտանգ էին համարում Ռուսաստանի համար³⁰: Մոտ քառորդ ժամ տևած ընդունելության վերջում կայսրը հայտնել էր, որ «Հայկական հարցը կլուծվի հայերի ցանկությունների համաձայն պատերազմի ավարտից հետո խաղաղության բանակցությունների ժամանակ»³¹: Ցարի անորոշ պատասխանը մեծ ոգևորությամբ ընդունվեց հայ ազգային-քաղաքական շրջանակների կողմից՝ հասկացվելով, թե իբր ցարական կառավարությունն իսկապես մտադիր է լուծել Հայկական հարցը և ստեղծել միասնական հայկական ինքնավար պետություն: Ինչպես պարզվեց հետագայում, Նիկոլայ Բ-ն հարցի արդարացի լուծում ասելով հասկանում էր միանգամայն այլ բան: Արդարության համար պետք է նշենք, սակայն, որ այդ ժամանակաշրջանում ռուսական իշխանություններն իրենք դեռ քննարկում էին Արևմտյան Հայաստանի ապագայի հարցը և վերջնական որոշման չէին եկել:

Սիմոն Վրացյանը գրում է, որ այդ շրջանում կովկասահայության կարգախոսն էր դարձել՝ «Ավտոնոմիա վեց վիլայեթների և Կիլիկիայի. ռուսական պրոտեկտորատի ներքև»³²: Առաջին անգամ էր, որ Արևմտյան Հայաս-

28 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 76, թ. 2-3:

29 «Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանության մասին», Եր., 2001, էջ 22:

30 Տե՛ս **Марукян А.**, Армянский вопрос и политика России (1915-1917 гг.), Ер., 2003, էջ 24:

31 «Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը», էջ 22:

32 **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 624:

տանի ու Կիլիկիայի միավորմամբ հայկական միասնական ինքնավարություն ստեղծելու հարցը բարձրացվում էր մեծ տերությունների առաջ:

Այս շրջանում մի շարք ռուս գործիչներ, այդ թվում՝ Կովկասի փոխարքայի շրջապատից, դեմ էին կաթողիկոսի կողմից միացյալ Հայաստան ստեղծելու հարցի բարձրացմանը: Սակայն որոշ ռուս դիվանագետներ իրադարձությունների որոշակի զարգացման դեպքում հնարավոր էին համարում Կիլիկիայի և Արևմտյան Հայաստանի միավորմամբ ռուսական վերահսկողության տակ հայկական ինքնավարության ստեղծումը:

Այսպիսով՝ հայության գրեթե բոլոր շերտերը հրապուրված էին ինքնավար հայկական ընդարձակ պետության կազմավորման հնարավորությամբ: Հայկական հարցի՝ չորս տասնամյակ տևած ծախսող ընթացքից հետո թվում էր՝ մոտ է բաղձալի երազանքի իրականացումը: Հայկական կողմի պահանջները, առաջարկները, հրապարակումները, բանակցությունները ի վերջո որոշակի դրական ազդեցություն ունեցան ռուսական հասարակական-քաղաքական շրջանակների վրա: Ռուսական իշխանությունները 1915 թ. փետրվարի կեսերին հայ գործիչներին առաջարկեցին ներկայացնել Հայաստանի ապագայի վերաբերյալ սեփական ազգային ձգտումները, ինչպես նաև Հայաստանի ու Կիլիկիայի միացյալ քարտեզը՝ այն սահմաններով, որոնց հայերը հավակնում էին: Այդ առաջարկն արվել էր Ռուսաստանի ԱԳՆ արևելյան բաժնի վարիչ Կոստանդին Գուլկևիչի կողմից: Հայ գործիչները կազմեցին մեծ Հայաստանի քարտեզը, որը ներառելու էր Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթներն ամբողջությամբ, Տրապիզոնի վիլայեթը՝ մինչև Տիրեբոլու բնակավայրը՝ Տրապիզոն քաղաքից արևմուտք, Կիլիկիան՝ Ալեքսանդրետով կամ առանց դրա, եթե դաշնակիցները պահանջեին³³: Այդ խնդրի շուրջ ռուսական ԱԳՆ պաշտոնյաների հետ հանդիպումներ ունեցավ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ, բժիշկ Հակոբ Զավրյանը և բավականին դրական արձագանք ստացավ³⁴:

1915 թ. ապրիլի 18-ի կոնդակով Գևորգ Ե կաթողիկոսը վերահաստատում է Պ. Նուբարի՝ որպես մեծ տերությունների աստյաններում իր ներկայացուցչի լիազորությունները³⁵: Պ. Նուբարը, ստանալով կաթողիկոսի հանձնարարությունը, անմիջապես մեկնում է Կահիրեից և մայիսի 6-ին հասնում Փարիզ: Նույն օրը Լոնդոնից ժամանելով՝ նրան դիմավորում է Հ. Զավրյանը: Վերջինս Պ. Նուբարին ներկայացնում է Հայաստանի

33 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 91, թ. 2:

34 Տե՛ս **Պողոսյան Ս.**, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ինքնավարության հարցը ռուսական դիվանագիտության 1914-1915 թթ. գաղտնի ծրագրերում, «ՎԷՄ», Եր., 2015, N 2 (50), էջ 59-77:

35 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 27, թ. 30-31:

ինքնավարության մի ծրագիր, որը բխում էր կաթողիկոսի՝ Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Ղաշկովին և կայսր Նիկոլայ Բ-ին ուղղված գրությունների տրամաբանությունից, ինչպես նաև այն բանակցությունների արդյունքներից, որոնք ընթացել էին հայ քաղաքական գործիչների և Ռուսաստանի արտգործնախարարության միջև³⁶: Այդ ծրագրով ստեղծվելու էր ինքնավար Հայաստան՝ սուլթանի անվանական գերիշխանության տակ ու եվրոպացի գեներալ-նահանգապետի գլխավորությամբ: Սուլթանը Հայաստանի ներքին գործերին միջամտելու իրավունք չէր ունենալու, երկրում թուրքական զորք չէր լինելու: Հայաստանը գտնվելու էր Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միացյալ խնամակալության ներքո: Ինքնավար Հայաստանն ընդգրկելու էր Արևմտյան Հայաստանի վեց նահանգները և Կիլիկիան՝ Մերսին նավահանգստով, իսկ Ալեքսանդրետը դուրս էր մնալու, որպեսզի խուսափեին Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի դժգոհությունից ու ընդդիմությունից³⁷: Այդ նախագծով, փաստորեն, նախատեսվում էր ինքնավարության անվան տակ ստեղծել գրեթե անկախ հայկական պետություն:

Այս ծրագրի շուրջ Պետրոգրադում նախնական համաձայնություն էր ձեռք բերվել: Սակայն Ռուսաստանը որևէ պարտավորություն չէր ստանձնել, հատկապես Կիլիկիայի առումով, քանի որ այդ երկրամասը Ֆրանսիայի ազդեցության գոտում էր, և հայերը պետք է սեփական ուժերով պաշտպանեին իրենց շահերը Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կառավարությունների հետ շփումներում: Հ. Ջավրյանը Պ. Նուբարին տեղեկացնում է, որ Ֆրանսիան ու Ռուսաստանը գաղտնի համաձայնության են եկել, որով հաղթանակից հետո Ֆրանսիային էր անցնելու Կիլիկիան, իսկ Ռուսաստանին՝ Կ. Պոլիսը, Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթները: Սակայն վերջինս զղջացել էր այդ համաձայնության համար և, մնալով ստվերում, հայերին դրդում էր պահանջելու Կիլիկիան՝ խոստանալով ինքնավարություն տալ Հայաստանին վեց վիլայեթների և Կիլիկիայի սահմաններում³⁸:

1915 թ. ապրիլի 26 (մայիսի 9)-ին Լոնդոնում Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Ֆրանսիան և Իտալիան ստորագրեցին գաղտնի համաձայնագիր, որով Ռուսաստանին էր անցնելու Արևմտյան Հայաստանի մի մասը՝ Վան, Բիթլիս, Էրզրում, Տրապիզոն, իսկ Ֆրանսիային՝ Կիլիկիան³⁹: Այսպի-

36 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 187:

37 Տե՛ս Boghos Nubar's Papers and the Armenian Question (1915-1918). Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, էջ 80-84:

38 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 9:

39 Տե՛ս Documents on British Foreign Policy 1919-1939. Edited by Woodward and Rohan Butler. First series, vol. I, London, 1947, էջ 84-85:

սով՝ միասնական հայկական պետություն ստեղծելու գաղափարի առջև կանգնեցին ռուս-ֆրանսիական ծավալապաշտական նկրտումները: Ե. Ադամովը գրում է, որ այդ ժամանակ Միջերկրականում ազդեցության ոլորտ ձեռք բերելու միակ հնարավորությունը պետրոգրադյան կառավարության համար «անկախ» Հայաստանի գործոնն էր, սակայն Բրիտանիայի և Ֆրանսիայի կասկածներից խուսափելու համար այդ ծրագիրը պետք է պաշտպանեին հայ պատվիրակները՝ առանց ռուս դիվանագետների միջամտության⁴⁰:

Միասնական հայկական ինքնավար պետություն ստեղծելու հարցով Պ. Նուբարը հանդիպումներ ունեցավ Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կառավարությունների ներկայացուցիչների, ինչպես նաև տարբեր ազդեցիկ գործիչների հետ⁴¹: Ազգային պատվիրակության նախագահը հունիսի 6-ին այդ ծրագիրը ներառող հուշագիր ներկայացրեց Ֆրանսիայի ԱԳ նախարար Թեոֆիլ Դելկասեին, որն այն սկզբունքորեն ընդունելի համարեց⁴², իսկ հուլիսի 15-ին՝ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ին⁴³: Այդ հուշագրերում նա փորձել էր ցույց տալ այդ երկրների շահերը միացյալ Հայաստան ստեղծելու պարագայում: Պ. Նուբարը ամեն ինչ անում էր, որպեսզի Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում ազդեցություն ունեցող զրեթե բոլոր պետական ու քաղաքական գործիչներին, մամուլի ներկայացուցիչներին շահագրգռի ինքնավար Հայաստան ստեղծելու հարցում: Այդ նպատակադրմամբ անընդհատ հանդիպում էր նրանց հետ և փորձում հիմնավորել իր տեսակետները: Պետք է նշել, որ Պ. Նուբարի հանդիպումներն առաջին հայացքից դրական արդյունքներ էին ունենում:

Ղեռևս 1915 թ. ապրիլին Մեծ Բրիտանիայի վարչապետ Հերբերտ Հենրի Ասքվիթի հանձնարարականով տարբեր գերատեսչությունների փորձագետներից ձևավորվել էր հատուկ հանձնախումբ՝ Մորիս դե Բանսենի նախագահությամբ, որը պետք է քննարկեր և կազմեր Օսմանյան կայսրության մասնատման բրիտանական նախագիծը: Հունիսի 30-ին հանձնախումբը ներկայացնում է իր հաշվետվությունը: Այն լավագույն տարբերակ էր համարում Օսմանյան կայսրության բաժանումը 5 ինքնավար շրջանների՝ Անատոլիա, Հայաստան, Սիրիա, Իրաք և Պաղեստին: Հայաստանը ներառելու էր Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան, ունենալու էր ելք դեպի Սև ծով⁴⁴:

40 Տե՛ս «Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел», Под редакцией Е. А. Адамова, М., 1924, էջ 90-91:

41 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թթ. 67-72: Տե՛ս նաև Boghos Nubar's Papers, էջ 108-110:

42 Տե՛ս Boghos Nubar's Papers, էջ 80-84:

43 Տե՛ս նույն տեղում, էջ 170-177:

44 Տե՛ս Фомин А., Война с продолжением. Великобритания и Франция в борьбе за «Османское наследство». 1918-1923, М., 2010, էջ 48-49:

ինչպես տեսնում ենք, բրիտանական իշխանությունները ևս հակված էին պատերազմից հետո ստեղծելու հայկական ինքնավար պետություն՝ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ:

Սակայն միացյալ արևմտահայկական պետության ստեղծման ճանապարհին հայտնվեցին երկու լուրջ խոչընդոտներ՝ Հայոց մեծ եղեռնը և Անտանտի երկրների ծավալապաշտական նկրտումները: Հայերի զանգվածային տեղահանությունների ու կոտորածների լուրերը հետին պլան մղեցին ինքնավարության նախագծերը և ստիպեցին հայ գործիչներին առաջնահերթորեն զբաղվելու այդ ողբերգությունը կասեցնելու, կոտորածներից փրկվածներին աջակցելու խնդիրներով: Արևմտահայության ոչնչացումը նաև Անտանտի երկրներին դրդեց հայերին չդիտելու որպես ազդեցիկ գործոն տարածաշրջանում, հետևաբար հրաժարվելու հայկական ինքնավարության նախագծերի քննարկումից: Մինչդեռ ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու համար չափազանց կարևոր խնդիր է դրա հետևանքները չօրինականացնելը: Հակառակ պարագայում դա կարող է հանգեցնել քաղաքակրթության դեմ իրականացվող նման ոճիրների խրախուսմանը: Ուստի Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարումը առաջին հերթին պետք է նախատեսի հայկական տարածքների աստիճանական միավորումը հայոց պետության կազմում և դրանց կրկին հայացումը:

1916 թ. մայիսին ստորագրված Սայքս-Պիկոյի համաձայնագրով Օսմանյան կայսրության հայկական տարածքները բաժանվում էին Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև. առաջինը ստանալու էր Վանը, Բիթլիսը, Էրզրումը և Տրապիզոնը, իսկ երկրորդը՝ Սեբաստիան, Խարբերդը, Ղիարբեքիրը և Կիլիկիան⁴⁵: Այսպիսով՝ մեծ և ինքնավար միացյալ Հայաստան ստեղծելու հայկական կողմի ձգտումները դատապարտվում են ձախողման: 1916 թ. գարնանը Անտանտի երեք տերությունների միջև ստորագրված գաղտնի համաձայնագիրը ծանր հարված հասցրեց միացյալ և ինքնավար Հայաստանի գաղափարին: Հայկական տարածքները բաժանվելու էին երկու տերությունների միջև: Ռուսաստանը մտադրություն չունեի ինքնավարություն տալու արևմտահայությանը, քանի որ դա կարող էր նմանատիպ ձգտումներ առաջացնել արևելահայության շրջանում: Սակայն 1916 թ. աշնանը Ֆրանսիան հայերին խոստացավ ինքնավարություն տալ իրեն անցնող հայկական տարածքներին:

1916 թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնում Պ. Նուբարի, բրիտանացի դիվանագետ Մարկ Սայքսի և Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժորժ Պիկոյի

45 Ст'ю «Раздел Азиатской Турции», էջ 185-188:

միջև Հայկական լեգեոնի կազմավորման շուրջ ձեռք բերված համաձայնությամբ նախատեսվում էր, որ Ֆրանսիան պատերազմի հաղթական ավարտից հետո ինքնավարություն էր շնորհելու Կիլիկիային և երեք վիլայեթներին (Սեբաստիա, Խարբերդ, Դիարբեքիր), որոնք գտնվելու էին իր հովանու ներքո⁴⁶: Դեկտեմբերի 12-ին Ֆրանսիայի ԱԳՆ Արևելքի վարչության պետ Ժան Գուն վստահեցրեց Պ. Նուբարին և Հովհաննես խան Մասեհյանին, որ Հայաստանի այն հատվածը, որն անցնելու էր Ֆրանսիային, կստանա ինքնավարություն⁴⁷:

Այսպիսով՝ հայ գործիչների համար պարզ էր, որ միացյալ Արևմտահայաստանի ստեղծումը հետաձգվում է: Սակայն նրանց մոտ հույսեր առաջացան, որ կարող են Կիլիկիայի և Արևմտյան Հայաստանի մի մասում ստեղծել ինքնավար պետություն, իսկ Ռուսաստանի տիրապետության տակ անցնող հայկական տարածքներում հայերը ինքնակազմակերպման որոշակի հնարավորություն կստանան:

Առաջին աշխարհամարտի տարիներին միջազգային քաղաքական իրադրությունը բավական արագ էր փոխվում՝ պայմանավորված տարբեր ճակատներում հաջողություններով ու անհաջողություններով, պատերազմի մեջ նոր պետությունների ներգրավմամբ, տեղի ունեցող հեղափոխություններով ու հեղաշրջումներով: 1917 թ. ստեղծվեց միջազգային նոր իրադրություն, երբ Ռուսաստանում փետրվարի 27-ին տեղի ունեցած հեղափոխության հետևանքով տապալվեց ցարական վարչակարգը, իսկ ապրիլի 6-ին Անտանտի պետությունների կողմից պատերազմի մեջ մտավ ԱՄՆ-ն: Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը հանդես եկավ ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա հաշտություն կնքելու մասին հայտարարությամբ, բայց միաժամանակ իր խնդիրներից մեկը համարեց ասիական Թուրքիայի ոչ թուրք բնակչության ազատագրումը⁴⁸: Ռուսական կառավարության այդ դիրքորոշումը կրկին ոգևորեց հայ գործիչներին և նոր հույսեր արթնացրեց նրանց մոտ:

Արտաքուստ հայանպաստ հայտարարություններով հանդես եկավ նաև ֆրանսիական կողմը: 1917 թ. մայիսի 22-ին Ֆրանսիայի Ազգային Ժողովում վարչապետ Ալեքսանդր Ռիբոն հայտարարեց, որ իր երկիրը հրաժարվում է գաղութացման քաղաքականությունից⁴⁹:

Փաստորեն, Անտանտի երկու տերությունները, որոնց միջև պետք է բաժանվեր Հայաստանը, հայտարարեցին գաղութացման քաղաքականութե

46 Տե՛ս Boghos Nubar's Papers, էջ 393-397:

47 Տե՛ս նույն տեղում, էջ 415-418:

48 Տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997, էջ 11:

49 Տե՛ս Boghos Nubar's Papers, էջ 437:

յունից հրաժարվելու, ճնշված ազգերին պաշտպանելու մասին: Թվում էր՝ միջազգային իրադրությունը փոխվում է ի նպաստ հայերի, և Միացյալ Հայաստանի հարցը կրկին կարող է ներկայացվել միջազգային դիվանագիտությանը:

Միջազգային նոր իրադրության պայմաններում Պ. Նուբարը կրկին վերադարձավ միացյալ և ինքնավար Հայաստան ստեղծելու գաղափարին, որից ժամանակին ստիպված էր եղել հրաժարվել ցարիզմի վարած նվաճողական քաղաքականության պատճառով: «Միացյալ Հայաստան» ասելով՝ նա նկատի ուներ Արևմտյան Հայաստանի վեց նահանգներն ու Կիլիկիան: Պ. Նուբարը անհրաժեշտ էր համարում ինքնավար Հայաստանը դնել Անտանտի պետությունների ընդհանուր հովանու ներքո, իսկ նրանցից մեկը (գերադասելի էր ԱՄՆ-ն) պետք է 10-15 տարով ստանձներ երկրի մանդատը՝ արտաքին հարձակումներից պաշտպանելու և քայքայված տնտեսության վերականգնմանն օժանդակելու համար: Այդ ոգով էր խմբագրված 1917 թ. մայիսի 24-ին Ազգային պատվիրակության կողմից դաշնակիցներին ուղղված հուշագիրը՝ վերնագրված «Յուշագիր Հայկական հարցի և Հայաստանի ազատագրութեան վերաբերեալ»⁵⁰:

Այսպիսով՝ հայ գործիչները, օգտվելով բարենպաստ թվացող միջազգային նոր իրադրությունից, փորձում էին հասնել Հայկական հարցի վերջնական լուծման: Հետաքրքիրն այն էր, որ որոշ գործիչներ նույնիսկ սկսեցին բարձրաձայնել անկախ հայկական պետության ստեղծման գաղափարը: Մինչ այդ, եթե չհաշվենք հատուկենտ անհատների առաջարկները, բարձրացվել էր միայն ինքնավարության հարցը, իսկ անկախությունը մինչև 1917 թ. թվում էր անիրականանալի երազանք: Անկախության գաղափարը հայության լայն շրջանակներում դեռևս հասունացած չէր, և հետագա իրադարձությունների պայմաններում հայ գործիչները չկարողացան ժամանակին ճիշտ քայլեր ձեռնարկել անկախ պետականությունը վերականգնելու ուղղությամբ:

Ռուսաստանի ժամանակավոր կառավարության ազգային քաղաքականությունը բավականին ոգևորիչ էր: Այն ճանաչել էր Լեհաստանի անկախությունը, Ֆինլանդիայի և Ուկրաինայի ինքնավարությունը⁵¹: Բնականաբար, այդ ամենը հայոց քաղաքական գիտակցության մեջ նույնպես սկսում էր սերմանել անկախության գաղափարը:

Անկախության գաղափարի հասունացման և նույնիսկ կենսագործման համար շուտով ավելի լուրջ կռվաններ են առաջ գալիս: Հոկտեմբերյան

50 ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 14-15:

51 Տե՛ս Керенский А., Россия на историческом повороте: Мемуары, М., 1993, էջ 158:

հեղաշրջումից հետո Ռուսաստանի խորհրդային իշխանությունը 1917 թ. նոյեմբերի 2-ին հրապարակեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագիրը⁵²: Այն ռուսական տիրապետության տակ ապրող ազգերին ազատ ինքնորոշման, ընդհուպ անջատման և ինքնուրույն պետություն կազմավորելու իրավունք էր տալիս: Իսկ 1917 թ. դեկտեմբերի 29-ին Ռուսաստանի ժողովխորհի ընդունած «Թուրքահայաստանի մասին» դեկրետով արևմտահայությանը իրավունք էր տրվում որոշելու սեփական ապագան, նույնիսկ անկախանալու⁵³: Սակայն իրադարձությունները զարգանում էին բավական արագ և անսպասելիորեն. մի կողմից Հայաստանի առջև բացվում էր դարերով սպասված անկախության, մյուս կողմից՝ պատերազմում դեռևս չպարտված թուրքերի դեմ միայնակ մնալու հեռանկարը, քանի որ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ռուսական զորքերը սկսել էին հեռանալ Կովկասյան ճակատից:

1918 թ. սկզբին հայ քաղաքական միտքը դեռևս պատրաստ չէր ընդունելու անկախության գաղափարը: Դրանով էր պայմանավորված այն իրողությունը, որ հայ գործիչներն ինքնուրույն գործելու և անկախություն հռչակելու փոխարեն սկսեցին համագործակցության ուղիներ փնտրել վրացիների ու թաթարների հետ: Ինչպես ցույց տվեց պատմությունը, այդ երեք ազգերը, ունենալով ապագայի վերաբերյալ իրար հակասող ծրագրեր, չկարողացան ստեղծել միասնական պետություն: Անկախություն հռչակելու և սեփական խնդիրներն ինքնուրույն կամ Անտանտի պետությունների աջակցությամբ լուծելու անկարողությունն ի վերջո հանգեցրեց նոր ողբերգության: Նախ խորհրդային Ռուսաստանը դուրս եկավ պատերազմից՝ 1918 թ. մարտի 3-ին կնքելով Բրեստ-Լիտովսկի խայտառակ պայմանագիրը, ապա Հայոց ազգային խորհուրդը ստիպված էր չափազանց ուշացումով՝ 1918 թ. մայիսի 28-ին հռչակել Հայաստանի անկախությունը, իսկ հունիսի 4-ին կնքել Բաթումի պայմանագիրը:

4. Հայաստանի անկախացումը և Միացյալ ու Անկախ Հայաստանի տեսլականը

Հայաստանի Հանրապետությունը ստեղծվեց ռազմաքաղաքական չափազանց բարդ պայմաններում: Շուրջ 12.000 կմ² ընդգրկող հողակտորի վրա վերականգնվեց հայոց պետականությունը: Անկախության հռչա-

52 Տե՛ս «Հայաստանը ... փաստաթղթերում», էջ 410-412:

53 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 1960, էջ 156-157: Տե՛ս նաև «Հայաստանը ... փաստաթղթերում», էջ 418-419:

կումն ու ընդունումը թուրքական պետության կողմից պայմանավորված էր հայկական բանակի մղած 1918 թ. Մայիսյան հերոսամարտերով: Թուրքերը ստիպված էին տեղի տալ հայերի համառ դիմադրության առաջ և ձանաչել Հայաստանի Հանրապետությունը, մանավանդ որ շտապում էին հասնելու Բաքու, որտեղ հայկական դիմադրության ևս մի օջախ կար:

Բաթումի պայմանագիրը ձեռնտու չէր ո՛չ հայերին, ո՛չ թուրքերին: Հայերի համար այն չափազանց փոքր տարածք էր նախատեսում, որի վրա կենսունակ պետություն կազմավորելն ուղղակի անհնար էր: Հետևաբար հայկական կողմը հույս ուներ կա՛մ Գերմանիայի աջակցությամբ վերանայելու այդ ծանր պայմանագիրը, կա՛մ Անտանտի հաղթանակով այն անվավեր դարձնելու: Օսմանյան կայսրությունը իր հերթին ցանկություն չուներ պանթուրքիզմի ծավալապաշտական քաղաքականության ձանապարհին թողնելու հայկական կղզյակ, որը ցանկացած հարմար առիթի դեպքում կարող էր լուրջ վտանգի վերածվել: Միակ պատճառը, որ թուրքերը ժամանակավորապես համաձայնեցին թույլ տալ հայկական պետության գոյությունը, այն էր, որ նպատակ ունեին հնարավորինս շուտ հասնելու Բաքու, որի նավթի կարիքը խիստ նեղում էր Քառյակ դաշինքի երկրներին: Թուրքական բանակը այդ քաղաքը կարողացավ գրավել միայն 1918 թ. սեպտեմբերի 15-ին, երբ բրիտանական փոքրաթիվ օժանդակ ուժերը, առանց հայերին տեղյակ պահելու, լքեցին իրենց դիրքերը և հեռացան Պարսկաստան: Եթե թուրքերին հաջողվեր ավելի շուտ գրավել Բաքուն, ապա նրանք վստահաբար զորքերը կրկին կշարժեին Երևանի ուղղությամբ: Բաքվի գրավումից 3 օր անց Պաղեստինում սկսվեց բրիտանական զորքերի գլխավոր հարձակումը, որոնց կողքին կռվում էր նաև ֆրանսիական դրոշի ներքո հանդես եկող Հայկական լեգեոնը: Պաղեստինում, Սիրիայում, Հորդանանում և Լիբանանում գտնվող թուրքական 3 բանակներն ամբողջությամբ ոչնչացվեցին: Պա թուրքերին ստիպեց ոչ միայն մոռանալ Երևան արշավելու նպատակադրումը, այլև մտածել անձնատվության մասին: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում ստորագրված զինադադարով թուրքերն անձնատուր եղան: Զինադադարի մի քանի հոդվածներ ուղղակիորեն առնչվում էին հայկական շահերին:

«Հոդված 4. Բոլոր դաշնակցային ռազմագերիները, բոլոր հայ ռազմագերիները և ներկալվածները պետք է ժողովվեն Կ. Պոլսում, որպեսզի առանց որևէ պայմանի հանձնվեն դաշնակիցներին:

Հոդված 10. Տավրոսի թունելների համակարգի գրավում դաշնակիցների կողմից:

Հոդված 11. Թուրքական զորքերը պետք է անմիջապես հետ քաշվեն հյուսիսարևմտյան Պարսկաստանից մինչև նախապատերազմյան սահմանը: Թուրքական զորքերն արդեն ստացել են Անդրկովկասի մի մասը էվակուացնելու հրաման, ընդ որում՝ մնացած զորքերը կհեռացվեն, եթե տեղերում իրադրությունն ուսումնասիրելուց հետո դաշնակիցները ներկայացնեն այդպիսի պահանջ:

Հոդված 16. Հեջազում, Ասիրում, Եմենում, Սիրիայում և Միջագետքում գտնվող բոլոր թուրքական կայազորները պետք է հանձնվեն մոտակա դաշնակցային հրամանատարությանը, բոլոր զորքերը պետք է դուրս բերվեն Կիլիկիայից, բացառությամբ նրանցից, որոնք անհրաժեշտ են կարգը պահպանելու համար, ինչը կարող էր որոշվել համաձայնագրի 5-րդ հոդվածով:

Հոդված 24. Հայկական վեց վիլայեթներում անկարգություններ ծագելու դեպքում դաշնակիցները իրենց վերապահում են դրանց մի մասը գրավելու իրավունք»⁵⁴:

Փաստորեն, Մուդրոսի զինադադարով Հայաստանի մեծ մասը թողնվում էր թուրքական զորքերի վերահսկողության տակ, ինչը հետագայում հանգեցրեց Հայկական հարցի ձախողմանը: Զինադադարի պայմաններից դրական էին Տավրոսի լեռնահամակարգի թունելների գրավումը, Կիլիկիայից թուրքական զորքերի հեռացման պահանջը, չնայած այնտեղից նույնպես ամբողջությամբ չէին հեռանալու:

Ինչպես տեսնում ենք, հայկական վեց վիլայեթների հսկողությունը թողնված էր թուրքերին, և նույնիսկ Անդրկովկասի մի մասում կարգուկանոն պահպանելու պատրվակով թուրքական զորքերը չէին հեռանալու, մինչև դաշնակիցները կներկայացնեին այդպիսի պահանջ:

Մուդրոսի զինադադարով Արևմտյան Հայաստանը թուրքական վերահսկողության տակ թողնելը կարող էր պայմանավորված լինել բրիտանացիների ձգտումով՝ թույլ չտալու Ֆրանսիային վերցնել միասնական Հայաստանի մանդատը, որը կծգվեր Կովկասից մինչև Միջերկրական: Դա հնարավորություն կտար Ֆրանսիային ամրապնդվելու նաև Սիրիայում և Մոսուլում:

Բրիտանիան այս շրջանում արդեն քայլեր էր ձեռնարկել Մոսուլը իր ազդեցության տակ վերցնելու համար, իսկ Սիրիայում աջակցում էր էմիր Ֆեյսալի համաարաբական նկրտումներին⁵⁵: Սիրիայի շուրջ ֆրանս-բրիտանական լուրջ հակասություններն ու սուր բանավեճերը հետագայում

54 Frederick Maurice, The Armistices of 1918, Oxford University Press, 1943, pp. 85-87. Տե՛ս նաև «Հայաստանը փաստաթղթերում», էջ 537-539:

55 Տե՛ս Փոմին Ա., նշվ. աշխ., էջ 70, 74:

բավական վնասեցին հայության շահերին: Սակայն այս շրջանում հայ քաղաքական գործիչները դեռևս չափազանց ոգևորված էին, և նրանց թվում էր, որ մի քանի դար տևած անկախության կորստից հետո արդեն մոտ էր ազատ, անկախ, միացյալ հայրենիք ունենալու հնարավորությունը:

1918 թ. հոկտեմբերի 31-ին Բեռլինում Համազասպ Օհանջանյանի ղեկավարած ՀՀ պատվիրակությունը խորհրդակցություն գումարեց, որին ներկա էին Մովսես Աճեմյանը, դոկտոր Գրինֆիլդը, Ուկրաինայում ՀՀ ներկայացուցիչ Գրիգոր Ջամոյանը և ուրիշներ: Քննարկելով միջազգային իրադրությունը՝ նրանք եկան այն եզրահանգմանը, որ անհրաժեշտ է միավորել Ռուսահայաստանը և Թուրքահայաստանը միասնական անկախ պետության մեջ, որը հայտարարելու էր հավերժական չեզոքություն: Եթե միավորումը անհնար լիներ, ապա պետք է ստեղծվեր անկախ Հայաստան՝ Արևմտյան Հայաստանի նահանգների ու Կիլիկիայի հենքի վրա, ծովային ելքերով Միջերկրական և Սև ծով⁵⁶: Ինչպես տեսնում ենք, նույնիսկ ՀՀ պատվիրակությունը վստահ չէր, որ Անտանտի տերությունները կհամաձայնեին ձանաչել նախկին դաշնակից Ռուսաստանից Արևելյան Հայաստանի անկախացումը: Հետևաբար արևելահայ գործիչները, ովքեր նաև ՀՀ պետական պաշտոնյաներ էին, առաջնահերթ էին համարում Օսմանյան կայսրության հայկական բոլոր տարածքների միավորմամբ անկախ պետականության ստեղծումը, ապա Արևելյան Հայաստանի միավորումը դրան:

Օսմանյան կայսրությունը ջախջախված էր, ցարական Ռուսաստանը՝ փլուզված, և հայության իղձերի իրականացումը խոչընդոտող ակնհայտ հանգամանքներ չկային: Այսպիսով՝ թվում էր, թե Արևելյան ու Արևմտյան Հայաստանների և Կիլիկիայի միավորումով հայկական միասնական անկախ պետության կազմավորումը կարող է իրականություն դառնալ ամենակարճ ժամկետներում:

Միացյալ Հայաստանի գաղափարը զինադադարից հետո ոչ մի հակառակորդ չունեի մեծ տերությունների շրջանում: Վերջիններս դեռևս դրական էին տրամադրված հարցի լուծմանը: Սակայն միացյալ հայկական պետության հովանավորության հարցի շուրջ կային տարակարծություններ: Ֆրանսիան ձգտում էր վերցնելու Հայաստանի մանդատը, սակայն Բրիտանիան դեմ էր ֆրանսիական ազդեցության մեծացմանը տարածաշրջանում և փորձում էր ԱՄՆ-ին շահագրգռել վերցնելու այն: ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը իր հերթին դեմ չէր Մերձավոր Արևելքում, հատկապես՝ Հայաստանում, ամերիկյան ներկայության ապահովմանը:

⁵⁶ Տե՛ս Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 328:

1918 թ. նոյեմբերի 21-ին Բրիտանիայի ԱԳՆ քաղաքական հետախուզության վարչությունը կազմեց հուշագիր՝ «Կարգավորումները Թուրքիայում և Արաբական թերակղզում» վերնագրով: Այն նախատեսում էր հայկական ընդարձակ պետության կազմավորում, որը լինելու էր բրիտանացիներին բարեկամ երրորդ տերության հովանու ներքո: Նախատեսվում էր Ֆրանսիային թույլ տալ վերցնել Հայաստանի մանդատը միայն այն դեպքում, եթե այն չվերցնեի ԱՄՆ-ն⁵⁷:

1918 թ. վերջին Վ. Վիլսոնին իր գլխավոր խորհրդական գնդապետ Էդուարդ Հաուզի ներկայացրած գեկուցագրում առաջարկվում էր ստեղծել Հայաստան՝ ելքով դեպի Միջերկրական ծով: Նշվում էր, որ այն պետք է որևէ տերության մանդատի ներքո գտնվի: Է. Հաուզը գտնում էր, որ Ֆրանսիան գուցե ցանկանա վերցնել Հայաստանի մանդատը, սակայն հայերը իբր գերադասում են Բրիտանիային: Արդեն դեկտեմբերին Լոնդոնում Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լոյդ Ջորջը և ԱԳ նախարար Ջորջ Քերզոնը Վ. Վիլսոնին առաջարկեցին ստանձնել Կ. Պոլսի, նեղուցների և Հայաստանի մանդատը⁵⁸: Այսպիսով՝ բրիտանական կողմը հետզհետե Հայաստանի մանդատի համար պայքարի մեջ ներքաշեց ԱՄՆ-ին:

Հայաստանի ապագայի հարցը պետք է լուծվեր Փարիզում 1919 թ. հունվարին սկսվող հաշտության բանակցություններում: Թվում էր, որ 1919 թ. առաջին կեսին Փարիզի վեհաժողովը կավարտվեր և լուծում կտար նաև հայությանը հուզող հարցերին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը երկարատև քննարկումներից հետո որոշեց պատվիրակություն ուղարկել Եվրոպա՝ մասնակցելու Փարիզի հաշտության վեհաժողովին: Այն պետք է տեղում իրավիճակին ծանոթանալուց հետո որոշեր միանալ Ազգային պատվիրակությանը կամ գործեր առանձին: ՀՀ պատվիրակության նախագահ նշանակվեց Ավետիս Ահարոնյանը, իսկ անդամներ՝ Հ. Օհանջանյանը և Միքայել Պապաջանյանը: 1918 թ. դեկտեմբերի 7-ին հաստատված հրահանգներով ՀՀ պատվիրակությունը Փարիզի վեհաժողովից պահանջելու էր ստեղծել միացյալ Հայաստան՝ Անդրկովկասի հայկական տարածքների ու վեց վիլայեթների միավորմամբ, ելքով դեպի Սև ծով: Եթե չհաջողվեր ապահովել այդ սահմանները, ապա Հայաստանը նվազագույնը ներառելու էր Վանը, Բիթլիսը, Էրզրումը, իսկ Անդրկովկասում դուրս էին թողնվելու միայն Գանձակի ու Թիֆլիսի նահանգների որոշ շրջաններ, սակայն ծովային ելքը պարտադիր էր: Մանդատը գերադասելի էր հանձնել այնպիսի

57 Տե՛ս Фомин А., նշվ. աշխ., էջ 95-96:

58 Տե՛ս նույն տեղում, էջ 90-91:

պետության, որը շատ չէր միջամտի երկրի ներքին գործերին⁵⁹: Այդպիսի պետություն էր դիտարկվում ԱՄՆ-ն:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ կառավարությունը նկրտումներ չուներ Կիլիկիայի նկատմամբ և նույնիսկ պատրաստ էր հրաժարվելու Սեբաստիայի, Խարբերդի ու Դիարբեքրի նահանգներից: Հավանաբար այդպես ցանկանում էին խուսափել Ֆրանսիայի հակազդեցությունից, քանի որ արդեն հայտնի էին Սայքս-Պիկոյի համաձայնագրով այդ տերության հավակնությունները վերոնշյալ հայկական տարածքների նկատմամբ: ՀՀ իշխանությունները պահանջելու էին միայն այն տարածքները, որոնք Սայքս-Պիկոյի համաձայնագրով անցնելու էին Ռուսաստանին: Սակայն Ա. Ահարոնյանը, Փարիզում ծանոթանալով միջազգային նոր իրադրությանը, մեծ տերությունների թվացյալ դրական տրամադրվածությանը միացյալ Հայաստանի գաղափարին, որոշեց ավելի ընդգրկուն պահանջներ ներկայացնել: Փարիզում Ազգային և ՀՀ պատվիրակությունները կազմեցին հայկական պահանջների միասնական ծրագիր: Մանդատի հարցում երկու պատվիրակություններն էլ գերադասում էին ԱՄՆ-ին: Չնայած ՀՀ պատվիրակությանը տրված հրահանգներում, ինչպես վերը տեսանք, խոսք չկար Կիլիկիայի մասին, սակայն Ա. Ահարոնյանը համակերպվեց այն հայկական պահանջների մեջ մտցնելու Ազգային պատվիրակության դիրքորոշման հետ:

Այսպիսով՝ հայկական երկու պատվիրակությունները առաջ քաշեցին միացյալ Հայաստանի գաղափարը, որը ներառելու էր հայկական բոլոր տարածքները, որոնք նախկինում գտնվում էին ռուսական և օսմանյան տիրապետության տակ: Դա Հայկական հարցի վերջնական լուծման միակ արդար տարբերակն էր: Միջազգային իրադրությունը թվում էր նպաստավոր՝ հայ ազգային ձգտումների իրականացումը գործնական հողի վրա դնելու համար: ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան լիովին խրախուսում էին հայկական պահանջները: Տվյալ իրավիճակում հայ գործիչներին այլ բան չէր մնում, քան պահանջել ծովից ծով Հայաստանի կազմավորումը: Այդ ծրագրին չհետևելը կդիտվեր որպես ազգային շահերի դավաճանություն: Սակայն պետք է նշել, որ, Կիլիկիան պահանջելով, հայ պատվիրակները հանդիպեցին Ֆրանսիայի ընդդիմությանը, որը ձգտում էր այն վերցնելու իր հովանու տակ, և Հայկական հարցը հետագայում շատ տուժեց Ֆրանսիայի խարդավանքների հետևանքով:

Հայկական հարցի լուծումը կարող էր դրական ընթացք ստանալ, եթե թուրքական զորքերը ժամանակին վտարվեին հայկական տարածքներ:

59 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 10-12:

րից: Ինչպես տեսանք, դա չարվեց Մուդրոսի զինադադարով, երբ կարող էին առանց որևէ ջանք գործադրելու, ընդամենը մեկ հողվածով լուծել հարցը: Դա կարող էր արվել նաև 1919 թ. առաջին կեսին, երբ դեռևս չկար քենալական շարժումը, իսկ դաշնակիցները իրական հնարավորություն ունեին գրեթե առանց կրակոցի ազատագրելու հայկական տարածքները:

1919 թ. փետրվարի 5-ին Անտանտի երկրների ռազմական ներկայացուցիչները համաձայնության եկան օսմանյան տարածքներում զորքերի տեղաբաշխման շուրջ. բրիտանացիները մնալու էին Միջագետքում և Պաղեստինում, ֆրանսիացիները զբաղեցնելու էին Սիրիան և Կիլիկիան, իտալացիները՝ Ադալիան և Կովկասը, ամերիկացիները՝ Հայաստանը և Քրդստանը: Հարցը պետք է քննարկվեր և վերջնական լուծում ստանար փետրվարի 11-ին նշանակված Տասի խորհրդի նիստում⁶⁰: Սակայն այդ խնդրի շուրջ հետագա քննարկում տեղի չունեցավ հավանաբար բրիտանացիների դժգոհության պատճառով: Վերջիններս այդ շրջանում փորձում էին Ֆրանսիային թույլ չտալ գրավել Սիրիան: Ամիսներ շարունակ սիրիական խնդրի շուրջ ֆրանս-բրիտանական սուր բանավեճեր ծավալվեցին: Հենց այդ միջդաշնակցային հակասությունները խոչընդոտեցին ժամանակին Հայաստան զորքեր մտցնելը, ինչպես նաև ֆրանսիացիների մուտքը Կիլիկիա երկար ժամանակ արգելակվեց:

1919 թ. փետրվարի 26-ին Պ. Նուբարը և Ա. Ահարոնյանը հրավիրվեցին Փարիզի վեհաժողովի Տասի խորհրդի նիստին՝ ներկայացնելու հայկական պահանջները: Հայ պատվիրակները Տասի խորհրդի անդամներին բաժանեցին Հայկական հարցի վերաբերյալ կազմած հայկական հուշագիրը⁶¹: Ըստ հուշագրի՝ հայկական պետությունն ընդգրկելու էր հետևյալ տարածքները՝ 1. Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբեթ, Էրզրում, Սեբաստիա և Տրապիզոն՝ առանց Տիգրիսից հարավ և Օրդու-Սեբաստիա գծից արևմուտք ընկած շրջանների, 2. Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշ, Խոզան (Սիս), Ջեբել-Բերեքթեթ և Ադանա՝ Ալեքսանդրետով, 3. Կովկասի Հայկական Հանրապետության տարածքը՝ Երևանի նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Գանձակի նահանգի հարավարևմտյան մասը, Կարսի նահանգը՝ առանց Արդահանից հյուսիս ընկած շրջանի:

1919 թ. մարտի 7-ին Դ. Լյոյդ Ջորջը, Ժ. Կլեմանսոն և Է. Հաուզը քննարկեցին օսմանյան ժառանգության հարցը: Լ. Ջորջը Ֆրանսիային առաջարկեց վերցնել Սիրիան, իսկ Կիլիկիայի հարցում համաձայնության

60 Տես Փոմին Ա., նշվ. աշխ., էջ 114:

61 Տես «Հայկական Հարցը Հաշտության կոնֆերանսի առաջ», Թիֆլիս, 1919:

զալ ԱՄՆ-ի հետ: Է. Հաուզը նշեց, որ ԱՄՆ-ն պատրաստ է ստանձնելու նույնիսկ ամբողջ Անատոլիայի վերահսկողությունը: Ի վերջո ժ. Կլեմանսոն հարկադրված նշեց, որ համաձայն է Կիլիկիան միացնել հայկական մանդատին: 1919 թ. մայիսի 13-ին Վ. Վիլսոնի և ժ. Կլեմանսոյի հետ հանդիպման ընթացքում Դ. Լյոյդ Ջորջը առաջարկեց Անատոլիայի արևմտյան հատվածը հանձնել հույներին, հարավայինը՝ Իտալիային, հյուսիսայինը՝ Ֆրանսիային, իսկ Հայաստանը և Կ. Պոլիսը՝ ԱՄՆ-ին: Եթե ԱՄՆ Կոնգրեսը հրաժարվեր Հայաստանի մանդատից, ապա առաջարկվում էր այն հանձնել Ֆրանսիային: Սակայն մայիսի 17-ին Լյոյդ Ջորջը հետ կանգնեց իր առաջարկներից՝ պատճառաբանելով, որ Թուրքիայի մասնատումը կարող է գրգռել աշխարհի մուսուլմաններին, և անհրաժեշտ է նրա մանդատը տալ մեկ երկրի: Մայիսի 21-ին Վ. Վիլսոնը ժ. Կլեմանսոյին և Լյոյդ Ջորջին տեղեկացրեց, որ ԱՄՆ-ն կվերցնի Հայաստանի մանդատը, սակայն հրաժարվում է Անատոլիայից⁶²:

Հետաքրքիր է, որ բրիտանացիները ԱՄՆ-ին ներքաշեցին Հայաստանի մանդատի համար պայքարի մեջ՝ դրանով Ֆրանսիային զրկելով այն վերցնելու հնարավորությունից: Սակայն ամեն առիթով Բրիտանիան հուսադրում էր, որ ԱՄՆ-ի հրաժարվելու դեպքում պատրաստ է ձանաչելու Ֆրանսիայի իրավունքները ամբողջ Հայաստանի նկատմամբ: Այդ երկդիմի քաղաքականությունը ի վերջո ողբերգական հետևանքներ ունեցավ հայության համար:

Չնայած սկզբնապես բարենպաստ թվացող իրադրությանը՝ գործընթացները սկսեցին զարգանալ ոչ ի նպաստ հայերի: Մի կողմից՝ Մերձավոր Արևելքում Բրիտանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի գաղութատիրական նկրտումները և դրանց շուրջ անգիջում պայքարը, մյուս կողմից՝ հետզհետե ծավալվող քեմալական շարժումը վտանգեցին Հայկական հարցի արդարացի լուծման հեռանկարը:

1919 թ. հուլիսի 20-ին Վ. Վիլսոնը Բրիտանիայի ԱԳ նախարար Արթուր Բալֆուրին տեղեկացրեց, որ ԱՄՆ-ն չի միջամտի մերձավորարևելյան խնդիրների լուծմանը և չի վերցնի մանդատ: Իսկ պետքարտուղար Ռոբերտ Լանսինգը ավերված Հայաստանի մանդատը իրենց առաջարկելը համեմատում էր Սահարան առաջարկելու հետ և դա վիրավորական էր համարում⁶³:

1919 թ. սեպտեմբերի 11-ին ժ. Կլեմանսոն Դ. Լյոյդ Ջորջին տեղեկացրեց, որ պատրաստ է Կիլիկիայով 12.000 զինվոր ուղարկելու Հայաստան,

62 Տե՛ս նույն տեղում, էջ 118-119, 132, 134, 137:

63 Տե՛ս **Формин А.**, նշվ. աշխ., էջ 159:

որին կողմ էր արտահայտվել նաև Ա. Բալֆուրը: 1919 թ. սեպտեմբերի 13-ին Ղ. Լյոյդ Ջորջը տեղեկացրեց Ժ. Կլեմանսոյին, որ դեմ չեն Մերսինում և Ալեքսանդրետում ֆրանսիական զորքերի ավիանանը՝ հայ ժողովրդին օգնելու համար, քանի որ բրիտանական զորքերը դուրս են բերվելու Կիլիկիայից և Սիրիայից⁶⁴: Սակայն Ֆրանսիան իրականում նպատակ չունեի զորքերը մինչև Հայաստան տեղափոխելու: Այդ ժամանակաշրջանում Ժ. Կլեմանսոյի միակ նպատակը բրիտանացիներին Կիլիկիայից ու Սիրիայից հեռացնելը և այդ երկրամասերում ֆրանսիական ռազմական ներկայություն ապահովելն էր: Հայաստան գործ ուղարկելը կամ մանդատը վերցնելը Ֆրանսիային այլևս չէր հետաքրքրում: Վերջինս նույնիսկ Սիրիան ու Կիլիկիան ռազմա-կալելու համար բավարար ուժեր չունեի:

1919 թ. նոյեմբերի երկրորդ կեսին Պ. Նուբարը Լոնդոնում հանդիպեց Բրիտանիայի նոր ԱԳ նախարար Ջորջ Քերզոնի հետ: Վերջինս տեղեկացրեց, որ ԱՄՆ-ն չի վերցնի Հայաստանի մանդատը, որից հրաժարվել էին նաև Բրիտանիան, Ֆրանսիան և Իտալիան, այդ պատճառով էլ անհնար էր ծովից ծով Հայաստան ստեղծել, հետևաբար Կիլիկիան մնալու էր Ֆրանսիային: Ջ. Քերզոնը նշեց, որ Մուստաֆա Քեմալին Հայաստանից հեռացնել որևէ պետություն հանձնառու չի լինի: Նա եզրակացրեց, որ հայերը բավարարվելու են կովկասյան Հայաստանի և Արևմտյան Հայաստանի երեք վիլայեթների (Էրզրում, Վան, Բիթլիս) միավորմամբ՝ ունենալով ելք դեպի Սև ծով⁶⁵:

Փաստորեն, զինադադարի կնքումից մեկ տարի անց ծովից ծով Հայաստանի գաղափարը անէացավ, և պարզ դարձավ, որ լավագույն դեպքում Հայաստանի կազմում կարող էին ներառվել միայն Էրզրումի, Վանի, Բիթլիսի նահանգները, այսինքն՝ այն նվազագույն տարածքները, որոնք ՀՀ իշխանությունները պահանջում էին դեռևս 1918 թ. դեկտեմբերին:

Այսպիսով՝ 1919 թ. վերջերին արդեն պարզ էր, որ անհնար է իրականություն դարձնել ծովից ծով Հայաստանի գաղափարը, և հայ պատվիրակները դրանից հետո ձգտում էին Կիլիկիայի համար ինքնավարություն ձեռք բերելու Ֆրանսիայի հովանու տակ, իսկ Արևմտյան Հայաստանից հնարավորինս ընդարձակ տարածքներ միավորելու Հայաստանի Հանրապետությանը:

Մուդրոսի զինադադարի կնքումից մեկ տարի անց միայն Բրիտանիան և Ֆրանսիան սկսեցին լրջորեն քննարկել օսմանյան տարածքների ձակատագիրը: Դա հնարավորություն տվեց թուրքերին ուշքի գալու պատերազմում պարտվելու հետևանքով առաջ եկած հոգեբանական բար-

64 Տե՛ս նույն տեղում, էջ 173:

65 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 56, թ. 7-8:

դույթից, քենավական շարժումը սկսվեց և հաջողությամբ տարածվեց Անատոլիայի ու Արևմտյան Հայաստանի տարածքներում: Միաժամանակ Անտանտի երկրներում մեծ ծավալներ ընդունեցին հակապատերազմական ցույցերը, բանակների հիմնական մասը զորացրվեց, կրճատվեցին ռազմական հատկացումները: Հետևաբար **երբ 1919 թ. վերջերին Լոնդոնում սկսվեցին թուրքական հարցի քննարկումները, արդեն իրավիճակ էր փոխվել Եվրոպայում և Մերձավոր Արևելքում: Արդեն անհրաժեշտ էր Արևմտյան Հայաստանը ազատագրել քենավականներից, որոնց հիմնական կենտրոններից էին հայկական Սեբաստիան և Էրզրումը:**

1919 թ. դեկտեմբերի 22-ին Լոնդոնում Ջորջ Քերզոնը և Ֆրանսիայի ԱԳՆ քարտուղար Ֆիլիպ Բերտլոն քննարկեցին Օսմանյան կայսրության հետ պայմանագրի հարցը: Ֆ. Բերտլոն առաջարկում էր Հայաստանին չտալ Էրզրումը և Տրապիզոնը, դրա փոխարեն հանձնել Ադրբեջանի հետ վիճելի Ջանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը: Վերջին կետերին Ջ. Քերզոնը համաձայնեց, սակայն գտնում էր, որ ռազմավարական տեսանկյունից Էրզրումը անհրաժեշտ է Հայաստանին: Ծովային ելք նրանք առաջարկում էին տալ Բաթումով, որտեղ կարող էին ստեղծել անկախ պետություն: Ի վերջո Ֆ. Բերտլոն համաձայնեց նաև Էրզրումը Հայաստանին թողնելու գաղափարին⁶⁶:

1920 թ. փետրվարի 9-ին Կ. Պոլսում Ֆրանսիայի գերագույն կոմիսար Ժյուլ-Ալբերտ Դեֆրանսը վարչապետ Ալեքսանդր Միլերանին առաջարկեց թուրքական քաղաքականության երկու տարբերակ. 1) Անատոլիան բաժանել Ֆրանսիայի, Իտալիայի, Հունաստանի միջև և անխնա պայքար մղել թուրք ազգայնականների դեմ՝ հենվելով քրիստոնյաների, հատկապես՝ հայկական զինուժի վրա, 2) «թուրքական հողերը թողնել թուրքերին», դրանց նկատմամբ սահմանել վարչական վերահսկողություն և ֆրանսիական կապիտալի համար որոշ շրջաններում ապահովել առանձնաշնորհումներ: Դեֆրանսը ավելի ռացիոնալ էր համարում երկրորդ տարբերակը: 1920 թ. փետրվարի 10-ին Ա. Միլերանը Սիրիայում ֆրանսիական գերագույն կոմիսար գեներալ Անրի Գուրոյին առաջարկում է Մ. Քենալի հետ կապեր հաստատել և նրան հասկացնել, որ Ֆրանսիան կողմ է Կ. Պոլիսը թուրքերին թողնելուն և Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելուն, բացի արաբական տարածքներից և Հայաստանից: Վերջինի մեջ մտնելու էին ռուսական Հայաստանը և միայն Վանա լճի շրջակայքի հայկական պատմական տարածքները: Կիլիկիայում ֆրանսիական վերահսկողության

66 Տե՛ս **Фомин А.**, նշվ. աշխ., էջ 202:

ներքո առաջարկում էր պահպանել թուրքական անվանական գերիշխանությունը⁶⁷:

Փաստորեն, Ֆրանսիան, որը երկարատև պայքար էր մղում Կիլիկիայից բրիտանական զորքերը հեռացնելու և դրանք ֆրանսիականով փոխարինելու, Կիլիկիան հայկական պետությանը չմիացնելու համար, այդ երկրամասին փաստացի տիրելուց անմիջապես հետո քննարկման առարկա դարձրեց այն թուրքերին վերադարձնելու հարցը: Որովհետև Ֆրանսիան ընտրեց Ա. Դեֆրանսի առաջարկած երկրորդ տարբերակը՝ ֆինանսական և տնտեսական որոշ առանձնաշնորհումներ ապահովել թուրքիայում:

1920 թ. փետրվարի 17-ին Ֆ. Բերտլոն Լոնդոնի կոնֆերանսում հայտարարեց, որ Ֆրանսիան ցանկանում է զորքերը դուրս բերել Կիլիկիայից և այնտեղ թողնել վարչական ու ֆինանսական խորհրդականներ, տեղի ժանդարմերիայի ղեկավարությունը հանձնել ֆրանսիացի սպաների, և Կիլիկիան կլինի միայն Ֆրանսիայի տնտեսական գործունեության ու առանձնաշնորհումների տարածք⁶⁸: Դա լուրջ վտանգ էր ստեղծում ցեղասպանությունից փրկված ու Կիլիկիա վերադարձած ավելի քան 150.000 հայ բնակչության համար:

1920 թ. փետրվարի 21-ին Լոնդոնում Պ. Նուբարը, Ա. Ահարոնյանը և գեներալ Նիկոլայ Ղորղանյանը ներկայացան Հայաստանի սահմանների որոշման հանձնաժողովի նիստին, որում ընդգրկված էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի 2-ական ներկայացուցիչներ: Պ. Նուբարը ներկայացրեց հայկական պահանջները, իսկ Ն. Ղորղանյանը քարտեզի վրա գծեց սահմանները: Ըստ նրանց՝ Հայաստանի սահմանն անցնելու էր Տրապիզոնից արևմուտք, ընդգրկելու էր Լազիստանը, Դերսիմն ու Խարբերդի շրջանը, Էրզրումն ամբողջությամբ, Վանից դուրս էր թողնվում Հաքքիարին, Բիթլիսից՝ Սղերդը, Կիլիկիան ինքնավարություն էր ստանալու Ֆրանսիայի մանդատի ներքո, Հայաստանը երկաթուղային ելք էր ստանալու դեպի Միջերկրական ծով: Հանձնաժողովում դրսևորվեց Բրիտանիայի ու Ֆրանսիայի խուլ հակամարտությունը: Ֆրանսիան դրականորեն չէր տրամադրված հայերի հանդեպ և նույնիսկ առաջարկում էր բավարարվել առանց ծովային ելքի: Դաշնակիցները մշում էին, որ իրենք բավարար գորք և դրամ չունեն քենալականներին Հայաստանից վտարելու համար: Հայ պատվիրակները մշեցին, որ հայերը կարող են ազատագրել այդ

67 Տե՛ս նույն տեղում, էջ 211-212:

68 Տե՛ս նույն տեղում, էջ 218:

տարածքները սեփական ուժերով, եթե դաշնակիցները զենքով ու զինամթերքով օգնեն կազմավորելու 40.000-անոց բանակ⁶⁹:

1920 թ. մարտի 16-ին հայ պատվիրակները հերթական անգամ ներկայացան հանձնաժողովին: Նրանց հայտնեցին Հայաստանը Ազգերի լիգայի հովանու տակ դնելու Պերագույն խորհրդի որոշման մասին, քանի որ ոչ մի պետություն հանձն չէր առել վերցնել մանդատը, և հարցրին հայերի ռազմական, ֆինանսական ու վարչական կարիքների մասին: Հայ պատվիրակները տեղեկացվեցին, որ Հայաստանը կազմվելու է կովկասյան տարածքներին միավորելով Վանը, Բիթլիսը, Մուշը և Էրզրումը, սակայն առանց հասնելու Երզնկային⁷⁰:

Փաստորեն, Լոնդոնի խորհրդաժողովում արդեն ակնհայտ էր, որ Հայաստանի մանդատը որևէ պետություն չէր վերցնելու, որևէ տեղից ֆինանսական ու ռազմական աջակցություն սպասելը ինքնախաբեություն էր, լավագույն դեպքում Հայաստանի Հանրապետությանն էր միացվելու Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգների մի մասը, Սև ծովի ափին տրվելու էր նավահանգիստ:

5. Սան Ռեմոյի կոնֆերանսը որպես Սևրի պայմանագրի և Վ. Վիլսոնի իրավարար վճռի քաղաքական մեկնակետ

Օսմանյան կայսրությանն ամնչվող խնդիրների շուրջ վերջնական որոշում կայացվեց Սան Ռեմոյում կայացած դաշնակից երկրների ղեկավարների խորհրդաժողովում: Այն ապրիլի 18-ին և 20-24-ին քննարկեց Հայաստանի սահմանների խնդիրը⁷¹: Հատկապես բանավեճի առարկա էին Էրզրումը հայերին հանձնել-չհանձնելու, այն ազատագրելու հարցերը, քանի որ դաշնակիցները հակված չէին զորքեր ուղարկելու, իսկ հայերի ուժերն անբավարար էին համարում: Բրիտանիայի վարչապետ Դ. Լոյդ Ջորջը և Իտալիայի վարչապետ Ֆրանչեսկո Նիտտին անհնար էին համարում Էրզրումը թուրքերից ազատագրելը, նաև նշում էին այնտեղ թուրք բնակչության՝ մեծամասնություն լինելը, իսկ Ջ. Քերզոնը և Ֆ. Բերտոլոն նշում էին առանց Էրզրումի հայկական պետության ստեղծման անհնարիությունը:

69 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 215, թ. 1-2:

70 Տե՛ս Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 69-70:

71 խորհրդաժողովի՝ Հայաստանին վերաբերող քննարկումների արձանագրությունները տե՛ս «Հայաստանը ... փաստաթղթերում», էջ 612-671: Իսկ ապրիլի 23-ին Ա. Ահարոնյանի զեկույցի մասին տե՛ս նաև Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 97-101:

Ի վերջո, ապրիլի 24-ին տերությունների ղեկավարները որոշեցին Հայաստանի մանդատն առաջարկել ԱՄՆ-ին, իսկ եթե վերջինս չվերցնե՞ր այն, նախագահ Վ. Վիլսոնին էր թողնվում Հայաստանի սահմանները Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթներում գծելը: Այդ որոշման հիման վրա Վուդրո Վիլսոնին իրավարարի դեր ստանձնելու առաջարկը դաշնակից ուժերի Գերագույն խորհրդի կողմից արվում է 1920 թ. ապրիլի 25-ին, իսկ մայիսի 17-ին ԱՄՆ նախագահը հայտնում է, որ համաձայն է գործել որպես իրավարար: Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը ԱՄՆ նախագահ Վիլսոնին հայ-թուրքական սահմանի գծման հարցում իրավարար դառնալու առաջարկի ներկայացման հաջորդ օրը՝ ապրիլի 26-ին, տեղեկացնում է Ազգերի լիգային, իսկ մայիսի 11-ին հարցի խաղաղ կարգավորման պայմանները փոխանցվում են թուրքական պատվիրակությանը⁷²: Այսպիսով՝ իրավարարությունը մեկնարկել է Սևրի պայմանագրի ստորագրումից դեռ ամիսներ առաջ, հետևաբար դա միջազգային-իրավական միանգամայն ինքնուրույն գործընթաց էր մի կողմից՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի՝ իբրև դաշնակից ուժերի Գերագույն խորհրդի անդամների և մյուս կողմից՝ Վուդրո Վիլսոնի՝ իբրև ԱՄՆ նախագահի միջև⁷³:

Վուդրո Վիլսոնին Հայաստանի սահմանի հստակեցման հարցում իրավարարի դեր առաջարկելը, անշուշտ, ուներ իր հիմնավորումները, որոնք պայմանավորված էին միջազգային իրավարարի ընտրության համար պարտադիր համարվող արդարության ու անաչառության սկզբունքներով: Հաշվի առնելով այն հանգամանքները, որ ԱՄՆ-ն չէր պատերազմել Օսմանյան կայսրության դեմ և հարաբերություններ էր պահպանել ոչ միայն Օսմանյան կայսրության պաշտոնական կառավարության, այլև թուրք ազգայնականների հետ, Հայաստանի և Օսմանյան կայսրության միջև սահմանի հստակեցման հարցում առավել նպատակահարմար էր դիտվում ԱՄՆ նախագահի թեկնածությունը⁷⁴: Այսպիսով՝ վեճի կողմերի նկատմամբ ապահովվում էր իրավարարի չեզոքության և անշահախնդրության սկզբունքը, ինչը, ըստ Հաագայի 1899 թ. և 1907 թ. «Միջազգային հակամարտությունների խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաների, վեճերն իրավարարության (արբիտրաժի) միջոցով լուծելու պարտադիր պայմաններից մեկն էր:

72 Տե՛ս **Барсегов Ю.**, Арбитражное решение президента США по армяно-турецкой границе, էջ 15:

73 Տե՛ս **Барсегов Ю.**, Геноцид армян – преступление по международному праву, М., «XXI век – Согласие», 2000, էջ 182:

74 Տե՛ս նույն տեղում, էջ 181:

Այդուհանդերձ, թուրքական պատվիրակությունը փորձեց բողոքարկել հայ-թուրքական սահմանի հստակեցման համար նախաձեռնված իրավարարության գործընթացը: Խաղաղության վեհաժողովին ներկայացվեց թուրքական հերթական գեկուցագիրը, որում թուրքական կողմն իր անհամաձայնությունն էր հայտնում Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը վերանայելու կապակցությամբ: Ուստի 1920 թ. հուլիսի 17-ին Ֆրանսիայի վարչապետ Միլերանի ստորագրությամբ դաշնակից ուժերի Գերագույն խորհրդի (Չորսի խորհրդի) անունից թուրքական պատվիրակությանը հանձնվեց թուրքական պահանջները մերժող պատասխանը, որը լիովին կարելի է համարել այս իրավարարության կարևորագույն հիմնավորումներից մեկը: Պատասխան նոտայում մասնավորապես ասվում էր. «Թուրքական կառավարությունը չի կատարել իր ոչ թուրք հպատակներին թալանից, բռնություններից ու սպանություններից պաշտպանելու պարտականությունը: Ավելին՝ բազմաթիվ ապացույցներ վկայում են այն մասին, որ կառավարությունն ինքն իր վրա է վերցրել գազանաբարո հարձակումների ղեկավարման ու կազմակերպման պատասխանատվությունն այն բնակչության նկատմամբ, որին պետք է պաշտպաներ: Այդ իսկ պատճառով դաշնակից տերությունները չեն կարող փոփոխություններ մտցնել այն դրույթներում, որոնցով նախատեսվում է ստեղծել անկախ Հայաստան»⁷⁵:

Պետք է նշել, որ դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը Վուդրո Վիլսոնի իրավարարությունն ի սկզբանե սահմանափակել էր կոնկրետ տարածքներով: Հայ-թուրքական սահմանը գծելիս իրավարարը պետք է սահմանափակվեր Վանի, Բիթլիսի, Էրզրումի ու Տրապիզոնի նահանգներով, քանզի վերջինով Հայաստանի համար ապահովվելու էր ելք դեպի Սև ծով, առանց որի՝ իրավարարությունը կլիներ թերի: Տերությունները պարտավորվում էին ձեռնարկել հնարավոր միջոցներ, որպեսզի ԱՄՆ նախագահը կարողանար դեպի ծով ելք նախատեսել Հայաստանի համար⁷⁶:

Տարածքային այս սահմանափակման պնդումը պայմանավորված էր այն բանով, որ դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը մինչև Սան Ռեմոյի կոնֆերանսը տեղյակ էր ԱՄՆ նախագահ Վիլսոնի այն տեսակետին, որ Հայաստանի համար Կիլիկիայով պետք է ելք ապահովվի նաև դեպի

75 Նույն տեղում, էջ 183:

76 Տե՛ս **Барсегов Ю.**, Арбитражное решение президента США по армяно-турецкой границе, էջ 14:

Միջերկրական ծով⁷⁷: Այս դիրքորոշումն ԱՄՆ-ի կողմից հնչեցվեց նաև Սան Ռեմոյի կոնֆերանսում, սակայն Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան մնացին անդրդվելի: Նրանք շարունակում էին պնդել իրենց նախկին տեսակետը, որը, կարծում ենք, պայմանավորված էր ոչ թե «պատմությամբ և արդարությամբ», ինչպես պնդում էին այդ տերությունների ներկայացուցիչները, այլ դեռ Առաջին աշխարհամարտի ընթացքում Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով ձեռք բերված պայմանավորվածություններով, որոնց համաձայն՝ Երզրումը, Վանը, Բիթլիսը և Տրապիզոնի մի մասը փոխանցվելու էին Ռուսաստանին, իսկ Արևմտյան Հայաստանի մյուս վիլայեթները, ինչպես նաև Կիլիկիան՝ Ֆրանսիային⁷⁸:

Ակնհայտ է, որ Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի դիրքորոշումների հիմքում շարունակում էր մնալ Ասիական Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի բաժանման այդ նույն համաձայնագիրը՝ մի տարբերությամբ, որ այժմ նշված տարածքներն անցնելու էին ոչ թե Ռուսաստանին, այլ միացվելու էին Հայաստանի Հանրապետությանը: Ուրեմն՝ Սեբաստիան, Խարբերդը և Դիարբեքիրը, հիմնականում՝ Անգլիայի և Ֆրանսիայի պնդմամբ, դուրս էին բերվում իրավարարի՝ հայ-թուրքական սահմանագծման իրավասություններից այն դեպքում, երբ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական պայմանագրով և Մուդրոսի զինադադարով ամբողջ Արևմտյան Հայաստանի վրա էր սահմանափակվում թուրքական իշխանությունը:

Այսպիսով՝ 1878 թ. Հայկական հարցի միջազգայնացումից մինչև Սևրի պայմանագիրը հայկական տարածքային պահանջները որոշակի փոփոխություններ են կրել: Սակայն Հայկական հարցի հոլովույթի ցանկացած փուլում հայ գործիչներն ունեցել են հայկական բոլոր տարածքների միավորմամբ միասնական պետություն ստեղծելու տեսլականը: Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո հնարավոր էր ստեղծել միացյալ Հայաստան. Արևելյան Հայաստանում արդեն իսկ կազմավորվել էր հայկական անկախ պետություն, Կիլիկիան ազատագրվել էր Հայկական լեզեոնի կողմից, իսկ Արևմտյան Հայաստանը կարող էր ազատագրվել առանց կրակոցի, եթե դաշնակիցները ցանկանային այն գրավել:

1920 թ. արդեն քննարկվում էր ՀՀ-ին միայն Վանի, Բիթլիսի և Երզրումի միավորման հարցը: Նույնիսկ կասկածի տակ էր Երզրում քաղաքի և սևծովյան ելքի հարցը: Բոլոր դեպքերում Սան Ռեմոյի կոնֆե-

77 Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», документы и комментарий. Сост., отв. редактор, автор предисловия и комментария д.и.н., профессор Ю. Г. Барсегов, т. 2, ч. 2, М., 2005, էջ 238:

78 Տե՛ս Աкопян С. М., Западная Армения в планах империалистических держав, Ер., 1967, էջ 211:

րանսում որոշվեցին այն հիմնաքարերը, որոնց հիման վրա կազմվեց Սևրի պայմանագիրը:

Այսպիսով՝ Հայկական հարցի՝ շուրջ չորս տասնամյակ տևած քննարկումների ընթացքում հայ հասարակական-քաղաքական միտքը ձգտել է միասնական Հայաստանի ստեղծմանը, որի կազմում պետք է ներառվեին Արևմտյան ու Արևելյան Հայաստանները և Կիլիկիան: Դրա վերջնական իրականացմանը խանգարեց միայն մեկ հանգամանք՝ թուրքերի իրականացրած Հայոց ցեղասպանությունը: Հետևաբար Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը պետք է հանգեցնի նաև դրա հետևանքների հաղթահարմանը՝ ամբողջ Հայաստանի աստիճանական ազատագրմանն ու հայացմանը:

Գլուխ երկրորդ

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ. քաղաքական բովանդակությունն ու միջազգային-իրավական կարգավիճակը

1. Հայրենիքի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների ճանաչումը

Գերմանիայի հետ Վերսալի, Ավստրիայի հետ Սեն-ժերմենի, Հունգարիայի հետ Տրիանոնի և Բուլղարիայի հետ Նեյի պայմանագրերի ստորագրումից հետո Օսմանյան կայսրության հետ կնքված Սևրի պայմանագրով եզրափակվեց Առաջին աշխարհամարտում հաղթանակած ու պարտված երկրների փոխադարձ պայմանագրերի երկար շարքը:

1920 թ. օգոստոսի 10-ին Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան՝ որպես դաշնակից ուժերի Գերագույն խորհրդի անդամ տերություններ, և Հայաստանը, Բելգիան, Հունաստանը, Հեջազը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբա-Խորվաթա-Սլովենական պետությունը և Չեխոսլովակիան՝ որպես դաշնակից պետություններ՝ մի կողմից, և Առաջին համաշխարհային պատերազմում պարտված Օսմանյան կայսրությունը՝ մյուս կողմից, ստորագրեցին 13 մասից և 433 հոդվածից բաղկացած Սևրի հաշտության պայմանագիրը:

Հայ պատմագիտությունը տասնամյակներ շարունակ Սևրի պայմանագիրը գերազանցապես քննարկել է Հայաստանին ուղղակիորեն վերաբերող 88-93-րդ հոդվածների շրջանակներում¹: Դա միանգամայն բնական էր, քանզի այդ հոդվածներով վերականգնվում էր հայ ժողովրդի իրավունքն իր հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի մի մասի նկատմամբ, ինչը կարևոր էր

1 Տե՛ս Աղոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Եր., ԵՊՀ հրատ., 1989, Ահարոնեան Ա., Սարգարապատից մինչև Սեյր եւ Լօզան (Քաղաքական օրագիր), Հ.3.Դ. Ամերիկայի կեդր. Կոմիտե, Պոսթըն, 1943, Ղողանեան Գ., Հայաստանի Հանրապետությունը եւ պետությունները Սեւրից Լօզան, Փարիզ, 1934, «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917)» (այսուհետ՝ «Հայաստանը ... փաստաթղթերում»), խմբ. Ջ. Կիրակոսյան, Եր., 1972, Барсегов Ю. Г., Арбитражное решение президента США по армяно-турецкой границе (политический и международно-правовой комментарий), «Центр русско-армянских инициатив», Ер., 1995, Հարությունյան Ա., Սևրի պայմանագիրը և հայ հասարակական-քաղաքական միտքը, Եր., «Գիտություն» հրատ., 2004, Կարապետյան Հ., Սևրի պայմանագիրը հայոց ճակատագրում, Եր., 2004, Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը (հոդվածների ժողովածու), Եր., 2007, Մույնի Հայրենատիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), Եր., «Ասողիկ» հրատ., 2012, Ղազարյան Հ., Սևրի պայմանագիրը և Կուրդո Կիլոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, Եր., «Էդիտ Պրինտ», 2012 և այլն:

առաջին հերթին որպես տվյալ երկրի տիտղոսը կրող ազգի անժամանցելի իրավունքների ճանաչում:

Բանն այն է, որ Հայկական հարցի ձևավորումից մինչև 1918 թվականը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում Հայաստան ասելով նկատի էր առնվում նրա մեծագույն մասը՝ Արևմտյան Հայաստանը: Մինչդեռ 1918 թվականին Օսմանյան կայսրության բանակի՝ Անդրկովկաս ներխուժելու պայմաններում ծավալված հերոսական դիմադրության հետևանքով Հայաստանի անկախությունը հայոց զենքով ամրագրվել էր Արևելյան Հայաստանում, որը՝ իբրև Հայաստանի Հանրապետություն, 1920 թ. հունվարին դե-ֆակտո ճանաչվել էր նաև դաշնակիցների կողմից:

Սևրի պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը դե-յուրե ճանաչվում էր ոչ միայն Առաջին աշխարհամարտում հաղթանակած դաշնակից երկրների, այլև պարտված Օսմանյան կայսրության կողմից: Բայց դե-յուրե ճանաչվում էր ոչ թե Անդրկովկասի հայկական գավառները ներառած փոքրիկ երկիրը, այլ Արևելյան ու Արևմտյան Հայաստանները միավորող Միացյալ Հայաստանը: **Այսինքն՝ իրավական առումով ամրագրվում և ի լուր աշխարհի ազդարարվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը Հայաստանի երկու մասերը միավորող Միացյալ Հայաստանն է:** Անշուշտ, սրանով Արևելյան ու Արևմտյան Հայաստանների ոչ բոլոր երկրամասերն էին ներառվում նրա կազմում, բայց Հայաստանի Հանրապետության ընկալումը որպես Միացյալ Հայաստան ձեռք էր բերում ամուր իրավական հիմք՝ ձևավորելով նրա միջազգայնորեն ճանաչվող **տարածքային ամբողջականությունը:** Ուստի երբ այսօր մեր հարևան երկրների քաղաքագետները խոսում են իրենց մանկահասակ պետությունների տարածքային ամբողջականության մասին՝ վկայաբերելով միջազգայնորեն չճանաչված խորհրդա-թուրքական հայտնի գործարքները կամ ԽՍՀՄ ներքին վարչական սահմանները, մոռանում են այն իրողությունը, որ Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը ճանաչվել է դեռևս Առաջին աշխարհամարտի արդյունքներն ամփոփած Սևրի պայմանագրով:

Պայմանագրի **88-րդ հոդվածով** Թուրքիան Հայաստանը ճանաչում էր որպես ազատ և անկախ պետություն, ինչպես դա արդեն արել էին* պատերազմում հաղթանակած դաշնակից պետությունները²: Հոդվածի վերջին ձևակերպմամբ, փաստորեն, արձանագրվում էր, որ, պատերազմում պարտված թուրքական պետությունից բացի, Հայաստանի անկախ պե-

* Սևրի պայմանագիրը ստորագրած պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությունը, ըստ էության, ճանաչվել էր նաև 1919 թ. փետրվար-մարտին, երբ Ավետիս Ահարոնյանի գլխավորած ՀՀ պատվիրակությանը հաղթանակած պետությունների շարքում թույլ տրվեց մասնակցել Փարիզի խաղաղության վեհաժողովի աշխատանքներին:

2 Տե՛ս «Հայաստանը փաստաթղթերում», էջ 676:

տականությունն արդեն իսկ ճանաչված է Սևրի պայմանագիրը ստորագրող հաղթանակած տասներկու պետությունների կողմից:

89-րդ հոդվածով Թուրքիան և Հայաստանը, ինչպես և պայմանավորվող մյուս բարձր կողմերը համաձայնում էին ԱՄՆ-ին թողնել Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Բիթլիսի նահանգներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը որոշելու հարցը և ընդունել նրա կայացրած որոշումը, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնք կարող էին սահմանվել ինչպես Հայաստանին դեպի ծով ելք ապահովելու, այնպես էլ հիշյալ սահմանագծին հարող թուրքական բոլոր տարածքներն ապառազմականացնելու վերաբերյալ³: Հատկանշական է, որ, Հայաստանին դեպի Սև ծով ելք ապահովելուց բացի, տվյալ հոդվածը նախատեսում էր նաև նրան փոխանցվելիք Արևմտյան Հայաստանի տարածքներին հարող՝ թուրքական իշխանության տակ մնացած երկրամասերի ապառազմականացումը: Պայմանագրի տեքստում տվյալ դրույթի ներառումը առավել քան կարևոր էր, քանի որ Թուրքիայում քեմալական շարժման ակտիվացումն ուղղակի սպառնալիք էր հայկական պետության գոյության համար:

Պայմանագրի **90-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ** սահմանվում էր, որ Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների չափին և դրանց բնույթին վերաբերող՝ պայմանագրի այն դրույթները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տարածքների դեպքում, կգործադրվեն նաև Հայաստանին փոխանցվող տարածքների պարագայում՝ վկայակոչելով պայմանագրի VIII մասի (Ֆինանսական դրույթներ) 241-244-րդ^{**} հոդվածները⁴: Փաստորեն, Արևմտյան Հայաստանի Էրզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգների և Տրապիզոնի նահանգի 1/3-ի փոխանցումը Հայաստանի Հանրապետությանն արդեն իսկ վճռված հարց համարելով, պայմանագիրը ստորագրող հաղթանակած պետությունները այդ տարածքների առումով Օսմանյան կայսրության նախկին պարտավորությունների կատարումը, ինչպես նաև իրավունքներին առնչվող հարցերը փոխանցում էին Հայաստանի Հանրապետությանը:

Պայմանագրի **91-րդ հոդվածի** համաձայն՝ Արևմտյան Հայաստանի նշված նահանգների տարածքների որևէ մասը Հայաստանին փոխանցելու որոշման ընդունումից հետո՝ եռամսյա ժամկետում, պետք է ձևավորվեր Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանագիծը տեղում անցկացնող սահ-

3 Տե՛ս նույն տեղում:

** Հիշյալ հոդվածները վերաբերում էին Օսմանյան կայսրության նախկին պարտքի մարման ժամանակացույցին և մեխանիզմներին:

4 Տե՛ս Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf> (մուտք՝ 19.01.2020):

մանային հանձնաժողով⁵: Սակայն քանի որ Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածները հետագայում ուժի մեջ չմտան, ուստի նման հանձնաժողով չձևավորվեց, և սահմանի գծանշման աշխատանքներ այդպես էլ չիրականացվեցին:

Փաստաթղթի 93-րդ հոդվածով էլ Հայաստանն էր պարտավորվում պաշտպանել հիմնական ազգաբնակչությունից ռասայի, լեզվի և կրոնի առունով տարբերվող բնակիչների շահերը, ինչը նախատեսվում էր ամրագրել նաև Հայաստանի և գլխավոր տերությունների միջև կնքվելիք պայմանագրերում⁶: Այս հոդվածով Հայաստանի վրա պարտավորություն էր դրվում առաջին հերթին ապահովելու Էրզրումի, Վանի, Բիթլիսի նահանգների և Տրապիզոնի նահանգի՝ իրեն միացվելիք տարածքներում բնակվող մահմեդական բնակչության՝ թուրքերի, քրդերի, ինչպես նաև թուրքական իշխանությունների կողմից Բալկաններից ու Հյուսիսային Կովկասից այդ տարածքներում վերաբնակեցված մուսուլման ժողովուրդների անվտանգությունը: Քաջատեղյակ լինելով, որ պատերազմի տարիներին այդ տարածքներում բնակվող մահմեդականներն ակտիվ մասնակցություն են ունեցել հայերի զանգվածային բնաջնջմանը, դաշնակից տերությունները սույն հոդվածով Հայաստանի իշխանությունների վրա պարտավորություն էին դնում կանխելու և բացառելու նրանց նկատմամբ վերապրողների և զոհերի ժառանգների կողմից վրեժխնդրության հնարավոր դրսևորումները:

Պայմանագրի **92-րդ հոդվածի** համաձայն՝ Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմանների հարցը պետք է որոշվեր շահագրգիռ պետությունների ընդհանուր համաձայնությամբ, իսկ եթե նրանց չհաջողվեր համաձայնության գալ, ապա այն պետք է որոշեին գլխավոր դաշնակից տերությունները, որոնք պետք է հոգ տանեին այդ երկրների միջև սահմանազատումը տեղում գծանշելու մասին⁷: Հաշվի առնելով, որ Ադրբեջանը հավակնություններ ուներ Արցախի, Ջանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ, որոնք որակվում էին որպես վիճելի տարածքներ, իսկ Վրաստանը՝ Լոռիի, որը «չեզոք գոտու» կարգավիճակ էր ստացել, ակնհայտ է, որ շահագրգիռ կողմերին սահմանային հարցերում չէր հաջողվելու համաձայնության գալ, և այդ հարցը նույնպես թողնվելու էր գլխավոր դաշնակից տերությունների որոշմանը:

Հայաստանի Հանրապետությանը դեպի Սև ծով ելք ապահովելու դրույթն ավելի էր հստակեցվում **352-րդ հոդվածով**, որով նրան Տրապիզոնի

5 Տե՛ս «Հայաստանը փաստաթղթերում», էջ 677:

6 Տե՛ս նույն տեղում:

7 Տե՛ս նույն տեղում:

նավահանգստով Սև ծով ազատ մուտք ունենալու իրավունք էր տրվում: Ավելին՝ Ազգերի լիգայի որոշմամբ Տրապիզոնի նավահանգստում Հայաստանի առիավետ վարձակալությանն էր հանձնվելու մի տեղամաս, որի շահագործման պայմանները, ներառյալ վարձավճարի չափը, որոշվելու էին Հայաստանի, Թուրքիայի մեկական ներկայացուցիչներից և Ազգերի լիգայի կողմից նշանակված ներկայացուցչից բաղկացած խառը հանձնաժողովի կողմից⁸:

Բացի այդ՝ **351-րդ հոդվածով** Վրաստանի, Ադրբեջանի և Պարսկաստանի հետ մեկտեղ Հայաստանին դեպի Սև ծով ազատ մուտքի իրավունք էր տրվում նաև Բաթումի նավահանգստից⁹: Այսինքն՝ Հայաստանը Տրապիզոնի և Բաթումի երկու նավահանգիստներով ելք էր ստանում դեպի Սև ծով, իսկ պայմանագրի **349-րդ հոդվածով** այդ նավահանգիստներից ազատ տարանցիկության իրավունք էր տրվում դեպի Էգեյան և Միջերկրական ծովեր¹⁰: Ակնհայտ է, որ սևծովյան երկու նավահանգիստներից օգտվելու և Միջերկրական ծով ազատ դուրս գալու իրավունքը լուրջ հնարավորություններ կստեղծեր Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր դրությունը մեղմելու համար:

Սևրի պայմանագրի այս հոդվածների վերաբերյալ բավականին ուշագրավ էին **Նիկողայոս Ադոնցի**՝ 1920 թ. նոյեմբերի 20-ին Լոնդոնում հրատարակված հոդվածում տեղ գտած դիտարկումներն ու մեկնաբանությունները, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց այժմեականությունը: Նա դրական էր համարում, որ պայմանագրի 88-րդ հոդվածով փաստացի ճանաչվում էր Հայաստանի անկախությունը, 89-րդ հոդվածով հստակեցվում էին հայ-թուրքական սահմանի շրջանակները, սակայն, ըստ պատմաբանի, գերադասելի կլիներ, որ հստակ մատնանշվեր, որ ամենից առաջ Թուրքիան պետք է ճանաչի խնդրո առարկա հայկական վիլայեթների գիշումը¹¹:

Անշուշտ, Ադոնցը չէր կարող չիմանալ, որ Սևրի պայմանագրի 90-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվել էր ճանաչել հայ-թուրքական սահմանը և հիշյալ վիլայեթների ամբողջ տարածքը կամ դրա որևէ մասը Հայաստանին փոխանցելու որոշման օրից հրաժարվելու էր հանձնված տարածքների նկատմամբ իր բոլոր իրավունքներից ու իրավահիմունքներից¹²: **Ուրեմն պատմաբանը նկատի ուներ այն, որ Սևրի պայմանագրի տեքստում բացակայում էին Արևմտյան Հայաստանի նահանգներ-**

8 Տե՛ս «Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне», пер. с фр., М., изд. Литиздата НКВД, 1927, էջ 112:

9 Տե՛ս նույն տեղում:

10 Տե՛ս նույն տեղում:

11 Տե՛ս **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 16:

12 Տե՛ս «Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне», էջ 31:

ի տարածքները Հայաստանի Հանրապետության անարգելք փոխանցելու երաշխիքներին վերաբերող դրույթները: Ադրնցը, փաստորեն, մտահոգություն էր հայտնում, որ պայմանագրում հստակեցված չէր, թե հաղթանակած տերություններն ինչ միջոցների էին պատրաստ դիմելու, եթե Առաջին համաշխարհային պատերազմում պարտություն կրած թուրքական կողմը չկատարեր իր ստանձնած պարտավորությունները կամ փորձեր խոչընդոտել այդ դրույթների իրագործումը: Պատմաբանի այս մտահոգություններն ամենևին էլ անհիմն չէին, քանի որ Մուդրոսի գինադարով Արևմտյան Հայաստանը չէր պարպվել թուրքական գործերից, իսկ այդ ընթացքում Թուրքիայում փաստացի իշխանություն էր դարձել ազգայնական շարժման առաջնորդ Մուստաֆա Բենալը, ով չէր ձանաչում Սևրի պայմանագրով Օսմանյան կայսրության ստանձնած պարտավորությունները:

Մեծ տերությունները թերևս նման երաշխիք էին համարում այն, որ դեռ 1920 թ. ապրիլի 26-ին Սան Ռեմոյի կոնֆերանսում դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը հայ-թուրքական սահմանի գծման հարցում իրավարար դառնալու՝ ԱՄՆ նախագահին ուղղված առաջարկը զուգորդել էր ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու առաջարկին: Զույգ առաջարկների տրամաբանությունը պարզ էր. այն պետությունը, որի նախագահը կստանձներ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի որոշումը, պետք է ապահովեր Հայաստանի անվտանգությունը՝ միացված տարածքներով հանդերձ, ինչը դրսևորվելու էր տվյալ երկրի կողմից Միացյալ Հայաստանի մանդատի ստանձնման տեսքով: Այսպիսով՝ Սան Ռեմոյի կոնֆերանսում դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը փորձում էր խնդիրը փոխանցել ԱՄՆ-ին, սակայն տվյալ առաջարկը հաղթանակած տերությունների կողմից արվում էր այն ժամանակ, երբ ԱՄՆ-ի բացասական վերաբերմունքն այդ հարցի նկատմամբ արդեն որոշակի էր:

Դեռևս 1919 թ. աշնանը ԱՄՆ նախագահի հանձնարարությամբ գեներալ Հ. Հարբորդի առաքելությունը, տեղում ուսումնասիրելով իրավիճակը և բանակցելով անգամ քեմալականների հետ, հանգել էր այն եզրակացությանը, որ միայն Հայաստանի մանդատը ստանձնելը չափազանց ծախսատար է, և տեսակետ էր արտահայտել, որ եթե ԱՄՆ-ն, այնուամենայնիվ, որոշել է այդ տարածաշրջանում կառավարման մանդատ ստանձնել, ապա այն պետք է տարածվի ոչ միայն Հայաստանի, այլև Թուրքիայի և Այսրկովկասի վրա¹³: Անշուշտ, տվյալ տեսակետը տրամագծորեն հակասում էր եվրոպական տերությունների շահերին, որոնք չէին կարող թույլ

13 Стів Барсегов Ю. Г., Арбитражное решение президента США по армяно-турецкой границе (политический и международно-правовой комментарий), էջ 10-11:

տալ ԱՄՆ-ի այդչափի հզորացումը տարածաշրջանում, ուստի նման առաջարկ անելիս դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը թերևս պատկերացնում էր, որ ԱՄՆ-ն հազիվ թե ստանձնի Հայաստանի մանդատը: Եվ իսկապես, 1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ Սենատը ձայների 52 «դեմ» և 23 «կողմ» հարաբերակցությամբ մերժեց Հայաստանի մանդատի ստանձնումը, որից հետո դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը պարտավոր էր մտածել նոր երաշխիքների մասին, ինչը կարող էր դրսևորվել Սևրի պայմանագրում հատուկ երաշխիքային հոդվածի կամ հոդվածների ներառումով: Ոչինչ չէր խանգարում նրանց նման հոդված կամ դրույթներ նախատեսելու պայմանագրի տեքստում: Խնդիրը պարզապես այդ երկրների **քաղաքական կամքն էր**, որը մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով նրանք չցանկացան դրսևորել: Այս հանգամանքն էլ ավելի կարևոր էր, եթե հաշվի առնենք եվրոպական դիվանագիտության ավանդական դարձած խարդավանքներն ու թուրքիայում ստեղծված նոր իրավիճակը, երբ փաստացի իշխանությունն անցել էր քեմալականների ձեռքը, որոնք հրաժարվում էին ճանաչել թուրքիայի օրինական իշխանության կողմից ստորագրված Սևրի պայմանագիրը և հատկապես տարածքային զիջումները:

2. Հայաստանի Հանրապետության և ապագա քղական պետության սահմանների հստակեցումը

Սևրի պայմանագիրը հատկանշական էր նաև նրանով, որ տվյալ փաստաթղթի **62-64-րդ հոդվածներով** առաջին անգամ միջազգային մակարդակով արժարժվում էր քղական հարցը: Պայմանագրի **62-րդ հոդվածի** համաձայն՝ փաստաթղթի՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների ներկայացուցիչներից ձևավորված հանձնաժողովի կողմից Եփրատից արևելք, Հայաստանի հարավային սահմաններից հարավ, Սիրիայի և Միջագետքի հետ թուրքիայի սահմանից հյուսիս ընկած տարածքներում թուրքական պետության կազմում պետք է ստեղծվեր քղական ինքնավարություն¹⁴: Տվյալ հոդվածում կարևոր էր այն արձանագրումը, որ **քղական ինքնավարությունը պետք է ստեղծվեր «Եփրատից արևելք» և «Հայաստանի հարավային սահմաններից հարավ», այսինքն՝ Հայաստանին միացվելիք Վանի և Բիթլիսի նահանգների տարածքներից հարավ-արևելք և հարավ ընկած հողերում:**

14 St' u Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>.

Պայմանագրի **63-րդ հոդվածը** թուրքական կառավարությանը պարտավորեցնում էր համակերպվել այդ իրողության հետ և որոշման կայացումից հետո՝ եռամսյա ժամկետում, նշված տարածքներում ստեղծել քրդական ինքնավարություն: **64-րդ հոդվածով** էլ ինքնավարության ստեղծումից մեկ տարի անց, Ազգերի լիգայի խորհրդի հովանավորությամբ, քրդերին հնարավորություն էր տրվում հանրաքվեի միջոցով անկախանալու Թուրքիայից, որը պետք է համակերպվեր այդ որոշման հետ և հրաժարվեր այդ տարածքների նկատմամբ բոլոր իրավունքներից ու իրավահիմունքներից¹⁵: Այսպիսով, ըստ Սևրի պայմանագրի, Հայաստանի Հանրապետությանը միացվելիք Արևմտյան Հայաստանի Բիթլիսի և Վանի նահանգների տարածքները հարավ-արևելքից և հարավից սահմանակից էին լինելու սկզբում քրդական ինքնավարությանը, իսկ հետագայում՝ նաև քրդական հավանական անկախ պետությանը: Այս կապակցությամբ Ն. Ադոնցը հիմնավոր կերպով մտահոգություն էր հայտնում, որ Ղերսիմի և Խարբերդի սանջակները, որոնք իրականում և՛ աշխարհագրական, և՛ էթնիկ առումներով Հայկական բարձրավանդակի անբաժան մասն էին կազմում, փոխանցվում էին Քրդստանին¹⁶: Այսպիսով՝ ապագա քրդական պետությունը ստեղծվելու էր մասամբ նաև հայ ժողովրդի հայրենիքի հաշվին: Նման որոշման հիմքում Ադոնցը տեսնում էր դեռևս պատերազմի ընթացքում՝ 1916 թ. կնքված Ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագիրը, որին նախորդել էր Սայքս-Պիկոյի անգլո-ֆրանսիական գաղտնի համաձայնությունը, որոնցով Արևմտյան Հայաստանը մասնատվում էր ճիշտ և ճիշտ Խարբերդի գծի երկայնքով¹⁷: Տվյալ պարագայում այդ գաղտնի համաձայնագրի կողմ Ռուսաստանի՝ իբրև հակակշիռ պետության՝ գործընթացից ինքնամեկուսացման պայմաններում հայկական պատվիրակություններին ոչինչ չէր մնում անելու, քան համակերպվելու ոչ միայն տվյալ հատվածի, այլև Կիլիկիայի կորստի հետ՝ մխիթարվելով նրանով, որ պատմական հայրենիքի մի զգալի մասը միացվում էր Հայաստանին:

Քրդական հարցը, Քրդստանի ստեղծմանը և հայ-քրդական հարաբերություններին առնչվող խնդիրները խիստ արդիական են մեր օրերում: Ներկայումս ընթացող աշխարհաքաղաքական գործընթացների պայմաններում, երբ ազդեցիկ տերությունները կրկին սկսում են օգտագործել քրդական խաղաքարտը, բոլորը հասկանում են, որ միջազգային իրավունքի տեսանկյունից Սևրի պայմանագիրը միակ փաստաթուղթն է, որը պետականության իրավական հիմքեր է նախատեսել քրդերի համար: Այս տեսան-

15 Տե՛ս նույն տեղում:

16 Տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 19:

17 Տե՛ս նույն տեղում:

կյունից նույնպես հնարավոր է համարվում Սևրի պայմանագրի վերարժարծարծումը, ինչն անխուսափելիորեն հանգեցնելու է հայ-քրդական հարաբերությունների, մասնավորապես՝ տարածքների ու սահմանների հարցի քննարկմանը: Անշուշտ, կարելի է միանալ Ադոնցի տեսակետին, որ Սևրի պայմանագրով նախատեսվում էր որոշ հայկական տարածքներ հանձնել քրդերին, որոնք անմիջական մասնակցություն էին ունեցել Հայոց ցեղասպանության իրականացման գործում, սակայն կարծում ենք, որ հնարավոր բարդություններից խուսափելու նպատակով այսօր **միակ խելամիտ ելքը հայ-քրդական հարաբերությունների բոլոր հիմնախնդիրները Սևրի պայմանագրի շրջանակներում կարգավորելն է:**

3. Օսմանահպատակ հայերի անհատական իրավունքների վերականգնման խնդիրը

Օսմանյան կայսրության ոչ թուրք բնակչության և առաջին հերթին հայերի իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարևորություն են ներկայացնում Սևրի պայմանագրի 125-րդ և 142-րդ հոդվածները:

Պայմանագրի **125-րդ հոդվածով** կայսրությունից անջատված տարածքներում հաստատված ոչ թուրք բնակչությանը պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից՝ մեկ տարվա ընթացքում, ազատ իրավունք էր տրվում իր ազգային պատկանելությանը համապատասխան պետության քաղաքացիություն ընդունելու¹⁸: Այս հոդվածով, փաստորեն, հաստատվում էր ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնից ակնկալվող իրավարար վճռով Օսմանյան կայսրությունից անջատվելիք Արևմտյան Հայաստանի Էրզրումի, Վանի և Բիթլիսի նահանգներում դեռևս ողջ մնացած, ինչպես նաև կայսրությունից անջատված արաբական երկրներում ապաստանած նախկին օսմանահպատակ հայերի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն ընդունելու իրավունքը:

Ուշագրավ է, որ պայմանագրի **142-րդ հոդվածով** 1914 թ. նոյեմբերի 1-ից, այսինքն՝ Օսմանյան կայսրության՝ Առաջին աշխարհամարտի մեջ մտնելու պահից, այդ երկրում հաստատված վարչակարգը որակվում էր իբրև **ահաբեկչական**: Երիտթուրքերի վարչակարգին տրված այս քաղաքական գնահատականից ելնելով՝ նույն հոդվածում նշվում էր, որ հիշյալ ամսաթվից հետո կայսրությունում քրիստոնյաների դավանափոխությունները եղել են բռնության հետևանք, ուստի դրանից առաջ քրիստոնյա

18 Stü «Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне», էջ 38:

եղածներին իրավունք է տրվում ազատ վերադառնալու իրենց կրոնին¹⁹: Այս կետով, փաստորեն, արձանագրվում էր պատերազմի ընթացքում թուրքական իշխանությունների կողմից կայսրության ոչ մահմեդական բնակչությանը, այդ թվում՝ հայերին, ոչ միայն ֆիզիկապես բնաջնջելու, այլև բռնի իսլամացնելու քաղաքականությունը՝ ընդգծելով բռնի իսլամացած հայերի, հույների և ասորիների՝ իրենց հավատքին ազատ վերադառնալու իրավունքը:

Նույն հոդվածով դատապարտվում էին պատերազմի ընթացքում կայսրության բնակչության նկատմամբ գործադրված վայրագությունները, և օսմանյան կառավարության վրա պարտավորություն էր դրվում որոնելու և ազատ արձակելու 1914 թ. նոյեմբերի 1-ից հետո անհետացած, առևանգված, ներկավված և ազատագրված ամեն ռասայի ու կրոնի անձանց²⁰: Ակնհայտ է, որ այս դեպքում նույնպես խոսքը թուրքական իշխանությունների կողմից զանգվածային բնաջնջման և բռնագաղթի ենթարկված կայսրության ոչ մահմեդական, ոչ թուրք բնակչության և առաջին հերթին հայերի մասին է: Ինչպես հայտնի է, ցեղասպանության ընթացքում առևանգվել էին տասնյակ հազարավոր հայ աղջիկներ ու կանայք, որոնք հարձի կարգավիճակում պահվում և սեռական բռնությունների էին ենթարկվում մահմեդականների տներում ու հարեմներում: Բացի այդ՝ տասնյակ հազարավոր որբացած հայ մանուկներ պահվում էին թուրքական պետական որբանոցներում և դաստիարակվում որպես թուրք, իսկ նրանց մի մասն էլ ստրուկի կարգավիճակում պահվում և շահագործվում էր թուրքական կամ քրդական ընտանիքներում: Սևրի պայմանագրի 142-րդ հոդվածի տվյալ դրույթով, փաստորեն, հնարավորություն էր ընձեռվում իրենց կամքին հակառակ գերեվարված հայ կանանց, աղջիկներին ու որբերին փրկելու անխուսափելի ուժացումից և ազատ արձակելու: Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցված ժողովրդագրական հսկայական կորուստները ինչ-որ չափով մեղմելու տեսանկյունից պատերազմում պարտված հանցավոր թուրքական պետության հետ խաղաղության պայմանագրում այս դրույթի ամրագրումը առավել քան կարևոր էր:

Միանգամայն բնական է, որ նման կարևոր և պատասխանատու գործը չէր կարող վստահվել այդ ամենի համար պատասխանատու թուրքական իշխանություններին, ուստի նախատեսվում էր Ազգերի լիգայի խորհրդի կողմից ստեղծել **խառը հանձնաժողով**, որը տուժածների, նրանց ընտանիքի անդամների և մերձավորների բողոքների հիման վրա հետաքննություններ էր իրականացնելու՝ նշված խմբերի անձանց հայտ-

19 Տե՛ս նույն տեղում, էջ 41:

20 Տե՛ս նույն տեղում:

նաբերելու և ազատ արձակելու նպատակով: Իր հերթին օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ամեն կերպ օժանդակել այդ հանձնաժողովի գործունեությանը, ապահովել նրա որոշումների կատարումը, երաշխավորել տուժածների իրավունքների վերականգնումը և նրանց անվտանգությունը²¹: Պայմանագրի 142-րդ հոդվածում այս դրույթի ներառումը վկայում է այն մասին, որ հաղթանակած տերությունները հիմնավոր կասկածներ ունեին առ այն, որ թուրքական իշխանությունները կարող էին փորձել արհեստական խոչընդոտներ ստեղծել տվյալ գործընթացի համար, այդ պատճառով էլ թուրքական կողմի վրա նման պարտավորություններ էին դրվում:

4. Օսմանահպատակ հայերին հասցված նյութական վնասների հատուցման խնդիրը

Ձանգվածային բնաջնջման ու բռնագաղթի ենթարկված օսմանահպատակ ոչ թուրք բնակչության և առաջին հերթին հայերի անհատական իրավունքների վերականգնման վերաբերյալ հողվածներից բացի՝ Սևրի պայմանագրում տեղ են գտել նաև վերջիններիս ունեցվածքի բռնագավթումը դատապարտող և նրանց հասցված նյութական վնասների դիմաց հատուցում նախատեսող հողվածներ:

Սևրի պայմանագրի **144-րդ հոդվածը** օսմանյան կառավարությանը ոչ միայն պարտավորեցնում էր ուժը կորցրած ճանաչել իր կողմից ընդունված «Լքյալ գույքի մասին» 1915 թ. ժամանակավոր օրենքն ու դրա լրացումները, որոնցով «օրինականացվել» էր ցեղասպանության ենթարկված արևմտահայության զանգվածային ունեզրկման քաղաքականությունը, այլև արգելում էր նման օրենքների ընդունումն ապագայում²²: Այս հողվածը չափազանց կարևոր էր ցեղասպանության զոհ դարձած հայերի իրավունքները վերականգնելու խնդրի տեսանկյունից: Սույն հողվածում սահմանվում էին նաև կոնկրետ մեխանիզմներ, որոնցով վերականգնվելու էին արևմտահայության իրավունքները իր ունեցվածքի նկատմամբ:

Հիշյալ հողվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր հնարավորության սահմաններում նպաստել կայսրության այլազգի այն քաղաքացիների վերադարձին իրենց բնակավայրերը, որոնք աքսորվել կամ 1914 թ. հունվարի 1-ից հետո գաղթել էին գազանությունների ենթարկ-

21 Տե՛ս նույն տեղում, էջ 42:

22 Տե՛ս նույն տեղում:

վելու վախի պատճառով²³: Տվյալ դեպքում խոսքը Թալեաթ փաշայի նախածեռնությամբ 1915 թ. մայիսի 30-ին երիտթուրքական կառավարության կողմից ընդունված «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքով «օրինականացված» բռնագաղթի ենթարկված և դեռևս հրաշքով ողջ մնացած հայերի չնչին հատվածին իր բնակավայր վերադարձնելու մասին էր: Ավա՛ղ, նրանց մեծ մասն արդեն իսկ ոչնչացվել էր «մահվան քարավաններում»՝ գաղթի ճանապարհներին կամ էլ Սիրիայի և Միջագետքի համակենտրոնացման ճամբարներում: Դրանից բացի՝ նույն հողվածով թուրքական կառավարությունն ընդունում էր, որ կայսրության հիշյալ քաղաքացիներին կամ նրանց համայնքներին պատկանող անշարժ կամ շարժական գույքը հայտնաբերվելու դեպքում, ում ձեռքում էլ այն գտնվեր, հնարավորինս շուտ պետք է վերադարձվեր օրինական տերերին: Ընդ որում, վերադարձվող գույքը պետք է ազատված լիներ պարտքերից, որոնցով այն կարող էր ծանրաբեռնված լինել նոր տերերի կողմից, և վերադարձվեր առանց նոր սեփականատերերին ու օգտագործողներին որևէ հատուցում տրամադրելու²⁴: Այս պնդումն ուղղակիորեն բխում էր 144-րդ հողվածի առաջին իսկ պարբերությամբ սահմանված՝ «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքը չեղյալ հայտարարելու դրույթից՝ անօրինական համարելով նաև այդ օրենքից ածանցվող՝ «Լքյալ գույքի հանձնաժողովների» որոշումներով ու կեղծ աճուրդներով օրինական սեփականատերերին, տվյալ դեպքում՝ հայերին, անշարժ գույքից զրկելու բոլոր գործողությունները: Այսպիսով՝ հայերի գույքին ցեղասպանության և ապօրինությունների հետևանքով տիրացած թուրքերը, քրդերը կամ մահմեդական վերաբնակիչները՝ մուհաջիրները, այդ գույքի օրինական սեփականատերեր չէին ճանաչվում, հետևաբար նրանց որևէ հատուցում չտրամադրելու որոշումը միանգամայն իրավաչափ էր:

Ոչ թուրք բնակչության և առաջին հերթին հայերի սեփականության իրավունքների վերականգնման դրույթներ սահմանելուց բացի՝ 144-րդ հողվածով նախատեսվում էին նաև տվյալ գործընթացի վերահսկման մեխանիզմները: Օսմանյան կառավարությունը համաձայնում էր, որ Ազգերի լիգայի խորհրդի կողմից ստեղծվեն միջնորդ հանձնաժողովներ՝ թուրքական կառավարության և տուժած համայնքի մեկական ներկայացուցիչների ու Ազգերի լիգայի խորհրդի կողմից նշանակված նախագահի կազմով՝ սեփականությանը վերաբերող հարցերն ու վեճերը քննելու և լուծելու համար: Այդ հանձնաժողովներն ունենալու էին լայն լիազորություններ՝ իրավասու լինելով որոշումներ կայացնելու՝

23 Տե՛ս նույն տեղում:

24 Տե՛ս նույն տեղում:

ա) գույքի վերանորոգման և վերականգնողական աշխատանքների իրականացման առնչությամբ,

բ) վայրագությունների կամ տեղահանությունների մեղավորներին մեկուսացնելու և նրանց գույքի նկատմամբ միջոցներ ձեռնարկելու հարցերում,

գ) 1914 թ. հունվարի 1-ից հետո տուժած համայնքի մահացած կամ անհետացած անդամներին պատկանող գույքը և ամեն կարգի սեփականությունը վերադարձնելու հարցերում,

դ) 1914 թ. հունվարի 1-ից հետո անշարժ գույքի վաճառքի կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքների հաստատման ակտերը չեղյալ հայտարարելու հարցերի առնչությամբ:

Հատկանշական է, որ այն դեպքերում, երբ հանձնաժողովը չեղյալ կհամարեր գույքի նկատմամբ նոր տերերի իրավունքները, վերջիններիս փոխհատուցում տրամադրելու պարտականությունը դրվում էր թուրքական կառավարության վրա, և դա չպետք է առիթ լիներ այդ գույքի օրինական տերերի իրավունքների վերականգնումն ուշացնելու համար²⁵: Հայերի անշարժ և շարժական գույքին ցեղասպանության և զանգվածային ունեզրկման հետևանքով ապօրինաբար տիրացած մահմեդականներին փոխհատուցելու պարտավորությունը թուրքական կառավարության վրա դնելու դրույթն առավել քան օրինաչափ էր, քանզի այդ բոլոր ապօրինությունների պատասխանատուն հենց թուրքական պետությունն էր՝ իր վրած հանցավոր քաղաքականությամբ:

Հայերի բռնազավթված գույքի վերադարձի գործընթացում թուրքական կողմի հնարավոր հակազդեցությունները կանխելու նպատակով նույն հոդվածում ամրագրված էր, որ օսմանյան կառավարությունը պարտավորվում է հնարավորության սահմաններում նպաստել հանձնաժողովի որոշումների կատարմանը, որոնք անբեկանելի են, և դրանց չի կարող հակադրվել օսմանյան դատական կամ վարչական իշխանությունների կողմից ընդունված որևէ որոշում²⁶:

Այսպիսով՝ ցեղասպանության հետևանքով հայերի կրած նյութական կորուստների փոխհատուցման և դրանց հետևանքների հաղթահարման առումով Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածում առաջ էին քաշվում բավականին իրատեսական միջոցներ և մեխանիզմներ, որոնք չեն կորցրել իրենց արդիականությունը և լիարժեք կերպով կարող են դրվել Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների վերացման գործընթացի հիմքում²⁷:

25 Տե՛ս նույն տեղում, էջ 43:

26 Տե՛ս նույն տեղում:

27 Տե՛ս **Մարության Ա.**, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., 2014, էջ 104:

Միայն որպես ճշտում թերևս կարելի է հավելել այն, որ ներկայումս գույքային իրավունքների վերականգնման հարցերով զբաղվող միջնորդ հանձնաժողովի նախագահին պետք է նշանակի ոչ թե Ազգերի լիգայի խորհուրդը, այլ այդ կառույցի ժառանգորդը հանդիսացող ՄԱԿ-ի համապատասխան մարմնի՝ Անվտանգության խորհրդի կողմից առաջադրված անձը:

Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածը լրացնելու էին գալիս **285-րդ և 288-րդ հոդվածները**, որոնցով նախատեսվում էր, որ «*ipso facto*»^{*} որևէ դաշնակից երկրի կամ նոր պետության հպատակություն ձեռք բերած նախկին թուրքահպատակների՝ Թուրքիայում մնացած ունեցվածքը, իրավունքներն ու շահերը ներկա կամ մեկ այլ պայմանագրով Թուրքիայից անջատված տարածքներում պետք է նրանց վերադարձվեն իրենց ներկա վիճակով²⁸: Սա նշանակում էր, որ թուրքական իշխանությունների կողմից հայերին այդ երկրի քաղաքացիությունից զրկելը կամ նրանց կողմից նոր պետության հպատակություն ձեռք բերելը չէր կարող իրավական հիմք հանդիսանալ նրանց ունեցվածքից կամ գույքային իրավունքներից զրկելու համար:

5. Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածները

Առաջին աշխարհամարտի ընթացքում հանցագործություններ կատարած պետական պաշտոնյաների նկատմամբ պատժամիջոցներ նախատեսող հոդվածների ամրագրումը ոչ միայն Սևրի, այլ նաև դրան նախորդած Վերսալի, Սեն-ժերմենի, Տրիանոնի ու Նեյի պայմանագրերում պայմանավորված էր Փարիզի կոնֆերանսում դեռ 1919 թ. հունվարի 25-ից կազմավորված **Պատերազմ սանձազերծելու պատասխանատվության և պատիժների հանձնաժողովի** (պայմանականորեն՝ **Տասնհինգի հանձնաժողով**) գործունեությամբ: Հանձնաժողովը կազմված էր տարբեր երկրների ներկայացնող 15 անդամներից, որոնց թվում կային նաև իրավաբան-միջազգայնագետներ: Հունաստանի արտաքին գործերի նախարար Նիկոլաս Պոլիտիսի նախաձեռնությամբ Տասնհինգի հանձնաժողովը 1919 թ. մարտի 5-ին ընդունեց իր առաջին զեկույցը, որով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կատարված հանցագործություններից առանձնացվեցին ոչ միայն Հաագայի կոնվենցիան խախտող «պատերազմական հանցագործություն-

* Լատ.՝ «վատի ուժով»:

28 St'v Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, էջ 66, <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>.

ները», այլև մասնավորապես Օսմանյան կայսրությունում «մարդկության դեմ կատարված հանցագործությունները»՝ ոչ թուրք խմբին պատկանող մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը²⁹: Տասնհինգի հանձնաժողովի այս զեկույցը, փաստորեն, հիմնված էր ոչ միայն Հաագայի 1899 և 1907 թթ. կոնվենցիաների նախաբաններում ամրագրված «Մարտենսի վերապահման»*, այլև Անտանտի տերությունների կողմից ընդունված 1915 թ. մայիսի 24-ի հռչակագրի վրա, որում նրանք Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային բնաջնջումն անվանում էին «հանցագործություն մարդկության և քաղաքակրթության դեմ»³⁰:

Հայաստանի Հանրապետության և Ազգային պատվիրակությունները Հունաստանի ներկայացուցիչ Պոլիտիսի միջոցով 1919 թ. մարտի 14-ին Տասնհինգի հանձնաժողովին ներկայացրին մի հուշագիր, որում մասնավորապես ասվում էր. «...հանցագործությունը քաղաքական բնույթ ուներ, ծրագրված է եղել քաղաքական կազմակերպության կողմից, որը ստացել էր օսմանյան խորհրդարանի պատգամավորների ավելի քան երկու երրորդի ձայնը: Այն կազմակերպվել է կառավարության կողմից, ղեկավարվել պետական, զինվորական պաշտոնյաների և տեղական իշխանությունների ու ազդեցիկ գործիչների կողմից և իրագործվել է ժանդարներիայի, զինվորների ու խաժանուժի միջոցով: Հետևաբար մենք լիովին իրավունք ունենք հանցագործության իրական մեղավորներ համարելու այն անձանց, որոնք, սկսած 1915 թ. ապրիլից, զբաղեցնում էին վերը նշված պաշտոնները»³¹:

Հայկական հուշագրում հիշատակվում էր նաև 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագիրը՝ դրանով հիշեցնելով «մարդկության դեմ հանցագործություն» կատարողներին պատժելու՝ այդ երկրների ստանձնած պարտավորությունը: Փաստաթղթում հայերի զանգվածային կոտորածների մեջ մեղավորները բաժանվում էին չորս խմբի՝

29 Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий». Составитель, отв. ред., автор предисловия и комментария д.и.н., профессор **Ю. Г. Барсегов**, т. 2, ч. 2, М., 2005, էջ 258:

* Ավանավոր իրավաբան-միջազգայնագետ Ֆ. Մարտենսի առաջարկով սկզբում Հաագայի 1899 թ. «Պատերազմի վարման օրենքների և սովորույթների մասին», իսկ այնուհետև 1907 թ. «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» կոնվենցիաների նախաբաններում ամրագրվեց, որ «մինչև պատերազմի վերաբերյալ օրենքների ավելի լիակատար օրենսգրքի հրապարակումը պայմանավորվող բարձր կողմերը տեղին են համարում հաստատել, որ իրենց կողմից ընդունված կանոնակարգերով չնախատեսված դեպքերում բնակչությունը և պատերազմող կողմերը շարունակում են մնալ միջազգային իրավունքի սկզբունքների պաշտպանության և գործողության ներքո, որոնք բխում են քաղաքակիրթ ազգերի միջև հաստատված սովորույթներից, մարդկայնության օրենքներից և հասարակական գիտակցության պահանջներից» («Международное право. Ведение военных действий»). Сборник Гаагских конвенций и иных международных документов, М., 2001, с. 19):

30 Տե՛ս «Международные отношения в эпоху империализма», Документы из архивов Царского и Временного правительства, 1878-1917, серия III, т. 7, ч. 2, М.-Л., 1931-1940, էջ 252:

31 **Gotikian G.**, La question arménienne, de la vielle de la grande guerre au traité de Lausanne d'après les archives françaises, Thèse dactylographiée, t. 3, Saint-Etienne, 1997, p. 74.

կոտորածները ծրագրողներ, կազմակերպիչներ կամ հրաման տվողներ, կոտորածների իրականացումը ղեկավարողներ և անմիջական կատարողներ: Մատնանշվում էին նաև առաջին խմբի պատասխանատուների անունները՝ Թալեաթ, Էնվեր, Ջենալ, Նազըմ, Շաքիր, և պահանջվում էր դատական գործ հարուցել նրանց դեմ, ընդ որում՝ ոչ թե թուրքական դատարաններում, ինչպես դա փորձում էին անել թուրքական նոր իշխանությունները, այլ դաշնակից կառավարությունների կողմից հիմնված միջազգային դատական ատյաններում³²:

1919 թ. մարտի 29-ի իր եզրափակիչ գեկուցագրում Տասնհինգի հանձնաժողովը, հաշվի առնելով մի շարք պատվիրակությունների, այդ թվում՝ նաև հայկական պատվիրակության հուշագրերը, որոնցով «մարդկության օրենքների» դեմ կատարված ծանր հանցագործությունների վերաբերյալ բազում փաստեր ու ապացույցներ էին ներկայացվում, եկավ այն եզրակացության, որ Քառյակ դաշինքի գլխավոր տերությունները իրենց դաշնակից Թուրքիայի և Բուլղարիայի հետ «պատերազմը վարել են բարբարոսական և հակաօրինական միջոցներով՝ խախտելով պատերազմ վարելու օրենքներն ու սովորույթները և մարդկության տարրական օրենքները»³³: Այս որոշումից ելնելով՝ առաջարկվում էր ստեղծել տարբեր երկրների ներկայացուցիչներից բաղկացած միջազգային տրիբունալ, որը պետք է իրավասություն ունենար քննելու պատերազմ վարելու օրենքների և սովորույթների, ինչպես նաև մարդկության օրենքների խախտման գործերը՝ պատասխանատվության ենթարկելով նման խախտումներ կատարած պետությունների նախկին ղեկավարներին³⁴:

Սիանգամայն բնական է, որ Փարիզի խաղաղության վեհաժողովի շրջանակներում գործող Տասնհինգի հանձնաժողովի եզրափակիչ գեկույցի դրույթները պետք է իրենց արտահայտությունը գտնեին հաղթանակած տերությունների և պարտված երկրների միջև ստորագրված խաղաղության պայմանագրերում, մասնավորապես՝ **Վերսալի պայմանագրի 227-րդ և Սևրի պայմանագրի 226-րդ, 228-րդ և 230-րդ հոդվածներում**:

Սևրի պայմանագրի **226-րդ հոդվածով** օսմանյան կառավարությունը ճանաչում էր դաշնակից պետությունների ազատությունը՝ դատական գործ հարուցելու իրենց ռազմական դատարանների առջև պատերազմական սովորույթներին և օրենքներին հակասող արարքներ գործած անձանց դեմ: Օրենքներով նախատեսված պատիժներ պետք է կիրառվեին մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ՝ անկախ բոլոր դատավարություններից

32 Տե՛ս նույն տեղում, էջ 75:

33 «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», т. 1, М., 2002, с. 700.

34 Տե՛ս նույն տեղում, էջ 700-701:

կամ դատական գործերից, որոնք հարուցված էին Թուրքիայի կամ նրա դաշնակիցների դատական ատյանների կողմից³⁵: Սա նշանակում էր, որ դաշնակից տերություններն իրենց իրավունք էին վերապահում դատելու պատերազմական հանցագործներին՝ անկախ այն բանից, թե Թուրքիան կամ նրա դաշնակիցներն իրենց դատարաններում կդատեին այդ հանցագործներին, թե ոչ: Այս հոդվածի տրամաբանությունը թերևս բխում էր հենց երիտթուրք պարագլուխների դատավարությունից, որոնցից գլխավոր պատասխանատուներին հաջողվեց խուսափել թուրքական «արդարադատությունից»:

Այնուհետև 226-րդ հոդվածում խոսվում էր պատերազմական հանցագործներին հանձնելու մասին. «Օսմանյան կառավարությունը պարտավորվում է հանձնել դաշնակից տերություններին կամ նրանցից որևէ մեկին, որը կդիմի իրեն այդ պահանջով, բոլոր այն անձանց, ովքեր կմեղադրվեն պատերազմական սովորույթներին և օրենքներին հակասող որևէ արարք գործելու մեջ, կմատնանշվեն անվանաբար, թե ըստ աստիճանի, կատարած պարտականության կամ զբաղեցրած պաշտոնի, որոնք շնորհվել են այդ անձանց օսմանյան իշխանությունների կողմից»³⁶: Այս հոդվածի դրույթները կատարելու գործում, սակայն, դաշնակից տերությունները հետևողական չգտնվեցին:

Սևրի պայմանագրի **228-րդ հոդվածով** օսմանյան կառավարությունը պարտավորվում էր մեղսագրվող փաստերին լրիվ ծանոթանալու նպատակով դատաքննությունն ապահովել ցանկացած բնույթի փաստաթղթերով և տեղեկություններով՝ մեղավորներին որոնելու և նրանց պատասխանատվության չափը ճշգրիտ որոշելու համար³⁷: Այսպիսով՝ Սևրի պայմանագիրն իրավական հիմք էր ստեղծում օսմանյան պետության՝ իր հպատակ քաղաքացիների դեմ գործած ոճիրների դատական քննության համար: Սակայն այն շարադրվել էր այն ժամանակ, երբ 1918-1919 թթ. անգլիացիները ձախողվեցին օսմանյան կառավարությունից այնպիսի փաստաթղթեր և տեղեկություններ ստանալու հարցում, որոնք նրանց հնարավորություն կտային դատական գործեր հարուցելու ենթադրյալ մարդասպանների դեմ³⁸: Սևրի պայմանագրի 226-րդ և 228-րդ հոդվածները բխում էին Հաագայի՝ 1899 թ. ընդունված և 1907 թ. խմբագրված «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» կոնվենցիաների դրույթներից և կրկնում էին

35 Стів Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, М., «XXI век – Соглашение», 2000, էջ 184:

36 Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>.

37 Стів նույն տեղում:

38 Стів **Տերնոն Ի.**, Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Եր., «Նահապետ», 2003, էջ 10-11:

պատերազմական հանցագործներին պատժելու մասին Վերսալի և այլ պայմանագրերում տեղ գտած հոդվածները:

Ստեղծված իրավիճակում թուրքական նոր իշխանությունները սկսեցին արագացնել թուրքական ռազմական տրիբունալներում երիտթուրք պարագլուխների դատավարության ընթացքը՝ մտավախություն ունենալով, որ հետագայում կարող էր ստեղծվել ինչպես պատերազմական հանցագործություններ, այնպես էլ մարդկության դեմ հանցագործություններ կատարած նախկին բարձրաստիճան պաշտոնյաներին քրեական պատասխանատվության ենթարկող միջազգային տրիբունալ, ինչի մասին պատերազմի ավարտից հետո շատ էր խոսվում: Միջազգային տրիբունալում ակնհայտ կդառնար հայերի զանգվածային բնաջնջման կազմակերպման գործում թուրք բարձրաստիճան պաշտոնյաների դերակատարումը՝ թուրքական պետության համար դրանից բխող ծանր հետևանքներով:

Սևրի պայմանագրի **230-րդ հոդվածի** համաձայն՝ թուրքական կառավարությունը ճանաչում էր դաշնակից տերությունների իրավունքը՝ քրեական պատասխանատվության կանչելու այն անձանց, ովքեր մեղադրվում էին պատերազմի օրենքների և սովորույթների դեմ կատարված հանցագործությունների մեջ, ինչպես նաև պարտավորվում էր դաշնակից տերություններին հանձնել նրանց կողմից կոտորածների մեջ մեղադրվող անձանց, ովքեր պատերազմի ընթացքում հանցագործություններ էին կատարել այն տարածքներում, որոնք 1914 թ. օգոստոսի 1-ի դրությամբ կազմում էին Օսմանյան կայսրության մի մասը³⁹:

Հատկանշական է, որ ՄԱԿ-ի Պատերազմական հանցագործությունների հանձնաժողովն իր 1948 թ. մայիսի 28-ի զեկույցում առանձնահատուկ ուշադրություն է դարձրել հատկապես Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածին և մեկնաբանել է այնպես, որ դրանով հաղթանակած տերությունները նպատակ էին հետապնդում ի կատար ածելու 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագրի պարտավորությունն առ այն, որ պատասխանատվության կանչվեն մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար մեղավորները, այսինքն՝ այն հանցագործությունների, որոնք թուրքական տարածքում կատարվել էին օսմանահպատակ հայերի ու հույների նկատմամբ: Հանձնաժողովի կարծիքով՝ հենց դա է նախադեպ ժառայել Նյուրնբերգի և Տոկիոյի տրիբունալների կանոնադրությունների համապատասխանաբար 6c և 5c հոդվածների, այն է՝ մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար⁴⁰:

39 Stü Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>:

40 Stü «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», т. 2, ч. 1, М., 2003, էջ 651:

Ի տարբերություն 226-րդ և 228-րդ հոդվածների՝ 230-րդ հոդվածը չէր վերաբերում պատերազմական հանցագործություններին, այլ 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հայտարարության հետևանքն էր, քանզի դաշնակիցները դեռ այն ժամանակ խոստացել էին պատասխանատվության կանչել հայերի զանգվածային սպանությունների մեջ մեղադրվողներին: Այս դրույթը կարևոր էր նաև այն իմաստով, որ թուրքական նոր իշխանությունները չէին կարող խուսափել Միջագետքի անապատներում հայերի զանգվածային կոտորածներում մեղադրվող անձանց արտահանձնելուց այն հիմնավորմամբ, թե հանցագործությունները կատարվել են այն տարածքներում, որոնք այլևս իրենց չեն պատկանում:

Նույն հոդվածով դաշնակից տերություններն իրենց իրավունք էին վերապահում նշելու այն դատարանը, որը պետք է դատեր մեղադրվող անձանց, իսկ օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ճանաչել այդ դատարանը: Ընդ որում, նշվում էր միջազգային հարաբերությունների պատմության մեջ առաջին անգամ հատուկ միջազգային քրեական դատարանի ստեղծման հնարավորության մասին: Այն դեպքում, եթե Ազգերի լիգան ստեղծեր նշված հանցագործությունները դատապարտող իրավասու դատարան, դաշնակից տերությունները մեղադրյալներին պետք է հանձնեին այդ դատարանին, իսկ թուրքական կառավարությունը պարտավորվում էր ճանաչել այդ դատարանը⁴¹:

Նշված դրույթները հետագայում իրենց արտացոլումը գտան ՄԱԿ-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի հոդվածներում՝ կապված այս ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձանց հանձնելու և միջազգային տրիբունալ ստեղծելու գաղափարների հետ: Այս նկատառումներից պարզորոշ երևում էր, որ միջազգային սովորութային իրավունքի նորմերն աստիճանաբար արտացոլվում էին նաև միջազգային պայմանագրերում և, միջազգային սովորութային նորմեր լինելուց բացի, վերածվում էին նաև միջազգային պայմանագրային իրավունքի նորմերի:

Թեև Սևրի պայմանագիրը չվավերացվեց ինչպես Օսմանյան կայսրության ներքաղաքական, այնպես էլ աշխարհաքաղաքական գործընթացների պատճառով, այն միանգամայն օրինական փաստաթուղթ է: Չնայած որ տվյալ պայմանագրի ստորագրման պահին Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում փաստացի իշխանությունը հիմնականում քեմալականների ձեռքում էր, այդուհանդերձ, 1920 թ. հուլիսի 22-ին երկրի

41 Տե՛ս **Барсегов Ю.**, Турецкая доктрина международного права на службе политики геноцида (о концепции члена «комиссии примирения» Гюндюз Актана), М., «Готика», 2002, էջ 32-33:

օրինական իշխանությունը՝ ի դեմս Կ. Պոլսում գործող սուլթանի խորհրդի, լրիվ կազմով քվեարկեց խաղաղության պայմանագիրը ստորագրելու օգտին և պաշտոնական պատվիրակությանը լիազորեց ստորագրելու Սևրի պայմանագիրը⁴²:

Ինչպես հայտնի է, պայմանագրի վավերացված չլինելն անգամ այն ստորագրած պետություններին ամբողջությամբ չի ազատում պարտավորություններից, մանավանդ որ պայմանագիրը ստորագրելիս թուրքական պաշտոնական պատվիրակությունը չի գերազանցել իր իրավասությունները: 1969 թ. «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 18-րդ հոդվածը պայմանագիրը ստորագրող պետությունների վրա ստորագրումից մինչև վավերացում ընկած ժամանակահատվածում որոշակի պարտավորություն է դնում ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք կարող են ազդել պայմանագրի առարկայի և նպատակի վրա⁴³: Սակայն թուրքական նոր իշխանությունները հետևողական քայլեր էին ձեռնարկում Սևրի պայմանագրի դրույթները չեզոքացնելու ուղղությամբ⁴⁴: **Բացի այդ՝ պետք է արձանագրել, որ անգամ չվավերացված վիճակում Սևրի պայմանագրի դրույթները մասնակիորեն գործադրվեցին՝ արաբական տարածքներն Օսմանյան կայսրությունից անջատելու առումով, ինչը նախատեսված էր Սևրի պայմանագրով և արդեն իսկ տեղի էր ունեցել հաջորդ՝ Լոզանի պայմանագրի ստորագրումից առաջ⁴⁵:**

Սևրի պայմանագիրը փոխված կամ փոխարինված չէ Լոզանի պայմանագրով, քանի որ երկու պայմանագրերին ծնունդ տվող կողմերը նույնական չեն, և, բացի այդ, դրանց առարկաները նույնպես տարբեր են: Այդուհանդերձ, չվավերացված և իրավական ուժի մեջ չմտած, բայց մասնակիորեն գործադրված Սևրի պայմանագրով նախատեսված՝ արաբական հողերի՝ թուրքական պետությունից անջատմանը վերաբերող, ինչպես նաև նախկին օսմանահպատակ ոչ մահմեդականների, այդ թվում՝ հայերի գույքային իրավունքների վերականգնումն ամրագրող դրույթները փաստացի վերահաստատվեցին 1923 թ. հուլիսի 24-ին Թուրքիայի կողմից ստորագրված, վավերացված և ներկայումս գործող Լոզանի պայմանագրի համապատասխան հոդվածներով:

Այսպիսով, հայրենիքի մի մասի նկատմամբ տեղաբնիկ հայ ժողովրդի իրավունքը վերականգնող՝ Հայաստանին անմիջականորեն վերաբերող հոդվածներից բացի, Սևրի պայմանագրում տեղ են գտել ոչ պակաս կարևոր հոդվածներ, որոնցով կարգավորվում էին օսմա-

42 Տե՛ս **Барсегов Ю.**, Геноцид армян – преступление по международному праву, էջ 184:

43 Տե՛ս «Международное право в документах». Сост. сборника **Н. Т. Блатова**, М., 1982, էջ 75:

44 Տե՛ս **Թորիկեան Շ.**, Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրուք, 1976, էջ 87:

45 Տե՛ս նույն տեղում, էջ 132:

նահպատակ ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում՝ հայերի խախտված իրավունքների վերականգնման ու հասցված նյութական վնասների հատուցման հարցերը, ինչպես նաև քրեական պատասխանատվություն էր նախատեսվում թուրք բարձրաստիճան ու տեղական պաշտոնյաների նկատմամբ՝ ոչ միայն պատերազմական հանցագործություններ կատարելու, այլև մարդկության դեմ կատարած հանցագործությունների, առաջին հերթին՝ հայերի զանգվածային բնաջնջումը ծրագրելու և իրագործելու համար:

Նշված հոդվածների պատշաճ վերլուծությունը հնարավորություն է տալիս հստակեցնելու հանցավոր թուրքական պետության կողմից Սևրի պայմանագրով ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպես նաև քննարկելու տվյալ փաստաթղթում առաջարկվող՝ ցեղասպանություն հանցագործության զոհ դարձած տեղաբնիկ ժողովուրդների և առաջին հերթին հայերի խախտված իրավունքները և կրած նյութական վնասները վերականգնելու մեխանիզմների գործադրման հնարավորություններն ու հեռանկարները:

6. Սևրի պայմանագիրը վերանայելու 1921 թ. ձախողված փորձը և դրա հարաբերակցությունը Լոզանի պայմանագրի հետ

Թուրքական դիվանագիտությունը մշտապես ձգտել է կասկածի տակ դնելու Սևրի պայմանագրի օրինականությունը: Այս առումով Սևրի պայմանագրի վերանայման փորձ պետք է համարել 1921 թ. Լոնդոնի խորհրդածողովը: 1921 թ. հունվարին Փարիզում՝ Անտանտի Գլխավոր խորհրդի նիստում, Ֆրանսիան հանդես եկավ Սևրի պայմանագիրը վերանայելու առաջարկով: Նույն թվականի փետրվար-մարտ ամիսներին Լոնդոնում Անտանտի տերությունների և պատերազմում պարտված Գերմանիայի ու Օսմանյան կայսրության մասնակցությամբ անցկացված խորհրդածողովում Ֆրանսիայի և Իտալիայի առաջարկով քննարկվեց Սևրի հաշտության պայմանագրի վերանայման հարցը: Ինչպես հայտնի է, այդ խորհրդածողովում փորձ արվեց Սևրի դաշնագրի՝ Հայաստանի և հայ ժողովրդի օրինական իրավունքները ներկայացնող դրույթները փոխարինել «հայկական ազգային օջախի» անորոշ գաղափարով, որը, սակայն, մերժվեց հենց թուրքերի կողմից: Լոնդոնի խորհրդածողովում այս գաղափարի մերժումով հենց իրենք՝ թուրքերը, ըստ էության, առաջինը մերժեցին նաև Սևրի պայմանագրի չեղարկումը:

Սևրի պայմանագիրը Լոնդոնում կարող էր փոխարինվել միայն նոր փաստաթղթով, որի առաջաբանում (պրեամբուլա) պետք է հաստուկ ընդգծվեր, որ տվյալ պայմանագիրը վերանայում կամ փոփոխություններ է մտցնում նախկինում ստորագրված Սևրի պայմանագրում: Այսպիսով՝ թեև Սևրի պայմանագիրը ստորագրած տերությունները Լոնդոնում հայտարարել էին այն վերանայելու իրենց մտադրության մասին, այդուհանդերձ, Լոնդոնի խորհրդատու ղուվի ընթացքում որևէ փաստաթուղթ չստորագրվեց, ինչը նշանակում է, որ խորհրդատու ղուվն իր նպատակին չհասավ, և Սևրի պայմանագրի վերանայման այդ փորձը ձախողվեց:

Ի տարբերություն Սևրի պայմանագիրը փոփոխելու Լոնդոնի ձախողված խորհրդատու ղուվի՝ 1922-1923 թթ. Լոզանի միջազգային խորհրդատու ղուվում հավաքված տերություններն անգամ պաշտոնապես չհայտարարեցին Սևրի պայմանագրի վերանայման իրենց մտադրության մասին: Որովհետև ակնհայտ էր, որ, ի տարբերություն Լոնդոնի խորհրդատու ղուվի, Լոզանի խորհրդատու ղուվը հրավիրվել էր բուլղոսում այլ՝ հույն-թուրքական պատերազմի արդյունքները ամփոփելու, Օսմանյան կայսրությունից նախորդ պայմանագրով արդեն իսկ օտարված տարածքների անջատման փաստը և օսմանյան իշխանությունների պարտքերի վճարումը թուրքական նոր իշխանություններին պարտադրելու և դրա դիմաց նրանց կարգավիճակը հստակեցնելու համար: Այս հարցերի քննարկմանը զուգահեռ՝ Լոնդոնի համաժողովի իներցիայով կրկին փորձ արվեց Հայկական հարցը «լուծելու» հայկական օջախի ձախողված գաղափարի վերակենդանացման միջոցով: Առաջարկվում էին երեք հնարավոր տարբերակներ՝ ա) հայկական ազգային օջախի ստեղծում, բ) Հայաստանի սահմանների ընդլայնում՝ նրան կցելով Արևմտյան Հայաստանի մի մասը՝ դեպի ծով ելքով, գ) հայկական ազգային օջախի ստեղծում Կիլիկիայում: Այս առաջարկները, սակայն, մերժվեցին թուրքական պատվիրակության կողմից՝ այն պատճառաբանությամբ, որ Թուրքիայի ո՛չ արևելյան նահանգներում, ո՛չ էլ Կիլիկիայում չկա որևէ տարածք, որի բնակչության մեծ մասը թուրք չլինի⁴⁶: Այսպիսով՝ ինչպես Լոնդոնի խորհրդատու ղուվում, այնպես էլ Լոզանում թուրքերը, մերժելով Հայկական հարցի լուծման՝ «հայկական օջախի» ստեղծման տարբերակը, մեխանիկորեն մերժում էին նաև Սևրի պայմանագրի համապատասխան դրույթների վերանայումը, քանզի, ինչպես հայտնի է, դրանցով Հայկական հարցին բացարձակապես այլ լուծում էր տրվել: Մինչդեռ նույն խնդրին նոր լուծում տալով միայն կարելի էր վերանայել նախորդ պայմանագրի դրույթները:

46 Տե՛ս «Հայաստանը... փաստաթղթերում», էջ 752:

1923 թ. հուլիսի 24-ին մի կողմից Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հունաստանի, Ռումինիայի, Հարավսլավիայի և մյուս կողմից Թուրքիայի միջև կնքված Լոզանի պայմանագրի 2-րդ հոդվածով հստակեցվում էին Թուրքիայի սահմանները Բուլղարիայի և Հունաստանի, իսկ 3-րդ հոդվածով՝ Սիրիայի և Իրաքի հետ⁴⁷: Պայմանագրի 16-րդ հոդվածի առաջին պարբերությամբ Թուրքիան հրաժարվում էր իր իրավունքներից բոլոր այն տարածքների նկատմամբ, որոնք ընկած էին տվյալ պայմանագրով գծված սահմաններից դուրս⁴⁸: **Փաստորեն, Լոզանի պայմանագրով հստակեցվում էին Թուրքիայի միայն արևմտյան և հարավային սահմանները, և ոչ մի խոսք չկար արևելյան, մասնավորապես՝ Հայաստանի հետ սահմանների մասին:**

Թուրքական այն «պարզաբանումները», թե Լոզանում արևելյան սահմանների ու մասնավորապես Հայաստանի հետ սահմանի հարցը չքննարկվեց, քանի որ այն արդեն իսկ լուծված էր Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով, չեն դիմանում քննադատության այն պարզ պատճառով, որ եվրոպական տերությունների գաղափարական ու քաղաքական հակառակորդ Խորհրդային Ռուսաստանի հետ կատարված երկկողմ գործարքը չէր կարող պարտադիր լինել Լոզանի խորհրդածողովին հավաքված տերությունների համար: Իբրև ասվածի ապացույց՝ հատկանշական է այն փաստը, որ Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությանը Լոզանի վեհաժողովում թույլ տրվեց մասնակցել միայն սևծովյան նեղուցների հարցերին նվիրված բանակցություններին: Մյուս բոլոր հարցերի դեպքում տերությունները թուրքերի հետ վարում էին առանձին բանակցություններ: Մոսկվայում և Կարսում բոլշևիկներից ստանալով իրենց ուզածը՝ թուրքերն արդեն կորցրել էին հետաքրքրությունը խորհրդային «դաշնակցի» նկատմամբ և նույնպես շահագրգռված չէին, որ եվրոպական տերությունների հետ իրենց բանակցություններին մասնակից լինեին Ռուսաստանի ներկայացուցիչները: Նույնիսկ նման պայմաններում խորհրդային պատվիրակությունը անինքնասիրաբար 1922 թ. դեկտեմբերի 30-ին վեհաժողովի մասնակիցներին հղեց Թուրքիայի տարածքային ամբողջականության պաշտպանության վերաբերյալ հուշագիր, որը, սակայն, չարժանացավ համաժողովի մասնակիցների ուշադրությանը⁴⁹:

Այսպիսով՝ Սևրի պայմանագիրը փոխված կամ փոխարինված չէ Լոզանի պայմանագրով հետևյալ պատճառներով.

47 Տե՛ս Treaty of Lausanne, <http://wwi.lib.byu.edu/index.php> (մուտք՝ 19.01.2020):

48 Տե՛ս նույն տեղում:

49 Տե՛ս Горохов И., Замятин Л., Земсков И., Г. В. Чичерин – дипломат ленинской школы, М., 1973, էջ 179-183:

1. Սևրի պայմանագիրը փոփոխելու կամ նորով փոխարինելու մտադրության մասին այն ստորագրած պետությունների կողմից չի հայտարարվել Լոզանի խորհրդաժողովում, ինչը Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 41-րդ հոդվածի պահանջն է⁵⁰:

2. Սևրի և Լոզանի պայմանագրերին ծնունդ տվող կողմերը նույնը չեն: Սևրի պայմանագիրը ստորագրած Բելգիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Չեխոսլովակիան, Հեջազը, ինչպես նաև Հայաստանը Լոզանի պայմանագիրը չեն ստորագրել:

Միջազգային պայմանագրերի իրավունքի հանրահայտ կանոն է, որ պայմանագիրը ստորագրող պետություններն իրավունք ունեն մասնակցելու այդ պայմանագրի փոփոխման ուղղությամբ տարվող բանակցություններին և դրա մշակմանը, ինչը սահմանված է Վիեննայի կոնվենցիայի 40-րդ հոդվածով⁵¹: Հայաստանը՝ իբրև Սևրի պայմանագիրը ստորագրած պետություններից մեկը, ավելի ստույգ՝ նրա իրավահաջորդ Խորհրդային Հայաստանը նույնիսկ հրավիրված չի եղել Լոզանի խորհրդաժողովին⁵²: Այդ խորհրդաժողովին Հայաստանի բացակայությունը հիմք է տալիս խոսելու միանգամայն նոր և Սևրի հետ առնչություն չունեցող Լոզանի պայմանագրի մասին, քանի որ փոխվել են պայմանագրի կողմերը, սուբյեկտները, ուստի և Լոզանի պայմանագիրը անզոր և անվավեր է այն չափով, որ չափով որ կարող է փոփոխության ենթարկել Հայաստանի՝ Սևրի պայմանագրում ամրագրված իրավունքները⁵³:

3. Սևրի և Լոզանի պայմանագրերի առարկաները լրիվ տարբեր են: Լոզանի պայմանագրում Սևրի մասին ոչ մի հիշատակում չկա, և ոչ մի դրույթ չկա Հայաստանի կամ հայերի մասին: Սևրի պայմանագրի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչմանը և նրա սահմանների ճշգրտմանը վերաբերող դրույթները բացակայում են Լոզանի պայմանագրում: Լոզանի պայմանագիրը շրջանցեց նաև Սևրի պայմանագրով նախատեսված՝ հայերի բնաջնջման համար պատասխանատվություն սահմանող հոդվածների դրույթները: Այս տարբերությունները կրկին փաստում են, որ Լոզանի պայմանագիրը չի փոխարինել Սևրի պայմանագրին: Անգամ թուրք պատմաբաններն են ընդունում, որ Լոզանի համաձայնագրում հայերի ջարդերի և Հայաստանի իրավունքների հիշատակման բացակայությունը թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ Ինենյուի և

50 Տե՛ս «Международное право в документах», էջ 83:

51 Տե՛ս նույն տեղում, էջ 82:

52 Պողոս Նուբարից հետո Գաբրիել Նորատունկյանի գլխավորած արևմտահայերի ազգային պատվիրակությանը, որը չէր ներկայացնում Խորհրդային Հայաստանը, թույլ տրվեց խոսել միայն Լոզանի համաժողովի ենթահանձնախմբում:

53 Տե՛ս **Թորիկեան Ե.**, նշվ. աշխ., էջ 88-89:

Ջորջ Քերզոնի միջև ձեռք բերված գաղտնի պայմանավորվածության հետևանքն էր⁵⁴:

4. Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագրի կողմերը կարող են համաձայնության գալ՝ փոխելու համաձայնագիրը միայն իրենց միջև, եթե խնդրո առարկա փոփոխությունը չի խախտում ստորագրող մյուս կողմերի՝ պայմանագրով նախատեսված իրավունքները⁵⁵: Այսինքն՝ Լոզանի պայմանագրով նոր պարտավորություններ են առաջացել Սևրի պայմանագրի մասնակից միայն այն պետությունների համար, որոնք ստորագրել են Լոզանի պայմանագիրը, իսկ Լոզանի պայմանագրի կողմ չհանդիսացող՝ Սևրի պայմանագիրը ստորագրած պետությունների դեպքում այն չի կարող որևէ ազդեցություն ունենալ նրանց՝ Սևրի պայմանագրով ամրագրված իրավունքների վրա: Ավելին՝ Սևրի և Լոզանի պայմանագրերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ Լոզանի պայմանագրում անգամ վերահաստատվել են Սևրի պայմանագրի այն դրույթները, որոնք վերաբերում են թուրքական կայսրությունից անջատվող արաբական երկրների հպատակ ժողովուրդների նկատմամբ իշխանության չարաչափման փաստերին՝ ճիշտ այն նույն սկզբունքով, որով պետք է անջատվեին նաև Հայաստանը և Քրդստանը: Սակայն, ի տարբերություն արաբական երկրների, վերջիններիս վերաբերող հոդվածները տեղ չգտան Լոզանի պայմանագրում:

Արևելյան սահմանների վերաբերյալ թուրքական պնդումներին թերևս պատասխան է տրվում Լոզանի պայմանագրի 16-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ, որտեղ նշվում է, որ տվյալ հոդվածի դրույթները չեն տարածվում բարիդրացիական հարաբերություններից բխող այն հատուկ պայմանավորվածությունների վրա, որոնք ձեռք են բերվել կամ կարող են ձեռք բերվել Թուրքիայի և նրան սահմանակից երկրներից որևէ մեկի միջև⁵⁶: Առաջին հայացքից այս անորոշ թվացող ձևակերպումներից կարելի է եզրակացնել, որ տվյալ պայմանագրով չհստակեցվող արևելյան սահմանների հարցը լուծվել կամ լուծվելու է ոչ թե ինչ-որ պայմանագրի կամ համաձայնագրի, այլ «հատուկ պայմանավորվածությունների» միջոցով: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Հաագայի 1899 և 1907 թթ. «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաներով իրավարարության համաձայնելու դեպքում վեճի կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերում ընդունելու իրավարարի ցանկացած վճիռ, ապա կոնկրետ Թուրքիայի և նրա հարևան Հայաստանի միջև միակ «հա-

54 Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», документы и комментарий, էջ 508:

55 Տե՛ս «Международное право в документах», էջ 83:

56 Տե՛ս Treaty of Lausanne, <http://wwi.lib.byu.edu/index.php>:

տուև պայմանավորվածությունը» ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի՝ հայ-թուրքական սահմանը գծող իրավարար վճիռն է⁵⁷: Այսպիսով՝ Լոզանի պայմանագրում առկա այս պարբերությունն անուղղակիորեն վերահաստատում է թե՛ Սևրի պայմանագրի և թե՛ Վիլսոնի իրավարար վճռի՝ հայ-թուրքական սահմանին վերաբերող դրույթները:

Լոզանի պայմանագրի 66-րդ հոդվածը կրկնում է Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածի այն դրույթը, ըստ որի՝ գույքային հարցերի շուրջ վեճերը պետք է կարգավորվեն խառը հանձնաժողովների կողմից, իսկ վերադարձվող գույքը պետք է ազատված լիներ ցանկացած պարտքից, որով այն կարող էր ծանրաբեռնված լինել նոր տերերի կողմից, իսկ նոր սեփականատերերին և օգտագործողներին հատուցում տրամադրելու հարցը դրվում էր թուրքական պետության վրա: Նույն պայմանագրի 65-րդ հոդվածն էլ վերաշարադրում է Սևրի պայմանագրի 285-րդ և 288-րդ հոդվածների այն դրույթները, համաձայն որոնց՝ դաշնակից երկրի կամ նոր պետության հպատակություն ձեռք բերած նախկին թուրքահպատակների ունեցվածքն ու գույքային իրավունքներն ինչպես թուրքիայում, այնպես էլ նրանից անջատված տարածքներում պետք է վերադարձվեին նախկին տերերին⁵⁸: Սա վկայում է այն մասին, որ Լոզանի պայմանագրի 65-րդ և 66-րդ հոդվածները Սևրի պայմանագրի 144-րդ, 285-րդ և 288-րդ հոդվածների վերախմբագրված տարբերակներն են:

Սևրի պայմանագրի՝ ուժի մեջ լինելու հարցը միշտ մտահոգել է թուրքական պետությանը: Սևրի պայմանագիրն իրավական ուժ չունեցող փաստաթուղթ համարելով հանդերձ՝ թուրքական կողմը միջազգային պայմանագրային իրավունքի սկզբունքների ու նորմերի կոպիտ խախտումներով կնքված Ալեքսանդրապոլի, Մոսկվայի, Կարսի պայմանագրերում ներառել է Սևրի պայմանագիրը չեղյալ համարող հոդվածներ կամ դրույթներ: Սևրի պայմանագիրը չեղյալ համարելու թուրքական իշխանությունների այս միտումը շարունակական բնույթ է կրում և վերածվել է Սևրի սինդրոմի կամ Սևրաֆոքիայի⁵⁹ յուրատեսակ ախտորոշման: Ասվածի վկայությունն է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար առաջ քաշված՝ տարածքային պահանջներից հրաժարվելու և թուրքիայի տարածքային ամբողջականությունը ճանաչելու թուրքական նախապայմանը, ինչպես նաև Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար հայտնի արձանագրություններում

57 Տե՛ս Պապյան Ա., Հայրենատիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), էջ 38:

58 Տե՛ս Treaty of Lausanne, <http://wwi.lib.byu.edu/index.php/>:

59 Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ (Սևրի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական քննարկումներում), Եր., 2012:

տեղ գտած՝ Կարսի պայմանագրի ճանաչման քողարկված ձևակերպումը՝ ենթատեքստում ունենալով Սևրի պայմանագրի չեզոքացումը:

7. Մասամբ գործադրված Սևրի պայմանագրի միջազգային-իրավական լեգիտիմությունը

Սևրի պայմանագիրը ստորագրվեց այն ժամանակ, երբ օսմանյան կառավարությունը վերջին շնչում էր: Հատկանշական փաստ է, որ Օսմանյան կայսրությունն ինքը սկսել էր Սևրի պայմանագրի վավերացման գործընթացը: 1920 թ. դեկտեմբերի 23-ին Օսմանյան խորհրդարանի վերին պալատը՝ Սենատը, իսկ 1921 թ. հունվարի 30-ին ստորին պալատը համաձայնություն էին տվել Սևրի պայմանագրի վավերացմանը⁶⁰: Սակայն արտաքին ու ներքին գործոնները հնարավորություն չտվեցին, որ այդ գործընթացն ավարտին հասցվի, և Օսմանյան կայսրությունը վավերացման փաստաթղթերը փոխանցի հաղթանակած տերություններին, ինչից հետո Սևրի պայմանագիրը կհամարվեր արդեն դե-յուրե ուժի մեջ մտած փաստաթուղթ: Մի կողմից՝ գլուխ բարձրացրած քեմալականությունը, վերածվելով քաղաքական և ռազմական գործոնի, աստիճանաբար իր ձեռքն էր վերցնում երկրի իշխանությունը, մյուս կողմից՝ քեմալա-բուլշևիկյան մերձեցումը և քեմալականներին սիրաշահելու հարցում խորհրդային Ռուսաստանի հետ մրցակցության մեջ մտած եվրոպական տերությունների գործունեությունը կանխեցին հենց թուրքական պետության կողմից սկիզբ դրված՝ Սևրի պայմանագրի վավերացման գործընթացը: Սակայն, միջազգային պայմանագրային իրավունքի համաձայն, պայմանագիրը չվավերացնելը ամբողջությամբ չի ազատում այն ստորագրողներին իրենց ստանձնած իրավական պարտավորություններից, և միայն չափազանց լուրջ հանգամանքներն ու հիմնավորումները կարող են արդարացնել պայմանագիրը ստորագրած պետության կողմից դրա վավերացումից հրաժարումը, ինչը կարող է վնաս հասցնել պայմանագրի մյուս կողմերի իրավունքներին⁶¹: Տվյալ դեպքում Սևրի պայմանագրի չվավերացվելը վնաս հասցրեց պայմանագրի կողմ հանդիսացող Հայաստանի իրավունքներին:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թ. Վիեննայի կոնվենցիայի 14-րդ հոդվածը հստակեցնում է, թե որ դեպքերում է պետության համար պայմանագրի պարտադիր լինելն արտահայտվում վավերացմամբ: Տվյալ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պետության համար

60 Տե՛ս «Հայաստանը ... փաստաթղթերում», էջ 59:

61 Տե՛ս Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիան, Եր., 1997:

պայմանագրի պարտադիր լինելն արտահայտվում է վավերացմամբ, եթե պայմանագիրը ստորագրելու պետության մտադրությունը բխում է նրա ներկայացուցչի իրավասությունից կամ արտահայտվել է բանակցությունների ժամանակ⁶²: Այսինքն՝ վավերացման մերժումը, օրինակ, կարող է հիմնավոր համարվել, եթե պայմանագիրը ստորագրող որևէ պետության ներկայացուցիչ գերազանցել է իր իրավասությունները կամ խախտել է պետության կողմից իրեն տրված ցուցումները: Այս առումով պետք է անմիջապես նշել, որ Սևրի հաշտության պայմանագիրը կնքող կողմերն իրենց երկրների օրինական և ճանաչված իշխանություններն էին: Պայմանագրի ստորագրման շուրջ ընթացել են երկարատև բանակցություններ, և վերջապես 1920 թ. հուլիսի 22-ին Կ. Պոլսում սուլթանի խորհուրդը լրիվ կազմով քվեարկել է խաղաղության պայմանագիրը ստորագրելու օգտին⁶³: Այսինքն՝ թեև կայսրության տարածքից թուրքերի վերահսկողության տակ մնացած հատվածը գրեթե ամբողջությամբ վերահսկվում էր քեմալականների կողմից, բայց և այնպես, պայմանագիրը թուրքական կողմից ստորագրվեց միջազգային հանրության կողմից ճանաչված սուլթանի օրինական իշխանությունը ներկայացնող պատվիրակության կողմից: Այսպիսով՝ թուրքական պատվիրակները բացարձակապես չեն գերազանցել իրենց իրավասությունները և կատարել են օրինական իշխանության կամքը: Նույնը կարելի է ասել Սևրի պայմանագիրը ստորագրած մյուս կառավարությունների մասին: Այսինքն՝ այս հիմնավորմամբ Սևրի պայմանագրի վավերացումից թուրքական պետության հրաժարումը չի կարող արդարացվել: Իսկ այն, որ տվյալ պահին կայսրության տարածքի մեծ մասը վերահսկվում էր քեմալականների կողմից, ավելի շուտ քաղաքական, այլ ոչ թե իրավական փաստարկ է: Այսպիսով՝ Սևրի պայմանագիրը ստորագրած պետությունները պայմանագրի վավերացումից հրաժարվելու իրավական որևէ հիմք չունեին, ուստի տվյալ պարագայում գործ ունենք նրանց կողմից միջազգային պայմանագրային իրավունքի հիմնարար սկզբունքների ու նորմերի խախտման և իրավունքի չարաշահման (*abus de droit*) հետ⁶⁴:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 18-րդ հոդվածը պայմանագիրը ստորագրող պետությունների վրա ստորագրումից մինչև վավերացում ընկած ժամանակահատվածում դնում է հստակ պարտավորություններ: Համաձայն այս հոդվածի՝ պե-

62 Տե՛ս «Международное право в документах», էջ 74:

63 Տե՛ս **Барсегов Ю.**, Геноцид армян – преступление по международному праву, էջ 184:

64 Տե՛ս **Տէրտրեան Գ.**, Մեր հողային պահանջատիրութիւնը միջազգային հանրային իրավունքին մէջ (Տարագիր Արեւմտահայութեան Համասփիւրջեան Քոնկրէսին ՏԱՀԲ-ի Հրամայականը), Բ. Տպագրութիւն, Պէյրուս, 2016, էջ 112:

տությունը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են ազդել պայմանագրի առարկայի և նպատակի վրա, եթե՝ 1. վավերացման պայմանով ստորագրել է պայմանագիրը մինչև այն պահը, երբ կհայտարարի տվյալ պայմանագրի մասնակից չդառնալու իր հստակ մտադրության մասին, 2. պայմանագրի՝ իր համար պարտադիր լինելու համաձայնություն է արտահայտել մինչև դրա՝ ուժի մեջ մտնելը պայմանով, որ դա չափազանց երկար չի ձգձգվի⁶⁵: Նման սկզբունքների խախտում պետք է համարել այն իրողությունը, որ քեմալականները 1921 թ. փետրվարին Ֆրանսիայի և հոկտեմբերին Իտալիայի հետ, իսկ հետագայում՝ 1923 թ., Լոզանում կնքեցին պայմանագրեր, որոնցով, փաստորեն, ձգտում էին չեզոքացնելու Սևրի պայմանագրի առարկան և նպատակը⁶⁶: Վստահաբար նույնը կարելի է ասել նաև 1921 թ. մարտին կնքված քեմալա-բուլշևիկյան մոսկովյան գործարքի մասին:

1969 թ. Վիեննայի կոնվենցիայի 25-րդ հոդվածը նախատեսում է նաև դեպքեր, երբ պայմանագիրն ամբողջությամբ կամ դրա մի մասը կարող է ժամանակավորապես կիրառության մեջ դրվել մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը, անգամ եթե դա արտահայտվելու է հետագա վավերացմամբ: Նշված հոդվածով դա հնարավոր է համարվում, եթե բանակցություններին մասնակցած պետությունները միմյանց հետ այդ մասին որևէ ձևով պայմանավորվածություն են ձեռք բերել⁶⁷:

Վիեննայի կոնվենցիայի ընդունումից առաջ էլ չվավերացված պայմանագրի գործադրման նախադեպեր եղել են: Օրինակ՝ 1935 թ. Ֆրանսիան և Իտալիան պայմանագիր էին ստորագրել աֆրիկյան որոշ շահերի առնչությամբ: Երեք տարի անց Իտալիան անվավեր ճանաչեց պայմանագիրը՝ վավերացված չլինելու պատճառաբանությամբ (պայմանագրում նշված էր, որ այն գործածության մեջ կմտնի վավերացումների փոխանակումից հետո միայն): Ֆրանսիան պատասխանեց, որ պայմանագիրը, թեև չվավերացված, բայց մասամբ գործադրվել է իր կողմից, և ընդգծեց Իտալիայի՝ բարի կամքից բխող պարտավորությունները⁶⁸: Սևրի պայմանագիրը նույնպես մասամբ գործադրվեց այն ստորագրողների կողմից՝ արաբական հողերը Օսմանյան կայսրությունից անջատելու առումով, ինչը նախատեսված էր Սևրի պայմանագրով, բայց, փաստորեն, դա գործադրվեց վավերացված չլինելով և հաջորդ դաշնագրի՝ Լոզանի պայմանագրի ստորագրումից առաջ⁶⁹:

65 Տե՛ս «Международное право в документах», էջ 74-75:

66 Տե՛ս **Թորիկեան Շ.**, նշվ. աշխ., էջ 87:

67 Տե՛ս «Международное право в документах», էջ 78:

68 Տե՛ս **Թորիկեան Շ.**, նշվ. աշխ., էջ 134:

69 Տե՛ս նույն տեղում, էջ 132:

Ինչպես հայտնի է, Սևրի պայմանագրով նախատեսվում էր թուրքական պետությանը քաղաքական պատասխանատվության ենթարկել՝ նրան զրկելով Հայաստանի, Քրդստանի, Սիրիայի, Լիբանանի, Սաուդյան Արաբիայի, Իրաքի և ոչ թուրք ժողովուրդներով բնակեցված այլ տարածքների տիրապետման իրավունքից⁷⁰: Քաղաքական առումով մեծ տերություններն իրենց միջև այս տարածքների բաժանման հարցը լուծել էին Սևրի պայմանագրի ստորագրումից առաջ, երբ դեռ պատերազմի ժամանակ՝ 1916 թվականին, ստորագրվել էր Ասիական Թուրքիայի տարածքների բաժանման գաղտնի համաձայնագիրը: Իսկ պատերազմից հետո՝ 1920 թ. ապրիլին, Սան Ռեմոյի կոնֆերանսի որոշումներով վերահաստատվեց նրանց քաղաքական կամքն այդ տարածքներն օտարելու վերաբերյալ: Ու թեև այդ տարածքները փաստացի վերահսկվում էին հիմնականում անգլիական ու ֆրանսիական զորքերի կողմից, իրավական առումով դրանք դեռևս շարունակում էին մնալ Օսմանյան կայսրության անբաժան մասը: Օսմանյան կայսրությունից Արաբական թերակղզու և Հյուսիսային Աֆրիկայի տարածքների օտարումը պետք է ձևակերպվեր նրա հետ կնքվելիք խաղաղության պայմանագրով: Եվ բնական է, որ Սևրի պայմանագրի հիմքում դրվեցին Ասիական Թուրքիայի տարածքների բաժանման գաղտնի համաձայնագրի դրույթներն ու Սան Ռեմոյի կոնֆերանսի որոշումները: Այսպես, Սևրի պայմանագրի 94-րդ հոդվածի համաձայն, Սիրիան և Միջագետքը⁷¹ ժամանակավորապես ձանաչվում էին անկախ պետություններ՝ պայմանով, որ դրանց կառավարումը պետք է իրականացվեր մանդատառու պետության խորհրդով և օժանդակությամբ, մինչև որ նրանք ի վիճակի կլինեին ինքնակառավարման: 95-րդ հոդվածով Պաղեստինի կառավարումը նույնպես հանձնվում էր պայմանագիրը ստորագրող պետությունների կողմից ընտրված մանդատառուին, որը պետք է կենսագործեր Պաղեստինում հրեաների համար ազգային օջախ ստեղծելու վերաբերյալ բրիտանական կառավարության 1917 թ. նոյեմբերի 2-ի հռչակագրի⁷² դրույթները⁷³:

Պայմանագրի 113-րդ հոդվածով Թուրքիան կորցնում էր իր իրավունքները նաև Սուդանի նկատմամբ, իսկ 121-րդ հոդվածով հրաժարվում էր Լիբիայում սուլթանի ունեցած իրավունքներից և առանձնաշնորհներից: Թուրքիան հրաժարվում էր Արաբական թերակղզու տիրույթներից և 98-

70 Стів Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, էջ 183:

71 Դրանք ներառում էին Սիրիայի, Լիբանանի և Իրաքի ներկայիս տարածքները:

72 Խոսքը ԱՆԾ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Բալֆորի՝ լորդ Ռոտշիլդին ուղղված «Բալֆորի հռչակագիր» անվամբ հայտնի նամակի մասին է, որով Պաղեստինում նախատեսվում էր ազգային օջախի ստեղծում հրեաների համար:

73 Стів Treaty of Peace with Turkey, Signed at Sevres. August 10, 1920, էջ 26, <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>.

100-րդ հոդվածներով պարտավորվում էր ճանաչել Հեջազը⁷⁴ որպես ազատ և անկախ պետություն, ինչպես դա արդեն արել էին դաշնակից պետությունները: Պայմանագրի 101-րդ հոդվածով Թուրքիան հրաժարվում էր Եգիպտոսի նկատմամբ իր իրավունքներից և ճանաչում Եգիպտոսի նկատմամբ 1914 թ. դեկտեմբերի 18-ից հաստատված անգլիական պրոտեկտորատը, իսկ 118-120-րդ հոդվածներով՝ Ֆրանսիայի պրոտեկտորատը Մարոկկոյի և Թունիսի նկատմամբ: Մանդատային կառավարման իրավունքով օտարված տարածքներից բացի՝ պայմանագրում կային նաև եվրոպական տերություններին ուղղակիորեն փոխանցվող տարածքների մասին հոդվածներ: Այսպես՝ 115-րդ հոդվածով Թուրքիան ճանաչում էր 1914 թ. նոյեմբերի 5-ի Մեծ Բրիտանիայի կողմից Կիպրոսի անեքսիայի ակտը, իսկ 122-րդ հոդվածով՝ Իտալիայի իրավունքներն ու տիտղոսը Էգեյան ծովի կղզիների նկատմամբ⁷⁵:

Սևրի պայմանագրի կողմ հանդիսացող եվրոպական ազդեցիկ տերությունները, առաջին հերթին՝ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, ելնելով իրենց շահերից, մինչև հետ պայմանավորվածություն ձեռք բերելով, սկսեցին ընտրողաբար գործադրել չվավերացված և դեռևս ուժի մեջ չմտած Սևրի պայմանագրի հոդվածները՝ կապված արաբական տարածքները Օսմանյան կայսրությունից օտարելու հետ: Սևրի պայմանագրի չվավերացված լինելու պայմաններում դրա հոդվածների հիման վրա մինչև Լոզանի պայմանագրի ստորագրումը, փաստորեն, ավարտվեց Օսմանյան կայսրության տրոհման և մանդատների ու պրոտեկտորատների կիրառմամբ պետությունների (Սիրիա, Լիբանան, Իրաք, Սաուդյան Արաբիա և այլն) անկախացման գործընթացը, որը, ցավոք, շրջանցեց Հայաստանը: Այսպիսով՝ պայմանագրի կողմ հանդիսացող եվրոպական տերությունները, կենսագործելով դրա որոշակի հոդվածների դրույթներ, առանց վավերացման, փաստորեն, մասնակի գործադրության մեջ են դրել Սևրի պայմանագիրը:

74 Թագավորություն, որն առաջացավ ներկայիս Սաուդյան Արաբիայի տարածքում և, հետագայում ընդարձակվելով, դարձավ այդ պետության ստեղծման հիմքը:

75 St. u Treaty of Peace with Turkey, Signed at Sevres. August 10, 1920, էջ 27-29, <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>:

Գլուխ երրորդ

ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՎԻՆՍՈՆԻ ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃԻՐՈՑ ԵՎ ԴՐԱ ԱՐԴԻԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԸ

1. Հայաստանի սահմանի հարցով Վ. Վիլսոնի կոմիտեի գործունեությունը

1920 թ. փետրվարի 12-ից ապրիլի 10-ը Լոնդոնում գումարված Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի վարչապետների ու արտգործնախարարների կոնֆերանսը և ապրիլի 18-26-ը Սան Ռեմոյում կայացած կոնֆերանսը մշակեցին հայ-թուրքական սահմանին առնչվող տեխնիկական բոլոր հիմնական հարցերը:

Լոնդոնում ձևավորվեց Հայկական սահմանների գծով հանձնաժողովը, որը գծեց անհրաժեշտ քարտեզներն ու երիցս ունկնդրեց հայկական միասնական պատվիրակությանը: Վերջինս իր հերթին ներկայացրեց գեներալ-մայոր Գ. Ղորղանյանի կողմից մշակված «Հայաստանի սահմանների մասին» երեք հայտագիր: Այնուհետև՝ 1920 թ. մարտի 25-ին, Անտանտի տերությունները որոշեցին նոր պետությանը հանձնել Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգները՝ միասին հստակեցնելով դրանց ուրվագիծը: Փոքր-ինչ ավելի ուշ Սան Ռեմոյի կոնֆերանսը հաշվարկեց, թե քանի դիվիզիա է անհրաժեշտ Օսմանյան կայսրությունից անջատվող տարածքների ռազմակալման համար: Ապրիլի 20-ին պարզվեց, որ 8 դիվիզիա է պակասում, հատկապես Արևմտյան Հայաստանը գրավելու համար: Ուստի ապրիլի 26-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջի նախաձեռնությամբ հայկական տարածքների սահմանազատման խնդիրը վերահասցեագրվեց ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին, ով հրավիրվեց ստանձնելու սահմանային իրավարարի դերը:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանն ու Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարը հենց նույն օրը հեռագրեցին Սպիտակ տուն՝ արտահայտելով իրենց ուրախությունը և միաժամանակ ներկայացնելով նախատեսվող սահմանագիծը: Դիմողների պատկերացմամբ՝ այն պետք է ընդգրկեր «Բիթլիսի նահանգը՝ առանց Սղերդ գավառի, Վանի նահանգը՝ առանց Հաքյարի գավառի, ամբողջ Կարինի նահանգը՝ նրա գլխավոր քաղաքները՝ Կարինն ու Երզնկան..., Խարբերդի ամբողջ գավառը, ...ելքով դեպի Սև ծով,

Ճորոխի հովիտն... և անդրկովկասյան ամբողջ Հայաստանը»¹: Այդ բոլոր տարածքները, բացառությամբ Խարբերդի, ընդգրկվեցին վերջնական իրավարար վճռում: Իսկ կարճ ժամանակ անց՝ մայիսի 17-ին, Վ. Վիլսոնը համաձայնեց դառնալ իրավարար: Դրան արձագանքեց Ա. Ահարոնյանը ՀՀ նոր վարչապետ Հ. Օհանջանյանին հղած նամակով: Ահարոնյանը, կարևորելով իրավարարությունը, կասկածի տակ էր առնում հայկական մանդատի հեռանկարը: Ինչպես նշում էր ՀՀ պատվիրակության ղեկավարը, ԱՄՆ նախագահի իրավարարությունը սահմանափակված էր չորս նահանգներով, որպեսզի «իր հայանպաստ տրամադրությունը շատ հեռու չտանի և Հայաստանին չկցի թուրքական լայն շրջաններ: Մանավանդ Անգլո-ֆրանսիական [Սայքս-Պիկոյի] համաձայնության գոտիների վրա չթևակոխի: Վախ կար, որ Վիլսոնը, թեկուզ այս սահմանափակումը նկատի առնելով, կարող է հրաժարվել: Բարեբախտաբար, երկու օր առաջ պաշտոնապես հայտնի եղավ, որ Վիլսոնը համաձայն է դառնալ իրավարար մեր սահմանների խնդրում: Մենք, իհարկե, գոհ ենք: Ենթադրություն կա, որ Վիլսոնը մեզ կտա ոչ միայն էրզրումը, այլև, հավանաբար, Երզնկան ու Տրապիզոնը: Այդ կտեսնենք. հաստատ այն է այսօր, որ Վիլսոնի արբիտրաժն ի վնաս մեզ լինելու չէ»²:

Ինչ վերաբերում է հայկական մանդատի մասին Վիլսոնի ուղերձին, որով մայիսի 24-ին ԱՄՆ նախագահը դիմեց Սենատ և Ներկայացուցիչների պալատ, ապա Ա. Ահարոնյանը դրա երկու հնարավոր պատճառ էր դիտարկում. կամ պետական գործիչը պահը հարմար է համարել ու վստահ էր այդ քայլի հաջողության մեջ, կամ նա, «լավ գիտենալով, որ իր առաջարկը անպատճառ պիտի մերժվի, այնուամենայնիվ դիմել է, որպեսզի իր վրայից պատասխանատվությունը վերանա, քանի որ և՛ մենք, և՛ Խաղաղության] Համագումարը, և գրեթե ողջ քաղաքակիրթ աշխարհը նրանից, Վիլսոնից է սպասում Հայաստանի հովանավորությունը»³: Թեև «ցավն այն է, որ Վիլսոնն իր վճռական խոսքն ասելու է մեր սահմանների մասին միայն թուրքերի հետ պայմանագիրը ստորագրելի հետո: Այսպիսով, Վիլսոնի վճիռը շատ չի ուշանա, բայց կարծիք կա, որ նա ստիպված լինի սպասել ոչ թե պայմանագրի ստորագրությանը, այլև ռատիֆիկացիային. այս է անախորժը, որովհետև կարող է երկարել»⁴:

Այնուամենայնիվ, պատվիրակության ղեկավարը հարցնում էր վարչապետին, թե արդյոք պե՞տք չէ օգտվել հարմար առիթից ու հարևանների հետ համերաշխության հաստատումից հետո Վաշինգտոնին հանձնել

1 Հայաստանի սզգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 2, գ. 114, թ. 1:

2 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 143:

3 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 144:

4 Նույն տեղում:

Անդրկովկասի բոլոր սահմանների հստակեցումը: Ահարոնյանը նաև համա-
միտ էր Ազգային պատվիրակության լուծարման գաղափարին և առա-
ջարկում էր Պողոս Նուբարին շարքային անդամի կարգավիճակով միանալ
ՀՀ պատվիրակությանը, որպեսզի վերջինս ենթարկվի Երևանի բոլոր որո-
շումներին:

Նույն շրջանում Սենատը մերժեց հայկական մանդատի ստանձնումը,
իսկ Անդրկովկասում ուժեղանում էր բոլշևիզմը: Ու թեև ԱՄՆ նախագահը
մայիսի 17-ին ստանձնել էր իրավարարի դերը, փորձագետների խումբը
սկսել էր հավաքվել միայն հուլիսին: Ավելի ուշ Պետդեպարտամենտի ջան-
քերով հավաքված այդ անձանց խումբը անվանում են «Թուրքիայի և Հա-
յաստանի միջև սահմանի իրավարարության հարցով կոմիտե»: Այդ կո-
միտեին են հանձնվում Լոնդոնում ու Սան Ռեմոյում գումարված Գերագույն
խորհրդի փաստաթղթերն ու քարտեզները, Պետդեպարտամենտի դիվանը,
քարոզիչների հաշվետվությունները, գրությունները: Կարելի էր ակնկալել
աշխատանքի արագ ավարտ. չէ՞ որ Լոնդոնում մանրակրկիտ կերպով
հստակեցվել էր սահմանագատումը, իսկ Սան Ռեմոյում կողմերը վիճում
էին միայն երզրումի ապագայի շուրջ:

Կոմիտեին հանձնված մեծածավալ նյութերից առանձնացնենք ԱՄՆ-
ում ՀՀ ռազմական առաքելության պետ, գեներալ-մայոր Հ. Բագրատունու
հուշագիրը⁵: Այն պատրաստվել էր 1920 թ. մայիսի 22-ին Վաշինգտոնում ա-

5 **Հակոբ Բագրատունի (1879-1943)** - մասնակցել է 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմին: Ավելի ուշ ծառայել է Թուրքեստանում, 1908-1914 թթ. եղել է օկրուգի շտաբի հետախուզության բաժնի պետ, այցելել է Մոնղոլիա, Տիբեթ, Կորեա, Աֆղանստան, Բուխարա, Կաշգար, Քերմիշ, Մերվ, Տաշքենդ: Առաջին աշխարհամարտում հերոսաբար կռվել է Հարավարևմտյան և Արևմտյան ճակատներում: 1914 թ. հոկտեմբերից մինչև 1915 թ. հունվարը եղել է Թուրքեստանի Ա զորաբանակի շտաբի պետի պաշտոնակատար: 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Պետրոգրադում Հայկական կոմիտեին կից գործող Հայկական զինվորական հանձնաժողովի անդամ էր, սերտ կապեր էր հաստատել Ա. Ֆ. Կերենսկու հետ: 1917 թ. հուլիսի 12-ից Պետրոգրադի ռազմական օկրուգի գլխավոր սպայակույտի պետն էր, օգոստոսին ներկայացրել է հայկական զորաբանակի կազմավորման ծրագիր: Թիֆլիսում հաստատված Հայոց ազգային խորհուրդը Հ. Բագրատունուն ընտրել է ռուսա-կան մայրաքաղաքում գործող հայկական ռազմական կոմիսար, նույն թվականի օգոստոսից Հայկական ռազմական խորհրդի ղեկավար: Հոկտեմբերին պաշտ-պանում է Չմեռային պալատը, 25-ին նշանակվում օկրուգի հրամանատար, բայց 26-ին հրաժարական է ներկայացնում և մինչև դեկտեմբերի 15-ը բանտարկվում Պետրոպավլովյան ամրոցում: Ազատ արձակվելուց հետո՝ 1918 թ. մարտին, Ռոստոմի (Ստեփան Զոռյան) ուղեկցությամբ ժամանում է Բաքու՝ պաշտպանելու այդ քաղաքը օսմանյան բանակից: Նա քաջ գիտակցում էր, որ Ղարաբաղն ու Երևանը ոչնչացման հաջորդ թիրախներն են լինելու: Մարտի 27-ին ապահովել է երկաթուղու երթևեկությունը, իսկ հաջորդ օրը՝ Համազասպ Սրվանձտյանցի հետ հանդիպելուց հետո, նրա վրա հարձակվել են թուրքական գործակալները: Վիրահատելուց հետո ստիպված անդամահատել են ոտը՝ ծնկից ներքև:

1918 թ. օգոստոս-սեպտեմբերին Կենտրոնական կասպիական դիկտատուրայի ռազմական և նավատորմի գործերով հանձնակատարն էր: Ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության փարիզյան պատվիրակության կազմում: Եղել է ԱՄՆ-ում միացյալ ռազմական առաքելության նախագահ, որի շրջանակներում համագործակցել է Ա. Օզանյանի հետ: 1920 թ. օգոստոսի 19-ին վերադարձել է Փարիզ, իսկ նոյեմբերի վերջին նշանակվել է ՀՀ դեսպան Լոնդոնում: 1922-1923 թթ. մասնակցել է Լոզանի կոնֆերանսին:

մերիկյան կառավարության համար՝ «Էրզրումի նահանգը, Տրապիզոնի և Խարբերդի գավառները Հայկական պետությանը միացնելու մասին» վերնագրով: Հուշագրում մանրամասն ներկայացվում է Կարինում կենտրոնացած ճանապարհների ցանցը և հիմնավորվում, թե ինչու է պետք այդ քաղաքը ներառել հայկական պետության կազմում:

Էրզրումը ներկայացվում էր որպես առևտրի և փոխադրումների կարևոր հանգույց, քանի որ Էրզրումում էին հատվում Տրապիզոնից Պարսկաստան տանող տարանցիկ ուղին (Բաբերդ-Ալաշկերտ-Բայազետ գծով դեպի Խոյ և Թավրիզ), անդրկովկասյան երեք գծերը՝ դեպի Օլթի-Արդահան, Սարիղամիշ-Կարս և Ալաշկերտ-Երևան: Այնուհետև նշվում էին Կանի ճանապարհը, Միջագետքի երթուղին՝ Մուշ-Բիթլիս-Սղերդ գծով դեպի Մոսուլ, և Քուրդիստան տանող երկու գծերը՝ դեպի Ղարաշեյխ-Դիարբեքիր և դեպի Երզնկա-Կամախ-Արաբկիր-Խարբերդ-Դիարբեքիր: Սիրիա էին տանում երկու երթուղիներ՝ Երզնկա-Արաբկիր-Խարբերդ-Դիարբեքիր-Սևերակ և Մուշ-Բիթլիս-Դիարբեքիր-Ուրֆա-Հալեպ: Եվ վերջապես՝ անատոլիական ուղղությունը տանում էր Մամախաթուն-Երզնկա-Սեբաստիա և Թոկաթ⁶:

Նկարագրելով տնտեսապես զարգացած Խարբերդի գավառը՝ գեներալն ուշադրություն էր հրավիրում գավառի պաշտպանողական կարողունակության վրա, իսկ Տրապիզոնի շրջանը Ճորոխի կամ Խորշատի հովիտներով երկրի համար ելք էր ապահովելու դեպի ծով: Առաջին հովիտը տանում էր դեպի Օլթի և Կարսի երկաթուղային կայարան, սակայն Վրաստանն ու Ռուսաստանը հավակնում էին իրենց ձեռքը վերցնելու Ճորոխի գետաբերանի հսկողությունը: Հետևաբար այդ ճանապարհը անապահով էր քաղաքական ցանկալի նպատակներին հասնելու տեսանկյունից: Ինչ վերաբերում է Խորշատի գետաբերանին, ապա այն ենթադրում էր ամբողջ Տրապիզոնի գավառի միացում նոր ձևավորվող պետությանը: Երկրորդ երթուղին, ըստ Հ. Բագրատունու, Հայկական լեռնաշխարհի ապրանքը սևծովյան ափեր փոխադրելու լավագույն տարբերակն էր⁷:

Հուշագրի հեղինակը մանրամասն անդրադարձել է Երզնկայի պաշտպանողական ներուժին, քանի որ քաղաքից դեպի արևմուտք ու հարավ-արևմուտք՝ 18-25 կմ հեռավորության վրա, կար երկու լեռնաշղթա՝ Գոհանան (2400 մ) և Սեպուհ (3030 մ) գագաթներով, երկրորդը՝ քաղաքից 25.6 կմ հեռավորության վրա: Ավելին՝ Երզնկայից 22 կմ դեպի հյուսիս-արևելք կար ևս մեկ բնական պատնեշ: Դա Սիպքարի լեռնաշղթան էր՝ 2310 մ բարձրություն ունեցող համանուն գագաթով: Դրա կողքին՝ 2 կմ հեռավորության վրա, խոյանում էր Անահտա Աթոռը: Այդ սարերը «անհրաժեշտ էր միացնել Հա-

6 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 556, թ. 290:

7 Տե՛ս նույն տեղում, թ. 294-295:

յաստանին, որպեսզի հնարավոր լիներ ապահովել [բնակչության] պատշաճ պաշտպանությունը»⁸:

«Հայկական պետության տարածք» վերնագրով բաժնում Բագրատունին նշել է, որ այն «ներառելու է Կովկասում Երևանի և Կարսի նահանգները, Թիֆլիսի ու Ելիզավետպոլի նահանգների որոշ մասեր, ինչպես նաև նախկին Թուրքահայաստանից՝ Էրզրումի նահանգը ու Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Տրապիզոնի նահանգների մասերը»⁹: Նոր պետության կովկասյան հատվածն ընդգրկում էր 67.3 հազ. քառ. կմ, իսկ նրան միացվող օսմանյան հատվածը՝ 129.5 հազ. քառ. կմ տարածք: Այնպես որ միացյալ տարածքը կազմելու էր 196.8 քառ. կմ: Ենթադրվում էր, որ պետությունն ունենալու է 3 միլիոնից ավելի բնակչություն, որից 2 միլիոնը՝ հայեր:

Վերլուծելով հուշագրի վիճակագրությունը՝ ստացվում է, որ՝
1 միլիոն 296 հազար հայ բնակվում էր ՀՀ սահմաններում,
280 հազար գաղթական ժամանելու էր Էրզրումից, Վանից, Բիթլիսից,
230 հազար հայ տեղափոխվելու էր Վրաստանից. նրանք 400 հազարի հասնող համայնքի 57.5 տոկոսն էին,
ևս 80 հազար հայ (կամ եղած 100 հազարի 80 տոկոսը) ժամանելու էր Ադրբեջանից,
200 հազար հայ էլ գալու էր Թուրքիայի այլ վայրերից կամ հայրենադարձվելու էր արտերկրից:
Այդ 2 միլիոն 86 հազար հոգուն գումարվելու էին 100 հազար հույներ ու նեստորականներ, հետևաբար քրիստոնյաների թիվը հասնելու էր 2 միլիոն 186 հազարի (67.7 տոկոս): Մահմեդական բնակչությունը՝ 850 հազար, որի կողքին կային 70 հազար ղզլբաշ, 40 հազար եզդի, իսկ ընդհանուր՝ 3 միլիոն 146 հազար մարդ:

Ընդ որում, հուշագրի հեղինակը նշում էր, որ եզդիներն ու ղզլբաշները միշտ հաշտ ու խաղաղ գոյակցել են հայերի հետ: Նույնը վերաբերում էր Հայաստանի հարավում բնակվող մահմեդականների մեծ մասին, հատկապես՝ դերսիմցի քրդերին: Հ. Բագրատունին հավելում էր, որ Էրզրումում, Վանում ու Բիթլիսում հաստատված մահմեդականները նույնպես ծանր կորուստներ են կրել վերջին երկու տարվա սովից, քայքայումից ու համաճարակներից, որոնք պարզապես լքում էին իրենց բնակավայրերը: Նա նշում էր նաև, որ Հայաստանի Հանրապետությունում բնակվում էին 400 հազար մահմեդականներ, և թերևս 350 հազար էլ՝ Խարբերդի, Տրապիզոնի, Էրզրումի, Վանի և Բիթլիսի հենակետային շրջաններում:

Բանակի առումով գեներալը նշում էր, որ, առանց դժվարության, ՀՀ-

8 Նույն տեղում, թ. 298:

9 Նույն տեղում:

ուն կհավաքագրվի 60-100 հազար զինվոր: Նրանց կեսից ավելին ուներ աշխարհամարտում կռվելու փորձ, քանի որ ռուսական բանակը համարված էր 180 հազար կովկասահայ զինծառայողներով¹⁰: Որպես կարևոր միջոց՝ հուշագրում առաջարկվում էր կրճատել թուրքական բանակը ճիշտ այնպես, ինչպես դա իրականացվել էր գերմանական զորքի դեպքում: Փաստաթուղթը կազմողը վստահ էր, որ թուրքական բանակի կանխամտածված կրճատումից հետո 60-100 հազար հայ զինվոր հեշտությամբ կհաստատվի միացվող շրջաններում՝ «արտաքին անվտանգությունը, ինչպես և կարգ ու կանոնը սեփական եզրերում ապահովելու նպատակով»¹¹:

Հ. Բագրատունու աշխատանքը լրացնում է ԱՄՆ-ում ՀՀ հավատարմատար Գ. Փաստրմաձյանի՝ ԱՄՆ պետքարտուղար Բ. Կոլբիին ուղղված 1920 թ. հունիսի 10-ի նամակը: Գ. Փաստրմաձյանը գրում էր, որ դաշնակիցները հակված չեն տրամադրելու իրենց բանակները և չեն հավատում լրացուցիչ տարածքներ ռազմակալելու ՀՀ ունակությանը: Հիրավի, երկրի 25 հազարանոց զորքը «ի վիճակի չէր պաշտպանելու հանրապետությունը թուրք-թաթարներից ու միաժամանակ գրավելու Թուրքահայաստանի այն մասը, որը նախագահը տալու էր»¹² հայերին: Այնուհանդերձ, «եթե մեզ մատակարարեն անհրաժեշտ ռազմամթերք ու բեռներ, ապա մենք հեշտությամբ կստեղծենք իրադրության պահանջներին համապատասխանող հայկական բանակ»¹³:

Նամակի վերջում ՀՀ հավատարմատարը խնդրում էր տրամադրել ռազմական օգնություն՝ նախատեսված 50 հազար մարտիկների համար, «միջազգային փոքրաթիվ զորքեր, յուրաքանչյուր մասնակից երկրից՝ 2-4 գումարտակ»¹⁴, որպեսզի նրանք ուղեկցեն ՀՀ ստորաբաժանումներին արևմտյան նահանգները հանրապետությանը միացնելու ժամանակ, ինչպես նաև 200 միլիոն դոլարի չափով միջազգային ֆոնդ՝ գաղթականների տունդարձը հոգալու համար: «Հասկանում եմ, կշտամբում էր Գ. Փաստրմաձյանը, որ Թուրքիայի հետ հաշտությունը չի նախատեսում Հայաստա-

10 1917 թ. ռուսական բանակի գլխավոր սպայակոյտին կից գործող բրիտանական ռազմական առաքելության պետ, գեներալ-մայոր Չ. Բարտերը տեղեկացնում էր ցարական ստորաբաժանումներում ընդգրկված 150 հազ. հայերի մասին, որոնցից 35 հազարը կռվում էին Կովկասյան ճակատում (տե՛ս Great Britain, Cabinet Office Archives, Public Record Office, Lnd. Class 24: Cabinet Memoranda/39, G. T. 2347, **Arslanian A.**, The British Decision to Intervene in Transcaucasia During the World War I. – «The Armenian Review», Boston, 2 (1974), 148, 156): 1920 թ. Հունիսի 10-ին ԱՄՆ պետքարտուղարին ուղղված Գ. Փաստրմաձյանի նամակում խոսքը 160 հազ. հոգու մասին էր (տե՛ս United States National Archives, Washington D. C., Record Group 59 General Records of the Department of State, class 860J.01/ document 407 (այսուհետև՝ US NA, RG), «Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг.», сост. Г. Г. **Махмуриян**, Ер., Ин-т истории НАН РА, 2012, էջ 405 (այսուհետև՝ «Армения в документах»):

11 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 556, թ. 299:

12 US NA, RG 59, 860J.01/407.

13 «Армения в документах», с. 405.

14 Նույն տեղում, էջ 405-406:

նին հասցված վնասների որևէ հատուցում, թեև Հայաստանը, իր բնակչության համեմատ, մարդկային ու նյութական ավելի մեծ կորուստներ է կրել, քան մարտնչած ցանկացած այլ ազգ»¹⁵:

Պետք է նկատի ունենալ, որ թեև կոմիտեի անդամ փորձագետներին ընտրել ու հավաքել էին հուլիսին, այդուհանդերձ, նրանք առաջին նիստն անցկացրել են 1920 թ. օգոստոսի 10-ին: Փորձագետներից առաջինը պատմության պրոֆեսոր **Վիլյամ Լին Վեստերմանն** էր՝ Փարիզում Վ. Վիլսոնի՝ Հունաստանի ու Թուրքիայի հարցերով խորհրդականը, որը սերտորեն համագործակցում էր նախագահի հետ մտերիմ Է. Հաուզի հետ և Մերձավոր Արևելքի գծով ամերիկյան պատվիրակության գլխավոր մասնագետն էր: Նա հունական ու հռոմեական անտիկ ժամանակաշրջանի ստրկատիրության պատմության ճանաչված մասնագետ էր¹⁶: Երկրորդը ԱՄՆ գլխավոր սպայակույտի մայրը **Լուրենս Մարտին** էր: 1918 թ. օգոստոսից նա պատասխանատու էր ռազմական նախարարին ներկայացվող շաբաթական ամփոփագրերի և քարտեզների համար¹⁷: 1919 թ. օգոստոս-հոկտեմբերին որպես գեներալ **Ջ. Հարբորդի** առաքելության աշխարհագրագետ՝ նա ճամփորդել է Ադանայից Երևան: Երրորդը **Հարրիսոն Գրիսվոլդ Դուայթ** էր՝ Պետդեպարտամենտի մերձավորարևելյան բաժանմունքից¹⁸:

Հայկական վավերագրերը, հատկապես՝ Հ. Բագրատունու մայիսյան հուշագիրը, էական ազդեցություն էին գործում կոմիտեի երեք անդամների

15 Նույն տեղում:

16 **Վ. Վեստերման (1873-1954)** - սերում էր անգլիացի հայտնի բողոքականի տոհմից: Ղասավանդել է Վիսկոնսինի, Կոռնելի, Կոլումբիայի համալսարաններում և Եգիպտոսում: 1944 թ. ընտրվել է Ամերիկայի պատմաբանների միության նախագահ: Կոլումբիայի համալսարանի գրադարանին է նվիրել իր՝ 1918 թ. դեկտեմբերի 4-ից 1919 թ. հուլիսի 4-ն ընկած ժամանակահատվածի վերաբերյալ փարիզյան օրագիրը, իսկ նրա 1918-1919 թթ. նամականին պահվում է Նեբրասկայի համալսարանի Լինքոլնի անվան գրադարանում:

17 **Լ. Մարտին (1880-1955)** - 1903-1917 թթ. եղել է ԱՄՆ հանքախուզության փորձագետ, 1906 թվականից սկսած դասավանդել է Վիսկոնսինի համալսարանում: 1917 թ. օգոստոսից կամավոր զինվորագրվել է: Ավելի ուշ ստացել է գնդապետի կոչում, եղել Պետդեպարտամենտի աշխատակից և Կոնգրեսի գրադարանի բաժանմունքի վարիչ, Ամերիկայի աշխարհագրագետների միության նախագահ: 1924-1925 թթ. հրատարակել է «Հաշտության պայմանագրերը 1919-1923 թթ.» (երկու հատորով) և «Մոսուլի հարցը» գրքերը (տես The Treaties of Peace, 1919-1923, in 2 vols. Intr. and comp. **L. Martin**. NY Carnegie Endowment for International Peace, 1924, և աև՝ The Mosul Question, NY, New York Foreign Policy Association, 1925):

18 **Հ. Դուայթ (1875-1959)** - ծնվել է Կ. Պոլսում, որտեղ հաճախել է «Ռոբերտ» քոլեջը: ԱՄՆ-ում «Ամհերսթ» քոլեջն ավարտելուց հետո անցել է հյուպատոսական ծառայության: 1918 թ. Վերսալում նստավայր ունեցած Գերագույն ռազմական խորհրդի ամերիկյան բաժանմունքի թարգմանիչն էր: 1919 թ. եղել է Փարիզի վեհաժողովին մասնակցող ազգային պատվիրակության անդամ, գեներալ Թ. Բլիսի քարտուղարը: Այնուհետև աշխատել է Պետդեպարտամենտում: Հեղինակել է պատմվածքների 4 ժողովածու՝ «Կոստանդնուպոլիսը. հինը և նորը», «Ստամբուլի գիշերները», «Պարսկական մանրանկարները», «Էլամի կայսրը», և այլ պատմվածքներ: Հոդվածներ է հրատարակել «Harper's Mansle», «Atlantic Mansle», «National Geographic» ամսագրերում: 1934 թ. «Մետրոպոլիտեն» օպերային թատրոնը բեմադրել է մեկ օպերա՝ նրա «Փաշայի այգում» պատմվածքի բովանդակությամբ: Հ. Դուայթի փաստաթղթերն ու նամականին նախագահներ Բ. Քուլիջի, Հ. Հուվերի և Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի տիկնոջ՝ Աննա Էլենոր Ռուզվելտի, Ա. Թոյնթի փաստաթղթերի հետ պահվում են Մասաչուսեթսի նահանգում գտնվող «Ամհերսթ» քոլեջի արխիվում:

ընկալումների և առաջարկած լուծումների վրա: Հունիսից նրանք սերտ և արդյունավետ շփման մեջ էին գեներալի հետ, իսկ հուլիսի վերջերից ամենօրյա աշխատանք էին իրականացնում նրա հետ: Դատելով Հ. Բագրատունու հետագայում տված գնահատականից՝ այդ ժամանակահատվածում կոմիտեի անդամները միանգամայն ընդունում էին հայկական դրույթները՝ բացի Խարբերդին վերաբերող դրույթից¹⁹: Ամերիկացիներին հանձնարարված էր գծել ընդլայնված Հայաստանի հարավային և արևմտյան սահմանները՝ հիմք ընդունելով ազգագրական, կրոնական, տնտեսական ու ռազմաաշխարհագրական գործոնները:

Պետք է նկատի ունենալ, որ ռազմաաշխարհագրական գործոնի շեշտադրումը վկայում էր հայ-թուրքական հակամարտության՝ խոր թշնամական բնույթ ունենալու իրողության ընկալման մասին: **Նման դեպքերում պետության սահմանները մեծածավալ ապրանքափոխանակության կամ լայն շփումներ հաստատելու համար չէ, որ ձևավորում են՝ ելնելով յուրաքանչյուր ազգի բնակավայրերից ու նրա պատմամշակութային առանձնահատկություններից: Ընդհակառակը, նախ ապահովում են բնակչության անվտանգությունն ու բուն սահմանագիծը լավագույնս պաշտպանելու հնարավորությունը:** Մեր պարագայում ամերիկացի փորձագետները կիրառում էին ժողովրդավարական մեթոդներ և հաշվի առնում պատերազմից տուժած բնակչության հատկանիշները, թեև նրանց՝ գովելի եղանակով որոշված ու թղթի վրա նշված սահմանը դեռ պետք էր հաստատել մեր լեռնաշխարհի սարերում և ձորերում: Այնինչ բոլորը խորապես գիտակցում էին և 1920 թ. փետրվարի 21-ին՝ Լոնդոնում կամ ապրիլի 22-23-ին՝ Սան Ռեմոյում չէին թաքցնում Պ. Նուբարից, Ա. Ահարոնյանից ու գեներալ Գ. Դորդանյանից, որ միջազգային որոշումները անհրաժեշտ է հաստատել ուժով, իսկ հաշտություն կնքելուց հետո պատերազմի բռնկումն անխուսափելի է: Ընդ որում, վերոնշյալ օրերին նրանց պաշտոնապես տեղեկացրել էին, որ Անտանտի երկրները տրամադրելու են զենք ու փող, բայց ոչ զինվորներ: Բանակ հատկացնելու համար եվրոպացիները ոչ ուժ ունեին, ոչ էլ մտադրություն:

1920 թ. հուլիսի 14-ին միացյալ պատվիրակության ղեկավարներ Ա. Ահարոնյանն ու Պ. Նուբարը դիմեցին Վ. Վիլսոնին՝ նրան հանձնելով Լոնդոնի կոնֆերանսի համար պատրաստած նյութերը: Նրանք խնդրում էին ԱՄՆ նախագահին հնարավորինս շուտ հրապարակել իր վճիռը: Օսմանյան չորս նահանգներից հեռացած 300 հազար գաղթականներն ահռելի զրկանքներ էին կրում և սեփական աչքերով տեսան «իրենց ճամփակիցներից 200 հազար հոգու կործանումը սովից ու հիվանդություններից»: Այդ ժամանակ ողջ մնացածները փափագում էին տուն վերադառնալ, որ «նորից հող մշակեն

19 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 557, թ. 129 դարձ. - 130 դարձ.:

ու վերաշինեն իրենց օջախները»²⁰:

Ինչ վերաբերում է սահմանազատմանը, ապա Ա. Ահարոնյանն ու Պ. Նուբարը իրենց դիմումին կցել էին համապատասխան քարտեզներ: Ըստ հիմնական օրինակում նշված ուրվագծի՝ նրանք հավակնում էին սևծովյան այն ափին, որը ձգվում էր Ճորոխի գետաբերանից մինչև Օֆ փոքրիկ քաղաքի արևմտյան շրջակայքը (Ռիզեից 22 կմ արևմուտք) և գնում դեպի հարավ-արևմուտք՝ նոր պետության մեջ ընդգրկելով Գյումուշխանեն (Տրապիզոն քաղաքը մնում էր Թուրքիային): Դրանից հետո գիծը համընկնում էր էրզրումի նահանգի եզրի ու Եփրատի հունի հետ, այնուհետև ձգվում էր դեպի արևելք՝ դեպի Բաշկալե ու թուրք-պարսկական սահման: Ա. Ահարոնյանն ու Պ. Նուբարը հատկապես զովում էին Խարբերդի բնական պաշարները և ընդգծում նրա կարևորությունը՝ ըստ 6-րդ քարտեզի: Նրանք պատրաստ էին փոխելու Խարբերդը Աղբակի (Հաքյարի) կամ Տրապիզոնի նահանգի մեծ մասի հետ²¹:

Միացյալ պատվիրակության առաջնորդները համեմատում էին միացվող տարածաշրջանում բնակվող հայերի (1.595.000 կամ բնակչության 52.9 տոկոսը) և մահմեդականների (1.421.000), Հայաստանի Հանրապետության սահմաններում բնակվող հայերի (1.874.000 կամ բնակչության 59.8 տոկոսը) և իսլամի հետևորդների (1.261.000) թվաքանակը՝ վկայաբերելով Բուլղարիայի օրինակը: Իր ազատագրման շեմին վերջինս ունեցել է ընդամենը 1.130.000 բուլղարացի (50.2 տոկոս) և 1.119.000 մահմեդական բնակիչ²²: Ուստի, նրանց կարծիքով, թուրքական իշխանության վերացումից հետո հայերի կանոնավոր ու անդադար ոչնչացման արգելքի հաստատումը «վերականգնելու է բնականոն պայմաններ, դրա շնորհիվ հայերը համեմատաբար կարճ ժամանակահատվածում կկարողանան իրենց իսկ երկրի տեր դառնալ»²³:

Պետք է գնահատենք այն լուրջ աշխատանքը, որ կատարել են ժողովրդագրական նյութերը կազմողները: Որովհետև եթե 1919 թ. Զ. Քերզոնը կասկածի տակ էր առնում Պողոս Նուբարի ներկայացրած թվերը, ապա ԱՄՆ նախագահին ուղղված նրա նամակում արդեն տրված է Կ. Պոլսի հայոց պատրիարքության և Բարձր Դռան անվերապահ վստահությունը վայելած ֆրանսիացի Վիտալ Քինեի՝ 1892, 1912 և 1916 թթ. տվյալների փութաջան համեմատությունը:

20 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 557, հատ. I, թ. 463-464:

21 Տե՛ս նույն տեղում, թ. 415:

22 Տե՛ս նույն տեղում, թ. 427, 429, 483, 485, 487:

23 Նույն տեղում, թ. 488:

2. Հայաստանի սահմանի հարցով Վ. Վիլսոնի կոմիտեի զեկուցումը

Հաշտության պայմանագիրը Թուրքիայի պատվիրակությանն է ներկայացվել 1920 թ. մայիսի 11-ին և հաջորդ իսկ օրը հրապարակվել «Times» թերթում: Սա էապես հստակեցնում էր իրադրությունը և միաժամանակ սաստկացնում պարզ թիրախներ ստացած քեմալականների դիմադրությունը: Այնինչ՝ եվրոպացի դիվանագետները կամ ՀՀ ղեկավարները բանակցությունների մեջ չէին մտնում հակառակորդի հետ և փորձ չէին անում համատեղ ուժերով հասնելու որևէ փոխզիջման: Սևրի պայմանագիրը 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրելուց մինչև Մ. Քեմալի՝ ՀՀ-ի դեմ պատերազմ սկսելու մասին սեպտեմբերի 20-ին արձակած հրամանը²⁴ պաշտոնական Երևանը Թուրքիայի կամ Խորհրդային Ռուսաստանի հետ երկկողմ բանակցություններ չի ձեռնարկել: Բացի այդ՝ ՀՀ-ն ևս չի սկսել Սևրի պայմանագրի վավերացման գործընթացը, ինչպես նաև չի ձեռնարկել ռազմական արշավ՝ իրեն հատկացված նահանգները հսկողության տակ առնելու համար: Նման կրավորականությունն ավելի էր ոգևորում թշնամուն, մանավանդ որ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը չէր կարող վախեցնել քեմալականներին: 1920 թ. օգոստոսի 14-ին Մ. Քեմալը Ազգային մեծ ժողովի ամբիոնից հայտարարեց, որ իր կառավարությունը չի ընդունում Սևրի տեքստը և դիմակայելու է դրան ռազմական միջոցներով: Այնինչ Վ. Վիլսոնի կարգավորումը, որպես այդպիսին, չէր կարող հարկադրական բնույթ ունենալ, նաև չկար հույս, որ Ատլանտյանի մյուս ափից բանակի համալրում կուղարկեն:

Իրական քաղաքականության ասպարեզից վերստին անցնելով տեսական և վավերագրական ոլորտին՝ հավելենք, որ օգոստոսի 19-ին Հ. Օհանջանյանը տեղյակ է պահել Գ. Փաստրմաձյանին, թե «սահմանների համար Ձեր կողմից ձևակերպված պահանջներին կառավարությունը հավանություն է տալիս», սակայն Երևանում չէին ակնկալում Խարբերդի շրջանի միացում, թեկուզ «ուրիշ վիլայեթների մասերի փոխարինությամբ»²⁵: Ինչ վերաբերում է ծովափին, դահլիճը նախապատվություն էր տալիս Ճորոխի հունին և Բաթումում ազատ առևտրի համար պիտանի հողամաս ունենալու հնարավորությանը:

24 Տե՛ս Atatürk Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara, T. C. Kültür Bakanlığı, 1995, էջ 189-190, **Hovannisian R.**, The Republic of Armenia, in 4 vols., vol. IV. Between Crescent and Sickle: Partition and Sovietization. Berkeley & Los Angeles, University of California, 1996, էջ 191, **Սաֆրաստյան Ռ.**, Մուսթաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Եր., «Տիր», 2019, էջ 75:

25 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 80:

ԱՄՆ նախագահը չէր շտապում տալու վերջնական եզրակացություն, թեև ուներ եվրոպական հարուստ նյութեր: Ի պատասխան հարցը արագ կարգավորելու խնդրանքին՝ նա իրազեկել էր, թե խիստ կարևորում է իր անձնական ու փութեռանդ զննումները Վաշինգտոնում: Ուստի ՀՀ նախկին վարչապետ Ա. Խատիսյանը հեռագրում է Վ. Վիլսոնին՝ տեղեկացնելով հանրապետությունում տիրող այն անհանգստության մասին, որ մշտապես աճում էր ԱՄՆ նախագահի որոշմանը սպասելու հետևանքով²⁶:

Իրականում միայն 1920 թ. սեպտեմբերի 28-ին, երբ Հայաստանի Հանրապետությունը տարված էր պատերազմով, փորձագետները Պետդեպարտամենտ ներկայացրին իրենց «Կոմիտեի ամբողջական զեկուցունը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի իրավարարության մասին»²⁷: Փաստաթղթին կցված էին 7 հավելվածներ՝ քարտեզով, Խարբերդի և Տրապիզոնի հարցերի վերլուծությամբ, թուրք-պարսկական հին սահմանագծի կարգավիճակի, ՀՀ-ում տիրող ռազմական իրադրության և միացվող չորս նահանգներում ֆինանսական վիճակի մասին տեղեկանքներով: Քննարկման առարկա նահանգների ուրվագիծը ձևավորվում էր՝ հիմք ընդունելով ռազմաաշխարհագրական, տնտեսական ու ազգագրական գործոնները:

Հեղինակներն անմիջապես պարզաբանում էին, որ, ելնելով քաղաքական պատճառներից ու հաշվի առնելով ինչպես հնարավոր անկայունությունը, այնպես էլ բուլշևիկների դիրքերի ամրապնդումը Անդրկովկասում, ցանկալի չէ Բաթումը դիտարկել որպես Հայաստանի գլխավոր նավակայան: Նկատի ունենալով երգրումից, Բիթլիսից ու Վանից արանքների սպասվելիք մեծածավալ արտահանումն ու երկաթուղի կառուցելու հեռանկարը՝ հենակետային դերը պետք է ստանձնի Տրապիզոնից էլ՝ ավելի արևմուտք ընկած Տիրեբոլուն: **Նկատենք, որ, Բաթումը թողնելով Կրաստանին ու Խորհրդային Ադրբեջանին, փորձագետներն ընդունում էին, որ նավթի արտահանումը մնալու է բուլշևիկների ձեռքում:** Սակայն Հայաստանը անջատում էին իր հարևաններից ու եթե այն չէին դիտում որպես ենթամանդատային տարածք, ապա գոնե ներառում էին

26 St'u US NA, RG 59, 860J.48/-, f. 80-81, NA Microfilm publication, T1192 Records of the Department of State Relating to Internal Affairs of Armenia, 1910-1929, Roll 7. Wash., NA General Services Administration, 1975, ՀԱԱ, միկրոժապավենների հավաքածու № 36 (այսուհետև՝ Մի):

27 US NA, RG 59, 760J.6715/61/f. 65-152 и 153-238, T1193 Records of the Department of State Relating to Political Relations Between Armenia and Other States, 1910-1929, Roll 2, ՀԱԱ, մի № 35: Մանրակրկիտ վերլուծությունը տես **Ованнисян Р.**, Международные отношения Республики Армения 1918-1920 гг., пер. с англ. **Г. Махмурия**, Ер., «Тигран Мец», 2007, էջ 710-719, **Махмурия Г. Г.**, Армения в политике США 1917-1923 гг., Ер., Ин-т истории НАН РА, 2018, էջ 479-484:

ԱՄՆ-ի ազդեցության ոլորտ²⁸:

Ջեկուցման առավել ուշագրավ հատվածը IV բաժինն է՝ «Դրույթներ թուրքական հարակից տարածքի ապառազմականացման մասին»: Այն կազմվել է գեներալ Ջ. Հարբորդի և ռազմական նախարարության աշխատակից, մայոր Ս. Հ. Մեյսոնի հետ խորհրդակցելուց հետո²⁹: Գեներալի ընկալմամբ՝ քանի որ հայերը դարերով թալանի և բռնության զոհ էին, իսկ քեմալականները մարտական գործողություններ էին իրականացնում, նշյալ տարածքների բոլոր մահմեդականները դեմ էին նոր պետության հաստատմանը և իրենց ինքնասիրությունը խոցված էին համարում: Նրանց զինվորները տուն էին վերադառնում գենքերով, իսկ հայերին «երբևէ թույլ չեն տվել գենք ունենալ կամ կրել»³⁰:

Սևրի պայմանագիրը նախատեսում էր կրճատել Թուրքիայի բանակը՝ թողնելով 700 զինվոր ու 50 հազարի հասնող ժանդարմերիա, որոնք գործելու էին դաշնակից սպաների հրամանատարության ներքո: Այնինչ, Ջ. Հարբորդի գնահատմամբ, քննարկվող շրջաններում տիրող «ավազակությունը որոշ դասերի համար վերածվել է գրեթե ժառանգական դարձած մասնագիտական արժանիքի»³¹: Իսկ ահա քրիստոնյաները նրանց չդիմակայելու դեպքում թողնվելու էին իրենց դարավոր կեղեքիչների դատաստանին: Ուստի խնդիրը երկու լուծում ուներ՝ ապառազմականացված գոտու ռազմագրավում, ինչը քիչ հավանական էր, քանի որ հանգեցնելու էր զորքի անխուսափելի գործադրման, և մեծաթիվ դաշնակից սպաներին ենթակա թուրք ժանդարմների հսկողություն, պայմանով, որ նրանք կապահովեին բնակիչների անվտանգությունը սահմանի երկու կողմերում: Քանի որ ԱՄՆ-ն հրաժարվում էր տրամադրել սպաներ, հետևաբար բրիտանացիները դիտվում էին որպես ժանդարմերիայի հնարավոր լավագույն հրամանատարներ ու հսկիչներ:

Սպայակազմը պետք է ստանձներ «բարյացակամ բռնակալի» դերն ու ենթարկվեր ոչ թե օսմանյան իշխանություններին, այլ առանձին միջդաշնակցային հանձնաժողովին: Ինչ վերաբերում է տարածքին, ապա ապառազմականացված գոտու լայնությունը պետք է լիներ առնվազն 80 կմ: Ցանկալի էր Դիարբեքիի և Խարբերդի (Մամուրեթ-ուլ-Ազիզի) եզրերը վերափոխել չեզոք գոտու, իսկ տեղական ժանդարմներին ապահովել դաշնակից երկրներից ժամանած սպայական կազմով:

Մայոր Ս. Հ. Մեյսոնը դեմ է արտահայտվել խաղաղության գոտում «ռազմականացված ավանների, հենակետերի, ռազմավարական փո-

28 Տե՛ս US NA, RG 59, 760J.6715/61/f. 81, 85, 88:

29 Տե՛ս Hovannisian R., նշվ. աշխ., էջ 35-36:

30 US NA, RG 59, 760J.6715/61/f. 91.

31 Նույն տեղում, f. 92:

խաղրական ցանցերի կամ հավելուրդային կայազորների ստեղծմանը»³²: Բնականաբար, տեղի բնակիչների զինաթափումն անիրական էր՝ հաշվի առնելով նրանց ինքնապաշտպանվելու կենսական անհրաժեշտությունը: Հանկարծակի հարձակումը կանխելու նպատակով Ս. Մեյսոնը առաջարկում էր բացառել թուրքական ապառազմականացված գոտում ռազմավարական ձեպուղիների և հենակետերի շինարարությունը: Հավասարապես կարևոր էր արգելել այնտեղ ռազմականացված ավանների, մեծ պահեստների ու զինանոցների ստեղծումը, թույլ չտալ թշնամության քարոզումը, կանխել քաղաքացիական պատերազմի կամ ընդվզումների բռնկումները:

Կոմիտեի անդամ Լ. Մարտինը ամփոփում էր. Սևրի պայմանագրով հայկական սահմանամերձ գոտում տեղակայված թուրքական բանակի թիվը կրճատվելու է՝ 30-50 հազարից հասցվելով 5-10 հազարի³³: Հիշյալ մասնագետների կարծիքով՝ թուրքական ժամդարմերիան պետք է ենթարկվի դաշնակից, միացյալ (այն է՝ ԱՄՆ-ի) կամ չեզոք երկրներից ուղարկված սպաներին, որոնք միջնորդ էին լինելու և զեկուցելու էին ռազմամուլ յուրաքանչյուր միտումի մասին³⁴: Ըստ իրավարարության պայմանների՝ համանման հսկողություն չէր կարելի պարտադրել սահմանի հայկական կողմին: Այնուամենայնիվ, երկու կողմերում տեղակայված դիտորդները լիովին բավարարելու էին ապառազմականացման պահանջները:

Նոր պետության տնտեսական կացությանը նվիրված բաժնում ապագա Հայաստանի մակերեսը նշվում էր 155.4 հազար քառ. կմ: Գյուղատնտեսական մշակման համար պիտանի էր նրա հողերի մեկ հինգերորդը: Աղի և պղնձի հանքերը դրանց հանույթի լայն հեռանկար ունեին, իսկ ջրային պաշարները լավ հիմք պետք է դառնային էներգետիկայի համար:

Ակնկալվում էր, որ նոր պետությունը ունենալու էր 3 միլիոն բնակիչ, ընդ որում, մեկ տարվա ընթացքում բնակչության ազգային պատկերը փոխվելու էր, և հայերը կազմելու էին բնակչության մոտավորապես 50 տոկոսը, թուրքերը, քրդերն ու թաթարները՝ գրեթե 40 տոկոսը, լազերը՝ 6 տոկոսը, հույները՝ 3 տոկոսը, ռուսները, եզդիները և այլ ազգեր՝ 1 տոկոսը³⁵: Բոլորը սպասում էին, որ խաղաղ կյանքի և անկախ պետության պայմաններում, որտեղ հայերն ազատվելու էին ճնշված փոքրամասնություն լինելու մամլիչից, մեր ազգն արագորեն բարելավվելու է ժողովրդագ-

32 US NA, RG 59, 760J.6715/61/f. 94.

33 Տե՛ս նույն տեղում, f. 99:

34 Տե՛ս նույն տեղում, f. 101:

35 Տե՛ս նույն տեղում, f. 135-136:

րական ցուցանիշները՝ գրանցելով բնիկների բացարձակ աճ:

Հայաստանը վերածվում էր «Միջագետքի պաշտպանության երկար ու թույլ գծում»³⁶ մեկ օղակի կամ բրիտանական շանթարգելի: Հետագայում ևս այդ կայսրությունը պետք է շարունակեր նոր պետությանը «ոչ այնքան արդյունավետ աջակցության ցուցաբերումը»³⁷:

Ադրբեջանը արտոնյալ կարգավիճակում էր՝ հաշվի առնելով խորհրդա-թուրք-թաթարական գրոհները անգլիացիների դիրքերի ուղղությամբ Պարսկաստանում և Միջագետքում: Բուլշևիկները հզորացնում էին Ս. Քեմալին Անատոլիայում, իսկ վերջինի «շարժումը մինչև վերջ հասցվելու դեպքում ժայռաստիճան վտանգավոր է դառնալու հայկական պետության համար, եթե բուլշևիկյան առաջնորդները կարողանան սկսել և համարձակորեն իրականացնել իրենց ծրագիրը»³⁸: Անդրադառնալով Վրաստանին՝ փորձագետները նշում էին, որ 1920 թ. մայիսի 7-ին Վրաստանը հաշտություն է կնքել խորհրդային Ռուսաստանի հետ:

Ջեկուցագրում նշվում էր, որ հայերն ունեն փոքրաթիվ, բայց լավ վարժեցրած բանակ, որը նախագահ Վ. Վիլսոնի վճռի հրապարակումից անմիջապես հետո պատրաստ է առաջ շարժվելու Ռուսահայաստանից ու մտնելու չորս վիլայեթներ: Նրանց նոր էին մատակարարել զենք ու զինամթերք: Ու թեև Ադրբեջանում բուլշևիկյան հեղաշրջում էր, քաղաքական իրավիճակը նպաստում էր նրանց հաջողությանը: Նրանք վստահ էին, որ կարող են կռվել ազգայնականների տկար զորքերի դեմ և գրավել նախկին Թուրքիայի արևելյան չորս վիլայեթները: Անհանգստացնող և անկանխատեսելի միակ հանգամանքն այն էր, թե հատկապես ինչ կարող են անել և կանեն բուլշևիկյան առաջնորդները՝ թուրք ազգայնականների դիմադրությունն ուժեղացնելու նպատակով:

Ֆինանսական ոլորտում ուշադրությունը սևեռվել էր աշխարհամարտի շեմին 141 միլիոն թուրքական լիրայի հասած օտտոմանյան պարտքի վրա: Քանի որ ՀՀ-ին միացվող տարածքները ոչ միայն անմասն էին արտերկրից վերցրած նոր վարկերից, այլև 1910-1912 թթ. բերում էին տարեկան 1 միլիոն 630 հազ. լիրա (7 մլն դոլարից ավելի) օգուտ, ավերված ու Եղեռն վերապրած հայկական պետության վրա դրվել էր օտտոմանյան պարտքի մի մասը՝ 7.619.729 լիրա (33.526.807 դոլար): Այդ գումարից 489.467 լիրա (2.153.654 դոլար) անհրաժեշտ էր պարտքի սպասարկման համար, իսկ նախատեսված շահույթից 1.140.533 լիրա (5.018.545 դոլար) հատկացվում էր վարչական կարիքների համար³⁹: Ամբողջությամբ վերցրած՝ նոր պե-

36 Նույն տեղում, ֆ. 142:

37 Նույն տեղում:

38 Նույն տեղում, ֆ. 144:

39 Տե՛ս US NA, RG 59, 760J.6715/61/Է. 150-151:

տության վիճակը գնահատվում էր ո՛չ շատ լավ և ո՛չ էլ անհույս: Միացյալ Նահանգների կառավարությունը հիրավի կարող էր Հայաստանին տրամադրել ոչ մեծ չափերի վարկեր և տալ տեխնիկական խորհրդատվություն:

«Ամբողջական գեկուցագրի...» հետ փորձագետների կոմիտեն Պետդեպարտամենտին հանձնեց Հարրիսոն Դուայթի 1920 թ. նոյեմբերի 11-ի տեղեկանքը՝ «Խարբերդի հարցը»⁴⁰: Դրանում հեղինակը թվարկել է Պողոս Նուբարի դիմումների մի ամբողջ շարք, ՀԱԱԿ նախագահ Ջ. Ջերարդի հուշագիրը, Խարբերդցիների կրթասիրաց և նպաստամատույց կազմակերպությունների միության դիմումը, «Եփրատ» քոլեջի նախագահ Էռնեստ Ռիզզի գրառումները, Նյու Ջերսի նահանգի Վեստ Հոբոկեն քաղաքում ապաստանած Դիարբեքիի հայրենակցական միության նամակը: Բազմաթիվ կազմակերպություններ, հանրահավաքների մասնակիցներ և անհատներ դիմում էին ԱՄՆ նախագահին և պետքարտուղարին՝ խնդրելով Խարբերդը ներառել նոր պետության կազմում:

Ինքը՝ Հ. Դուայթը, նշում էր Խարբերդի՝ Մեծ Հայքի մաս լինելու մասին, որտեղ ծաղկում էր Տիգրան Բ-ի կարգադրությամբ կառուցված մայրաքաղաքը: Խարբերդի ամբողջ նահանգը պահպանել էր մշակութային մեծ կենտրոն լինելու իր դերը: Պատերազմից առաջ այն ուներ 2 ազգային քոլեջ, 27 միջնակարգ դպրոց, 20 որբանոց, 2 ֆրանսիական և 1 գերմանական դպրոց՝ որբերի համար, ամերիկյան քոլեջը՝ «Եփրատ» (քոլեջի սկզբնական՝ «Արմենիա» անվան գործածությունը 1888 թ. արգելեցին իշխանությունները⁴¹): Այդ օտար հաստատություններ հաճախում էին, սակավ բացառություններով, մեկ ազգի ուսանողներ: Նրանք բավարարում էին իրավաբանների և բժիշկների մասնագիտական բոլոր կարիքները, այդ թվում՝ ամերիկյան հիվանդանոցի համար, լույս էին ընծայում «Եփրատ» հանդեսը, տալիս էին իրենց ժողովրդի ուսուցիչների և հոգևորականների 75 տոկոսը: Նահանգի 360 գյուղերից և ավաններից յուրաքանչյուրն ուներ եկեղեցի, վանք, գերեզմանոց՝ վիմագրություններով և խաչքարերով, որոնք բնակչության ազգային պատկանելիության վկաներն էին⁴²:

1914 թ. Խարբերդի նահանգում ապրում էին 168 հազար հայ⁴³, 102 հազար թուրք և 95 հազար քուրդ, ընդ որում, այնտեղ տեղակայված IV

40 Տես **Hovannisian R.**, նշվ. աշխ., էջ 31-33, **Մախմուդյան Գ.**, Փաստաթղթեր Խարբերդի նահանգի մասին (1919-1922 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 2008, N 2, էջ 77-81:

41 Տես **Stone F. A.**, The Heritage of the Euphrates (Armenia) College. – Armenian Tsopk/Kharpert, ed. by R. Hovannisian. Costa Mesa CA., Mazda, 2002, էջ 209-238 (այսուհետ՝ Armenian Tsopk/Kharpert):

42 Տես US NA, RG 59, 760J.6715/61/App. IV/f. 303:

43 Կ. Պոլսի հայոց պատրիարքության՝ 1912 թ. վերաբերյալ տվյալները տրամադրեց Գ. Փաստրմաձյանը: Տես նաև **McCarthy J.**, Muslims and Minorities: The Population of Ottoman Anatolia and the End of the Empire. NY, New York University, 1983, էջ 48, **Hewsen R. H.**, Golden Plain: the Historical Geography of Tsopk/Kharpert. – Armenian Tsopk/Kharpert, էջ 42:

զորաբանակը ամբողջությամբ կազմում էին թուրքերը: Այնուամենայնիվ, Խարբերդն ուներ զարգացած արդյունաբերություն⁴⁴, առևտուր և հատկապես գյուղատնտեսություն: Ընդհանուր առմամբ Հ. Ղուայթը համակարծիք էր Հ. Բագրատունու հետ Խարբերդի միացման վերաբերյալ, սակայն նա վերապահում ուներ, որ Վ. Վիլսոնը նման լիազորություններ չունի⁴⁵: Ուստի կողմերին մնում էր գալ համաձայնության ու կատարել տարածքների փոխանակում:

Ահա նյութերի այս ողջ դիվանը հանձնվել է ռազմական նախարարությանը, իսկ Փարիզում ԱՄՆ դեսպան Հյու Ուոլթեսից պահանջել էին ձեռք բերել Սևրի դաշնագրի ստորագրման մասին Գերագույն խորհրդի պաշտոնական ծանուցագիրը և դրա վավերացված պատճենը: Հոկտեմբերի 18-ին ԱՄՆ պետքարտուղար Բ. Կոլբին ստացավ խնդրո առարկա փաստաթուղթը և դրան կցված հայտագիրը՝ Վ. Վիլսոնի՝ Հայաստանի համար դեպի ծով ելք ապահովելու և օսմանյան սահմանամերձ գոտու ապառազմականացման առումով ստանձնած պարտականություններով հանդերձ: Ղրանից առաջ՝ հոկտեմբերի 14-16-ին, կաթողիկոս Գևորգ Ե-ին հղած իր նամակում Երևանի եպիսկոպոս, հետագայում կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանը գործընթացի ձգձգումը զնահատել է հետևյալ կերպ. «Թվում է ինձ, որ նախագահը Հայաստանի սահմանները մեզ հատկացնել այն ժամանակ, երբ Հաշտության դաշնագիրը վավերացրած կլինի Հայաստանի և Տաճկաստանի կառավարությունների կողմից»⁴⁶:

«Ամբողջական զեկուցագիրը...» Սպիտակ տուն է հանձնվել 1920 թ. նոյեմբերի 11-ին միայն, իսկ արդեն նոյեմբերի 12-ին կաթողիկոս Գևորգ Ե-ն կոչ էր անում Սպիտակ տանը դրսևորելու քրիստոնեական մարդասիրություն՝ աղերսելով «փրկել ժողովրդիս մնացորդները Հայաստանում ու նրան ցուցաբերել բարոյական ու նյութական անհրաժեշտ օգնությունը այնքան ժամանակ, մինչև նա կկարողանա հավաքել իր սփռված ուժերը, որպեսզի ի վիճակի լինի ինքնապաշտպանվելու»⁴⁷:

11 օր անց՝ նոյեմբերի 22-ին, «Ամբողջական զեկուցագիրը...» ստորագրվեց որպես «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի, Հայաստանի՝ դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ա-

44 Տե՛ս Armenian Tsopk/Kharpert, էջ 42, 44:

45 Տե՛ս US NA, RG 59, 760J.6715/61/App. IV/f. 312, 314-315:

46 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 222, թ. 13, «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոս ամենայն հայոց (հոգևոր գործունեությունը 1901-1938 թթ.), կազմ.՝ Ս. Բեհրույան, Եր., ՀՀ Արխիվային գործի վարչություն, 1996, էջ 95:

47 US NA, RG 59, 860J.4016P81/125, T1192, Roll 6, ՀԱԱ, մկ № 46, ֆրանսերեն տեքստը՝ ֆ. 200, ց. 1, գ. 249, թ. 690:

պառազմականացման վերաբերյալ»⁴⁸: Գերագույն խորհրդին հղած իր գաղտնի նամակում Վ. Վիլսոնը նշում էր «հայ ժողովրդի, ինչպես և այս վնասված երկրի այլ բնակիչների, ինչ ռասայի կամ կրոնական համոզմունքի էլ նրանք լինեն, լավագույն շահերին ծառայելու, նաև հարակից վայրերի բնակիչների նկատմամբ, լինեն նրանք թուրքեր, քրդեր, հույներ կամ հայեր, արդարությունը հնարավորինս գործադրելու» իր ձգտման մասին⁴⁹: Իսկ քանի որ ազգագրական գործոնները «էլ ավելի էին մթազնվում հայերի և հույների կոտորածների և տեղահանությունների սարսափելի արդյունքներից»⁵⁰, նա ստիպված էր հենվել տնտեսական գործոնների վրա: Բուն սահմանի նկարագրությունը սկսվում էր թուրք-պարսկական բաժնեհատից ու Կոտուր քաղաքից: Որոշմամբ Թուրքիային էին թողնվում ամբողջ Աղբակը (Հաքյարիի սանջակը) կամ մոտավորապես Վանի նահանգի կեսն ու Սդերդի ամբողջ սանջակը: Այնուհետև գիծն անցնում էր Բիթլիսից ու Մուշից արևմուտք և ձգվում դեպի հյուսիս՝ Երզնկայի մերձակայքը: Սև ծովի ափին նոր պետությանը հատկացվում էր մի երկար գոտի, որը ձգվում էր մինչև Տրապիզոն ու Տիրեբուլի նավահանգիստներից արևմուտք ընկած վայրը, թեև հայերի պահանջներում նշվում էր այդ կայաններից շատ ավելի արևելք ընկած Սյուրմենեի մասին:

Ելնելով կոմիտեի փորձագետների նյութից՝ Հայաստանին էին հատկացվում Վանի և Բիթլիսի նահանգների երկու երրորդը և Երզրումի ու Տրապիզոնի նահանգների մեծ մասը⁵¹: Ըստ այդ հաշվարկների՝ Թուրքիան ստանում էր 12.120 քառ. կմ Երզրումի և Տրապիզոնի վիլայեթներից: Իսկ քանի որ ԱՄՆ նախագահի կարծիքով՝ «ապառազմականացված գոտու հաստատումը, եթե դրա իրականացումը պահանջելու էր մանրակրկիտ կարգադրություններ ու խառն կազմով հաստատությունների ստեղծում, անիրագործելի էր և ոչ անհրաժեշտ»⁵², Վ. Վիլսոնը սահմանափակվեց Սևրի պայմանագրի՝ Թուրքիայի բոլոր ամրոցների զինաթափմանը, նրա ժանդարմերիայի՝ դաշնակից կամ չեզոք պետությունների սպաներին ստորադասմանը, ինչպես և միջդաշնակցային ռազմական հանձնաժողովի ստեղծմանը վերաբերող հոդվածներով:

Սահմանի վերջնական նկարագիրը, որ ստորագրեց Վ. Վիլսոնը, ներառում էր մի շարք հենակետեր: Բաժնեհատը սկսվում էր Կոտուր

48 Փորձագետների գործածած «Border» բառը փոխարինվեց «Frontier» եզրույթով:

49 Տե՛ս US NA, RG 59, 760J.6715/61/Encl. 1/f. 11. ամբողջությամբ տե՛ս «Армения в документах», էջ 421-427, մեջբերումը՝ էջ 422:

50 US NA, RG 59, 760J.6715/61/Encl. 1/f. 12.

51 Տե՛ս Hovannisian R., նշվ. աշխ., էջ 31-36:

52 US NA, RG 59, 760J.6715/61/Encl. 1/f. 17.

քաղաքից 25 կմ հարավ-արևմուտք ընկած կետից, ձգվում էր հարավ և հարավ-արևմուտք, այնուհետև բարձրանում էր հյուսիս և արևմուտք՝ հասնելով Շատախից 10 կմ հարավ ընկած կետը: Այնուհետև գիծը նորից ձգվում էր արևմուտք ու հյուսիս՝ դեպի Մոկս քաղաքից և Առնոս լեռից (3550 մ) 18 կմ հարավ ընկած կետը: Այստեղից բաժնեհատը ձգվում էր հյուսիս-արևմուտք, շրջանցում Բիթլիսը քաղաքից 43 կմ հարավ-արևելք, 23 կմ հարավ ու 30 կմ հարավ-արևմուտք շառավղով: Այնուհետև սահմանագիծն անցնում էր Սիլվան-Տիգրանակերտից 37 կմ հյուսիս-արևելք և ձգվում հյուսիս-արևմուտք՝ շրջանցելով Մուշը՝ դրանից 42 կմ դեպի հարավ-արևմուտք և 56 կմ դեպի արևմուտք: Այս հատվածից գծի հյուսիսային ու հյուսիսարևմտյան եզրը հասնում էր Քղիից 11 կմ հյուսիս-արևմուտք գտնվող կետի ու շրջանցում Երզնկան քաղաքից 32 կմ հարավ-արևելք, 20 կմ հարավ և 35-40 կմ հարավ-արևմուտք հեռավորությամբ: Անցնելով Երզնկան՝ բաժնեհատը ձգվում էր հյուսիս՝ հասնելով Կամախ քաղաքից 6 կմ արևելք ընկած կետի, այնուհետև՝ դարձյալ հյուսիս՝ մինչև Գյումուշխանեից 38 կմ արևմուտք ու Շապին-Գարահիսարից 43 կմ արևելք ընկած կետը: Աղեղի պես ձկվելով դեպի արևելք ու ձգվելով հյուսիս՝ գիծն ավարտվում էր Սև ծովի ափին՝ Կերասունից 9 կմ արևելք ընկած կետում⁵³:

Հաստատելով այդ քարտեզը՝ ամերիկյան վարչակազմի ղեկավարը հույս էր հայտնում, որ բոլոր ժողովուրդները «հաճույքով ու հոժարակամ կաշխատեն հայերի հետ լիակատար համերաշխությամբ՝ ամուր դնելով նոր Հայաստանի Հանրապետության հիմքերը»⁵⁴: Իսկ իրականում 1920 թ. նոյեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետությունը իր համար ողբերգական հետևանքներով ավարտին էր հասցնում թուրք-հայկական ծանրագույն պատերազմն ու բանակցություններ վարում կողոպտչական ու նվաստացուցիչ հաշտությունը կնքելու շուրջ: «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի, Հայաստանի՝ դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ» փաստաթուղթը գործադրելու համար ՀՀ-ն տվյալ պատմաշրջանում զրկված էր նվազագույն հնարավորությունից անգամ:

53 Տե՛ս նույն տեղում, ֆ. 19-36:

54 Նույն տեղում, ֆ. 18:

3. Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի էությունն ու միջազգային-իրավական կարգավիճակը

Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածի ձևակերպումներից ելնելով՝ որոշ հետազոտողներ փորձում են այն ներկայացնել որպես հայ-թուրքական սահմանի որոշման հարցով ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի միջազգային իրավարարության **կոմպրոմի**, այսինքն՝ վեճի կողմերի՝ Օսմանյան կայսրության և Հայաստանի Հանրապետության համաձայնություն: Դրանից բխեցվում է այն միտքը, որ քանի որ Սևրի պայմանագիրը չի վավերացվել և օրինական ուժի մեջ չի մտել, ուստի դրանից բխող՝ ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը նույնպես իրավական ուժ չի կարող ունենալ: Այս կապակցությամբ պետք է նշել, որ եթե սահմանային սովորական վեճերը իրավարար վճռի միջոցով ընդհանուր առմամբ կարգավորվում են վեճի կողմերի կոմպրոմիի առկայության պայմաններում, ապա ԱՄՆ նախագահի իրավարարության գործընթացը կողմերի միջև սահմանային կամ տարածքային սովորական վեճ չէր: Դրա հիմքում ընկած էր միջազգային ծանր հանցագործություն՝ հայ ժողովրդի կանխամտածված զանգվածային բնաջնջումը, որը հետագայում միջազգային իրավունքում ամրագրվեց որպես ցեղասպանություն հանցագործություն: Այս իրավարարությունը սովորական չէր նաև նախաձեռնման ժամանակի՝ Առաջին աշխարհամարտի հետպատերազմյան կարգավորումների առումով, ուստի այն պետք է դիտարկել միջազգային հարաբերությունների նոր՝ Վերսալ-վաշինգտոնյան համակարգի համատեքստում:

Դեռևս 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրում հայերի զանգվածային բնաջնջումը որպես «մարդկության ու քաղաքակրթության դեմ կատարվող հանցագործություն» որակած Անտանտի տերությունները Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Սան Ռեմոյի կոնֆերանսում կատարում էին թուրքական պետությանը քաղաքական պատասխանատվության ենթարկելու իրենց հանձնառությունը: Այս իրողությունները հաշվի առնելով՝ ակնհայտ է դառնում, որ Վ. Վիլսոնի իրավարարության իրական կոմպրոմին համաձայնությունը, կայացել է հենց 1920 թ. ապրիլի 26-ին՝ հաղթանակած ուժերի Գերագույն խորհրդի չորս տերությունների միջև, որոնք այդ օրը իրավարար դառնալու առաջարկով պաշտոնապես դիմում են ԱՄՆ նախագահ Վիլսոնին, որն էլ արդեն մայիսի 17-ին, այսինքն՝ Սևրի պայմանագրի ստորագրումից մոտ 3 ամիս առաջ, պաշտոնապես տալիս է իրավարար լինելու իր համաձայնությունը:

Եթե մի պահ պատկերացնենք, որ իրավարարություն սկսելու համաձայնությունը (կոմպրոմին) Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածի գործա-

դրումն է, այսինքն՝ այն կայացել է 1920 թ. օգոստոսի 10-ին, ապա այդ դեպքում անբացատրելի է, թե ինչու է ԱՄՆ նախագահ Վիլսոնը, լինելով նաև իրավաբան ու փաստաբան, վեճի կողմերի համաձայնության կայացումից մոտ երեք ամիս առաջ արդեն տվել է իրավարար դառնալու իր համաձայնությունը: Ավելին՝ եթե առաջնորդվենք այն կանխադրույթով, որ իրավարարության կոմպրոմիս Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածի գործադրումն է, ապա իրավարար Վիլսոնը չպետք է որևէ քայլ կատարեր, քանի դեռ անդամ պետությունները չէին վավերացրել այդ պայմանագիրը: Եվ այս տրամաբանությամբ՝ իրավարար վճիռն ընդհանրապես չպիտի կայացվեր, քանզի Սևրի պայմանագիրը չվավերացվեց և ուժի մեջ չմտավ: Սակայն ԱՄՆ նախագահը, իրեն Սևրի պայմանագրով ամենևին կաշկանդված չզգալով, անմիջապես գործի անցավ և այդ պայմանագրի վավերացված չլինելու պայմաններում 1920 թ. նոյեմբերի 22-ին կայացրեց իրավարար վճիռը: Բացի դրանից՝ Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածի և Սան Ռեմոյի կոնֆերանսի ընթացքում կայացված որոշման միջև բովանդակային լուրջ տարբերություն կա: Եթե Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածով Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի հստակեցման հարցը թողնվում էր ԱՄՆ-ի որոշմանը, ապա Սան Ռեմոյի կոնֆերանսի որոշմամբ ԱՄՆ-ին առաջարկվում էր ստանձնել Հայաստանի մանդատը, իսկ հայ-թուրքական սահմանի հստակեցման հարցով դիմում էին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին՝ առաջարկելով նրան իրավարար դառնալ այդ հարցում: Չնայած որ Վիլսոնը ԱՄՆ նախագահն էր, այդուհանդերձ, այդ երկրի կառավարման համակարգից ելնելով, նրան անհնար է նույնականացնել պետության հետ: Ավելին, միջազգային իրավունքի տեսանկյունից, պետությունների միջև տարածքային վեճերում մեկ այլ պետություն իրավարարի դեր չի կարող ստանձնել այն պարզ պատճառով, որ յուրաքանչյուր պետություն առաջնորդվում է իր ազգային և պետական շահերով, հետևաբար այդ կերպ հնարավոր չէ ապահովել իրավարարի անաչառության պարտադիր պայմանը:

Ասվածի վառ ապացույցներից մեկն էլ այն է, որ 1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ Սենատը հրաժարվեց ստանձնել Հայաստանի մանդատը և մերժեց նախագահ Վ. Վիլսոնի առաջարկը, բայց վերջինս, չնայած Սենատի մերժմանը, շարունակեց կատարել անաչառ իրավարարի իր պարտականությունները և նոյեմբերի 22-ին վերջնական որոշում կայացրեց այդ հարցով: ԱՄՆ Սենատի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու մերժումից հետո Վիլսոնի իրավարարության շարունակությունը ևս մեկ ապացույց է, որ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի որոշման հարցը իրավական տեսանկյունից եղել է ոչ թե ԱՄՆ-ի՝ որպես պետության, այլ ԱՄՆ նախագահ

Վուդրո Վիլսոնի՝ իբրև միջազգային իրավարարի իրավասության ներքո: Այս հանգամանքներն ակնհայտորեն վկայում են այն մասին, որ իրավարարության իրական կոմպրոմիս՝ համաձայնությունը, ոչ թե Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածն էր, այլ Սան Ռեմոյի կոնֆերանսի ընթացքում դաշնակից ուժերի Գերագույն խորհրդի որոշումը և դրանից բխող դիմումը ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին:

Վ. Վիլսոնը իրավարար վճիռը ստորագրեց Հայաստանի խորհրդայնացումից ընդամենը 10 օր առաջ՝ 1920 թ. նոյեմբերի 22-ին: Խորհրդայնացումից հետո՝ դեկտեմբերի 6-ին, ԱՄՆ նախագահի իրավարար վճիռը Փարիզում պաշտոնապես փոխանցվեց դաշնակից ուժերի Գերագույն խորհրդին: Վճռի պաշտոնական և ամբողջական վերնագիրն է «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի՝ դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ»: ԱՄՆ նախագահը՝ իբրև իրավարար, իր իրավասության շրջանակներում և, ելնելով դաշնակից ուժերի Գերագույն խորհրդի նախատեսած տարածքային սահմանափակումից, հայ-թուրքական սահմանագծումն իրականացնելիս նախկինում Օսմանյան կայսրության տարածք համարվող Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգներում հաստատում էր հայ ժողովրդի տիտղոսն ու իրավունքները՝ Հայաստանին տալով նաև ելք դեպի Սև ծով: Իրավարար վճռով Հայաստանին փոխանցվելիք տարածքը կազմելու էր \approx 103.599 քառ. կմ, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի շուրջ 40 %-ը⁵⁵:

Ընեց իրավարար վճռի վերնագրում «հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման» դրույթի ամրագրումը չափազանց կարևոր է: Այս ձևակերպումը կարելի է համարել վճռի կայացման պահին տարածաշրջանում ընթացող զարգացումների, մասնավորապես՝ 1920 թ. հայ-թուրքական պատերազմի, դրան հաջորդած Հայաստանի խորհրդայնացման, ինչպես նաև քեմալականների կողմից իրավարար վճռով Հայաստանին փոխանցվելիք տարածքների կատարյալ վերահսկման ուղղակի արտացոլումը իրավարար վճռում: Այսպիսով՝ անգամ վճռի վերնագրի տրամաբանությունից բխում էր ոչ միայն քեմալականների ռազմական ուժերի դուրսբերումը Հայաստանին փոխանցվելիք չորս նահանգների տարածքներից, այլև այդ ուժերի ետքաշումը անգամ իրավարար վճռով նախատեսված հայ-թուրքական նոր սահմանից դեպի Թուրքիայի խորքերը:

55 Տե՛ս Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը (հոդվածների ժողովածու), Եր., 2007, էջ 75:

ԱՄՆ նախագահը փորձում էր ելք առաջարկել իրավարար վճռի դրույթները կյանքի կոչելու համար, քանզի հենց դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդն էր պարտավորություն ստանձնել քայլեր ձեռնարկելու, որ իրավարարը կարողանա ելք ապահովել Հայաստանի համար: Մինչդեռ անգլիական դիվանագիտությունը, վերը նշված զարգացումները մատնանշելով, քաղաքական ճնշում էր գործադրում իրավարարի վրա՝ փորձելով հանդգել վերջինիս ձեռնպահ մնալ վճռի նախատեսված հրապարակումից, որից հետո, ըստ միջազգային իրավունքի գործող նորմերի, այն մտնելու էր ուժի մեջ: Որպես փաստարկ՝ անգլիական դիվանագիտությունն օգտագործում էր այն, որ Հայաստանն արդեն խորհրդայնացված է, և անիմաստ է վճռի հրապարակումը, որն այդ տարածքների նկատմամբ իրավունքներ է տալիս Խորհրդային Հայաստանին և կարող է լրջորեն վնաս հասցնել քենալականների հետ նախատեսվելիք գործարքին: Անգլիացիներն առաջարկում էին սառեցնել ԱՄՆ նախագահի՝ հայ-թուրքական սահմանագծման վճռի հրապարակումը, մինչև որ անգլիական կողմը դեսպանի միջոցով Պետքարտուղարությանը կներկայացներ այդ հարցի վերաբերյալ որոշ պարզաբանումներ: Սակայն նրանց հաջողվեց միայն կարճ ժամանակով հետաձգել վճռի հրապարակումը⁵⁶: Չնայած տարածաշրջանում տեղի ունեցած արմատական փոփոխություններին՝ Կուդրո Կիլտոնը հավատարիմ մնաց միջազգային իրավարարի իր սկզբունքներին, և 1920 թ. դեկտեմբերի 17-ին հրապարակվելուց հետո վճիռը մտավ ուժի մեջ:

Հատկանշական է, որ 1927 թ. հունվարի 18-ին ԱՄՆ Սենատը, ի թիվս այլ պատճառների, նաև ԱՄՆ նախագահ Վ. Կիլտոնի իրավարար վճռով Հայաստանի նկատմամբ Թուրքիայի ստանձնած պարտավորությունների չկատարման պատճառով մերժեց 1923 թ. օգոստոսի 6-ին Լոզանում ստորագրված ամերիկա-թուրքական պայմանագրի վավերացումը՝ հրաժարվելով ճանաչել ներկայիս Թուրքիա պետությունը և այդպիսով առկախ թողնելով ամերիկա-թուրքական հարաբերությունները⁵⁷:

Թեև հայ-թուրքական սահմանագծման հարցով նախաձեռնված և իրականացված իրավարարությունը սկսվել է հաղթանակած տերությունների քաղաքական որոշմամբ ու կամքով, այդուհանդերձ, այն ոչ միայն չի հակասել, այլև ընթացել է տվյալ պահին գործող միջազգային իրավական

56 Տե՛ս **Барсегов Ю. Г.**, Арбитражное решение президента США по армяно-турецкой границе (политический и международно-правовой комментарий), «Центр русско-армянских инициатив», Ер., 1995, էջ 17:

57 Տե՛ս **Պապյան Ա.**, էջվ. աշխ., էջ 14: Տե՛ս նաև *Unperfected Treaties of the United States of America (1776-1976), 1919-1925*, ed. and annot. by **Christian L. Wiktor**, New York, 1984, vol. 6, էջ 421, **Leland J. Gordon**, *Turkish-American Political Relations*, *The American Political Science Review*, 1928, vol. 22, No. 3, էջ 721, **Roger R. Trask**, *The United States Response to Turkish Nationalism and Reform 1914-1939*, Minneapolis, 1971, էջ 36:

նորմերին համապատասխան: Այսպես՝ Հաագայի 1899 թ. «Միջազգային ընդհարումների խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիայի 54-րդ և 1907 թ. խմբագրված նույն կոնվենցիայի 81-րդ հոդվածներում նշվում է, որ եթե իրավարար վճիռը կայացվել է ըստ կարգի, և այդ մասին իրազեկվել են կողմերի գործակալները, ապա խնդրո առարկա վեճը լուծվում է մեկընդմիջտ և ենթակա չէ բեկանման⁵⁸: Իրավարարության ոգու համաձայն՝ իրավարարի որոշումը կողմերի համար պարտադիր է, և, բնականաբար, այն վավերացման ենթակա չէ: Իրավարար վճռից բխում են իրավական համապատասխան հետևանքներ վեճի մասնակիցների համար: Դիմելով իրավարարության՝ կողմերը⁵⁹ համաձայնում են, որ իրավարարի որոշումը կլինի վերջնական և պարտավորվում են հարգել այն⁶⁰:

Հայ-թուրքական սահմանի վերաբերյալ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը միջազգային-իրավական մի փաստաթուղթ է, որով Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիան ենթարկվում էր քաղաքական պատասխանատվության հայերի դաժան բնաջնջման համար: Այս փաստաթղթով Թուրքիան զրկվում էր իր նախկին տարածքների նկատմամբ գերիշխանությունից: Իրավարար վճռի տրամաբանությամբ՝ միայն այդ տարածքում նախկին զոհի նկատմամբ թուրքերի իշխանության բացառումն ու իրենց պատմական հայրենիքի մի մասի նկատմամբ արևմտահայերի իրավունքների վերականգնումը կարող է հիմք դառնալ նրանց վերադարձի ու բնականոն կենսագործունեության համար:

Միջազգային իրավունքի տեսանկյունից ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը կարող է լուրջ կռվան լինել ոչ միայն Հայոց ցեղասպանության դատապարտման, այլև հայ ժողովրդի նկատմամբ իրագործված այդ հանցագործության հետևանքների հաղթահարմանն ուղղված հայոց պահանջատիրության համար

58 Տե՛ս **Սահակյան Տ.**, Ցավալի պայմանագրեր, Եր., 2007, էջ 302:

59 Տվյալ դեպքում խոսքն առաջին հերթին վերաբերում է ոչ թե տարածքային-սահմանային վեճի անմիջական կողմերին՝ Հայաստանին և Թուրքիային, այլ դաշնակից ուժերի Գերագույն խորհրդի չորս պետություններին՝ Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային, Իտալիային և Ճապոնիային, որոնք որպես Առաջին աշխարհամարտում հաղթանակած տերություններ, 1920 թ. ապրիլի 25-ին հայ-թուրքական սահմանի որոշման հարցում իրավարարություն իրականացնելու խնդրանքով դիմել էին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին:

60 Տե՛ս **Барсегов Ю.**, Геноцид армян - преступление по международному праву, М., «XXI век - Согласие», 2000, էջ 182:

Գլուխ չորրորդ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԱՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Ուղիղ մեկ դար առաջ Հայկական հարցը ստացավ իր իրավապայմանագրային ձևակերպումը՝ 1920 թ. օգոստոսի 10-ի **Սևրի** պայմանագրի և 1920 թ. նոյեմբերի 22-ի ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի՝ քարտեզի վրա գծած ու համապատասխան փաստաթղթով ամրագրած հայ-թուրքական սահմանի վերաբերյալ **իրավարար** վճռի տեսքով: Իրենց իրավաքաղաքական բովանդակությամբ անթերի այդ փաստաթղթերը կյանքի կոչելու գործում ժամանակին առաջ եկած խոչընդոտների քննության համատեքստում կարևոր է բացահայտել, թե Սևրի պայմանագրի հանդեպ ինչ դիրքորոշում է ունեցել հյուսիսի մեր մեծ հարևան Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետությունը (ՌՍԴԽՀ) կամ Խորհրդային Ռուսաստանը:

Հարկավոր է նաև պարզել, թե ինչ քայլեր է ձեռնարկել Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Սևրի պայմանագրի գործադրմանը հակադրելու համար և այդ ծիրում քաղաքական, դիվանագիտական, ռազմաֆինանսական և այլ բնույթի ինչ օգնություն է ցուցաբերել քեմալական Թուրքիային: Նման հարցադրումները նպատակ ունեն բացահայտելու Խորհրդային Ռուսաստանի և ապա ԽՍՀՄ իրավահաջորդ ներկայիս Ռուսաստանի Դաշնության **պատասխանատվության չափը** հայ ժողովրդի դարավոր իղծերը խորտակելու Թուրքիայի պետական քաղաքականության ժամանակավոր հաջողության գործում: Դա խիստ արդիական է ներկայումս Ռուսաստանի ու Թուրքիայի միջև շարունակվող մրցակցության ու համագործակցության բարդ թնջուկը վերջնականապես կազմաքանդելու համար: Այդ պատճառով հարցը քննության առնենք՝ սկսելով Սևրի պայմանագրին հակադրելու համար 1920 թ. օգոստոսի 24-ին նախաստորագրված Մոսկվայի ռուս-թուրքական «բարեկամության» պայմանագրից ու հասնելով մինչև Մոսկվայի՝ 1921 թ. մարտի 16-ի (իրականում՝ մարտի 18-ի¹) ռուս-թուրքական «բարեկամության և եղբայրության» պայմանագիրը:

1 Իրականում պայմանագրի ստորագրման ստույգ ամսաթիվը մարտի 18-ն է: Բոլշևիկների կառավարության այդ կանխամտածված կեղծիքի ու քաղաքական աճաբարության մասին հանգամանորեն տես **Հակոբյան Ա.**, Մարտի 16, թե՞ 18: Մոսկվայի 1921 թ. ռուս-թուրքական պայմանագրի ստորագրման ժամկետների շուրջ, «Վէմ», Եր., 2020, N 1, էջ 213-222:

1. 1920 թ. օգոստոսի 24-ի Մոսկվայի ռուս-թուրքական «բարեկամության» նախնական պայմանագիրը որպես առաջին լուրջ հակազդեցություն Սևրին

1920 թ. հունվարին **դե ֆակտո** ճանաչված Հայաստանի Հանրապետությունում ու նրա շուրջ ծավալված միջազգային, տարածաշրջանային ու ներքաղաքական իրադարձությունները երկակի շրջադարձեր ունեցան: Մի կողմից թվում էր, թե վերջապես լուծում կստանա Հայկական հարցը, այն է՝ Սևրի պայմանագրով կնյութականանա Միացյալ Հայաստանի գաղափարը, բայց մյուս կողմից էլ 1920 թ. գարնանից Հայաստանի գլխին կախվել էին արտաքին ու ներքին լրջագույն վտանգներ: Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակը, քաղաքացիական կռիվներում պարտության մատնելով գեներալ Անտոն Դենիկինի գլխավորած «սպիտակ» կոչված զորքերին, 1920 թ. ապրիլի վերջին մուտք էր գործել Հարավային Կովկաս և գործնականում առանց որևէ կրակոցի խորհրդայնացրել Ադրբեջանը: Դրա ազդեցությամբ մայիսին Հայաստանի բոլշևիկները բարձրացրել էին հակապետական խռովություն, որը թեև ճնշվել էր, սակայն էապես թուլացրել էր հայկական պետության ռազմաքաղաքական հիմքերը: Սակայն այդ նույն ժամանակ Հայաստանի գլխին կախված վտանգներից ամենամեծը թերևս այն էր, որ բոլշևիկյան Ռուսաստանն իր քաղաքական շահերի թելադրանքով գործնականում դաշինք էր կազմել անատոլիական Թուրքիայում գլուխ բարձրացրած, այսպես կոչված, քեմալական շարժման և դրա հետևանքով Անգորայում իշխանության գլուխ անցած Մուստաֆա Քեմալի ազգայնական (միլլի) կառավարության հետ: 1920 թ. ապրիլի վերջերից սկսված նամակագրությունից հետո Խորհրդային Ռուսաստանի չճանաչված կառավարությունը, փաստորեն, առաջինը ճանաչեց Մ. Քեմալի գլխավորած Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) նույնպես չճանաչված կառավարությանը²:

Կարծես ճակատագրի հեգնանքով Սևրի պայմանագրի ստորագրման օրը՝ օգոստոսի 10-ին, Թիֆլիսում Հայաստանի կառավարության ներկայացուցիչներ Ա. Ջամալյանի ու Ա. Բաբայանի և Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի միջև ստորագրվել էր նաև 6 կետանոց մի համաձայնագիր, որով Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ադրբեջանի միջև վիճելի համարվող հայկական երեք շրջաններ՝ Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը, անցնում էին ռուսական Կարմիր բանակի **ժամանակավոր** հսկողության տակ մինչև

2 Стів «Документы внешней политики СССР» (այսուհետ՝ ДВП СССР), т. 2, М., 1958, էջ 554-555, 725-726:

խնդրի վերջնական կարգավորումը³: Իսկ մինչ այդ ռուսական Կարմիր բանակը թուրք-թաթարական խուժանի հետ օգոստոսի սկզբին, առանց հայկական զինուժի լուրջ դիմադրության, մուտք էր գործել Ջանգեզուր և ապա շարժվել դեպի Նախիջևան: Օգոստոսի 10-ի համաձայնագիրը հայկական կողմի համար վտանգ էր ներկայացնում այն իմաստով, որ Արևելյան Հայաստանի վերոնշյալ տարածքները կարող էին Խորհրդային Ռուսաստանից անցնել Խորհրդային Ադրբեջանին և այդպես անմիջական սահմանային կապ ապահովել քեմալական Թուրքիայի հետ:

Հիշեցման կարգով նշենք նաև, որ մինչ օգոստոսի 10-ի թիֆլիսյան համաձայնագրի ստորագրումը՝ հունիս-հուլիս ամիսներին, Մոսկվայում ընթանում էին հայ-ռուսական բանակցություններ ՀՀ-ի կողմից պատվիրակության ղեկավար, խորհրդարանի փոխխոսնակ Լ. Շանթի և ՌՍԴԽՀ-ի կողմից արտգործոժողկոմ Գ. Չիչերինի միջև՝ երկու երկրների հարաբերությունները կարգավորելու և բարեկամության պայմանագիր կնքելու ակնկալիքով: Սակայն այդ բանակցությունները մտան փակուղի, ձգձգվեցին և դրական արդյունքի չհանգեցրին: Խորհրդային կողմի առաջարկով բանակցությունները հուլիսի առաջին տասնօրյակին ընդհատվեցին Երևանում վերսկսելու պայմանով: Հակառակ դրան, իբրև հակակշիռ հայ-ռուսական ընդհատված բանակցությունների, հուլիսի երկրորդ կեսից նույն Մոսկվայում գումարվեց խորհրդա-թուրքական 1-ին խորհրդաժողովը (կոնֆերանսը) Խորհրդային Ռուսաստանի արտգործոժողկոմ Գ. Չիչերինի և ԹԱՄԺ կառավարության արտգործկոմիսար Բեքիր Սամի բեյի գլխավորած պատվիրակությունների միջև: Երկու պատվիրակությունների միջև շուրջ մեկ ամիս ընթացած բանակցությունների հետևանքով օգոստոսի 24-ին նախաստորագրվեց ռուս-թուրքական պայմանագիր:

Բանակցությունները վերջնական պայմանագրի չհանգեցրին հիմնականում Հայկական հարցի՝ հայ-թուրքական տարածքային-սահմանային խնդրի պատճառով: Բանն այն է, որ այդ բանակցությունների ժամանակ՝ օգոստոսի 13-ին, Գ. Չիչերինը թուրքական կողմին առաջարկել էր Արևմտյան Հայաստանի **Վանի**, **Բիթլիսի** և **Մուշի** նահանգների արևելյան շրջանների որոշ տարածքներ զիջել Հայաստանին: Բայց այդ առաջարկը զարմանք ու տարակուսանք էր առաջացրել թուրք պատվիրակների շրջանում⁴: Ուստի Գ. Չիչերինի՝ թուրքերի համար այդ անցանկալի առա-

3 Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, պատ. խմբագիրներ **Գալոյան Գ., Ղազարեցյան Վ.**, Եր., 2000, էջ 248-249:

4 Տե՛ս ДВП СССР, т. 4, М., 1960, էջ 65, **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ Ղատը (հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ), Եր., 1991, էջ 252: Տե՛ս նաև **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 264:

ջարկի վերաբերյալ ԹԱՄԺ-ին զեկույց ներկայացնելու համար Բեքիր Սամի բեյի տեղակալ Յուսուֆ Քեմալը և Ս. Քեմալի հանձնարարությամբ Մոսկվայում գտնվող Ի. Էնվեր փաշայի հորեղբայր Խալիլ փաշան մեկնում էին Թուրքիա (Անգորա): Առաջ անցնելով փաստենք նաև, որ երբ ավելի ուշ ԹԱՄԺ կառավարության նախագահ Մուստաֆա Քեմալ փաշային տեղեկացնում են այդ մասին, նա Գ. Չիչերինի պահանջը ոչ ավել, ոչ պակաս որակում է որպես «իմպերիալիստական»⁵:

Լ. Շանթի գլխավորած պատվիրակության անդամ Հ. Տերտերյանը հետագայում գրված իր հուշերում վկայում է, որ դեռ 1920 թ. հունիսի կեսերին, երբ իրենք Տաճկահայաստանի մասին տեղեկագիր ներկայացրին Չիչերինին, վերջինս Խորհրդային Ռուսաստանի անունից խոստացել էր բավարարել իրենց պահանջը՝ «Տաճկահայաստանի որոշ հողամասեր միացնելով Հայաստանին եւ նրան ապահովելով ելք դէպի Սեւ ծով»⁶: Անտանտի տերությունների՝ 1920 թ. ապրիլի Սան Ռեմոյի խորհրդածողովում Հայաստանի վերաբերյալ թուրքերին ներկայացված պայմանագրի նախագծի պահանջին քիչ թե շատ նմանվող Գ. Չիչերինի այս ակնարկը, մեր կարծիքով, կարելի է դասել բանակցություններում Հայաստանը դեպի Խորհրդային Ռուսաստանը կողմնորոշելու փորձերի շարքին: Դա երևում է նրանից, որ բանակցությունների հենց սկզբում Գ. Չիչերինն առաջարկ էր արել, որ հայերը ձեռք քաշեն «դաշնակիցներից» ու Սևրի խորհրդածողովի օրակարգից և Հայկական հարցի լուծումը հանձնեն Խորհրդային Ռուսաստանի իրավասությանը⁷:

Ինչ վերաբերում է արդեն ռուս-թուրքական բանակցությունների ընթացքում Չիչերինի արած նմանատիպ առաջարկին, ապա այս դեպքում էլ նա միզուցե քաղաքական-դիվանագիտական սակարկություններ անելու և Արևմտյան Հայաստանից որոշ տարածքներ զիջելու հարցում թուրքերի կեցվածքը ճշտելու նկատառումներով բանակցությունների ժամանակ խորհրդային-բոլշևիկյան բարձրագույն ղեկավարների տեսակետներից տարբերվող տեսակետ էր արտահայտել Վանի և Բիթլիսի նահանգների մի մասը Հայաստանին զիջելու հարցով: Գ. Չիչերինը նույնիսկ փորձել էր Թուրքիային տրվող ռազմաֆինանսական և այլ բնույթի օգնությունը պայմանավորել այդ հարցի լուծումով⁸: Բայց Բեքիր Սամի բեյը դիվանագիտորեն խուսանավել էր Չիչերինի առաջարկից՝ հայտարարելով, որ

5 Տե՛ս **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 264:

6 **Տերտերյան Հ.**, Հայաստանի Հանրապետութիւնը եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները՝ Լ. Շանթի պատվիրակութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 1954, N 2, էջ 14:

7 Տե՛ս **Տերտերյան Հ.**, նշվ. աշխ., «Հայրենիք», 1954, N 1, էջ 10:

8 Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հատ. 4, Եր., 2016, էջ 187: Տե՛ս նաև **Զոհրաբյան Է.**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997, էջ 144:

ինքը լիազորված չէ քննարկելու և ընդունելու թուրքական «Ազգային ուխտ»-ում ամրագրված պահանջին հակասող որևէ տարածքային փոփոխություն: Այս առումով կարելի է համաձայնել պրոֆ. Ռ. Հովհաննիսյանի այն դիտարկմանը, որ Չիչերինն այդ կերպ փորձել է ինչ-որ մասնակի լուծում տալ Հայկական հարցին, որպեսզի Մեծ Բրիտանիային հեռու պահի Հայաստանի գործերին միջամտելուց⁹: Սակայն, ինչպես պարզվում է, Չիչերինի այդ համեստ առաջարկ-պահանջը ուղղակի աջակցություն չի ստացել խորհրդային պետության բարձրագույն ղեկավարների՝ Վ. Լենինի, Լ. Տրոցկու, Ի. Ստալինի և այլոց կողմից:

Արդ, փորձենք ևս մի քանի լրացուցիչ մեկնաբանություն ևս պարզաբանում տալ Գ. Չիչերինի նման դիրքորոշման վերաբերյալ: Կարծում ենք, որ Գ. Չիչերինի՝ թուրքական պատվիրակությանը ներկայացրած քիչ թե շատ հայանպաստ պահանջը նպատակ է ունեցել առաջին հերթին Հայաստանը դուրս բերելու Ռուսաստանի համար թշնամական Արևմուտքի (Անտանտի) ազդեցությունից ու քաղաքականապես կողմնորոշելու, շրջելու դեպի Խորհրդային Ռուսաստանը: Բացի այդ, ի լրումն վերը ասվածի, պետք է նշել, որ, ըստ Չիչերինի, դա արվել էր, որպեսզի երկու երկրների արանքում հայտնված ՀՀ-ն չդառնա իրենց ցամաքային կապի՝ Անտանտի կողմից խրախուսվող խոչընդոտ: Եվ վերջապես՝ չենք բացառում, որ տոհմիկ ազնվական Գ. Չիչերինի հեռագնա մտածումներում Վանը, Մուշը, Բիթլիսը և հայկական այլ տարածքներ Հայաստանին հանձնելու ցանկությունը խորհրդայնացվելիք Հարավային Կովկասում և Արևելքի երկրներում Խորհրդային Ռուսաստանի ազդեցությունը մեծացնելու ու դեպի տաք ծովեր ելք ունենալու ավանդական ռուսական քաղաքականության դրսևորում էր: Այս համատեքստում առկա փաստերն ու իրողությունները ցույց են տալիս, որ Գ. Չիչերինը, կարծում ենք՝ մասամբ նաև Բ. Լեգրանը և հավանաբար նաև մի քանի այլ կուսակցական-պետական գործիչներ, մինչև խորհրդա-թուրքական 2-րդ խորհրդաժողովի նախօրյակը՝ 1921 թ. հունվարի երկրորդ կեսը, պաշտպանել են այդ տեսակետը:

Այսպիսով՝ Արևմտահայաստանի որոշ տարածքներ Հայաստանին վերադարձնելու խնդրում Գ. Չիչերինը մնում է իր տեսակետին, և բանակցությունները փոքր-ինչ ընդմիջարկվում են: Այս հարցում քեմալականներին օգնության է հասնում ոչ ավել, ոչ պակաս բոլշևիկյան կուսակցության և խորհրդային պետության առաջնորդ Վ. Լենինը: Խնդիրը հարթելու նպատակով Բ. Սամի բեյը օգոստոսի 14-ին հանդիպում (աուդենցիա) է ունենում Վ. Լենինի հետ: Խորհրդային կառավարության ղեկավար Վ. Լենինի

⁹ Տե՛ս Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 190-191:

հետ ունեցած «սիրալիր ու սրտաբաց» հանդիպման ընթացքում ոչ միայն մերժվում է Գ. Չիչերինի արած առաջարկը, այլև թուրքերը ստանում են Հայաստանի տարածքում **Սարիղամիշն** ու **Շահթախտին** գրավելու արտոնություն (թույլտվություն), որոնցով Կարմիր բանակը կարող էր ցամաքով անմիջապես կապվել Թուրքիայի (Անատոլիայի) հետ: Մյուս կողմից՝ Սարիղամիշ-Շահթախտի գծով քենալականներն էին հնարավորություն ստանում Նախիջևանի տարածքով կապվելու Ադրբեջանի հետ¹⁰: Այստեղ տարօրինակն այն է, որ երբ օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրով Նախիջևանը անցնում է Կարմիր բանակի հսկողության տակ, արդեն մի քանի օր անց խորհրդային կողմը՝ հանձին Վ. Լենինի, թույլ է տալիս, որ թուրքերը գրավեն Նախիջևանի երկրամասի մաս կազմող Շահթախտին՝ իր երկաթուղային հանգույցով:

Հայկական շահերի հաշվին քենալա-բոլշևիկյան մերձեցման այս գործընթացն իր փաստաթղթային առաջին լուրջ ձևակերպումը ստացավ Մոսկվայում 1920 թ. օգոստոսի 24-ին նախաստորագրված ռուս-թուրքական պայմանագրում, որը կոչված էր հակազդելու դրանից ուղիղ երկու շաբաթ առաջ՝ օգոստոսի 10-ին, Սևրում Առաջին աշխարհամարտում հաղթանակած Անտանտի 12 երկրների, այդ թվում՝ նաև Հայաստանի, և պարտված Օսմանյան կայսրության միջև հանդիսավորապես կնքված հաշտության պայմանագրին:

Օգոստոսի 24-ին նախաստորագրված խորհրդա-թուրքական 8 հոդվածից բաղկացած¹¹ պայմանագիրն իր սուր ծայրով ուղղված էր Սևրի պայմանագրի դեմ: Դրա հենց 1-ին հոդվածն ուղղակիորեն ամրագրում էր, որ «Պայմանավորվող յուրաքանչյուր կողմ համաձայնվում է սկզբունքորեն չճանաչել ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային ակտ, որոնք ուժով են պարտադրվել, ուստի ՌՍԴԽՀ կառավարությունը համաձայնվում է ոչ մի դեպքում չճանաչել Թուրքիային վերաբերող և ներկայումս Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովը ներկայացնող կառավարության կողմից չճանաչված որևէ միջազգային ակտ»¹²: Բերված հոդվածից դժվար չէ նկատել, որ խորհրդային Ռուսաստանն ի սկզբանե չի ճանաչել հայ ժողովրդի նվիրական իղծերն արտահայտող՝ Սևրի պայմանագրի 88-93-րդ հոդվածները, որոնք վերաբերում էին Միացյալ և Անկախ

10 Տե՛ս Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվ (նախկին ՄԼԻՎԿԱ), ֆ. 64, ց. 2, գ. 11, թ. 68, 75, 86, **Խաչատրյան Վ.**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր., 2007, էջ 27: Տե՛ս նաև «Հայոց պատմություն», հատ. IV, գիրք 1, նորագույն շրջան, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010, էջ 251:

11 Գ. Լազյանը, իր վավերագրերի ժողովածուում բերելով պայմանագրի նախագծի տեքստը, նշում է ընդհանրեն 7 հոդված, ինչը մեկով պակաս է (տե՛ս **Լազյան Գ.**, նշվ. աշխ., էջ 255-256):

12 «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 25: Տե՛ս նաև **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 265 և 267:

Հայաստանի գաղափարի կենսագործմանը: Ղեռ ավելին՝ այդ նույն 1-ին հոդվածի երկրորդ պարբերությամբ ամրագրվում էր, որ «սույն պայմանագրով Թուրքիա հասկացության տակ հասկացվում են այն տարածքները, որոնք ներառված են թուրքական Ազգային ուխտում»¹³: Ղա նշանակում է, որ ՌՍԴԽՀ-ն ճանաչում էր 1877 թ. ռուս-թուրքական նախկին պետական սահմանը, այսինքն՝ Կարսի և Արդահանի անցումը Թուրքիային: Իսկ մենք գիտենք, որ 1920 թ. հունվարի 28-ին Կ. Պոլսի խորհրդարանի (մեջլիսի) կողմից ընդունված «Ազգային ուխտ» (Misak-ı Milli)¹⁴ կոչված փաստաթուղթը հռչակում էր Թուրքիայի «տարածքային ամբողջականությունը»՝ նկատի ունենալով 1877 թ. ռուս-թուրքական նախապատերազմյան սահմանը, այսինքն՝ Թուրքիայի անբաժան մաս էին հայտարարվում ոչ միայն Արևմտյան Հայաստանի նահանգները, այլև 1878 թվականից ի վեր Սան Ստեֆանոյի և ապա Բեռլինի պայմանագրերով շուրջ 40 տարի Ռուսական կայսրության կազմում գտնվող, իսկ 1919 թվականից Հայաստանի Հանրապետության օրգանական մասը հանդիսացող ամբողջ Կարսի մարզը (Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի օկրուգներով)՝ 18784 թ. կմ տարածքով¹⁵:

Թուրքական, այսպես կոչված, «Ազգային ուխտ»-ի ընդունումը միաժամանակ նշանակում էր, որ Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունը պաշտոնապես չեղյալ կամ ուժը կորցրած էր համարում 1917 թ. դեկտեմբերի 31-ի իր իսկ հրապարակած և այնքան մեծ աղմուկ հանած «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որով Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարությունն ազատ ինքնորոշման, ընդհուպ լիակատար անկախության իրավունք էր տալիս Ռուսաստանի կողմից գրավված Արևմտյան Հայաստանին¹⁶:

Այնուհետև օգոստոսի 24-ի Մոսկվայի նախաստորագրված պայմանագրի 2-րդ հոդվածով կողմերը չեղյալ և ուժը կորցրած էին համարում իրենց միջև կնքված բոլոր պայմանագրերը, այդ թվում՝ 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը¹⁷: Այս կապակցությամբ նշենք, որ չնայած քենալական Թուրքիան ձևականորեն ընդունում էր Բրեստի պայմանագրի չեղյալ լինելը, սակայն Թուրքիայի և ՀՀ դիվանագիտական բարձր շրջանակների (Բեքիր Սամի բեյ-Հակոբ Տեր-Հակոբյան) միջև նույն 1920 թ. ամռանը նոտաների հեռավար փոխանակության ընթացքում երկկողմ

13 Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 267:

14 Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Մուրթաֆա Քենալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Եր., 2019, էջ 64:

15 Տե՛ս Конопка С. Р., Кавказ, Тифлис, 1914, էջ 95:

16 Տե՛ս «Великая Октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении (сборник документов)», под ред. Мнацаканян А. и др., Ер., 1957, էջ 146-147:

17 Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 259:

բանակցությունների համար իբրև հիմք առաջադրում էր Ռուսաստանի հետ կնքված վերոնշյալ Բրեստ-Լիտովսկի և Բաթումի 1918 թ. հունիսի 4-ի չվավերացված պայմանագրերի ճանաչման խնդիրը¹⁸:

Հայաստանի համար ոչ պակաս վտանգավոր էր նախագծի 3-րդ հոդվածը, որով պայմանավորվող կողմերը պարտավորվում էին ձեռք առնել բոլոր միջոցները՝ կարճ ժամանակում Ռուսաստանի և Թուրքիայի միջև ցամաքային, այդ թվում՝ երկաթուղային կապի հաստատման և տարանցիկ ուղևորաբեռնափոխադրման համար¹⁹: Իսկ ցամաքային կապը կարող էր հաստատվել միայն Հայաստանով:

Ինչպես արդեն վերը նշվեց, Վ. Լենինի համաձայնությամբ թուրքերը ստացել էին Հայաստանի տարածքում Սարիղամիշ-Շահթախտի գիծը գրավելու թույլտվություն, որով Նախիջևանում գտնվող Կարմիր բանակը կարող էր անմիջապես կապ հաստատել Թուրքիայի հետ ու նաև գեներ, զինամթերք, ապրանքներ փոխադրել: Այստեղից դժվար չէ նկատել, որ բոլշևիկյան Ռուսաստանը, Հայաստանի հետ կնքած օգոստոսի 10-ի համաձայնագրով իր հսկողության տակ վերցնելով որպես հայ-ադրբեջանական վիճելի տարածք դիտվող Արցախ-Սյունիք-Նախիջևանը, հետապնդում էր Թուրքիայի հետ ռազմական ու տնտեսական կապ հաստատելու նպատակ:

Օգոստոսի 24-ի ռուս-թուրքական պայմանագրի նախագծի մնացած հոդվածները վերաբերում էին Հայաստանին ոչ այնքան հետաքրքրող, սակայն Ռուսաստանի համար հույժ կարևոր՝ Սև ծովի ու նեղուցների միջազգային կարգավիճակի, ինչպես նաև քաղաքացիների երկկողմ իրավունքների կարգավորման, տնտեսական, ֆինանսական և այլ հարցերի:

Խորհրդա-թուրքական հուլիս-օգոստոսյան խորհրդաժողովի արդյունքում օգոստոսի 24-ին ստորագրված ռուս-թուրքական պայմանագրի նախագիծը, ինչպես արդեն ասվեց, Գ. Չիչերինի հայանպաստ դիրքորոշման պատճառով վերջնական պայմանագրի տեսք չստացավ: Թուրքական պատվիրակությունը պայմանագրի նախագիծը տարավ Թուրքիա (Անգորա)՝ իր կառավարության հետ համաձայնեցնելու: Սակայն հետագա իրադարձություններն այնպիսի ընթացք ստացան, որ դրա վերջնական կնքումը հետաձգվեց ավելի քան կես տարով, և ավելի հազեցած բովանդակությամբ ու կրկնակի ավելի՝ 16 հոդվածներով, այն ստորագրվեց 1921 թ. մարտի 16-ին (18-ին) դարձյալ Մոսկվայում կայացած ռուս-թուրքական 2-րդ խորհրդաժողովում:

18 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 4033, ց. 2, գ. 1136, թ. 1:

19 Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 259: Տե՛ս նաև **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 267:

Տալով սույն նախնական պայմանագրի իրավաքաղաքական գնահատականը՝ պետք է արձանագրել, որ չնայած այն վերջնականապես չստորագրվեց ու չվավերացվեց, սակայն, անշուշտ, իր ազդեցությունն ունեցավ ռուս-թուրք-հայկական հարաբերությունների հետագա ընթացքի ու ընդհանրապես Հայաստանի Հանրապետության հետագա ճակատագրի վրա: Սա այն ժամանակահատվածն էր, երբ Հայաստանն արդեն հայտնվել էր, Ս. Վրացյանի պատկերավոր խոսքերով ասած, «բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի» արանքում: Ուստի Թուրքիային ցուցաբերված ռազմաֆինանսական համակողմանի օգնությունն ու Հայաստանի դեմ ագրեսիա սկսելու հարցում լուռ համաձայնությունը տարածաշրջանում արմատապես փոխում էին ուժերի հարաբերակցությունը՝ Հայաստանին դատապարտելով ծանր պարտության, անկախության ու տարածքների զգալի մասի կորստյան և խորհրդայնացման:

2. Սևրի պայմանագիրը որպես 1920 թ. թուրք-հայկական պատերազմի գլխավոր շարժառիթ

1920 թ. աշնանը Թուրքիայի կողմից Հայաստանի դեմ սանձազերծված պատերազմն անմիջական կապ ուներ Սևրի պայմանագրի հետ, որովհետև թուրքերը նպատակ էին դրել բիրտ ուժի գործադրմամբ պատռելու այդ պայմանագիրը, համենայնդեպս Հայաստանին վերաբերող հատվածները: Թուրքիայի՝ Հայաստանի վրա հարձակման գլխավոր նպատակն էր ստիպել նրան հրաժարվել Սևրի պայմանագրից, հնարավորության դեպքում բռնազավթել հայկական նոր տարածքներ, սպառնալ Հայաստանի պետականությանը և հայ ժողովրդի անվտանգությանը: Ավելին, ըստ Մ. Քեմալի և արտաքին գործերի կոմիսարի պաշտոնակատար Ահմեդ Մուխթարի, այդ պատերազմի նպատակը ոչ միայն Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, այլև հայ ժողովրդի ոչնչացումն էր՝ «վերացնել Հայաստանն իրապես և քաղաքականապես»²⁰: Այս մտադրության իրագործման պայմաններում, բնականաբար, այլևս ավելորդ կլիներ խոսել Սևրի պայմանագրի կենսագործման մասին: Դրան զուգահեռ՝ թուրքերը խնդիր էին դրել, պարտության մատնելով հայկական բանակին, կատարելու Արևելյան Հայաստանի տարածքների բռնազավթումներ, կազմակերպելու բնակչության նոր կոտորածներ, թալան և, վերջին հաշվով, վերացնելու Հայաստանի Հանրապետության անկախութե-

20 Տե՛ս Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 50, 55, 75, 77, 88: Տե՛ս նաև Кемаль М., Путь новой Турции, т. 3, М., 1943, էջ 314:

յունն ու պետականությունը: Դրա համար նրանց անհրաժեշտ էր Խորհրդային Ռուսաստանի համաձայնությունը, մինչդեռ կար ոչ միայն համաձայնությունը, այլև ուղղակի աջակցությունը՝ բոլոր հնարավոր միջոցներով՝ զենք, ռազմամթերք, ֆինանսներ և հայկական բանակի կազմալուծմանն ուղղված քարոզչական ու խափանարար գործունեություն: Ուստի արտաքուստ միայն դրսևորելով չեզոքություն և 1920 թ. աշնանը Հայաստան գործուղված իր լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի միջոցով հանդես գալով հայ-թուրքական հաշտեցման միջնորդի դերում՝ Խորհրդային Ռուսաստանն իրականում ամեն ինչ արեց ուրիշի ձեռքով Հայաստանին պարտադրվող կապիտուլյացիան ապահովելու և նրա մի մասի Խորհրդայնացումն իրականացնելու համար:

Որպեսզի հիմնավորենք ասվածը, բավական է բերել մի քանի անհերքելի փաստական տվյալներ՝ ցույց տալու համար, թե Խորհրդային Ռուսաստանն ինչ օգնություն է ցուցաբերել Թուրքիային դեռ 1920 թ. զարնան-ամռան ամիսներին, այսինքն՝ հայ-թուրքական պատերազմի սկսվելուց առաջ, երբ քենալականները գործուն պատրաստություն էին տեսնում Հայաստանի վրա հարձակվելու համար: 1920 թ. զարնանից հարաբերությունների հաստատման ու մերձեցման ճանապարհին Ռուսաստանի կողմից թուրք ազգայնականներին կատարվել են դրամի, զենք-զինամթերքի տարբեր խմբաքանակներով անհատույց շարունակական մատակարարումներ: Այդ մասին շատ հարուստ նյութեր է պարունակում Ռուսաստանի արտգործոժողկոմատի՝ 1920-1921 թթ. վերաբերող փաստաթղթերի բազմահատոր ժողովածուն: Այսպես՝ վավերագրերից մեկում կարդում ենք, որ միլիական շարժման ղեկավար Մ. Քենալի հանձնարարությամբ Էնվեր փաշայի հորեղբայր Խալիլ փաշան, ստանալով ռուսական սպառազինության և ոսկու առաջին խմբաքանակը, ծովային ճանապարհով այն ուղարկել է Թուրքիա²¹:

Թուրքական վավերագիր աղբյուրներից քաղված տվյալներով՝ 1920 թ. մարտի 16-ին Խալիլ փաշան և Ֆուաթ Սաբիթը Մոսկվայում հանդիպել են ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի անդամ Լև Կամենևին, ով խոստանում է Անկարային օգնություն տրամադրել՝ 1 մլն թուրքական լիրա ոսկով, 60 հազար հրացան, 180 մլն փամփուշտ, 108 փոքր և 12 խոշոր տրամաչափի

21 Стів ДВП СССР, т. 2, էջ 724: Стів նաև **Լազեան Գ.**, նշվ. աշխ., էջ 249:

հրանոթներ: Միաժամանակ կողմերը պայմանավորվում են, որ այդ ամենը պիտի գաղտնի մնա²²:

«Հ բանակի շտաբի հետախուզական բաժանմունքի պետ, կապիտան Ղևոյանցի կազմած 1920 թ. ապրիլի 23-ի թիվ 15 գաղտնի ամփոփագրից տեղեկանում ենք, որ «վերջին ժամանակներում լաստանավերով (հավանաբար Օդեսայից) Սամսուն է բերվել մեծ քանակությամբ սպառազինություն, որը փոխադրվել է Սվազ ու Մալաթիա, իսկ այդտեղից էլ բաշխվել հունական և հայկական ռազմաճակատներին»²³:

Դրամի, գենք-զինամթերքի մատակարարումը նոր չափերի հասավ արդեն ամռանը՝ ռուս-թուրքական մոսկովյան բանակցությունների հետևանքով: Այդ բանակցությունների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց Թուրքիային ոսկով 5 մլն ռուբլի օգնություն տրամադրելու վերաբերյալ, որից 1 միլիոնը թուրք պատվիրակ, տնտեսության կոմիսար (նախարար) Յու. Քեմալ բեյը սեպտեմբերին իր հետ տարավ Անատոլիա²⁴:

Խորհրդային կառավարությունը, ընդառաջ գնալով քեմալականների խնդրանքին, ամռան վերջին Ս. (Գ.) Օրջոնիկիձեի հրահանգով Թուրքիա ուղարկեց 6000 հրացան, ավելի քան 5 միլիոնից ավելի փամփուշտ, 17600 արկ, իսկ սեպտեմբերին Ջանգեզուր-Նախիջևանով՝ «Դրոյի քթի տակով», էրզրում հասցվեց ռուսական 200.6 կգ ծուլածո ոսկի և այլն²⁵:

Դարձյալ մինչ թուրք-հայկական պատերազմի սկսվելը՝ 1920 թ. ամռանը, խորհրդա-քեմալական ռազմական համագործակցության շրջանակներում թուրքերը ռուսական ոսկով կարողացել են գնել 20 ինքնաթիռ, 200 հազարից ավելի հրացան, 1500 գնդացիր, 4 ավիաշարժիչ, 930 բեռնատար ավտոմեքենա, մեծաքանակ ռազմամթերք ու տեխնիկա²⁶: Թուրքական մեկ այլ փաստաթղթի համաձայն՝ 1920 թ. սեպտեմբերին Նովոռոսիյսկ և Տուափսերի նավահանգիստներից Խորհրդային Ռուսաստանը Թուրքիա է ուղարկել 200 հազար հրացան, 5 մլն փամփուշտ, 400 հրանոթ, 100 բեռնատար, 100 հազար զինվորական հանդերձանք, ամեն ամիս՝ 600 տոննա բենզին²⁷:

Մեկ այլ՝ ոչ ամբողջական տվյալներով՝ ամռան ընթացքում քեմալականները օգնության կարգով բոլշևիկներից ստացել են նաև 25 փութ ոս-

22 Տե՛ս «Կարսի մարզը Հայաստանի առաջին հանրապետության կազմում (1919 թ. ապրիլ-1920 թ. հոկտեմբեր)», նյութեր և փաստաթղթեր, աշխատասիրությամբ՝ **Վլ. Հարությունյանի**, Եր., 2016, էջ 429:

23 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1, թ. 176:

24 Տե՛ս **Багиров Ю. А.**, Из истории советско-турецких отношений (1920-1922 гг.), Баку, էջ 40, 120:

25 Տե՛ս ДВП СССР, т. 3, М., 1959, էջ 675, «Մշակ», Թիֆլիս, 21 սեպտեմբերի 1920 թ.: Տե՛ս նաև [https://ru.wikipedia.org/wiki/Ататюрк.-Мустафа-Кемаль \(մուտք՝ 20.01.2020\)](https://ru.wikipedia.org/wiki/Ататюрк.-Мустафа-Кемаль_(մուտք՝ 20.01.2020)):

26 Տե՛ս **Шеремет В. И.**, Босфор. Россия и Турция в эпоху Первой мировой войны. По материалам русской военной разведки, М., 1995, էջ 24:

27 Տե՛ս «Կարսի մարզը Հայաստանի առաջին հանրապետության կազմում», էջ 429:

կի, 100 գնդացիր, 8 հրանոթ, մեծ քանակությամբ ռազմամթերք²⁸ և այլն: Եվ այս ամենը՝ մինչ կսկսվեր թուրք-հայկական պատերազմը:

Քեմալականներին ցուցաբերվող օգնությունն ավելի մեծ չափեր ընդունեց արդեն պատերազմի ընթացքում, իսկ վիթխարի ծավալների հասավ 1921-1923 թթ.²⁹: Ստացվում էր այնպես, որ Խորհրդային Ռուսաստանը գործնականում օգնում էր Թուրքիային, որպեսզի նա արևելքում կռվեր «իմպերիալիստական Անտանտի դաշնակից» համարվող Հայաստանի, իսկ արևմուտքում՝ դարձյալ Անտանտի երկիր Հունաստանի դեմ:

Այսպիսով՝ բերված անհերքելի տվյալները հաստատում են, որ քեմալա-բոլշևիկյան ռազմական համագործակցությունն իր սուր ծայրով ուղղված էր Սևրի պայմանագրի խափանմանը և թուրքերի համար դրա անցանկալի հետևանքների վերացմանը: Խորհրդային կառավարության երկդիմությունը Հայաստանի խնդրում երևում է նրանից, որ մի կողմից՝ նրա ներկայացուցիչը բանակցում էր Հայաստանի հետ՝ իբր «բարեկամական» դաշնագիր կնքելու համար, իսկ մյուս կողմից՝ նա ծովով ու ցամաքով ռազմական ու ֆինանսական օգնություն էր ցույց տալիս Հայաստանի դեմ պատերազմող Թուրքիային:

Խորհրդա-քեմալական գործակցության ուժեղացման և հայ ժողովրդի ազգային-պետական նպատակների ծախսողման գործում մեծ դեր խաղաց Կոմինտերնի (3-րդ ինտերնացիոնալ) նախաձեռնությամբ 1920 թ. սեպտեմբերի 1-7-ը Բաքվում գումարված Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարը, որին մասնակցում էր շուրջ 2000 պատգամավոր: Տարված լինելով համաշխարհային հեղափոխության հովերով՝ կոմունիստների առաջնորդները՝ Վ. Լենինը, Լ. Տրոցկին, Գ. Ջինովևը և այլք, մեծ հույսեր էին կապում Արևելքի ժողովուրդներին համաշխարհային հեղափոխության մեջ ներքաշելու հետ: Նրանք հատկապես կարևոր դեր ու նշանակություն էին տալիս քեմալական Թուրքիային: Եվ պատահական չէր, որ այդ խառնաժողովում ամենապատվավոր տեղերում էին նստած Հայոց Մեծ եղեռնի մի քանի կազմակերպիչներ, այդ թվում՝ հայ ժողովրդի դահիճներ Իսմայիլ Էնվեր փաշան, դոկտոր Բեհաէդդին Շաքիրը, Խալիլ փաշան և ուրիշներ: Հիշեցնենք, որ այդ համագումարին մասնակցում էին մի քանի տասնյակ հայ պատգամավորներ, այդ թվում՝ Ա. Միկոյանը, Ավիսը, Ս. Կասյանը, Ա. Մռավյանը և շատ ուրիշներ:

Թուրքիան իրեն հայտարարել էր իմպերիալիզմի դեմ պայքարող ուժ ու փաստորեն դարձել բոլշևիկյան Ռուսաստանի «բնական» դաշնակիցը:

28 Տե՛ս **Յակոբեան Ա.**, Բոլշևիկների օգնությունը քեմալականներին 1920 թ., «Դրօշակ», Եր., 2000, դեկտեմբեր, N 1 (1569), էջ 160:

29 Տե՛ս «Կարսի մարզը Հայաստանի առաջին հանրապետության կազմում», էջ 430-434:

Ահա թե խորհրդա-թուրքական գործակցության գաղափարը 1920 թ. աշ- նանը ինչպես է ձևակերպել ԹԱՄԺ կառավարության արտաքին գործերի կոմիսարի պաշտոնակատար Ահմեդ Մուխթարը Գ. Չիչերինին հղած գրություններից մեկում. «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարու- յունը իրեն համարում է խորհրդային Ռուսաստանի բնական դաշնակիցն այն չափով, որ չափով նրանք միասին պայքարում են ընդհանուր թշնա- մու՝ Արևմուտքի իմպերիալիստների դեմ»³⁰: Իր հերթին խորհրդային կա- ռավարությունը Հայաստան-Թուրքիա ընտրության հարցում «հեղափո- խական Թուրքիային» զերադասեց «միջազգային իմպերիալիզմի գործա- կալ Հայաստանից»: Բաքվի համագումարում քննարկվեց «համաշխար- հային հեղափոխության խոչընդոտ դաշնակցական Հայաստանի» դեմ պատերազմի հարցը, և ազդարարվեց «կանաչ լույս» թուրքական հար- ծակման համար: Արդեն սեպտեմբերի 17-ին նույն Բաքվում Արևելքի ժո- ղովուրդների, այսպես կոչված, «գործողության և քարոզչության խորհրդի նախագահության» ընդունած **եզրակացության** մեջ. «Թուրքական ազգայ- նական գործի միջոցով Հայաստանում միջազգային իմպերիալիզմի գոր- ծակալ դաշնակների լուծը անհապաղ տապալելու, տեղում խորհրդային կարգեր հաստատելու և հեղափոխական Թուրքիային միանալու»³¹ կոչ էր արվում: Եվ այս ծրագրի իրականացման գլխավոր դերը տրվեց «հե- ղափոխական» Թուրքիային³²: Իսկ Թուրքիան արդեն պատրաստ էր գե- ն- քի ուժով վերացնելու «հայկական սեպը» և պատռելու Սևրի պայմանա- գիրը:

Մեծ իմաստնություն չի պահանջվում հասկանալու համար, որ խորհրդա-թուրքական համընկնող շահերն ավելի ընդգրկուն էին, և կա- պերը՝ ավելի ձգողական, քան խորհրդա-հայկականը: «Մեզ համար,- նշել է Գ. Չիչերինը,- բարեկամության գիծը քենալական Թուրքիայի հետ ոչ թե կոնյունկտուրա է, այլ սկզբունքային ուղեգիծ: Ղա Վլադիմիր Իլյիչի գիծն է»³³: Ռուս-թուրքական մերձեցումը թև տվեց քենալականներին, ո- րոնք էլ օգոստոսյան նախնական համաձայնագրի ստորագրումից մեկ ա- միս անց պատերազմ սանձազերծեցին Հայաստանի դեմ: «Կասկած չկայ,- կարդում ենք Լեոյի խմբագրած «Մշակ»-ի առաջնորդողում,- որ այս շարժումը կատարում է եղբայրական Մոսկուայի ղեկավարութեամբ և ներշնչանքով»³⁴:

30 ՀԱԱ, ֆ. 1022, ց. 4, գ. 72, թ. 24:

31 ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 1-2:

32 Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 281-286:

33 **Глебов А.**, Линия дружбы (рассказы о Турции), М., 1960, с. 21.

34 «Մշակ», Թիֆլիս, 21 սեպտեմբերի 1920 թ.:

Հայտնի է, որ սեպտեմբերի 28-ին Հայաստանի վրա թուրքերի ընդհանուր հարձակումից հետո՝ հոկտեմբերի 5-ին, Չիչերինը հեռագրում է Կովկասի փաստական ղեկավար Ս. Օրջոնիկիձեին և Կովկասում ու Հայաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանին, որպեսզի նրանք համոզեն քենավականներին, որ հանկարծ նախատեսված «Սարիղամիշ-Շահթախտի գիծը չանցնեն»³⁵: Այս կապակցությամբ Չիչերինին հղած իր պատասխանում Բ. Լեգրանը ճիշտ էր կռահում և հիմնավորված կասկած էր հայտնում, որ թուրքերը ռազմավարական հենակետ Սարիղամիշը գրավելուց հետո այլևս կանգ չեն առնի նախատեսված Սարիղամիշ-Շահթախտի գծի վրա, այլ առաջ կշարժվեն դեպի Կարս ու Ալեքսանդրապոլ³⁶: Եվ այդպես էլ արեցին:

3. Բ. Լեգրանի առաքելությունը և 1920 թ. հոկտեմբերի 28-ի հայ-ռուսական համաձայնագիրը

1920 թ. սեպտեմբերի սկզբին Լ. Շանթի գլխավորած պատվիրակությունը մեծ դժվարությամբ Մոսկվայից հասավ Երևան՝ սպասելով Բ. Լեգրանի պատվիրակության ժամանելուն: Դրանից մեկ ամիս անց՝ հոկտեմբերի 11-ին, մի մեծ՝ 54 հոգանոց³⁷ շքախմբով, կոմունիստական հարուստ գրականությամբ, կարմիր դրոշներով զարդարված հատուկ գնացքով վերջապես Երևան է ժամանում Բ. Լեգրանը: Նրա առաքելությունը (դեսպանությունը) կոչված էր վերսկսելու ամռանը Մոսկվայում ընդհատված հայ-ռուսական բանակցությունները և «բարեկամական» դաշնագիր կնքելու, բայց խորքային նպատակը, թուրքական մահաբեր ներխուժման սպառնալիքն օգտագործելով, Հայաստանի խաղաղ խորհրդայնացումն էր:

Մոսկվայից Լեգրանին հրահանգ էր տրված Երևանի բանակցություններում դարձյալ հանդես գալու որպես հաշտարար միջնորդ հայ-թուրքական հակամարտության մեջ: Իսկ դրա գինը, ինչպես ասվեց, լինելու էր Հայաստանի խորհրդայնացումը և, ըստ էության, անկախագրկումը: Բ. Լեգրանը, տակավին գնացքից չիջած, հոկտեմբերի 13-ին Հայաստանի կառավարությանը ներկայացրեց վերջնագրային բնույթ ունեցող մի հուշագիր՝ պատասխանի համար տալով 48 ժամ: Այդ վերջնագրի առաջին կետով Բ. Լեգրանն առաջարկում էր՝ 1) **հրաժարվել Սևրի պայմանագրից**, 2) տալ Հայաստանով (երկաթուղիներով ու խճուղիներով) խորհրդային

35 ՄԼԻԿԿԱ, ֆ. 85, ց. 14, գ. 15, թ. 2, գ. 17, թ. 1:

36 Տե՛ս **Զոհրապյան Է.**, նշվ. աշխ., էջ 220:

37 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 347:

գորքերի և իրենց ռազմամթերքի ազատ տարանցման (տրանզիտի) իրավունք՝ Ս. Քենալի գորքի հետ կապ հաստատելու, դաշնակիցների (այսինքն՝ Անտանտի - Ա.Հ.) դեմ կռվելու նպատակով, 3) Հայաստանի և հարևանների միջև գոյություն ունեցող սահմանային վեճերի լուծումը հանձնել խորհրդային Ռուսաստանի իրավասությանը և այլն³⁸:

Ստեղծված աղետալի իրավիճակում, երբ թուրքական գորքը շարժվում էր դեպի Կարս, իսկ Կարմիր բանակը հյուսիսից կուտակվել էր Հայաստանի սահմանին³⁹, ՀՀ կառավարությունը նախ ընդունում է ռուսների վերջնագիրը, իսկ ավելի ուշ՝ նոյեմբերի 26-ին՝ թուրքերի: Այս կապակցությամբ հարկ ենք համարում տեղեկացնել, որ Հայաստանի կառավարությունը նախ և առաջ ՌՍԴԽՀ կառավարության առջև էր պարտավորվել հրաժարվել Սևրի պայմանագրից, իսկ միայն պատերազմի ավարտից հետո՝ Ալեքսանդրապոլի հայ-թուրքական բանակցությունների նախօրյակին նոյեմբերի 26-ին՝ նաև թուրքերի: Սա հատուկ շեշտում ենք, որովհետև սովորաբար խորհրդային և այլ պատմահուշագրական գրականության մեջ միշտ հիշեցում է արվում, թե ՀՀ կառավարությունը թուրքերի առջև, այն էլ՝ բիրտ ուժի գործադրմամբ, պատերազմը վերսկսելու սպառնալիքի ազդեցությամբ, որպես բանակցությունները սկսելու նախապայման, պաշտոնապես հայտարարել է Սևրի պայմանագրից հրաժարվելու մասին: Բայց դրա կողքին մոռացության է մատնվում (չի հիշեցվում), որ դրանից մեկուկես ամիս առաջ Հայաստանը Թուրքիայի դաշնակից Ռուսաստանի առջև արդեն պարտավորվել էր հրաժարվել այդ պայմանագրից՝ ակնկալելով վերջինիս աջակցությունը թուրքական բիրտ ուժի դեմ պայքարում:

ՀՀ պատվիրակության նախագահ Լ. Շանթի և ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի միջև ընթացող երկշաբաթյա բանակցությունների արդյունքում Կարսի անկման նախօրյակին՝ **հոկտեմբերի 28-ին**, ստորագրվեց երկու փաստաթուղթ՝ նախ՝ երկու բաժնից և մի քանի հողվածից բաղկացած եզրափակիչ որոշման **արձանագրությունը**, իսկ այնուհետև՝

38 Տե՛ս **Տերտրեան Հ.**, նշվ. աշխ., 1954, մայիս, N 5, մաս 2, էջ 6-7, «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 303, **Լազեան Գ.**, նշվ. աշխ., էջ 240: Տե՛ս նաև **Յակոբեան Ա.**, Հայաստանի խորհրդայնացման հարցի շուրջ (1920 թ.), «Դրօշակ», Եր., 2001, մարտ, N 2 (1570), էջ 149, «Հայ բոլշևիկների հակապետական գործունեությունը 1919-1920 թթ.», փաստաթղթերի ժողովածու, կազմող **Հարությունյան Վ.**, Եր., 2014, էջ 330-331:

39 Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի տվյալներով, որոնք վկայաբերում է Ալ. Խատիսյանը, թուրք-հայկական երկամսյա պատերազմի ընթացքում Հայաստանը գործնականում ունեցել է չորս ձակատ՝ Կարս-Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջևանի և Դիլիջան-Ղազախի (տե՛ս **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէյրուք, 1968, էջ 289):

ավելի հարուստ բովանդակությամբ, ներածականից (պրեամբուլա) և 17 հոդվածից բաղկացած բուն **պայմանագրի նախագիծը**⁴⁰:

Ներկայացվող պայմանագրի նախագծի կարևոր հոդվածներից էր 1-ինը, որով «Ռուսաստանի Դաշնությունը պարտավորվում էր անվերապահորեն ճանաչել **ինքնիշխան և անկախ Հայաստան պետությունը** 1914 թ. ռուս-թուրքական նախապատերազմյան սահմանով»⁴¹: Ավելին՝ մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ նախագծի 1-ին հոդվածի ծանոթագրության մեջ նշված էր, որ «ՌՍԴԽՀ-ն արդարացի է համարում Թուրքահայաստանի մարզերի միացումը Հայաստանին և պատրաստ է ցուցաբերել իր բարեկամական ազդեցությունը դաշնակից պետության (նկատի ունի Թուրքիային - Ա. Հ.) վրա՝ նշված առանձին մարզերն ու շրջանները փաստացի Հայաստանին միացնելու նպատակով»⁴²:

Պետք է կարևորել նաև արձանագրության 1-ին բաժնի 1-ին հոդվածը, որով Ռուսաստանի Դաշնությունը և Խորհրդային Ադրբեջանը ճանաչելու էին Հայաստանի Հանրապետության անքակտելի իրավունքը վիճելի համարվող Նախիջևանի ու Ջանգեզուրի գավառներում և այդ տարածքներից դուրս էին բերելու իրենց ենթակայության տակ գտնվող բոլոր գործնասերը⁴³: Իբրև պատմական փաստ՝ նկատենք նաև, որ, ի վերահաստատումն հոկտեմբերի 28-ի համաձայնագրի, Հայաստանի խորհրդայնացման նախօրյակին Ադրբեջանի հեղկոմի՝ նոյեմբերի 30-ին հրապարակած հռչակագրով դարձյալ Հայաստանի անբաժան մաս էին համարվում Ջանգեզուրի և Նախիջևանի գավառները, իսկ Լեռնային Ղարաբաղին տրվում էր լրիվ ինքնորոշման իրավունք⁴⁴: Հավելենք նաև, որ այդ նույն պահանջը ամրագրվեց դրանից երկու օր անց՝ դեկտեմբերի 2-ին, Երևանում ստորագրված (Դրո-Լեզրան) համաձայնագրում, որով նաև պաշտոնապես արձանագրվեց Հայաստանի խորհրդայնացման փաստը: Վերոնշյալ վավերագրերը հիմք են տալիս եզրակացնելու, որ ստեղծված իրավիճակում ՀՀ կառավարությունը պատրաստ է եղել Հայաստանի անարյուն (խաղաղ) խորհրդայնացմանը, եթե, իհարկե, Ջանգեզուր-Նախիջևան-Արցախ տարածքային հարցը լուծվեր Հայաստանի օգտին:

Հոկտեմբերի 28-ի համաձայնագրի նախագծում մեզ առավել հետաքրքրող հարցի՝ Արևմտահայաստանի նահանգների ու Սևրի պայմանագրի առնչությամբ արձանագրված է, որ «ՌՍԴԽՀ-ն արդարացի է հա-

40 Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 314-320:

41 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 12, թ. 29, «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 316-317: Տե՛ս նաև **Հովհաննիսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 270:

42 «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 316:

43 Տե՛ս նույն տեղում, էջ 314-315:

44 Տե՛ս նույն տեղում, 377:

մարում Թուրքահայաստանի մարզերի միացումը Հայաստանի Հանրապետությանը և պատրաստ է ցուցաբերել բարեկամական ազդեցություն ԹԱՄԺ-ի կառավարության վրա՝ վիճելի համարվող այդ մարզերը կամ դրանց մի մասը միացնելու Հայաստանին»⁴⁵: Ընդ որում, եզրափակիչ արձանագրության մեջ նշվում էր, որ դա արվելու է այն բանից հետո, երբ ԹԱՄԺ կառավարությունն իր գործերը հետ քաշի մինչև ռուս-թուրքական նախկին՝ 1914 թ. սահմանը⁴⁶: Այդ կապակցությամբ Գաբրիել Լազյանը, հղում անելով Հ. Տերտերյանի հայտնի հուշերին, այն էլ՝ նախաստորագրված պայմանագրի ոչ ստույգ ամսաթվով (նշված է **հոկտեմբերի 21**), բերում է պայմանագրի նախագծի համառոտագրված տարբերակը (ընդհանուր 17 հոդվածներից ընդամենը 11-ը), որի՝ իր ձևակերպմամբ 4-րդ հոդվածում նշվում է. «Սերի դաշնագրից հրաժարուելու դեպքում խորհրդային կառավարությունը պարտաւորուում է ճնշում բանեցնել թուրքերի վրայ՝ Էրզրումի վիլայեթից որոշ հողամասեր զիջելու Հայաստանին»⁴⁷: Բայց պարզվում է, որ քանիցս մեր մատնանշած 17 հոդվածանոց պայմանագրի նախագծում նման՝ թիվ 4 ձևակերպմամբ հոդված չկա: Մնում է այս հարցում ենթադրել, որ կամ ռուս-թուրքական բանակցություններին որպես անդամ մասնակցած՝ հիշատակված փաստաթղթերի ժողովածուն կազմած հեղինակների խումբը չի ներառել այդ հոդվածը, կամ էլ Հ. Տերտերյանն է իր կողմից տվել նման ձևակերպում: Ընդ որում, նկատենք, որ փաստաթղթերի ժողովածուում բերված պայմանագրի նախագիծը մեքենագիր պատճեն է:

Մեր կարծիքով՝ Հ. Տերտերյանի հուշերում բերված և Գ. Լազյանի կազմած վավերագրերի ժողովածուում արտատպված հոկտեմբերի 28-ի պայմանագրի նախագծի թիվ 4 կետը՝ Սևրի պայմանագրից Հայաստանի հրաժարման մասին, ավելի հավատ է ներշնչում, քան 2000 թ. հրատարակված փաստաթղթերի ժողովածուում դրա բացակայությունը: Մենք հակված ենք պաշտպանելու Հ. Տերտերյանի բերած տարբերակը, և դա կարելի է հիմնավորել նրանով, որ նախ՝ Հ. Տերտերյանը եղել է Լ. Շանթի պատվիրակության անմիջական մասնակից անդամը և հետագայում արտասահման անցնելիս, ըստ էության, ձեռքի տակ ունեցել է բանակցությունների վերաբերյալ ինչ-որ նյութեր: Երկրորդ՝ պետք է նկատի ունենալ, որ Սևրի պայմանագրից Հայաստանի հրաժարումը եղել է Բ. Լեգրանի՝ Հայաստանին ներկայացրած վերջնագրի գլխավոր նախապայմանը, ինչը, բնականաբար, պետք է որ այս կամ այն կերպ իր արտացոլումը

45 Նույն տեղում, էջ 315-316:

46 Տե՛ս նույն տեղում, էջ 315:

47 **Տերտերյան Հ.**, նշվ. աշխ., 1954, մայիս, N 5, մաս 2, էջ 8-9: Տե՛ս նաև **Լազյան Գ.**, նշվ. աշխ., էջ 260:

գտներ պայմանագրում: Եվ վերջապես՝ խորհրդային ժամանակներից եկած «ավանդույթի» համաձայն՝ մեզանում փաստաթղթերի ժողովածու կազմող հեղինակները շատ հնարավոր է, որ խորհրդային շրջանում այն «խմբագրած» լինեն, մանավանդ որ ժողովածուում գետեղված պայմանագրի նախագիծը, ինչպես արդեն ասվեց, եղել է ընդամենը մեքենագիր պատճեն:

Այնուամենայնիվ, ստեղծված պայմաններում բավականաչափ հաջող ստորագրված համաձայնագրի այդ նախագիծը և եզրափակիչ արձանագրությունը ձեռքին, Բ. Լեգրանը Թիֆլիսով մեկնում է «կարմիր» Բաքու՝ Մոսկվայի և Կովկասի կուսակցական բարձրագույն դեկավար մարմինների հավանությանն արժանացնելու համար: Փաստենք, որ հենց այդ ժամանակ էլ՝ հոկտեմբերի 30-ին, առանց լուրջ դիմադրության ընկավ Կարսը: Նոյեմբերի 4-ին Բաքվում հրավիրված ՌԿ(բ)Կ ԿԿ Կովբյուրոյի (դեկ. Ս. Օրջոնիկիձե) և Ադրբեջանի կոմկուսի ԿԿ Քաղբյուրոյի համատեղ նիստում Ի. Ստալինի մասնակցությամբ (նիստին մասնակցել են նաև Հայկոմկուսի ԿԿ մի քանի անդամներ), քննության դրվեց պայմանագրի նախագիծը, և արձանագրվեց, որ «Լեգրանը դաշնակցականներին շատ խոստումներ է տվել», և «նախագիծը ետ է մնացել իրադարձություններից»: Որպես արդյունք՝ պայմանագրի նախագիծը չարժանացավ բյուրոյականների հավանությանը: Դրա փոխարեն, այդ նույն նիստում քննության առնելով ստեղծված կացությունը, գործնականում ծրագրվում է ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի՝ հոկտեմբերի 14-ին ընդունած որոշման ոգով խորհրդայնացնել Հայաստանը⁴⁸: Իսկ Բ. Լեգրանի առաքելությունից դժգոհ Ի. Ստալինը, Ս. Օրջոնիկիձեն և մյուսները, միառժամանակ նրան մեկուսացնելով «հայկական գործերից», անգամ մտադրություն են ունեցել գործուղելու Մոսկվա՝ Կենտրոն՝ այնտեղ բացատրություններ տալու: Սակայն, ի վերջո, Բ. Լեգրանին շուրջ մեկ ամիս ուշացունով թույլ տրվեց վերադառնալ Հայաստան: Եվ նա վերադարձավ այն ժամանակ, երբ Հայաստանն արդեն վերջնականապես պարտվել էր ու մեծագույն կորուստներով կանգնել խորհրդայնացման անխուսափելի փաստի առաջ: Իսկ մինչ այդ, ինչպես հայտնի է, նոյեմբերի սկզբներին ընթացող թուրք-հայկական պատերազմի պայմաններում, երբ Հայաստանի կառավարությունը չընդունեց Անգորայի կառավարության՝ նոյեմբերի 8-ին ներկայացրած զինադադարի երկրորդ՝ ավելի ծանր պայմանները, մի քանի օր անց՝ նոյեմբերի 11-ին, վերսկսվեց թուրքերի հարձակումը: Այդ նույն օրը Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինը, ի պատասխան Հայաստանի կառավարու-

48 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 2, «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 327: Տե՛ս նաև **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 319, **Խաչատրյան Կ.**, նշվ. աշխ., էջ 32-33:

թյան դիմումի, ռադիոգիր հղեց ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանին (փաստաթղթում սխալմամբ նշված է Ս. Կրաջյանի անունը) Հայաստանի և Թուրքիայի միջև կրկին միջնորդ լինելու առաջարկությամբ: Ի դեպ, այդ նույն ռադիոգիրը միաժամանակ ուղարկվել է նաև ԹԱՄԺ կառավարության նախագահ Ս. Քեմալին, Թուրքիայի Արևելյան ճակատի հրամանատար Ք. Կարաբեքիրին, նաև Հայաստանում ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանին: Ռադիոգրում խոսվում էր Ռուսաստանի կառավարության` Հայաստանի և Թուրքիայի միջև միջնորդ լինելու մասին, ինչի համար Հայաստանին ներկայացվող երեք նախապայմաններից մեկը դարձյալ Սևրի պայմանագրից հրաժարումն էր⁴⁹: Հայկական կողմը պատրանք ուներ, թե Սևրի պայմանագրից հրաժարվելու դիմաց Ռուսաստանի միջնորդությամբ Թուրքիան Հայաստանին որոշ զիջումներ կանի, և այդպես կկարողանան կնքել քիչ թե շատ պատվավոր (տանելի) հաշտության պայմանագիր: Սակայն նոյեմբերի 25-ին Ալեքսանդրապոլում սկսված հայ-թուրքական հաշտության բանակցությունների հենց սկզբից թուրքական պատվիրակության ղեկավար Քյազիմ Կարաբեքիր փաշան, որպես բանակցություններ սկսելու նախապայման, Հայաստանից պահանջեց պաշտոնապես հրաժարվել Սևրի պայմանագրից, առանց որի` «Թուրքիան ոչ մի բանակցություն սկսել չի կարող»⁵⁰: **Դժվար չէ նկատել, որ Սևրի պայմանագրից Հայաստանին հրաժարեցնելու հարցում պետք է տեսնել որոշակի համաձայնեցված կապ Բ. Լեգրանի վերջնագրի, Գ. Զիչերինի ռադիոգրի և Ք. Կարաբեքիրի նույնիմաստ նախապայմանի միջև:** Թուրքական հարձակումը կրկին վերսկսելու սպառնալիքի ազդեցությամբ Հայաստանի կառավարությունը 1920 թ. նոյեմբերի 26-ին ընդունեց հայտարարություն Սևրի պայմանագրից հրաժարվելու մասին: Հաջորդ օրը` նոյեմբերի 27-ին, հայկական պատվիրակությունը Հայաստանի կառավարության հայտարարության տեքստը զրավոր ներկայացրեց թուրքական պատվիրակությանը⁵¹: Ավելին` դա դեռ բավական չէր, դեկտեմբերի 2-ի լույս 3-ին ստորագրված Ալեքսանդրապոլի պայմանագրի 10-րդ հոդվածում ամրագրվեց Հայաստանի կառավարության կողմից Սևրի պայմանագիրը չեղյալ համարելու մասին պահանջը⁵²:

49 Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества (документы и комментарий)» (այսուհետև` «Геноцид армян»), сост. проф. **Барсегов Ю. Г.**, т. 2, ч. 1, М., 2003, էջ 223-224, 229-231: Տե՛ս նաև ДВП СССР, т. 3, էջ 325:

50 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 636, մաս 1, թ. 47-48:

51 Տե՛ս ДВП СССР, т. 3, էջ 674: Տե՛ս նաև «Геноцид армян», т. 2, ч. 2, М., 2005, էջ 385:

52 Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)» (այսուհետև` «Հայաստանը ... փաստաթղթերում»), խմբ.՝ պրոֆ. **Ջ. Կիրակոսյան**, Եր., 1972, էջ 685: Տե՛ս նաև «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 392:

Թեև բռնի ուժի ու սպառնալիքի միջոցով Հայաստանին պարտադրված և երկու կողմից էլ (հայ և թուրք) չվավերացված Ալեքսանդրապոլի պայմանագիրը իրավական ուժ չի ունեցել, բայց և այնպես, թուրքերը փորձեցին և հաջողեցրին դրա մի քանի կետերն օգտագործել Ռուսաստանի հետ կնքվելիք Մոսկվայի ռուս-թուրքական և ավելի ուշ՝ Կարսի թուրքանդրկովկասյան պայմանագրերում:

4. Սևրի պայմանագրի հարցը 1921 թ. Մոսկվայի ռուս-թուրքական 2-րդ խորհրդաժողովի նախապատրաստական փուլում: Գ. Չիչերինի «հիմարությունը»

Այն բանից հետո, երբ Հայաստանը պարտվել էր թուրք-հայկական պատերազմում, խորհրդայնացել ու, ըստ էության, անկախագրկվել էր, 1920 թ. դեկտեմբերի սկզբներից նախապատրաստական քայլեր ձեռնարկվեցին՝ հրավիրելու ռուս-թուրքական 2-րդ խորհրդաժողովը: Խորհրդա-թուրքական 2-րդ խորհրդաժողովի (կոնֆերանսի) նախապատրաստական փուլում, հաշվի առնելով ռուս-թուրքական 1-ին խորհրդաժողովի փորձը, թուրքերը կասկածներ ունեին, որ Ռուսաստանը՝ ի դեմս Գ. Չիչերինի, կարող է Հայաստանի օգտին տարածքային որոշակի պահանջներ ներկայացնել Թուրքիային: Այդ մասին դարձյալ մի քանի անգամ ակնարկել էր Գ. Չիչերինը 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբներին: Մասնավորապես ՌԿ(Բ)Կ ԿԿ Քաղբյուրոյին ուղղված դեկտեմբերի 3-ի նամակում Գ. Չիչերինը առաջարկում էր թուրքերի հետ կնքվելիք պայմանագրում երաշխավորել Հայաստանի անկախությունը՝ այնպիսի սահմաններով, որոնցում կներառվեր Թուրքահայաստանի որոշ մասը⁵³: Այնուհետև ՌԿ(Բ)Կ ԿԿ-ին ուղղված մեկ այլ՝ դեկտեմբերի 6-ի նամակում նա պնդում էր, որ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանները պետք է որոշվեն խառը հանձնաժողովի միջոցով՝ ՌՍԴԽՀ մասնակցությամբ՝ ներառելով Թուրքահայաստանի որոշ մասը⁵⁴: Այս կապակցությամբ ԹԱՄԺ կառավարության արտգործկոմիսարի պաշտոնակատար Ահմեդ Մուխթարը դեկտեմբերի 15-ին Գ. Չիչերինին ուղղված նոտայով ցանկանում էր իմանալ, թե Մոսկվան ինչ դիրք է գրավելու Հայկական հարցի առնչությամբ. «Մեզ լուրեր են հասնում, որ դուք ցանկանում եք մեր մեջ եղած դաշինքը վերացնել և Հայաստանին վերադարձնել թուրք բնակչությամբ հողամասերը»⁵⁵: Բացի այդ՝ փաստերը ցույց են տալիս, որ, ի տարբերություն Ի.

53 Տե՛ս «Геноцид армян», т. 2, ч. 2, էջ 413:

54 Տե՛ս նույն տեղում, էջ 414:

55 ՀԱԱ, ֆ. 1022, ց. 4, գ. 72, թ. 24-25:

Ստալինի և ԿԿ մյուս անդամների, Գ. Չիչերինը թուրքերին ցույց տրվելիք ռազմական և ֆինանսական օգնությունը պայմանավորում էր նրանց՝ Հայաստանի ռազմակալած շրջաններից հեռացմամբ և Արևմտահայաստանի որոշ տարածքների վերադարձով⁵⁶:

ԹԱՄԺ կառավարության արտգործկոմիսարի պաշտոնակատար Ա. Մուխթարը Անգորայից Գ. Չիչերինին ուղղված մեկ այլ՝ դեկտեմբերի 27-ի նոտայում պահանջում էր այդ խնդրի պարզաբանում և առաջացած հակասության վերացում, այլապես անօգուտ էր համարում խորհրդաժողովի հրավիրումը: Ավելին՝ Ա. Մուխթարը դիվանագիտական շանտաժի լեզվով սպառնում էր, որ հակառակ դեպքում թուրք ժողովուրդը կարող է կողմնորոշվել (շրջվել) դեպի Արևմուտք⁵⁷: Քեմալականները համաձայն չէին անգամ 1914 թ. ռուս-թուրքական նախկին սահմանագծին, էլ ի՞նչ խոսք կարող էր լինել Վանի, Բիթլիսի և Մուշի մասին: Սակայն, ինչպես պարզվում է, այս անգամ էլ Գ. Չիչերինի ցուցաբերած հայանպաստ մոտեցումները ըմբռնում ու աջակցություն չեն գտնում Քաղբյուրոյում: Հայկական տարածքների հարցում Գ. Չիչերինի դիրքորոշման վերաբերյալ թուրք ռազմական և դիվանագիտական ներկայացուցիչներ՝ Արևելյան ռազմաձևակառուցիկ հրամանատար Բ. Կարաբեքիր փաշային, ՌՍԴԽՀ նորանշանակ դեսպան Ալի Ֆուադ փաշային, Յուսուֆ Քեմալին, Ռիզա Նուրբեյին որոշ պարզաբանումներ է տվել Թուրքիայում ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցիչ նշանակված Բ. Մդիվանին: Վերջինս 1921 թ. հունվարի սկզբին Ալեքսանդրապոլից տեղափոխվեց Կարս, իսկ ամսվա վերջին պիտի ուղևորվեր Անգորա: Նրա նկարագրմամբ՝ Գ. Չիչերինի նման դիրքորոշման նպատակը եղել է «հանգստացնել Անգլիային ու եվրոպական պրոլետարիատին» և ցույց տալ նրանց, թե իբր Խորհրդային Ռուսաստանը մտահոգ է հայկական հողերի հարցով: Մդիվանին վստահեցրել է թուրք պատվիրակներին, որ Մոսկվայի խորհրդաժողովում նման հարց չի բարձրացվի, և խորհրդաժողովի աշխատանքներին կխառնվի ազդությունների գործերի կոմիսար Ի. Ստալինը⁵⁸:

Հավատարմորեն առաջ տանելով Հայկական հարցում Վ. Լենինի ու ԿԿ Քաղբյուրոյի մեծամասնության որդեգրած գիծը իր թուրքամետ կեցվածքով հայտնի այս վրաց կոմունիստը խելամիտ քայլ չէր համարում Վանը, Մուշը և Բիթլիսը պահանջելը: Վավերագիր նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թուրքական պատվիրակության՝ Մոսկվա ուղևորության ձգձգման գլխավոր խոչընդոտը եղել է Գ. Չիչերինի՝ ժամա-

56 Տե՛ս «Геноцид армян», т. 2, ч. 1, էջ 259-260:

57 Տե՛ս «Геноцид армян», т. 2, ч. 2, էջ 342:

58 Տե՛ս «Геноцид армян», т. 2, ч. 1, էջ 358:

նակին ներկայացրած առաջարկը՝ Վանը, Բիթլիսը և Մուշը Հայաստանին վերադարձնելու վերաբերյալ:

Խորհրդաժողովի նախապատրաստական փուլում Գ. Չիչերինի կողմից Վանի, Մուշի և Բիթլիսի հարցի բարձրացումը քեմալականների շրջանում ոչ միայն դժգոհության ալիք էր բարձրացրել, այլև նրանք հայտարարություններ էին արել, որ այդ դեպքում Թուրքիան ստիպված կլինի մերձեցման ուղիներ փնտրել Անտանտի հետ: Ստացվում է, որ թուրքերը վստահ էին, որ Արևմտահայաստանի նահանգները Անտանտը չէր վերադարձնի Հայաստանին, չնայած որ ամիսներ առաջ ստորագրվել էր Սևրի պայմանագիրը, և անգամ ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը գծել էր հայ-թուրքական սահմանը: Ինչպես տեսնում ենք, թուրքերի նման երկակի խաղերը և քաղաքական շանտաժները տալիս էին իրենց համար ցանկալի արդյունքներ:

Մոսկվա մեկնող թուրքական պատվիրակությունը 1921 թ. հունվարի կեսերին արդեն Կարսում էր, սակայն չէր շտապում՝ սպասելով խորհրդային կառավարության կողմից Արևմտահայաստանից տարածքային զիջումների պահանջ չներկայացվելու իր նախապայմանի հստակեցմանը: Այս կապակցությամբ Անդրկովկասի փաստացի ղեկավար Ս. Օրջոնիկիձեն հունվարի 14-ին Գ. Չիչերինին ուղղած հեռագրում առաջարկում էր բավարարել թուրքերի նախապայմանը, այն է՝ Մոսկվայի խորհրդաժողովի օրակարգից հանել հայկական Վան, Մուշ և Բիթլիս մարզերի հարցի քննարկումը⁵⁹:

Թուրքական պատվիրակությունը՝ թվով 45 մարդ, սպասում էր Գ. Չիչերինի՝ Ահմեդ Մուխթարի նոտային տրվելիք պատասխանին: Իսկ մինչ այդ թուրքական պատվիրակությունը Կարսում նախնական բանակցություններ էր վարում ՌՄԴԽՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Մդիվանիի հետ: Վերջինս խորհրդային ղեկավարության անունից թուրքական կողմին պաշտոնապես հավաստիացնում է, որ «Խոսք չի կարող լինել Թուրքիայի կողմից Հայաստանին տարածքային զիջումների մասին»⁶⁰: Ի վերջո, Բ. Մդիվանիի այդ հավաստիացումը բավարարում է թուրքերին, ինչի համար հունվարի 30-ին Ահմեդ Մուխթար փաշան շնորհակալական նոտա է հղում Գ. Չիչերինին: Այս կապակցությամբ ուշադրության է արժանի նաև հետևյալ դրվագը: Հունվարի 20-ին Կարսում թուրքերի հետ նախնական բանակցությունների ավարտից հետո, Մդիվանին Օրջոնիկիձեն ուղղված վրացերեն նամակում մտահոգություն էր հայտնում, որ Մոսկվայում Հայաստանի և Թուրքիայի խնդրում առկա են հակադիր տեսակետներ. Ե-

59 Տե՛ս նույն տեղում, էջ 352:

60 ДВП СССР, т. 3, с. 469.

թե «Լենինը և Ստալինը ինձ հուշում են,- գրում էր նա,- որ Կարսի համար թուրքերի հետ վիճել չի կարելի, ապա Չիչերինը, պարզվում է, պահանջել է Վանը և Մուշը»⁶¹:

Չիչերինի կողմից թուրքերին ներկայացված հիշյալ տարածքային պահանջի մասին հայտնի է դառնում նաև Ստալինին, ով շտապում է իր մտահոգությունները կիսել Վ. Լենինի հետ: Նա փետրվարի 12-ին Վ. Լենինին ուղղված ձեռագիր նամակ է գրել՝ կոպիտ, հեզնական ու անվայելուչ արտահայտություն թույլ տալով Գ. Չիչերինի հասցեին. «Ընկ. Լենին,- գրում էր Ի. Ստալինը,- ես միայն երեկ տեղեկացա, որ Չիչերինը իսկապես ինչ-որ ժամանակ **հիմար և սադրիչ** (տեքստում՝ պրովոկացիոն - Ա. Հ.) պահանջ է ներկայացրել թուրքերին Վան, Մուշ և Բիթլիս մարզերը մաքրելու մասին, որոնցում թուրքերը կազմում են ճնշող մեծամասնություն: Դա հայկական իմպերիալիստական պահանջ է և չի կարող լինել մեր պահանջը: Հարկավոր է արգելել Չիչերինին թուրքերին նոտա ուղարկել ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով»⁶²: Ի. Ստալինի այդ դիտողությունը, ըստ ամենայնի, արժանացել է Վ. Լենինի, նաև Ս. Օրջոնիկիձեի, Բ. Մոլոտովի և մյուսների հավանությանը:

Իր հերթին Հայկական հարցում Չիչերինի դիրքորոշման կապակցությամբ իր բացասական վերաբերմունքն է արտահայտել Անդրիեդկոմի նախագահ Ն. Նարիմանովը: Փետրվարի 16-ին Վ. Լենինին ուղղված նամակում նա զգուշացնում էր, որ «Չիչերինը շփոթում է Արևելյան հարցը: Նա չափից ավելի է **հրապուրված Հայկական հարցով** (ընդգծումը մերն է - Ա. Հ.) և հաշվի չի առնում, որ հենց այդ հարցի պատճառով կարող են խզվել անգորացիների հետ կապերը: Եվ եթե ուզում ենք Ադրբեջանը պահել մեզ, մենք պետք է, ինչ էլ լինի, անգորացիների հետ կնքենք ամուր դաշինք»⁶³: Այդ ամենի արդյունքը լինում է այն, որ թուրքական պատվիրակությունը, համոզված լինելով, որ այլևս Հայաստանի օգտին տարածքային որևէ պահանջ չի ներկայացվի, վստահորեն ուղևորվում է Մոսկվա:

Այսպիսով՝ ռուս-թուրքական 1-ին խորհրդաժողովից մինչև 2-րդը Արևմտահայաստանի մի քանի երկրամասեր Հայաստանին վերադարձնելու վերաբերյալ Գ. Չիչերինի մոտեցումը, որն արտացոլում էր դեռևս ժամանակավոր կառավարության կողմից ձևակերպված Ռուսաստանի՝ որպես պետության ազգային-պետական շահերը, չի արժանացել ոչ միայն թուրքերի, այլև խորհրդային կուսակցական ու պետական բարձ-

61 Նույն տեղում:

62 «Геноцид армян», т. 2, ч. 1, с. 374, տե՛ս նաև **Խաչատրյան Կ.**, նշվ. աշխ., էջ 120-121:

63 «Геноцид армян», т. 2, ч. 1, с. 379.

րագույն ղեկավարության՝ Վ. Լենինի, Ի. Ստալինի և մյուսների հավանությանն ու աջակցությանը: Այս գործում իրենց «ծառայություններն» են մատուցել նաև Բ. Մդիվանին, Ս. Օրջոնիկիձեն, Ն. Նարիմանովը և ուրիշներ, հետ չեն մնացել նաև որոշ հայ կոմունիստներ: Օրինակ՝ Անաստաս Միկոյանը գտնում էր, որ պետք է պայքարել հայկական բուրժուազիայի իմպերիալիստական ձգտումների դեմ, որը «նպատակ ունի զավթել Թուրքիայի մեծ մասը»⁶⁴ և այլն:

Մոսկվայի խորհրդատուների նախօրյակին թուրք պատվիրակները հանդիպում են ունենում նաև ՌՍԴԽՀ արտգործոժողկոմ Գ. Չիչերինի հետ, ով ակնարկով նրանց հասկացնում է, որ Հայաստանի վերաբերյալ թեման կարելի է համարել փակված⁶⁵: Ռուս-թուրքական խորհրդատուների բացման օրը՝ փետրվարի 26-ին, Վ. Լենինը անձամբ ընդունում է թուրք պատվիրակներին և տալիս համապատասխան երաշխիքներ⁶⁶:

5. Անդրադարձներ Սևրի պայմանագրին Մոսկվայի ռուս-թուրքական 2-րդ խորհրդատուական կոմիտեի 16-ի (18-ի) պայմանագրում

Հայտնի է, որ սկզբնապես նախատեսված էր, որ խորհրդա-թուրքական 2-րդ խորհրդատուական կոմիտեի պետք է լիներ քառակողմ՝ Հայաստանի և Ադրբեջանի մասնակցությամբ: Այդ առաքելությամբ Մոսկվա մեկնեց խորհրդային Հայաստանի պատվիրակությունը՝ արտգործոժողկոմ Ալ. Բեկզադյանի գլխավորությամբ: Սակայն Մոսկվա հասնելուն պես թուրքական պատվիրակությունը, իբրև թե հայերի հետ բանակցելու լիազորություն չունենալու պատճառաբանությամբ, դեմ արտահայտվեց Հայաստանի (նաև Ադրբեջանի) պատվիրակության մասնակցությանը խորհրդատուական կոմիտեի կողմից: Ալ. Բեկզադյանի խոսքերով՝ «իրենք ցանկություն չունեն խոսել հայերի հետ»⁶⁷: Հասկանալի է, որ այդպես թուրքերը գլուխները կազատեին հայերի կողմից տարածքային պահանջի առաջադրման «գլխացավանքից»: Ռուսական կողմը լռությամբ ընդունեց այդ փաստը, և այդպիսով գումարվելիք խորհրդատուական կոմիտեի փոխարեն վերածվեց երկկողմի՝ ռուս-թուրքականի: Այնինչ հունվարի 18-ին Ալ. Բեկզադյանի գլխավորած՝ 12 հոգուց բաղկացած հայկական պատվիրակությունը Մոսկվա էր ուղևորվել պատմաաշխարհագրական, ազգագրական համապա-

64 Հակոբյան Ա., խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 142:

65 Տե՛ս Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 441:

66 Տե՛ս «В. И. Ленин и Советская внешняя политика», М., 1969, էջ 116:

67 ՀԱՍ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 25:

տասխան նյութերով, հայկական կողմի մշակած տարածքային-սահմանային առաջարկների հայանպաստ չորս տարբերակներով, համապատասխան հիմնավորումներով ու քարտեզներով, նաև լավատեսական ակնկալիքներով⁶⁸: 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի Դրո-Լեզրան համաձայնագրով՝ «Անկախ Սոցիալիստական Հանրապետության»⁶⁹ կարգավիճակ ունեցող Հայաստանի պատվիրակությանը չթույլատրվեց մասնակցել Հայաստանի կենսական շահերին անդրադարձող խորհրդաժողովին, ուստի ամենևին ուշադրության չարժանացավ հայ պատվիրակների բերած առաջարկների փաթեթը: Բայց փաստավաճեցրազիր տվյալներ կան, որ, նախքան հայ պատվիրակության ուղևորությունը Մոսկվա արևմտահայ գաղթականները հույս ունեին, որ ինչ-որ չափով լուծում կտրվի Հայկական հարցին, և իրենք հնարավորություն կստանան վերադառնալու իրենց կարոտած հայրենի երկիրը: Հայաստանի արտգործժողովումի տեղակալ Ասք. Մռավյանը դեռ փետրվարի 13-ին Երևանից Բաքվի միջոցով հեռագրում էր Մոսկվա՝ Ալ. Բեկզադյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին՝ հայտնելով, որ «արևմտահայերը լուրջ կերպով քննարկում են թուրքահայ հարցը Մոսկվայի խորհրդաժողովում բարձրացնելու վերաբերյալ»⁷⁰: Նա ցանկանում էր ճշտել Մոսկվայի վերաբերմունքը Հայկական հարցում և այն խորհրդաժողովում բարձրացնելու հնարավորությունը:

1921 թ. փետրվարի 26-ին ռուս-թուրքական խորհրդաժողովի հանդիսավոր բացումից և պատվիրակությունների ղեկավարներ Գեորգի Չիչերինի և Յուսուֆ Քեմալ բեյի ելույթներից հետո Գ. Չիչերինը առաջարկեց բանակցությունների հիմքում դնել ավելի քան կես տարի առաջ՝ 1920 թ. օգոստոսի 24-ին նախաստորագրված ռուս-թուրքական պայմանագրի նախագիծը՝ միաժամանակ հաշվի առնելով անցած յոթ ամիսների իրողություններն ու փոփոխությունները: Բայց և դրա կողքին տարածքային-սահմանային հարցերում կրկին շրջանառության մեջ են դրվում թուրքական «Ազգային ուխտ»-ի սկզբունքները:

Հարկ է հիշեցնել, որ, Մոսկվայի բանակցություններին գրեթե զուգահեռ (փետրվարի 21-ից մարտի 14-ը), Լոնդոնում բանակցություններ են ընթացել Անտանտի (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Բելգիա, Հունաստան) երկրների և պարտված Գերմանիայի ու Թուրքիայի ներկայացուցիչների միջև, ընդ որում, Թուրքիան ներկայացել էր երկու՝ Կ. Պոլսի սուլթանական և Անգորայի (ԱՄԺ) պատվիրակություններով, չնայած վերջինս չուներ միջազգային-իրավական ճանաչում: Թուրքերի

68 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2c, գ. 36, թ. 33, գ. 27, թ. 14:

69 «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 383:

70 ՀԱԱ, ֆ. 114, ց. 2c, գ. 18, թ. 58:

գերնպատակը Սևրի պայմանագրի վերանայումն էր և, վերջին հաշվով, խափանումը: ԱՄժ կառավարության պատվիրակությունը գլխավորում էր արտագործողկոմ Բեքիր Սամի բեյը: Հատկանշական է, որ Լոնդոնում բանակցությունների էր ուղարկվել նախարար Բեքիր Սամին, իսկ Մոսկվայում՝ միայն նրա տեղակալը՝ Յուսուֆ Քեմալ բեյը: Ուշագրավ է, որ Լոնդոնի խորհրդաժողովում թուրքական երկու պատվիրակությունները գործում էին համախորհուրդ և ի վերջո հասան այն բանին, որ, խաղարկելով Անտանտի հետ մերձենալու քարտը, կարողացան Ռուսաստանից քաղաքական նոր շահաբաժիններ կորզել, իհարկե, առաջին հերթին Հայաստանի հաշվին: Իսկ այդ համատեքստում Հայաստանի համար հանգամանքները շատ աննպաստ էին: Սևրի պայմանագրի ստորագրումից ի վեր Հայաստանը պարտվել էր Թուրքիայի հետ անհավասար պատերազմում, կնքվել էր Ալեքսանդրապոլի ծանր պայմանագիրը, Հայաստանը խորհրդայնացել էր, իսկ 1921 թ. Փետրվարյան ապստամբությամբ Հայաստանում տապալվել էր խորհրդային իշխանությունը և այլն:

Այսպիսով՝ Թուրքիան, Անտանտ-Ռուսաստան երկակի քաղաքական խաղեր խաղալով, կարողացավ խարխլել Սևրի պայմանագրի հիմքերը և Ռուսաստանից ավելի մեծ գիշումներ կորզել:

Ռուսների հետ բանակցություններ վարելիս թուրքերի համար շարունակում էր սկզբունքային մնալ «Ազգային ուխտ»-ի ճանաչումը, որից էլ կբխեր տարածքային-սահմանային խնդիրների լուծումը: 1920 թ. օգոստոսի 24-ի խորհրդա-քեմալական պայմանագրի նախագծով ՌՍԴԽՀ-ն սկզբունքորեն ճանաչում էր թուրքական «Ազգային ուխտ»-ը, որի հիմնադրույթներն էլ դրվեցին Մոսկվայի 2-րդ խորհրդաժողովի բանակցությունների հիմքում: Եթե խորհրդային կողմը բանակցությունների ընթացքում տարածքային-սահմանային ինչ-որ հարց է բարձրացրել, ապա դա վերաբերել է գերազանցապես Բաթումին: Խորհրդային կողմը ոչ միայն հայանպաստ որևէ պահանջ չդրեց, այլև համաձայնեց այն բանին, որ թուրքական, այսպես կոչված, «Ազգային ուխտ»-ի մեջ բնավ չմտած և առհասարակ Օսմանյան կայսրության կազմում չեղած, նախկինում Երևանի նահանգի մաս կազմող Սուրմալուի գավառը՝ հայոց խորհրդանիշ Մեծ ու Փոքր Մասիսներով, հանձնվի Թուրքիային: Իրականում տեղի ունեցավ տարածքների լկտի առևտուր, այն է՝ պայմանագրի 2-րդ հոդվածով Բաթումի մարզի ընդամենը 6254 քառ. վերստ տարածքի ուղիղ կեսը հանձնվեց Վրաստանին, դրա դիմաց (առանց Հայաստանի ու հայ ժողովրդի գիտության) Թուրքիան ստացավ Սուրմալուի գավառը՝ 3174

քառ. վերստ տարածքով⁷¹: Տարածքային այս փոխանակությունը խորհրդային կողմը հիմնավորեց նրանով, որ Բաթումը Անդրկովկասի խոշորագույն նավահանգիստն է՝ ծովային դարպասը, և կենսական նշանակություն ունի երկրամասի համար: Կարելի է վստահորեն արձանագրել, որ Հայաստանի համար տարածքային կորուստների առումով Մոսկվայի պայմանագիրը ավելի վնասաբեր եղավ, քան նույնիսկ Բրեստ-Լիտովսկինը:

Բացի Սուրմալուից՝ թուրք-ադրբեջանական կողմի օգտին լուծվեց նաև Արևելյան Հայաստանի օրգանական մասը կազմող մեկ այլ՝ Նախիջևանի մարզի հարցը՝ Շարուր-Շահթախտիով հանդերձ: Թուրքերը հասան նրան, որ փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի 3-րդ հոդվածով որոշվեց Արաքս գետի ձախ ափին ձգվող և իրենց կողմից բռնագավթված (օկուպացված) Նախիջևանի մարզը՝ շուրջ 5500 քառ. կմ տարածքով, իբրև «ինքնավար տարածք հանձնել Ադրբեջանի խնամակալության ներքո պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության»⁷²: Ինքնին հասկանալի է՝ երրորդ պետություն ասելով նկատի էր առնվում Հայաստանը:

Եթե Մոսկվայի մարտի 16-ի (18-ի) ռուս-թուրքական 16 հոդվածանոց պայմանագիրը բովանդակային առումով համեմատենք դրան նախորդած օգոստոսի 24-ի նախաստորագրված 8 հոդվածանոց նախագծի հետ, ապա ակներև է դառնում, որ վերջինը դրված է եղել առաջինի հիմքում, առանձին հոդվածներ պարզապես նույնական են ու կրկնվում են, իսկ տեղ-տեղ էլ հավելվել ու վերախմբագրվել են:

Այսպես՝ Սևրի պայմանագիրը չճանաչելու և խափանելու առնչությամբ, Մոսկվայի պայմանագրի հենց 1-ին հոդվածով՝ «ՌՍԴԽՀ կառավարությունը համաձայն է չճանաչել Թուրքիային վերաբերող և այսօր Թուրքիայի Ազգային մեծ ժողովը ներկայացնող նրա ազգային կառավարության կողմից չճանաչված որևէ միջազգային ակտ»⁷³: Ինքնին հասկանալի է, որ այդ դրույթը վերաբերում էր առաջին հերթին Ռուսաստանի կողմից Սևրի պայմանագրի չճանաչմանը: Այնուհետև այդ նույն հոդվածի երկրորդ մասում, ինչպես որ օգոստոսի 24-ի նախաստորագրված նախագծում էր, դարձյալ բառացի կրկնվում էր, որ «Թուրքիա հասկացության տակ սույն պայմանագրում նկատի են առնվում այն տարածքները, ո-

71 Стен **Завриев Д.**, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947, էջ 69-70:

72 ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 60, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 12:

73 «Հայաստանը... փաստաթղթերում», էջ 500: Տեն նաև «Պայմանագիր 1921 թ. մարտի 16-ի Ռուսաստանի և Թուրքիայի միջև», Եր., 1991, էջ 2:

րոնք մտցված են 1920 (1336)⁷⁴ թվականի հունվարի 28-ի թուրքական Ազգային ուխտի մեջ, որը Կ. Պոլսում մշակել և հռչակել է Օսմանյան պատգամավորների պալատը»⁷⁵ և այլն:

Ի վերջո, Մոսկվայի այս հակահայկական պայմանագրից արդեն մի քանի ամիս անց Կարսում խորհրդային կառավարության պարտադրանքով կնքված 1921 թ. հոկտեմբերի 13-ի այս անգամ արդեն թուրք-անդրկովկասյան պայմանագրով, ըստ էության, վերահաստատվեցին Մոսկվայի պայմանագրի հայավնաս հոդվածները և «Ազգային ուխտ»-ից բխող տարածքային-սահմանային պահանջները:

Այսպիսով, սկսած ռուս-թուրքական 1920 թ. 1-ին խորհրդաժողովի արդյունքում 1920 թ. օգոստոսի 24-ին նախաստորագրված պայմանագրի նախագծից մինչև Մոսկվայի ռուս-թուրքական 2-րդ խորհրդաժողովը և դրա արդյունքում 1921 թ. մարտի 16-ին (իրականում՝ 18-ին) կնքված վերջնական պայմանագիրը, Խորհրդային Ռուսաստանի կառավարության որդեգրած քաղաքական դիրքորոշումը հայ ժողովրդի համար նվիրական Սևրի պայմանագրի վերաբերյալ, մեղմ ասած, եղել է ոչ հայանպաստ: Ավելին՝ այն արմատապես հակասել է Ռուսաստանի բոլոր նախորդ կառավարությունների ռազմավարական նպատակներին ու դրանց իրացման հետևանքով ստորագրված փաստաթղթերին: Իրողությունն այն է, որ ռուս-թուրքական 1920 թ. օգոստոսի 24-ի «բարեկամության» պայմանագրի նախագիծը և դրա տրամաբանական շարունակությունը հանդիսացող 1921 թ. մարտի 16-ի (18-ի) «բարեկամության և եղբայրության» պայմանագիրը հիմնականում ուղղված են եղել Սևրի պայմանագրի խափանմանը: Ակներև է, որ ՌԿ(Բ)Կ ԿԿ-ն և ՌՍԴԽՀ կառավարությունը Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ վարել են ծայրաստիճան աննպաստ քաղաքականություն: Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, միջազգայնորեն ճանաչված չլինելով, ոչ միայն չընդունեց ու չճանաչեց Առաջին աշխարհամարտի արդյունքներից մեկը համարվող Սևրի պայմանագիրը, այլև Հայաստանի տարածքների հաշվին առատ զիջումներ արեց այդ պատերազմում պարտված Թուրքիային, ավելին՝ նրան ռազմաֆինանսական ու քաղաքական օգնություն ցուցաբերեց՝ սին հույներ փայփայելով, թե «Արևելքի հեղափոխության միջնաբերդ» Թուրքիան կխորհրդայնանա, և «հեղափոխական կրակը» կտարածվի մուսուլմանական աշխարհում:

Իր հերթին քեմալական Թուրքիան, կեղծ հեղափոխություն ու բարեկամություն խաղալով բոլշևիկյան Ռուսաստանի հետ և օգտագործելով

74 Սա տրված է մուսուլմանական հիջրայի տարեթվով:

75 «Հայաստանը... փաստաթղթերում», էջ 500:

Արևմուտքի տերությունների միջև եղած հակասությունները, ոչ միայն պատիժ չկրեց Հայոց ցեղասպանության համար ու չվերադարձրեց Սևրի պայմանագրով նախատեսված Արևմտահայաստանի նահանգները, այլև Մոսկվայի պայմանագրերով (նախագծով և բուն պայմանագրով) նույնիսկ որպես պարզև ստացավ Արևելյան Հայաստանի տարածքների մի մասը: Ավելին՝ քեմալականները գերակատարեցին «Ազգային ուխտ»-ով նախատեսված իրենց տարածքային պահանջների պլանը: Խորհրդային Ռուսաստանի թողտվությամբ նրանք տիրացան նաև Սուրմալուին և Նախիջևանին՝ երկրամասեր, որոնք երբևէ Օսմանյան Թուրքիայի կազմում չեն եղել, ընդ որում, Սուրմալուն պահեցին իրենց, իսկ Նախիջևանը նվիրեցին իրենց ցեղակից Ադրբեջանին:

Կյանքը ցույց տվեց, որ թուրքերի «բարեկամությունը և եղբայրությունը» կեղծ ու շինծու էին, իսկ նրանց «հեղափոխությունն ու սոցիալիզմը»՝ խաբկանք, որոնք ասպարեզ էին նետվել որոշակի շահերի թելադրանքով:

Բնավ նպատակ չունենալով արդարացնել Հայաստանի դաշնակից համարվող պետությունների՝ Ֆրանսիայի, Իտալիայի, իսկ վերջում նաև Անգլիայի ռազմաքաղաքական կեցվածքը, որոնք ևս ունեն մեղքի ու պատասխանատվության իրենց բաժինը իրենց իսկ ստորագրած Սևրի պայմանագրի նպատակներն անկատար թողնելու գործում, այնուամենայնիվ, փաստավաճերագիր նյութերի քննությունը հանգեցնում է այն հետևությանը, որ Թուրքիայից հետո Խորհրդային Ռուսաստանը երկրորդ պետությունն էր, որ շահագրգռված է եղել Սևրի պայմանագրի ծախողմամբ և իր գործնական քաղաքականությամբ վճռական դեր է խաղացել դրանում: Պատմական իրողությունն այն է, որ ՌՍԴԽՀ կառավարությունը, Մոսկվայի պայմանագրերով ծառայություն մատուցելով թուրքերին, բացահայտորեն դուրս եկավ Սևրի պայմանագրի դեմ՝ դրանով իսկ իր պաշտպանության տակ առնելով այդ տարիներին իր ռազմավարական գործընկեր համարվող Թուրքիային: Ավելին՝ կարելի է ասել, որ նրանք համատեղ ուժերով բզկտեցին Հայաստանի տարածքները և բաժանեցին իրենց միջև: Սևրի պայմանագրի վերաբերյալ Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշման կապակցությամբ անցած մեկդարյա պատմական փորձը մեզ հուշում է դրսևորել քաղաքական իմաստություն, զգոնություն ու սթափություն և առաջնորդվել մոդեռնիստ այն պարզ ճշմարտությամբ, որ հայոց համապետական ու համազգային նշանակության մեծ ու փոքր խնդիրների լուծման միակ վստահելի ուժն ու երաշխիքը կարող են լինել Հայաստանն ու համայն հայ ժողովուրդը:

Գլուխ հինգերորդ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԼՈՁԱՆ

1. Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը Հայկական հարցում 1920-1923 թթ.

Դեռևս 1920 թ. ապրիլի 19–26-ը տեղի ունեցած Սան Ռեմոյի (Իտալիա) խորհրդածողովի նախօրեին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջի նախածեռնությամբ դաշնակից տերությունների¹ զինվորական ներկայացուցիչները քննարկեցին Օսմանյան կայսրության նկատմամբ ռազմական պատժամիջոցների հարցը, եթե վերջինս հրաժարվեր իրագործել Անտանտի երկրների հետ ստորագրվելիք հաշտության պայմանագրի դրույթները: Որովհետև նրանց կարծիքով՝ չնայած նախկինում տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության պահպանման համար Օսմանյան կայսրությանը Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի ցուցաբերած օգնությանը՝ 1914 թվականին վերջինս անցել էր Գերմանիայի կողմը:

Բրիտանացիների նման դիրքորոշումը բխում էր նաև 1916 թ. նոյեմբերի 9-ին լոնդոնյան Սիթիի քաղաքապետարանում՝ Հիլդիոլլում, նախկին վարչապետ Հերբերտ Հենրի Ասքվիթի արած պաշտոնական հայտարարությամբ Հայաստանի ազատագրության և հայ ժողովրդի փրկության վերաբերյալ Մեծ Բրիտանիայի ստանձնած միջազգային պարտավորությունից²: Բայց քանի որ ռազմական օժանդակության կազմակերպումը կախված էր նյութական միջոցներից և «անհաղթահարելի բեռ» էր հսկայական պատերազմական կորուստներ ու վնասներ

1 Դաշնակից տերությունները բաժանված էին երկու խմբի՝ զխավոր դաշնակից տերությունների և դաշնակից տերությունների: Գլխավոր դաշնակից տերություններն էին Բրիտանական կայսրությունը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, իսկ դաշնակից տերությունները՝ Պորտուգալիան, Բելգիան, Հունաստանը, Լեհաստանը, Ռումինիան, Սերբա-խորվաթա-սլովենական պետությունը, Չեխոսլովակիան, Հայաստանը, Հեջազը: Տես Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), պրոֆ. **Զ. Ս. Կիրակոսյանի** խմբագրությամբ, Եր., 1972, փաստ. N 338, էջ 676:

2 Տես Геноцид армян: ответственность Турции и обязательство мирового сообщества: документы и комментарии. Т. 2, ч. 2. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментариев **Ю. Г. Барсегов**. Москва, 2005, էջ 186: Հայաստանի ազատագրության վերաբերյալ Անտանտի կառավարությունների ղեկավարների և արտգործնախարարների հայտարարությունների ու պառլամենտական ելույթների պատկառելի շարքում ժամանակագրական առումով առաջինը Մեծ Բրիտանիայի վարչապետ Հ. Հ. Ասքվիթի վերոնշյալ հայտարարությունն էր: Այս մասին տես նույն տեղում, էջ 225–226:

կրած եվրոպական պետությունների համար, ուստի 1920 թ. ապրիլի 18-ին Սան Ռեմոյի Դեպարտմանտանը կայացած հանդիպման ժամանակ Դ. Լյոյդ Ջորջը Մեծ Բրիտանիայի դաշնակից երկրների՝ Ֆրանսիայի ու Իտալիայի պատվիրակությունների ղեկավարներին առաջարկեց դիմել աշխարհի ամենահարուստ պետությանը՝ ԱՄՆ-ին, որպեսզի վերջինս Հայաստանին, իբրև օգնություն, 10 մլն ֆունտ ստեռլինգի փոխառություն տրամադրի³:

Միննույն ժամանակ, 1920 թ. ապրիլի 20-ին դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի հանդիպման ընթացքում նա առաջարկեց դիմել ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին՝ վերցնելու Հայաստանի մանդատը՝ հովանավորությունը⁴: Ճիշտ է, դեռևս 1919 թ. աշնանը ամերիկյան միասնական մանդատի նպատակահարմարությունն ուսումնասիրելու նպատակով Կոստանդնուպոլսից Անատոլիա, Արևմտյան Հայաստան և Անդրկովկաս էր ժամանել ամերիկյան գեներալ Ջեյմս Հարբորդի բազմամարդ ռազմական հանձնախումբը, այնուամենայնիվ, ԱՄՆ-ի՝ հայկական պետության հովանավորը լինելու և Հայաստանի պետական սահմանների որոշման ժամանակ միջնորդի դերում հանդես գալու հարցերը հանգամանորեն քննարկվեցին դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի Սան Ռեմոյի խորհրդաժողովում: Այն դարձավ Օսմանյան կայսրության հետ Դաշնակից տերությունների հաշտության պայմանագրի մշակման կարևոր շրջափուլերից մեկը: Նրա աշխատանքներին մասնակցել են Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների ղեկավարները, ինչպես նաև Ճապոնիայի ու ԱՄՆ-ի ներկայացուցիչները՝ դիտորդի կարգավիճակով: Հունաստանի ու Բելգիայի ներկայացուցիչները խորհրդաժողովին մասնակցել են միայն իրենց պետությանը վերաբերող հարցերի քննարկման ժամանակ: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա վերջինս հեռու էր եվրոպական պետությունների մրցակցությունից ու փոխադարձ անբարյացակամությունից: Մասնակցություն չէր ունեցել և, հետևաբար, շահագրգռվածություն չուներ եվրոպական դարավոր վեճերում, ինչը երաշխավորում էր ԱՄՆ-ի անկողմնակալությունը թե՛ Հայաստանի հովանավորի դերում և թե՛ իբրև միջնորդ պետություն Հայաստանի ու Օսմանյան կայսրության միջև սահմանագծի որոշակիացման ժամանակ: Իսկ ԱՄՆ-ի ֆինանսատնտեսական ու ռազմաքաղաքական հզորությունն ապահովելու էր Հայկական հարցի վերաբերյալ այդ պետության

3 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. N 331, էջ 619:

4 Նույն տեղում, փաստ. N 332, էջ 634:

կայացրած որոշումների ազդեցիկությունը⁵: Ուստի նման առաջարկով հանդես գալով՝ Դ. Լլոյդ Ջորջը նպատակ ուներ Վաշինգտոնի կառավարությանը դնել այնպիսի դրության մեջ, որ նա հարկադրված լիներ կանգնել, կան մերժել Հայաստանի Հանրապետությանը: Անգլիական դիվանագիտական փաստաթղթերը վկայում են, որ այս կերպ Դ. Լլոյդ Ջորջը ցանկանում էր ապահովագրել Անգլիային, քանի որ մերժման դեպքում ԱՄՆ-ի կառավարող շրջաններն այլևս հիմք չէին ունենա դաշնակիցներին մեղադրելու Հայաստանը պաշտպանելու անկարողության մեջ⁶:

«Հ հովանավորի դերում ԱՄՆ-ին տեսնելու դաշնակիցների հույսերը չարդարացան: 1920 թ. հունիսին ԱՄՆ-ի Կոնգրեսը մերժեց Հայաստանի հովանավորությունը: Այդ առիթով Դ. Լլոյդ Ջորջն իր հուշերում նշում է, որ «հենց այդ պահից հայկական անկախ պետությունը վերածվեց անհուսալի նախագծի»⁷: Այնուամենայնիվ, 1920 թ. օգոստոսի 10-ին Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած դաշնակից տերությունների և պարտված Օսմանյան կայսրության միջև ստորագրված Սևրի հաշտության պայմանագրով առավել հստակ և հանգամանորեն, քան Հայկական հարցի վերաբերյալ նախընթաց միջազգային-իրավական փաստաթղթերում էր, ճանաչվեցին հայաթափված Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի անվիճելի ու արդարացի իրավունքները: Ըստ պայմանագրի 89-րդ հոդվածի՝ հենց ԱՄՆ-ին վերապահվեց անկախ Հայաստանի սահմանների գծումը⁸: Բացի այդ, սահմանվեց Հայաստանի կարգավիճակը՝ իբրև անկախ և միացյալ պետություն, քրեական պատիժ նախատեսվեց Հայոց ցեղասպանությունը կազմակերպած, իրականացրած, ինչպես նաև ոճրի ծրագրին գործակցած անձանց նկատմամբ:

Իր բոլոր անորոշություններով ու թերություններով հանդերձ՝ Սևրի պայմանագիրը միջազգային-իրավական հիմք էր բռնագաղթի ենթարկված հայությանը Հայրենիք վերադարձնելու, Հայաստանի տարածքում հայ ժողովրդի ազատ և անկախ ապրելու իրավունքն իրագործելու համար:

Հայկական անկախ պետության միջազգային իրավական կարգավիճակի և վերջնական սահմանների վերաբերյալ որոշումներ կայացնելիս դաշնակից տերությունները, հատկապես Մեծ Բրիտանիան, ստիպ-

5 Տե՛ս **Λοῦδ Δζορτζ Δ.**, *Правда о мирных договорах*, т. II. Москва, 1957, էջ 392:

6 Տե՛ս նույն տեղում, էջ 431–432:

7 Տե՛ս նույն տեղում, էջ 454:

8 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. N 338, էջ 676:

ված էին հաշվի առնել բուլշևիզմի հարաճուն վտանգի ներթափանցումը Հայաստան, որտեղից բացվում էր ճանապարհը դեպի Մերձավոր ու Միջին Արևելքի նավթառատ երկրներ: Եթե այս ուղղությամբ բրիտանական կառավարության գլխավոր խաղաքարտն Անդրկովկասում անկախ պետությունների ամուր շղթայի անխախտ պահպանումն էր իբրև պատնեշ Խորհրդային Ռուսաստանի ու քեմալական Թուրքիայի միջև, ապա վերջիններս, դրան հակառակ, ձգտում էին գործակցության միմյանց հետ: Այդ կերպ երկու երկրները նպատակ ունեին Սև ծովից ու Անդրկովկասից դուրս մղել Անգլիային, ինչը լիովին համապատասխանում էր քեմալական կառավարության այդ փուլում հետապնդած շահերին: Հարցն այն է, որ Մեծ Բրիտանիան Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական փուլում և դրան հաջորդած առաջին տարիներին եղել էր Թուրքիայի դեմ կռվող ու նրա նկատմամբ դիվանագիտական ճնշման քաղաքականություն վարող գլխավոր պետությունը: Բացի այդ, կապվելով Խորհրդային Ռուսաստանի հետ՝ քեմալական Թուրքիան ձգտում էր խուսափել դիվանագիտական մեկուսացումից:

Խորհրդա-քեմալական գործակցությունը բխում էր նաև Խորհրդային Ռուսաստանի շահերից: Վերջինս Անդրկովկասից բրիտանական գործի հեռանալուց հետո ստանձնել էր մահմեդականության պաշտպանի դերը, որը թափուր էր թողել Մեծ Բրիտանիան, և պարտավորվել էր օգնել գլխավոր մահմեդական պետությանը՝ Թուրքիային, որպեսզի դա չաներ արևմտյան որևէ պետություն: Բացի այդ, Թուրքիայի հետ մերձեցումը Խորհրդային Ռուսաստանի առջև բացում էր դեպի Պարսկաստան, Միջագետք, Հնդկաստան և Աֆղանստան առաջխաղացման հնարավորություններ, քանի որ կրոնական միասնության գործոնը կարևոր դեր էր խաղում մահմեդական ժողովուրդների կյանքում:

Փաստորեն, Արևելքի մահմեդական ժողովուրդների շրջանում Խորհրդային Ռուսաստանի հեղափոխական քարոզչությունն ուղղված էր բրիտանական գաղութային կայսրության հիմքերի խարխուլմանը: Ակնհայտ է, որ ինչպես Հայաստանի անկախության, այնպես էլ նրա սահմանների ու հայկական տարածքների ճակատագրի հարցերը ենթակա էին լուծման դիվանագիտական լարված մրցապայքարի հենց այս համատեքստում:

Լոնդոնի կառավարությունն անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ իր հեղինակությունն օգտագործում էր՝ հետ պահելու նրանց Խորհրդային Ռուսաստանից, բայց առանց այդ նպատակի համար նյութական ու ռազմական միջոցներ հայթայթելու և գործի դնելու: Պատահական չէ, որ դաշնակից տերությունների թվում Մեծ Բրիտանիան ևս դե

Ֆակտո անկախ պետություններ ճանաչեց Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, բայց դա արվեց բավական ուշ՝ 1920 թ. հունվարին միայն, երբ Ռուսաստանի Հարավի սպիտակգվարդիական զինված ուժերը ծախողել էին արշավանքը դեպի Մոսկվա, պարտություն կրել Կարմիր բանակից, իսկ պարտված հակահեղափոխական բանակի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Անտոն Դենիկինն իր զորքի մնացորդներով պատրաստվում էր էվակուացվել Դրիմ⁹: ՀՀ դե ֆակտո ճանաչումը բնավ չէր նշանակում, թե դրան հետևելու էր ՀՀ դե յուրե ճանաչումը Մեծ Բրիտանիայի կողմից: 1920 թ. օգոստոսի 13-ին այդ պետության արտաքին գործերի նախարարի օգնական Ջոն Թիլլին լորդ Քերզոնի անունից տեղեկացրեց Ա. Ահարոնյանին, որ իր կառավարությունը դեռևս նպատակահարմար չի համարում ՀՀ հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելը¹⁰: Բրիտանական արտգործնախարարության դիվանագետների հետ ՀՀ պաշտոնական պատվիրակության անդամների հետագա նամակագրությունը վկայում է, որ ՀՀ դե յուրե ճանաչման հարցի քննարկումը շարունակվել է մինչև 1920 թ. նոյեմբեր: Նոյեմբերի 2-ին լորդ Քերզոնը հայկական պատվիրակությանը տեղեկացրել է, որ հարցը կարող է լուծվել միայն Վ. Վիլսոնի իրավարար վճռի հիման վրա հայկական անկախ պետության սահմանների հստակեցումից հետո¹¹: Բոլշևիզմի վտանգը կանխելու նպատակով բրիտանական կառավարությունում մտադիր էին օգտագործել թուրքական ազգայնականության գործունը, ինչը նշանակում էր ռազմավարական կարևոր դիրք ու նշանակություն ունեցող Արևմտյան Հայաստանին վերաբերող հարցերում ձեռնպահ մնալ վերջնական որոշումներից, պատրաստ լինել անհրաժեշտության դեպքում վերականգնելու թուրքական իշխանությունը հայկական տարածքներում¹²: Հանգամանք, որն էլ դարձավ Սևրի պայմանագրում հայ

9 Ств Великая Октябрьская социалистическая революция. Энциклопедия. Издание третье, дополненное. Под редакцией Голуба П. А. Москва, 1987, էջ 146:

10 Ств Ованнисян Р. Г. Международные отношения Республики Армения, 1918-1920 гг. Ереван, 2007, էջ 638-639:

11 Ств նույն տեղում, էջ 641-642:

12 Սա անգլիական արտաքին քաղաքականության նոր պաշտոնական կուրսն էր, որի իրականացմանն ուղղված առաջին դիվանագիտական քայլը եղել էր 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարի ստորագրումը: Չինադադարի 11-րդ հոդվածի համաձայն՝ Օսմանյան կայսրությունն իր զորքերից «մաքրում էր» Անդրկովկասում օկուպացրած տարածքները: Դրանով իսկ Հայաստանը որպես Ռուսական կայսրության իրավահաջորդը տարածաշրջանում, վերականգնում էր իր նախապատերազմյան սահմանները՝ ներառյալ Կարսի մարզը: Միևնույն ժամանակ Հայաստանի հիմնական մասը հանդիսացող Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները չօկուպացվեցին դաշնակցային զորքի կողմից, թեև դրա համար ավելի մեծ բարոյական և իրավական հիմքեր կային, քան Օսմանյան կայսրության մյուս ոչ թուրքական տարածքների օկուպացման համար: Ավելին, զինադադարի 24-րդ հոդվածի համաձայն հայկական վեց վիլայեթներում, մինչև հաշտության միջազգային վեհաժողովում դրանց կարգավիճակի վերջնական որոշումը, կարգուկանոնի ապահովման պատասխանատվությունը դրվում էր թուրքական զորքի վրա: Դաշնակցային զորքերի կողմից հայկական վիլայեթների

ժողովրդին և հայկական պետությանը վերաբերող հողվածների իրագործումը ձախողելու հիմնական պատճառը:

Թուրքիայում իշխանության եկած քեմալականները ոչ միայն չճանաչեցին Սևրի պայմանագիրը և որևէ երկրամաս չգիջեցին Արևմտյան Հայաստանից, այլև, անցնելով նախապատերազմյան ռուս-թուրքական սահմանագիծն ու անտեսելով 1920 թ. նոյեմբերի 22-ին հրապարակված և անմիջապես ուժի մեջ մտած Վ. Վիլսոնի իրավարար վճիռը, զավթեցին Արևելյան Հայաստանի մի մասը: Այս առիթով հատկանշական է ՀՀ պաշտոնական պատվիրակության տեղեկատվության բյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 15-ին թվագրված փաստաթուղթը, որում, որպես Հայաստանի Հանրապետության անկման երեք գլխավոր պատճառներ, մատնանշված էին Սևրի պայմանագրից բխող հետևյալ խնդիրները՝ Սևրի պայմանագիրը ստորագրած պետությունների կողմից այն չվավերացնելը, ՀՀ-ի համար աննպաստ միջազգային իրադրությունը, նրա սահմանների անորոշությունը, ինչպես նաև դաշնակիցների կողմից Հայաստանի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ռազմական ու նյութական օգնության չտրամադրումը¹³:

Մեծ Բրիտանիան և նրան հետևող դաշնակից տերություններն անմիջականորեն մեղավոր են խոստացված ռազմական ու նյութական անջակցությունը Հայաստանի Հանրապետությանը չտրամադրելու և, դրանով իսկ, նրա գոյությունը վտանգելու համար: Քննադատելով անդրկովկասյան անկախ հանրապետությունների նկատմամբ ոչ թե գործուն անջակցության, այլ սին խոստումների ու դատարկ քաջալերանքի դաշնակից տերությունների, մասնավորապես Մեծ Բրիտանիայի կործանարար քաղաքականությունը՝ անգլիացի պատմաբան և փիլիսոփա Առնոլդ Թոյնբին այն բնորոշել է որպես «թե՛ բարոյական և թե՛ քաղաքական վրիպում»¹⁴: Դաշնակիցների վարած քաղաքականությունը, իրոք, անբարոյական էր, քանի որ գիտենալով հանդերձ, որ մտադիր չեն գործնական օգնություն ցույց տալ Հայաստանին, նրանք շարունակում էին այդ երկրի կառավարությանը խաբել դատարկ խոստումներով: Մեղքի

օկուպացում նախատեսվում էր միայն դրանցում «անկարգությունների դեպքում»: Արևմտյան Հայաստանում թողնված թուրքական գործը, որպես ոստիկանական ուժ, պիտի կանխեր Հայկական հարցի լուծումը «Թուրքահայաստանի մասին» խորհրդային դեկրետի՝ հրովարտակի հիման վրա: Մինչդեռ, Արևմտյան Հայաստանում, որի հիմնական բնակչությունը ցեղասպանության էր ենթարկվել, բոլորը զինված էին՝ զոհերից բացի, զոհեր, ովքեր ԱՄՆ-ի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի բանակների քաջարի զինվորներն էին եղել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Այս մասին տես Մ. Գеноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества: документы и комментарии. Т.1. Москва, 2002, փաստ., N 348, էջ 330: Տես նաև **Ահարոնյան Ա.**, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Եր., 2001, էջ 41:

13 Տես **Նասիպեան Ա.**, նշվ. աշխ., էջ 234:

14 **Toynbee A. J.**, Survey of International Affairs 1920-1923, Oxford, 1925, p. 369, 373-374.

իրենց բաժինն ունեին նաև ՀՀ արտաքին քաղաքականության և կողմնորոշման պատասխանատուները: Նրանք չկարողացան տեսնել, որ Մեծ Բրիտանիայի մերձավորարևելյան քաղաքականության իրական բովանդակությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ պատերազմի արդյունքում նրա համաշխարհային ազդեցության և ռազմական ուժի նվազմանն ուղիղ համեմատական ձևով դրսևորվող անհիմն համառություն՝ Անդրկովկասում բրիտանական ռազմաքաղաքական ու դիվանագիտական հեղինակության պահպանման համար: Մինչդեռ դիվանագիտական այն «խաղը», որը չհամարձակվեց խաղալ Հայաստանի Հանրապետությունը, խաղացին քեմալական Թուրքիան ու մուսավաթական Ադրբեջանը՝ առաջինը հավատացնելով խորհրդային Ռուսաստանին, թե նվիրված է համաշխարհային սոցիալիստական հեղափոխության գաղափարին, իսկ երկրորդը՝ Անդրկովկասում առաջինն ընդունելով խորհրդային իշխանությունը:

Մեծ Բրիտանիան և նրան հետևող դաշնակից տերություններն անմիջականորեն մեղավոր են նաև Հայաստանն Անդրկովկասում քաղաքական գերիշխանության համար պայքարի գործիքի վերածելու և այն ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի օգտագործելու համար: Դեռևս 1920 թ. կեսերին ակնհայտ էր, որ Անդրկովկասի քաղաքական նոր իրադրությունը կենտրոնանում էր իրենց ընդհանուր թշնամիների դեմ պայքարում սերտ գործակցող, միաժամանակ ռազմաքաղաքական գերիշխանության համար միմյանց դեմ մրցակցող Խորհրդային Ռուսաստանի ու քեմալական Թուրքիայի ձեռքերում: Այս պայմաններում Անդրկովկասի հանրապետությունների ճանաչումը բնավ որևէ կապ չուներ ազգերի ինքնորոշման սկզբունքը հարգելու և կիրառելու դաշնակից տերությունների ձգտման հետ, այլ թելադրված էր զուտ քաղաքական նկատառումներով. դաշնակիցների համար առավել ընդունելի էր Հայաստանի հաշտությունը Թուրքիայի և ոչ թե Ռուսաստանի հետ: Հայաստանի անկախության ճանաչումն ավելի էր հեռացնում նրան Ռուսաստանից, խորացնում հայկական պետության արևմտյան արտաքին քաղաքական կողմնորոշումը՝ իրականում թուլացնելով նրա պաշտպանունակությունը, գրկելով Խորհրդային Ռուսաստանից ռազմական աջակցություն ակնկալելու վերջին հնարավորություններից և թողնելով մեն-մենակ վերահաս թուրքական ագրեսիայի դեմ: Հայաստանի կառավարությունը որդեգրեց բրիտանական կառավարությանը հաճո, նրա համար նախընտրելի քաղաքական կեցվածք՝ հուսալով, որ այն կօգնի հասնելու դաշնակիցների տված խոստումների իրագործմանը: Որոշակի իմաստով հենց այս քաղաքականության արդյունքն էր նաև 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը Հա-

յաստանի Հանրապետության ու Թուրքիայի միջև ստորագրված Ալեքսանդրապոլի պայմանագիրը¹⁵:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի խորհրդայնացումը, ապա Ալեքսանդրապոլի անօրինական պայմանագիրը նրան պարտադրելը ոչ այլ ինչ էին, եթե ոչ բրիտանական մերձավորարևելյան քաղաքականության պարտություն, որը դարձավ նաև Հայաստանի Հանրապետության պարտությունը:

Անդրկովկասյան հանրապետությունների խորհրդայնացումից հետո առավել որոշակի դարձավ Մեծ Բրիտանիայի կառավարության պատրաստակամությունը պաշտպանելու քեմալականներին ընդդեմ բուլշևիկների՝ քեմալական ռազմուժի միջոցով դեպի հարավ Կարմիր բանակի առաջխաղացումը կասեցնելու նպատակով: Բրիտանական կառավարությանն այդ քաղաքական ուղու վրա դնելու գործում վճռորոշ եղավ Հնդկաստանի հարցերով և ռազմական նախարարությունների կողմից արտաքին գործերի նախարարության վրա ճնշման գործադրումը: Բրիտանական բարձրաստիճան գինվորականության շրջանում իշխում էր այն տեսակետը, թե Արևելյան Եվրոպայի ու նախկին Ռուսական կայսրության հարավային շրջանների բալկանացման՝ դաշնակիցների փոխհամաձայնեցված քաղաքականությունը ոչ միայն չէր կարող նշված տարածքներում ապահովել կայուն խաղաղություն, այլև հանդիսանում էր տարածաշրջանային պատերազմների շարունակման աղբյուր: Բրիտանական բանակի Գլխավոր շտաբի պետ ֆելդմարշալ Հենրի Վիլսոնը նախընտրում էր թուրքերի հետ սիրաբանելու տակտիկան՝ Արևելքում Մեծ Բրիտանիայի համար խաղաղություն ապահովելու և Թուրքիան իբրև պատվար Ռուսաստանի դեմ ծառայեցնելու նպատակով: Այդ պատճառով էլ նա անհնար էր համարում Թուրքիայի «արևելյան», այսինքն՝ արևմտահայկական նահանգների անջատումն ու միացումը Հայաստանին: Իսկ արդեն 1921 թ. Հենրի Վիլսոնը պնդում էր, թե Մեծ Բրիտանիային ձեռնադր է ունենալ Իզմիրից մինչև Բաքու տարածվող հզոր ու բարեկամ Թուրքիա¹⁶: Ի վերջո, ազատագրական շարժումների վերելքն անզլիական գաղութներում՝ Հնդկաստանում, Եգիպտոսում և Իռլանդիայում, ինչպես նաև դաշնակիցների միջև ներքին հակասությունների սրումը բրիտանական կառավարության

15 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. № 340, էջ 683–687: Մսրրյան Զ., Երեք դաշնագիրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագիրերը, 1920–1921 թթ.), Պէյրուս, 1979, էջ 146–151:

16 Այս մասին տե՛ս **Նասիպեան Ա.**, Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915–1923, Պէյրուս, 1994, էջ 240; 242:

նը վերջնականապես մղեցին վերանայելու իր մերձավորարևելյան քաղաքականության ընթացքը¹⁷:

Մեծ Բրիտանիայում ուժեղացող թրքանպաստ կողմնորոշումը նախևառաջ արտահայտվում էր Սևրի պայմանագիրը հոգուտ թուրքիայի վերանայելու պահանջի մեջ: Դրա բավարարումն, ըստ անգլիացի պետական գործիչների, պետք է գոհացներ մահմեդական աշխարհին, նպաստեր բրիտանական իշխանության վերականգնմանը Հնդկաստանում ու Եգիպտոսում, վերջ տար «երկարածգված պատերազմի» դրությանն Արևելքում: Այս տեսանկյունից առանձնակի կարևորվում էր պայմանագրի տարածքային պահանջներին վերաբերող պայմանների վերանայումը: Դա պետք է մղեր քեմալականներին խզելու հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ, ինչի արդյունքում թուրքիան պետք է վերածվեր պատվար-պետության վերջինիս և դաշնակիցների միջև, իսկ Լոնդոնի կառավարությունն էլ ստանար հզոր լծակ՝ վերացնելու իր գաղութային կայսրության հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարը սնող քաղաքական-գաղափարական հիմքերն այնքանով, որքանով դրանք կապված էին համաշխարհային սոցիալիստական հեղափոխության գաղափարի իրագործման հետ: Խնդիրը Մեծ Բրիտանիայի համար ուներ նաև տնտեսական կարևորություն: Համաշխարհային պատերազմից նոր դուրս եկած և տնտեսության ապառազմականացման կամ վերականգնման (ռեկոնվերսիայի) ձգնաժամի մեջ

17 Տարածայնությունները թուրքիայի նկատմամբ դիրքորոշման հարցում մի կողմից՝ Մեծ Բրիտանիայի, մյուս կողմից՝ Ֆրանսիայի և Իտալիայի միջև նկատելի էին դեռևս 1919 թվականին: Իտալիայի ու Ֆրանսիայի կառավարող շրջանակներում համակրում էին քեմալականներին և ոչ թե սուլթանական կառավարությանը, քանի որ կարծում էին, թե վերջինս գործում էր Լոնդոնի կառավարության հովանավորությամբ: Քեմալական կառավարությանը սատարելով՝ Իտալիան փորձում էր հակակշիռ ստեղծել Մեծ Բրիտանիայի աջակցությանը Հունաստանին թուրքիայի դեմ պատերազմում: Բացի այդ, Իտալիան ձգտում էր տնտեսական զիջումներ կորզել թուրքիայից Անատոլիայում, քանի որ, դժգոհ լինելով Փարիզի վեհաժողովի որոշումներից, շահագրգռված էր աջակցելու քեմալական կառավարությանը Սևրի պայմանագրի վերանայման հարցում: Ֆրանսիայում ևս պատրաստակամ էին սատարելու թուրքիային ընդդեմ Մեծ Բրիտանիայի, քանի որ վերջինս Փարիզի վեհաժողովում չէր պաշտպանել Ֆրանսիայի շահերը Հռենոսի հարցում: Բացի այդ, Ֆրանսիացի կապիտալիստները, կորցնելով իրենց կապիտալ ներդրումները Խորհրդային Ռուսաստանում, մտահոգ էին չկորցնելու դրանք թուրքիայում ևս: Ֆրանսիական դիվանագիտությունը ոչ միայն հանդես եկավ Սևրի պայմանագիրը վերանայելու նախաձեռնությամբ, այլև 1921 թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի պայմանագրի ստորագրումով այդ խնդիրը դրեց գործնական ուղու վրա:

Փաստորեն, դեռևս Սևրի պայմանագրի ստորագրման նախօրեին դաշնակիցների ձակասող մասնատված էր: Այդ իրողությունը, ի ուրախություն քեմալականների, նշանակում էր, որ կարևոր հարցերի շուրջ համաձայնության գալուսն անկարող դաշնակիցներն ի վիճակի չէին լինի պաշտպանելու հետավոր, փոքր ու թույլ Հայաստանը: Ավելին, տարածայնություններ ունենալով միմյանց հետ դաշնակիցները միաժամանակ ձգտում էին մերձեցման թուրքիայի հետ՝ չթաքցնելով իրենց պատրաստակամությունը զիջումների գնալու նրան վերաբերող քաղաքական ու տարածքային հարցերում: Ընդ որում, ակնհայտ էր, որ դիվանագիտական մրցապայքարում դաշնակիցները համար ամենակարևորն իրենց առևտրատնտեսական շահերն ու հետաքրքրություններն էին Մերձավոր Արևելքում: Այս մասին մանրամասն տես **Λοῦις Δ. Χορτζ** **Δ.**, նշվ. աշխ., էջ 457: Տես նաև **Նախիպեան Ա.**, նշվ. աշխ., էջ 246–248:

ընկած երկիրը հնարավորություն կստանար թուրքական եկամտաբեր շուկայի հաշվին հասնելու բրիտանական արտաքին առևտրի նախապատերազմյան ժավալներին: Դրանք էապես կրճատվել էին բոլշևիկյան հեղաշրջման հաղթանակից հետո, երբ Մեծ Բրիտանիան, խզելով ռազմաքաղաքական հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ, ըստ էության կորցրել էր ռուսաստանյան տարողունակ շուկան, իսկ քենավական կառավարության հետ ունեցած խնդիրների հետևանքով թուլացել էին նրա տնտեսական դիրքերը Թուրքիայում: Քաղաքական և տնտեսական նոր իրադրության պայմաններում Հայկական հարցի լուծումը ոչ միայն դուրս էր թողնվելու Մեծ Բրիտանիայի պետական հետաքրքրությունների ցանկից, այլև դրա փոխարեն օրակարգային էր դառնում վիլսոնյան սահմաններում Հայաստանի ընդարձակումը բացառելու խնդիրը, քանի որ Հայաստանի վրայով բոլշևիզմի ազդեցության մոտեցումը Կ.Պոլսին չէր բխում ոչ Մեծ Բրիտանիայի, ոչ էլ Թուրքիայի շահերից:

Սևրի պայմանագրում հայկական անկախ պետության միջազգային-իրավական կարգավիճակին և սահմաններին վերաբերող հոդվածները հիմնովին վերանայելու իրենց մտադրությունը դաշնակից տերություններն անթաքույց արտահայտում էին հայ գործիչների հետ հանդիպումների ընթացքում: Դեռևս 1920 թ. նոյեմբերի 13-ին Լոնդոնում ՀՀ պաշտոնական պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանի հետ հանդիպման ժամանակ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության արևելյան գործերի պատասխանատու Ֆրենսիս Օսբորնը նշել էր, որ իր պետությունը Հայաստանում միայն մարդասիրական տեսանկյունից կարող է գործել, քանի որ այլ շահ չունի: Իսկ 1921 թ. փետրվարի 22-ին կայացած հանդիպման ժամանակ, անդրադառնալով Հայաստանի ապագային, անգլիացի դիվանագետը հայտարարեց, թե հայերի շահը պահանջում է հրաժարվել Արևմտյան Հայաստանից և պահանջել Կիլիկիան՝ այնտեղ հաստատվելու և պետություն ունենալու հեռանկարով: Այդ առաջարկը հիմնավորվում էր Արևմտյան Հայաստանի հայաթափված լինելու հանգամանքով, ավերված հայրենիք վերադառնալու հարցում աշխարհասփյուռ հայության հետաքրքրության նվազմամբ, հայկական զինուժի անկարողությամբ մաքրելու Արևմտյան Հայաստանը թուրքերից, ինչպես նաև Սևրի պայմանագրում Հայաստանին և հայ ժողովրդին վերաբերող հոդվածներն իրագործելու հարցում դաշնակից տերությունների շահագրգռվածության բացակայությամբ և այն պատճառաբանությամբ, որ «կրվկասյան Հայաստանը բոլշևիկ է այժմ»

և որ «թյուրքական հողերը նրան կցելով՝ մենք զորացրած կլինենք ռուսներին»¹⁸:

Պատահական չէ, որ Լոնդոնի կառավարությունը հարմար առիթը բաց չէր թողնում կամ սրելու, կամ էլ հրապարակային բնույթ հաղորդելու խորհրդա-քեմալական հակասություններին և օգտագործելու դրանք ի շահ իրեն: Այսպես, երբ 1921 թ. հունվարի 8-ին և 19-ին Հայաստանի ԽՍՀ արտաքին գործերի ժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության արտաքին գործերի ժողկոմի պաշտոնակատար Ահմեդ Մուխթարին բողոքի հուշագրեր ներկայացրեց թուրքական զորքի կողմից Ալեքսանդրապոլի և Կարսի գավառների ամբողջական ավերման առիթով ու պահանջեց, որ նրանք հեռանան այդ շրջաններից, Հնդկաստանի փոխարքա լորդ Չելմսֆորդը հեռագրեց Լոնդոն՝ հասկացնելով, որ Մոսկվայի ու Անկարայի միջև պառակտումը «շեշտվի» մամուլում¹⁹: Առավել գործնական էր նույն փաստի առիթով Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության այն եզրահանգումը, թե Թուրքիայի քայքայումը Ռուսաստանի կողմից փաստ էր, որը Լոնդոնի կառավարությունը պետք է օգտագործեր Թուրքիայի հետ իր բանակցությունների ընթացքում՝ Անկարային կանգնեցնելով դաշնակիցների և Ռուսաստանի միջև ընտրություն կատարելու անհրաժեշտության առջև²⁰:

Մեծ Բրիտանիայի նախարարների խորհուրդն իսկույն համաձայնեց դաշնակիցներին առաջարկել, որ քեմալականներն «առանց նախապայմանի» հրավիրվեն ռազմատուգանքների և 1919 թ. սկսված հույն-թուրքական պատերազմի դադարեցման, Ֆրանսիայի ու Իտալիայի պահանջով դիվանագիտական բանակցությունների օրակարգ բերված Սևրի պայմանագրի վերանայման և այլ ընթացիկ հարցերի քննարկման նպատակով Լոնդոնում հրավիրվելիք միջազգային խորհրդաժողովին: Նա նաև ցանկանում էր անհրաժեշտության դեպքում Անկարային հասկացնել, որ կողմերի միջև գոհացուցիչ համաձայնության դեպքում Մեծ Բրիտանիան պատրաստ է նյութական օգնություն ցուցաբերել Թուրքիային՝ քայքայված տնտեսությունը վերականգնելու նպատակով: Եվ քանի որ Ֆրանսիան ու Իտալիան չնվազող հետևողականությամբ շարունակում էին Թուրքիայից տնտեսական մենաշնորհներ կորզելու քաղաքականությունը, ուստի Լոնդոնի կառավարության խնդիրն էր ոչ միայն այդ հարցում հետ չմնալ դաշնակիցներից, այլև առաջ անցնել նրանցից: Այս պայմաններում Մեծ Բրիտանիայի պահպանողական կուսակցության առաջնորդ, անգլիական

18 Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 139–143:

19 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. N 273, էջ 485–489:

20 Տե՛ս Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 244:

պառլամենտի Համայնքների պալատի ղեկավար, վարչապետ Էնդրյու Բոնար Լոուն զգուշացնում էր արտգործնախարար լորդ Ջորջ Նաթանիել Քերզոնին հետևյալը. «Երկու հանգամանք ինձ թվում են կենսական: Առաջինն այն է, որ պետք չէ պատերազմի մեջ մտնել հանուն Մոսուլի, իսկ երկրորդը՝ եթե ֆրանսիացիները... չմիանան մեզ, ապա պետք չէ, որ մենք առանձին կռվենք թուրքերի դեմ՝ պարտադրելու համար ինչ որ մնացել է Սևրի դաշնագրից»²¹:

1921 թ. փետրվարի 21-ից մարտի 14-ը Լոնդոնում տեղի ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմից հետո թվով երրորդ միջազգային խորհրդաժողովը, որին մասնակցում էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի, Ճապոնիայի, Հունաստանի, ինչպես նաև համաշխարհային պատերազմում պարտված Գերմանիայի ու Թուրքիայի կառավարությունների ղեկավարներն ու արտաքին գործերի նախարարները²²: Թուրքիան ներկայացված էր երկու պատվիրակությամբ՝ Անկարայի կառավարության՝ Բեքիր Սամի բեյի գլխավորությամբ և Կ.Պոլսի կառավարության՝ Մեծ վեզիր Թևֆիկ փաշայի գլխավորությամբ: Կ.Պոլսի կառավարության պատվիրակությունը որևէ ինքնուրույն դեր չէր խաղում: Դաշնակիցները նրան օգտագործում էին լոկ Անկարայի կառավարության վրա ճնշում բանեցնելու նպատակով²³: Խորհրդաժողովի օրակարգում էին Թուրքիայի վճարելիք ռազմատուգանքի, հույն-թուրքական պատերազմի դադարեցման, Կ.Պոլսի ու սևծովյան նեղուցների կարգավիճակի, Թուրքիայի նոր սահմանների և դրա հետ կապված՝ բռնագաղթված հայության հայրենիք վերադառնալու հարցերը: Օգտվելով դաշնակից տերությունների միջև առկա ու գնալով ավելի սրվող հակասություններից, ինչպես նաև հույների դեմ պատերազմի հաղթական ընթացքից՝

21 Քաղվածքն ըստ նշվ. աշխ., էջ 249: Տե՛ս նաև **Nicolson Harold**, Curzon: The last phase 1919-1925: A Study in post-war diplomacy. Boston, New York, Mifflin, 1934, էջ 331:

22 Դաշնակից տերությունների կառավարությունների ղեկավարների ու արտաքին գործերի նախարարների լոնդոնյան առաջին խորհրդաժողովը տեղի է ունեցել 1920 թ. փետրվարի 12-ից ապրիլի 10-ը: Դրա, այնուհետև Սան Ռեմոյի, ապա 1921 թ. հունվարի 24-30-ը տեղի ունեցած լոնդոնյան երկրորդ խորհրդաժողովների ընթացքում դաշնակից տերությունների և Օսմանյան Թուրքիայի միջև կնքվելիք հաշտության պայմանագրի մշակման համատեքստում հանգամանորեն քննարկվել են Հայաստան նորաստեղծ պետության ապագան ու հնարավոր սահմանները:

23 Տե՛ս *История дипломатии*, под ред. **Громыко А. А.**, т. 3. М., 1965, էջ 215: Այն, որ խորհրդաժողովում մեծ տերությունները հաշվի էին առնելու Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության առաջարկները, վկայում են անգլիական հետախուզական աղբյուրների տեղեկությունները խորհրդաժողովի նախօրեին Անկարայի և Կ.Պոլսի կառավարությունների միջև հեռագրերի ակտիվ փոխանակության մասին, ինչպես նաև Մուստաֆա Քեմալի հետևյալ պատասխանը Մեծ վեզիրին. «Եթե Դաշնակից տերությունները որոշել են Լոնդոնի կոնֆերանսում թուրքական հարցը լուծել արդարացի և ճիշտ ձևով, նրանք պետք է իրենց հրավերն ուղարկեն ուղղակի Ազգային ժողովի կառավարությանը»: Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828--1923), փաստ. N 344, էջ 692:

թուրքական միացյալ պատվիրակությունը պահանջում էր վերականգնել Թուրքիայի նախապատերազմյան՝ 1913 թ. սահմաններն առանց արաբական երկրների, բայց ներառյալ Ալեքսանդրապոլի պայմանագրով զավթած Կարսի մարզն ու հայկական այլ տարածքներ:

Խորհրդաժողովի նախօրեին Լոնդոն էին ժամանել նաև Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունը՝ Ավետիս Ահարոնյանի, և Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ: Հայկական հարցի արդարացի լուծման նրանց ակնկալիքները կապված էին բացառապես դաշնակից տերությունների դիրքորոշման ու քաղաքականության հետ, մանավանդ որ Խորհրդային Ռուսաստանը, սերտորեն գործակցելով արևմտահայերին ցեղասպանության ենթարկած Օսմանյան կայսրության իրավահաջորդ քեմալական Թուրքիայի հետ, հանուն համաշխարհային սոցիալիստական հեղափոխության պատրաստվում էր Հայաստանի հաշվին նոր տարածքային զիջումներ անել Թուրքիային: Այդ էին վկայում նույն օրերին Մոսկվայում հրավիրված ռուս-թուրքական խորհրդաժողովի օրակարգն ու նրա աշխատանքներին հայկական կողմին մասնակից չդարձնելը: Ա. Ահարոնյանի և Պ. Նուբարի պատվիրակությունները նախապես քննարկել էին մասնակից տերություններին ներկայացվելիք առաջարկները, հարթել տարածայնությունները, մշակել և դաշնակից տերությունների Գերագույն խորհրդին ներկայացրել էին միասնական հայեցակետ, որի հիմքում ՀՀ պաշտոնական պատվիրակության կազմած հուշագրի տարբերակն էր²⁴:

Հայկական պատվիրակությունը, որի կազմում էին Պողոս Նուբարը, Ավետիս Ահարոնյանը, անգլիացի հասարակական-կրոնական գործիչ Ջեյմս Մալքոլմը և գեներալ Հակոբ Բագրատունին, իր հայեցակետը ներկայացրեց Լոնդոնի խորհրդաժողովի փետրվարի 26-ի նիստում: Այն նախագահող արտաքին գործերի պետքարտուղար Ջորջ Ն. Քերզոնը համաձայնեց Պ. Նուբարի հայտարարությանը, որ Ազգային և ՀՀ պաշտոնա-

24 Քննարկումների ընթացքում վիճահարույց է եղել հատկապես Կիլիկիայի հարցը: Պ. Նուբարն առաջարկում էր Սևրի պայմանագրով Թուրքիային թողնված Կիլիկիայում ստեղծել ինքնավարություն Ֆրանսիայի հովանու ներքո, իսկ Ֆրանսիային հանձնված մասի համար պահանջել հայկական ինքնավարության հիմնում: ՀՀ պաշտոնական պատվիրակությունն առարկում է այս դրույթի դեմ: Այդ պահանջը, հիմնված չլինելով Կիլիկիայում գործնական արդյունքի հասնելու որևէ իրատեսական հեռանկարի վրա, գալիս էր թուլացնելու Մեծ Հայաստանի գաղափարը, քանի որ Արևելյան ու Արևմտյան Հայաստանի հետ միասին վերջինիս բովանդակության բաղկացուցիչ մասն էին նաև Կիլիկիայի երկու հատվածները: Բացի այդ, ՀՀ պաշտոնական պատվիրակությունը դիվանագիտական տեսանկյունից նրբանկատ չէր համարում ֆրանսիական Կիլիկիայի համար ինքնավարություն պահանջել Լոնդոնի խորհրդաժողովից: Դրա փոխարեն նա առաջարկում էր այդ խնդրով առանձին բանակցել ֆրանսիական կառավարության հետ: Պ. Նուբարը համառորեն դիմադրում էր, բայց, ի վերջո, Կիլիկիայի հարցում զիջեց: Այս մասին տես **Ահարոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 145:

կան պատվիրակություններից յուրաքանչյուրի ղեկավարը հանդես գա իր պատվիրակության անունից, իսկ Պ. Նուբարը միաժամանակ հանդես գա իբրև երկու պատվիրակությունների նախագահ: Այս քայլով Պ. Նուբարը փաստորեն խախտեց Ա. Ահարոնյանի հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածությունը և հերթական անգամ ընդգծեց իր պատվիրակության ինքնուրույն լինելը, ինչը միանգամայն անտեղի էր ու ավելորդ: Այս Նուբար փաշան պաշտպանեց Սևրի հաշտության պայմանագիրը, որով նախատեսվում էր Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծում արևմտահայկական չորս նահանգների այն սահմաններում, որոնք գծել էր Վ. Վիլսոնը որպես իրավարար: Ըստ Պ. Նուբարի «Հ խորհրդայնացումը բնավ չէր կարող խոչընդոտել այդ նպատակի իրագործմանը, քանի որ Հայկական հարցը վերաբերում էր Արևմտյան Հայաստանի ազատագրմանը թուրքական տիրապետությունից: Բացի այդ, դաշնակից տերությունները Սևրի պայմանագիրը կնքել էին օսմանյան պետության և ոչ թե Ռուսաստանի հետ, իսկ Արևելյան Հայաստանը մտցվել էր պայմանագրով նախատեսվող հայկական պետության մեջ պարզապես այն պատճառով, որ դեպքերի բերումով անկախ էր հռչակվել: Ազգային պատվիրակության ղեկավարը կարծում էր, որ դաշնակից տերություններն ունեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու հայկական չորս նահանգների մաքրումը քեմալական զորքից և Հայկական հարցի արդարացի լուծումը՝ Սևրի պայմանագրով իրենց ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան: Միակ փոփոխությունը Սևրի պայմանագրում, որը, ըստ Պ. Նուբարի, կարող էր ընդունելի լինել հայկական կողմի համար, վերաբերում էր Տրապիզոնի զիջմանը: Ազգային գործիչը նաև բարձրացնում էր Կիլիկիայի հարցը՝ առաջարկելով Ֆրանսիայի օգնությամբ այնտեղ հիմնել «վարչական ինքնավարություն» Թուրքիայի գերիշխանության ներքո²⁵:

Ա. Ահարոնյանը հանդես եկավ Սևրի պայմանագրով ճանաչված հայկական պետության անունից: Դա հիմնավորում էր նրանով, որ նախ՝ քաղաքական իրադարձությունների զուգադիպությամբ նույն օրերին Հայաստանում տեղի ունեցող Փետրվարյան ապստամբության արդյունքում «ժամանակավոր սովետական ռեժիմի անկումից հետո» Երևանում վերականգնվել էր Հայաստանի Հանրապետության իշխանությունը: Բացի այդ, հրատապ էր Մեծ եղեռնից մազապուրծ և Արևելյան Հայաստանում

25 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 430, ց. 1, գ. 1007, թ. 2: Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. N 347, էջ 697–700:

ու արտասահմանում ապաստանած հայերի հայրենիք՝ Արևմտյան Հայաստան, վերադարձի կազմակերպումը²⁶:

Հարկ է նշել, որ հայ պատվիրակներն իրենց առաջարկություններն անելիս, ցավոք, անտեսում էին ռազմաքաղաքական այն իրադրությունը, որը ստեղծվել էր Սևրի պայմանագրի ստորագրումից հետո, և որի պայմաններում բացառվում էր հայկական կողմի ներկայացրած առաջարկությունների իրագործման հնարավորությունը²⁷: Դրան հակառակ, նոր իրադրությունը նպաստավոր էր թուրքերի համար, ինչից օգտվելով էլ օսմանյան և քեմալական միացյալ պատվիրակությունը մերժեց հայկական առաջարկությունները: Թուրքերին համարձակություն էին ներշնչում նաև այն անջատ բանակցությունները, որ իրենց հետ վարում էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունները: Հանդես գալով վերջիններիս անունից՝ լորդ Քերզոնը Լոնդոնի խորհրդաժողովում նշեց, որ հայ ժողովրդի արդարացի պահանջները բավարարելու ճանապարհին դժվարությունները երեքն են՝ բուլշևիզմը Արևելյան Հայաստանում, քեմալական զորքի կողմից Հայաստանի տարածքի մեծագույն մասի գրավումը և դաշնակից տերությունների անզոր լինելը ռազմական անհրաժեշտ ուժեր ուղարկելու՝ Հայաստանին օգնելու համար: Պատահական չէ, որ անգլիացի դիվանագետին հետաքրքրում էին ոչ այնքան Պ. Նուբարի և Ա. Ահարոնյանի ներկայացրած պահանջներն ու դրանց բավարարման հիմքերը, որքան փաստացիորեն առկա քաղաքական իրադրությունից բխող այն հանգամանքները, որոնք անհնարին էին դարձնում աշխարհասփյուռ հայերի վերադարձը հայրենիք: Լորդ Քերզոնին մասնավորապես հետաքրքրում էր հետևյալ հարցերի պատասխանը.

-ի՞նչ սահմաններ են նախատեսում հայկական պետության համար Պ. Նուբարի և Ա. Ահարոնյանի պատվիրակությունները,

-որո՞նք են մարդկային ու նյութական այն աղբյուրները, որոնք կկարողանար տրամադրել Հայաստանը իր անկախությունը վերականգնելու համար,

-ի՞նչ էր նախատեսում Ալեքսանդրապոլի պայմանագիրը,

- այն կնքվել էր քեմալական զորքի՝ Հայաստան ներխուժելուց առաջ, թե՞ հետո²⁸:

26 Տե՛ս նույն տեղում, էջ 700–702: Ա. Ահարոնյանը Հայաստանի խորհրդայնացումը համարում էր ժամանակավոր՝ նշելով, որ դրա պատճառներն էին եղել «թուրքական հաջողությունները և Կարսի ու Ալեքսանդրապոլի գրավումը»:

27 Տե՛ս **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէյրուք, 1968, էջ 340, **Махмуриян Г. Г.** Армения в политике США 1917-1923 гг. Ереван, 2018, էջ 516:

28 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. N 347, էջ 702–703:

Ցավալի է, որ հայկական պատվիրակություններն իրենց պահանջները Լոնդոնի խորհրդատուներին ներկայացնելիս տեղյակ չէին ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռին, Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին պարտադրված սահմանների²⁹:

Բայց միջազգային իրավունքի տեսանկյունից Ալեքսանդրապոլի չվերացված պայմանագիրը չէր կարող հիմք ծառայել՝ Սևրի պայմանագիրը չեղյալ հայտարարելու համար ո՛չ Մոսկվայում և ո՛չ էլ Լոնդոնում: Այնուամենայնիվ, Լոնդոնի խորհրդատուները դաշնակից տերությունները հրաժարվեցին հայկական անկախ ու միացյալ պետության ստեղծման գաղափարից: Մարտի 12-ին դաշնակից երկրների Գերագույն խորհուրդը, որին պատկանում էր վերջնական որոշումը, Թուրքիայի քեմալական պատվիրակությանը ներկայացրեց Սևրի պայմանագրի վերանայման վերաբերյալ 10 բաժիններից բաղկացած նախագիծ: Դրա 9-րդ բաժնում հայկական անկախ պետության ստեղծման վերաբերյալ Սևրի պայմանագրի որոշումը փոխարինված էր Թուրքիայի արևելյան նահանգներում, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում «հայկական օջախ» ստեղծելու մասին անորոշ առաջարկությամբ, առանց դրա հետ կապված որևէ պարտավորություն դնելու Թուրքիայի վրա:

«Հայկական օջախի» գաղափարն առաջացել էր ամերիկյան մի խումբ հայասեր գործիչների միջավայրում, ձևակերպվել էր Հայաստան-Ամերիկա ընկերակցության նախագահ Ջորջ Մոնտգոմերիի կողմից և ապա շրջանառության մեջ դրվել Եվրոպայում: Այն բխում էր տարագրված հայերի՝ հայրենիք վերադառնալու խնդրի հրատապությունից, հաշվի էր առնում Անդրկովկասում կատարված քաղաքական փոփոխությունը և նպատակ ուներ ապահովել հայերի համախմբումն ու անվտանգությունը իրենց պատմական հայրենիքում: Դաշնակից տերությունների դիվանագետների կարծիքով այդ խնդրի լուծումը հայկական Միացյալ և Անկախ պետության ստեղծման ճանապարհով անհնար էր՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության խորհրդայնացման և Ալեքսանդրապոլի թուրք-հայկական հաշտության պայմանագիրը դաշնակիցների կողմից ճանաչելու հարցը 1921 թ. փետրվարի 23-ին թուրքական կառավարության կողմից դիվանագիտական բանակցությունների օրակարգ բերվելու պատճառով: Ուստիև Հայաստանի արևելյան ու արևմտյան մասերը պետք է կազմեին առանձին վարչաքաղաքական միավորներ: «Հայկական օջախը» հիմնվելու էր Արևմտյան Հայաստանում: Այն լինելու էր Թուրքիայից միանգամայն անկախ, ինքնավար երկիր, որը հետագայում՝ խորհրդային վարչակարգի վերացումից հետո,

29 Տե՛ս նույն տեղում:

պիտի միանար Հայաստանի Հանրապետությանը: Դաշնակիցները կարծում էին, որ խորհրդային իշխանությունը ժամանակավոր էր, և դրա անկումով Սևրի հաշտության պայմանագիրը Միացյալ Հայաստանի ստեղծման մասով կիրականանար ինքնաբերաբար: Ահա թե ինչու «հայկական օջախի» գաղափարի հեղինակներն այն չէին համարում Սևրի պայմանագրին հակասող, այլ ընդունում էին որպես ժամանակավոր մի հանգրվան դեպի Միացյալ Հայաստան³⁰: «Հայկական օջախի» սահմանները պետք է գծվեին Ազգերի լիգայի նշանակած հատուկ հանձնախմբի կողմից³¹: Այսպիսով «հայկական օջախի» ստեղծումով դաշնակից տերություններն ամբողջովին չէին հրաժարվում Հայաստանից: Այն որպես «սեպ» խրվելու էր «Թուրքիայի մահմեդականների և Հեռավոր Արևելքի մահմեդականների միջև քրիստոնյա հասարակության ձևով», սակայն ոչ հակառուսական պատմեղը քանդելու հաշվին³²:

«Հայկական օջախի» գաղափարը միջազգային դիվանագիտական քննարկումների օրակարգ բերելը ավելի խորացրեց տարածայնությունները հայկական Ազգային ու ՀՀ պաշտոնական պատվիրակությունների միջև: Ա. Ահարոնյանը շարունակում էր պաշտպանել հայկական հողերը Թուրքիայից գրավելու և դրանք Վ. Վիլսոնի գծած սահմաններում անկախ պետություն հռչակելու գաղափարը: Նա վստահ էր, որ հայկական պետությունը վերականգնելու գաղափարը դեռևս օրակարգային է, պարզապես դրա իրագործումը բխվել էր դժվարության Հայաստանի հյուսիսային մասի խորհրդայնացման հետևանքով: «Արգելք չկա նույն պետությունը հաստատել հարավային Թուրքիո մասում: Մանավանդ, որ Home-ը վտանգավոր է նրանով, որ կարող է, վերջ ի վերջո, վերածվել մի անկյունի Թուրքիայի ծոցում՝ նրա գերիշխանության տակ, գուցեև կտրված Կովկասյան Հայաստանից: Սևրի դաշնագրին մենք դիպչելու ո՛չ պետք ունինք և ո՛չ իրավունք: Հողվածները մեր ձեռքով փոփոխելը համազոր է նրանցից հրաժարվելուն»³³, - հանդգնած էր Ա. Ահարոնյանը: Նա ճիշտ էր համարում Հայաստանի սահմանների հարցը լուծել անհապաղ և դաշնակից պետությունների Գերագույն խորհրդի միջոցով, քանի որ դա Ազգերի լիգային վերապահելը, ըստ նրա, հավասարազոր էր խնդիրը մոռացության մատնելուն³⁴:

30Տե՛ս **Ահարոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 177-178:

31Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), փաստ. N 351, էջ 719:

32Տե՛ս նույն տեղում, փաստ. N 334, էջ 643: Տե՛ս նաև **Հակոբյան Հ. Վ.**, Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Եր., 2002, էջ 308:

33 **Ահարոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 206:

34 Տե՛ս նույն տեղում:

Արևմտահայերի շահերը ներկայացնող Ազգային պատվիրակության անունից հանդես եկող հասարակական-քաղաքական գործիչ, դիվանագետ Գաբրիել Նորատունկյանը, ընդհակառակը, ճիշտ էր համարում Արևմտյան Հայաստանի սահմանների գծումը Ազգերի լիգային թողնելը, «հայկական օջախի» և ոչ թե հայկական պետության գաղափարը պնդելը, ըստ այդմ Սևրի պայմանագրում Հայաստանին վերաբերող հոդվածները փոփոխել համաձայն 1921 թ. Լոնդոնի խորհրդաժողովում ընդունված «հայկական օջախի» մասին որոշման և Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից բխող հանգամանքների: Այնուհետև, հաջորդ քայլը, ըստ նրա, պետք է լիներ հայկական նոր պահանջները դաշնակիցների Գերագույն խորհրդի առջև բարձրացնելը³⁵:

1921 թ. Լոնդոնի միջազգային խորհրդաժողովին նախորդած և հաջորդած քաղաքական դեպքերի ու դրանց պատճառահետևանքային կապերի իմացությունը, ըստ էության, ավելորդ է դարձնում խորհրդաժողովին մասնակցած հայկական երկու պատվիրակությունների դիրքորոշման իրատեսականության հարցը: Ճշմարտությունն այն է, որ հայկական պատվիրակություններից և ոչ մեկի ակնկալիքներն էլ ստեղծված միջազգային քաղաքական պայմաններում իրատեսական լինել չէին կարող: Հայկական հարցը որպես տարածքային հարց, լուծվեց հենց նույն օրերին՝ 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության պայմանագրի ստորագրումով³⁶: Եթե Լոնդոնի միջազգային խորհրդաժողովում թուրքական միացյալ պատվիրակությունը կարողացավ մերժել տալ հայկական երկու պատվիրակությունների առաջարկությունները Սևրի պայմանագրում Հայաստանին վերաբերող հոդվածները իրագործելու և հայկական Կիլիկիայում Ֆրանսիայի հովանավորությամբ «վարչական ինքնավարություն» հիմնելու վերաբերյալ, ապա Մոսկվայում քեմալական Թուրքիան յուրացրեց հայկական հսկայական տարածքներ՝ գործնական հենք ապահովելով Արևմտյան Հայաստանի նկատմամբ դաշնակից տերությունների բոլոր հնարավոր հավակնությունները չեզոքացնելու համար: Թուրքիան դրան հասավ նաև անջատ պայմանագրեր կնքելով Ֆրանսիայի ու Իտալիայի հետ համապատասխանաբար 1921 թ. մարտի 9-ին և 12-ին³⁷: Այնուհետև այդ պայմանագրե-

35 Տե՛ս նույն տեղում, էջ 205–206:

36Այս մասին մանրամասն տե՛ս Հայոց պատմություն, հատ. IV, գիրք առաջին [Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.)], Եր., 2010, էջ 324–337:

37Ըստ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Արիստիդ Բրիանի և քեմալական Թուրքիայի արտաքին գործերի նախարար Բեքիր Սամի բեյի միջև կնքված անջատ համաձայնության հոգուտ Թուրքիայի կրճատվում էր Ֆրանսիայի ազդեցության գոտին Սիրիայում: Ֆրանսիան հրաժարվում էր հայ ժողովրդի արդար իրավունքները պաշտպանելուց: Դրա դիմաց նա ստանում էր տարբեր արտոնություններ և առանձնաշնորհումներ Կիլիկիայում, Դիարբեքի-

րին հաջորդեց Հայկական հարցի տեսանկյունից հատկապես կարևոր Անկարայի թուրք-ֆրանսիական պայմանագրի կնքումը 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրի ստորագրումից մեկ շաբաթ անց՝ հոկտեմբերի 20-ին: Անկարայի պայմանագրով Կիլիկիան վերջնականապես անցավ Թուրքիային:

Այս միջազգային իրադարձությունների ազդեցությամբ Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի քաղաքականության փոփոխությունն անթաքույց կերպով դրսևորվեց, երբ 1921 թ. դեկտեմբերին Մեծ Բրիտանիայի կառավարությունը վավերացրեց լորդ Քերզոնի առաջարկած նախագիծը հայ գաղթականների համար Կիլիկիայում «ազգային օջախ» ստեղծելու վերաբերյալ. «... Հարավում, ծովի մոտ, պետք է ստեղծել մի խորշ, ուր երաշխավորված պաշտպանության ներքո համախմբվեին մնացած բոլոր հայերը», - նշված է այդ մասին բրիտանական դիվանագիտական փաստաթղթում³⁸: Իսկ 1922 թ. մարտի 23-ին Քե դ'Օրսեյում Արտաքին գործերի նախարարների երրորդ հանդիպման ժամանակ լորդ Քերզոնը հիշեցրեց, որ «... երբ Ֆրանսիան էվակուացրեց Կիլիկիան ..., նա ջանաց բավարարել իր պարտավորությունները դեպի փոքրամասնությունները՝ թուրքերից վերցնելով հատուկ երաշխիքներ: Սակայն այս երաշխիքներն այնքան անգոհացուցիչ էին, որ հեռացող զորքերի հետ փախստականները դուրս թափվեցին Կիլիկիայից, որպեսզի խուսափեն քեմալական տեռորից և գնացին Կիպրոս ու Սիրիական նավահանգիստները»³⁹: Ապա անգլիացի դիվանագետը նշեց, որ «մեծ թվով հայեր կկամենային վերադառնալ» Կիլիկիա: Սակայն, հաշվի առնելով այդ երկրամասի հանձնումը Թուրքիային, ինչպես նաև այդ պետության հյուսիսարևելյան անկյունում ընդարձակածավալ հայկական պետության ստեղծման գաղափարի անիրագործելիությունը քաղաքական իրադրության պատճառով, նա հայտարարեց, որ «դաշնակիցներն առնվազն պետք է ջանան գոհացնել իրենց խիղճը և հասնել արդարացի լուծման՝ փորձելով ստեղծել հատուկ «հանգրվան» հայ ազգի համար»⁴⁰: Այնուհետև, անդրադառնալով

րում և Սեբաստիայում: Իսկ ըստ Բեքիր Սամիի ու Իտալիայի արտաքին գործերի նախարար կոմս Կարլո Սֆորցայի միջև կնքված անջատ համաձայնության՝ Իտալիան պարտավորվում էր պաշտպանել Թուրքիայի շահերն ու պահանջները վերջինիս հետ վերջնական հաշտության պայմանագրի կնքման ժամանակ: Բեքիր Սամիի փորձեց անջատ համաձայնության գալ նաև Լոնդոնի հետ՝ նրան խոստանալով որոշ տնտեսական զիջումներ, ինչպես նաև ներկայանալով իբրև հզոր ուժ ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի, սակայն այդ ջանքերն ապարդյուն էին: Այս մասին տես **Մսրղիան Ջ.**, Երեք դաշնագիրեր (Ալեքսանդրապոլի, Մուկուայի եւ Կարսի դաշնագիրերը, 1920–1921 թթ.), Պէյրուբ, էջ 1979, 109–111:

38 Տես **Նասիպեան Ա.**, նշվ. աշխ., էջ 249:

39 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. N 351, էջ 719:

40 Նույն տեղում, էջ 720–721:

Բեքիր Սամիի և Յուսուֆ Քեմալի հետ իր զրույցներին, որոնց ընթացքում քննարկվել էր հայ գաղթականներին տեղավորելու նպատակով հայկական պետությանը «թուրքական» տարածք հատկացնելու հարցը, ինչպես նաև շեշտելով թուրք դիվանագետների անզիջում դիրքն այդ հարցում, լորդ Քերզոնը եզրակացրեց. «Անշուշտ, ավելի լավ լուծում է, որ ավելի շատ հայերը թողնեն Թուրքիան, քան կոտորվեն, և, եթե դա այդպես է, գերադասելի է մեծացնել անկախ հայկական պետությունը (այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունը - Լ. Հ.)՝ որոշ թուրքական տերիտորիա ավելացնելով, որպեսզի կարելի լինի ավելի մեծ թվով բնակչություն տեղավորել»⁴¹:

Հայկական հարցը տապալելու վերջնակետը դարձավ 1922 թ. նոյեմբերի 20-ից 1923 թ. հուլիսի 24-ը տեղի ունեցած Լոզանի խորհրդածրոյվը, որի օրակարգի գլխավոր հարցը Թուրքիայի հետ նոր ռազմաքաղաքական պայմաններում նոր հաշտության պայմանագրի կնքումն էր: Հարցն այն է, որ 1922 թ. հոկտեմբերի 11-ին ավարտվել էր 1919 թ. մայիսի 15-ին սկսված հույն-թուրքական պատերազմը, քեմալական Թուրքիան ռազմական հաղթանակ էր տարել՝ նվաճելով Օսմանյան կայսրության անկման արդյունքում Հունաստանին անցած տարածքներն ու վերականգնելով ստատուս քվոն Փոքր Ասիայում: Դաշնակից տերությունները պատրաստվում էին ճանաչել Թուրքիայի զավթումները՝ համապատասխան վերանայման ենթարկելով Սևրի հաշտության պայմանագիրը: Դա այն գինն էր, որի դիմաց նրանք ակնկալում էին ամրապնդել քեմալական կառավարության հակախորհրդային ու հակառուսական կողմնորոշումը, բարելավել Թուրքիայի ռազմաքաղաքական դիրքերը մերձավորարևելյան տարածաշրջանում որպես պատվար ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի: Ավելին նոր հաշտության պայմանագիրը ենթադրում էր նաև Սևրի պայմանագրի Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերող հոդվածների վերանայում: Այս մրցապայքարում Թուրքիայի քեմալական կառավարության խաղաքարտը «բաց դռների» քաղաքականության հեռանկարի խոստումն էր ԱՄՆ-ին ու արևմտաեվրոպական պետություններին, որը նախևառաջ ենթադրում էր Մոսուլի նավթն արդյունահանելու նրանց իրավունքի ճանաչում, Թուրքիայում արևմտյան միսիոներական կազմակերպությունների ազատ գործունեության ապահովում: Խորհրդային Ռուսաստանի հետ համագործակցության դադարեցման դիմաց Թուրքիան բարձրացնում էր Ազգերի լիգային իր անդամակցության հարցը, իսկ Մոսուլի դիմաց Արևմուտքից ու ԱՄՆ-ից պահանջում էր հրաժարվել Հայաս-

41 Նույն տեղում, էջ 720:

տանին Թուրքիայի հաշվին տարածքային զիջումների քաղաքականությունից:

Լոզանի խորհրդաժողովին մասնակցում էին դաշնակից տերությունները՝ Ֆրանսիան, Իտալիան, Հունաստանը, Ճապոնիան, Ռումինիան, Հարավսլավիան՝ Մեծ Բրիտանիայի առաջատար դերակատարությամբ, Թուրքիան, ինչպես նաև ԱՄՆ-ը՝ դիտորդի կարգավիճակով: Խորհրդաժողովում Հայկական հարցի քննարկումը բացահայտեց, որ հայանպաստ լուծման համար նպաստավոր պայմաններ չկային: Նախ Սևրի պայմանագիրը ստորագրած Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը թույլ չտրվեց մասնակցել խորհրդաժողովին, քանի որ հայկական այդ պետականությունն այլևս չկար, իսկ Հայաստանը խորհրդայնացել էր: Միևնույն ժամանակ, խորհրդաժողովին սևծովյան նեղուցների հարցի մասով մասնակցող ՌՍՖՍՀ պատվիրակությունն էլ ոչ միայն չէր պաշտպանում Հայաստանի շահերը, այլև գործում էր դրանց հակառակ՝ գործակցելով Թուրքիայի հետ: Այդ էին վկայում Խորհրդային Ռուսաստանի արտգործոժողովոմի տեղակալ Լ. Կարախանի հայտարարությունները, թե՛ «հայկական օջախի» մասին «Թուրքիայի հետ անկարելի է խոսել», որովհետև թուրքերը «լսել անգամ չեն ուզում այդ մասին», և որ «Ռուսաստանը չի կարող նրանց համոզել, իսկ ոյժի դիմել անկարելի է»⁴²:

Լոզան ժամանած հայկական երկու պատվիրակությունները, Գ. Նորատունկյանի գլխավորությամբ միավորվելով ընդհանուր նպատակների ու գործողությունների ծրագրի շուրջ, խորհրդաժողովին ներկայացրին համատեղ հուշագիր, որում առաջարկվում էր Հայկական հարցի լուծման երեք տարբերակ՝ հայերի համախմբումը ազգային՝ «հայկական օջախում» կամ Թուրքիայի հյուսիսարևելյան մասում՝ հիմք ընդունելով Վ. Կիլտոնի որոշած Հայաստանի սահմանները, կամ Կիլիկիայում, կամ էլ Խորհրդային Հայաստանի տարածքում՝ ընդարձակելով այն ի հաշիվ Արևմտյան Հայաստանի հողերի մի մասի՝ ելքով դեպի Սև ծով⁴³:

Թուրքիայի ազգային փոքրամասնությունների համատեքստում հայերի համար «օջախ» ստեղծելու հարցը քննարկվեց խորհրդաժողովում լորդ Քերզոնի գլխավորած տարածքային և ռազմական հարցերի հանձնաժողովի ու նրա ենթահանձնաժողովի 1922 թ. դեկտեմբերի 12-15-ի, 20-ի, 22-ի, 26-ի, 29-30-ի, 1923 թ. հունվարի 6-ի, 9-ի, հունիսի 4-ի, հուլիսի 17-ի և 23-ի նիստերում: Դաշնակից տերությունների դիվանա-

42 Հայոց պատմություն, հատ. IV, գիրք առաջին, էջ 648:

43 Տե՛ս նույն տեղում:

գիտական շրջանակներում «հայկական օջախի» հիմնումը դիտվում էր իբրև յուրատեսակ հատուցում ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած տարածքային, մարդկային, նյութական ու բարոյահոգեբանական կորուստների և վնասների դիմաց, նաև՝ աշխարհասփյուռ հայերին որոշակի տարածքում համախմբելու ամենագործնական ու արդյունավետ ուղին: Այս առումով լորդ Քերզոնը բնական էր համարում սեփական տարածքում ապրելու հայերի ձգտումը՝ բացատրելով, որ Երևանի հանրապետությունը, այսինքն՝ Խորհրդային Հայաստանը, չէր կարող իրագործել այդ ձգտումը իր աղքատ ու գերբնակեցված տարածքի պատճառով: Ուստի նա անհրաժեշտ էր համարում, որ Թուրքիան «հայերի համար գտնի նրանց ցանկացած համախմբման կենտրոն»: Քերզոնը մատնացույց էր անում Թուրքիայի ասիական տարածքի որևէ հատված հյուսիսարևելյան նահանգներում կամ Կիլիկիայի ու Սիրիայի հարավարևելյան սահմանագծի վրա: Քերզոնի և անգլիացի մյուս դիվանագետների լոզանյան ելույթներում, ի տարբերություն Սևրի պայմանագրի ժամանակների, նկատելի էր թուրքերի նկատմամբ փոխզիջումների և զիջումների պատրաստակամություն: Մեծ Բրիտանիայի կեցվածքում նկատվող զգուշավորությունը, ինչպես նաև դաշնակիցների հարաբերություններում առկա տարածայնությունները ինքնավստահություն ու համարձակություն էին ներշնչում թուրքական պատվիրակությանը: Պատահական չէ, որ նշված երեք տարբերակներն էլ անընդունելի էին Թուրքիայի համար: 1922 թ. նոյեմբերի 22-ին՝ Խորհրդաժողովի առաջին նիստերից մեկում, Իտալիայում Թուրքիայի դեսպան Ջելալեդդին Արիֆ բեյը հայտարարեց, որ հայերի և այլ փոքրամասնությունների համար տարածքային օջախի ստեղծումն անհնար է: Դրա փոխարեն նա իր պետության անունից առաջարկում էր «փոքրամասնությունների ներկայացուցիչների կյանքի անվտանգության հնարավոր ամենաբարձր երաշխիքների ապահովում՝ հաշվի առնելով առաջիկա տարիներին նրանց արտագաղթի և թվաքանակի կրճատման շարունակումը»⁴⁴: Իսկ դեկտեմբերի 13-ին տարածքային և ռազմական հանձնաժողովի տասնչորսերորդ նիստում Թուրքիայի պատվիրակության ղեկավարը՝ արտաքին գործերի կոմիսար Իսմեթ Ինոնյուն, հայտարարեց. «Թուրքիայում մնալ ցանկացող հայերը կարող են եղբայրաբար ապրել իրենց հայրենակից թուրքերի հետ, որոնք նրանց մասին հոգ կտանեն և որոնք հոժարակամությամբ կմոռանան անցյալի բոլոր իրադարձությունները: Մյուս կողմից, [...] Թուրքիայի բաղադրիչ

⁴⁴ Grew J. C. Turbulent Era. A diplomatic era of forty years, 1904–1945, in 2 vols., vol. 1. Boston, Houghton Mifflin, 1952, p. 492.

մասը կազմող տերիտորիայի գիջումը և նրա վրա հայկական օջախ ստեղծելը կլիներ Թուրքիայի մասնատման մի նոր փորձ: Մինչդեռ նմանօրինակ փորձերի ապօրինությունն ու անհնարինությունն ապացուցվել են բազմիցս: Թուրքիան ոչ իր արևելյան նահանգներում, ոչ Կիլիկիայում չունի տերիտորիայի ոչ մի պատառ, որի բնակչության մեծ մասը թուրքեր չլինեն և որը կարելի լիներ որևէ կերպ անջատել մայր հայրենիքից:

Մյուս կողմից, Թուրքիան միջազգային իրավունքին համապատասխան և ընդունված ձևերի համաձայն պայմանագրեր է կնքել և բարիդրացիական հարաբերություններ է հաստատել ներկայումս գոյություն ունեցող անկախ Հայաստանի, այսինքն՝ Երևանի Սովետական Հանրապետության հետ: Թուրքիայի ստանձնած պարտավորություններին հակառակ կլիներ պատկերացնել որևէ այլ Հայաստանի գոյությունը»⁴⁵: Թուրքական պատվիրակ Ռիզա Նուր բեյն էլ հավելում էր, որ ոչ մի դեպքում իրենք «օջախի» համար ոչ մի գիջում չեն անի, հետևաբար հայերն իզուր են աշխատում. «Այլևս Թուրքիայի մէջ Հայկական հարց գոյութիւն չունի, նա վերջացած է ընդ միշտ»⁴⁶, - նշում էր թուրք դիվանագետը: Ինչպես ասում են մեկնաբանություններն ավելորդ են: Խորհրդաժողովի Հայկական հարցին նվիրված բոլոր նիստերն անցնում էին թուրք դիվանագետների լարած ծանր մթնոլորտում:

Ի վերջո, դաշնակից տերությունները Լոզանի խորհրդաժողովում մի կողմ դրեցին արդեն նաև «հայկական օջախի» գաղափարը՝ տեղի տալով ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ Իսմեթ փաշայի խոստումներին: Ինչ վերաբերում է աշխարհասփյուռ հայության Հայրենիք վերադառնալու խնդրին, ապա այն հանգեցվեց դեպի Խորհրդային Հայաստան հայ գաղթականների վերադարձը կազմակերպելուն: Դաշնակից տերությունները եկան համաձայնության, որ այդ խնդրի լուծմամբ զբաղվեր Ազգերի լիգան: Թուրքիայի ազգային փոքրամասնությունների մասին ընդհանուր հայտարարություններում չէին հիշատակվում անգամ «Հայաստան» ու «հայեր» բառերը: Լոնդոնի և Լոզանի խորհրդաժողովներում Ի. Ինոնյուն չարեց որևէ էական գիջում. Հայաստանի հարցում նա մնաց բացարձակապես անգիջում: Մինչդեռ Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչները քծնում էին նրան՝ մեծարելով «Նորին վսեմություն» արտահայտությամբ,

45 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. N 356, էջ 748–749: Great Britain, Parliament, Lausanne Conference on Near Eastern Affairs 1922–1923: Records of Proceedings and Draft Terms of peace. Turkey, N 1 (1923), Command Paper 1814. Lnd., HMSO, 1923, p. 203.

46 Հայոց պատմություն, հատ. IV, գիրք առաջին, էջ 649:

ամեն նախադասության մեջ անվանելով «բարեկամ ու սիրելի պաշտոնակից»:

Այդպիսով, Արևմուտքի գիշումների շնորհիվ Թուրքիան արտաքուստ ազատվեց Սևրի պայմանագրից: Իրականում միջազգային իրավունքի տեսանկյունից Լոզանի պայմանագրով հայոց իրավունքները ոչ միայն չեղյալ չեն հայտարարվել, այլև պայմանագրի 16-րդ հոդվածով վերահաստատվել են: Նախ 16-րդ հոդվածում Բուլղարիայի, Հունաստանի, Սիրիայի և Իրաքի հետ Թուրքիայի սահմանների հստակեցմամբ ամրագրվել է, որ Թուրքիան հրաժարվում է այն բոլոր տարածքներից, որոնց վրա Լոզանի պայմանագրով չի ձանաչվել Թուրքիայի ինքնիշխանությունը: Այդպիսով Լոզանի պայմանագիրը նաև չի ձանաչել թուրքական ինքնիշխանությունը Վ. Վիլսոնի իրավարար վճռով Հայաստանին հատկացված տարածքների վրա, հետևաբար Թուրքիան մեկ անգամ ևս հաստատել է իր հրաժարումը Վիլսոնյան Հայաստանից: Բացի այդ Լոզանի պայմանագրի կողմ հանդիսացող պետությունները Սևրի պայմանագիրը չեղյալ ձանաչելու մասին որևէ հայտարարություն չեն արել, այդ իրողությունը չեն ամրագրել պայմանագրում: Հետևաբար, ըստ միջազգային իրավունքի, Լոզանի պայմանագիրը ստորագրած պետությունների համար իրավական են Սևրի պայմանագրի այն դրույթները, որոնք չեն փոփոխվել Լոզանի պայմանագրով⁴⁷:

Այսպիսով Լոզանի պայմանագիրը իրավասու չէր և չեղյալ չի հայտարարել Սևրի պայմանագիրը, իսկ այն, որ Լոզանի պայմանագիրը չէր կրկնում Սևրով նախատեսված՝ հայերի բնաջնջման համար պատասխանատվություն սահմանող հոդվածների դրույթները, չի կարող նշանակել, թե դրանք վերացել կամ փոխարինվել են: Հետևաբար Թուրքիան կոպտորեն խախտում է միջազգային իրավունքը և իր ստանձնած պարտավորությունները՝ ոչ միայն չկատարելով հայ-թուրքական սահմանի վերաբերյալ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը և Լոզանի պայմանագրով նախատեսված ոչ մահմեդական փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի իրավունքների պաշտպանությանը վերաբերող հոդվածները, այլև 1993 թ. հուլիսից Հայաստանի Հանրապետության նկատմամբ իրականացնելով շրջափակման քաղաքականություն⁴⁸:

47 Տե՛ս Պապյան Ա., Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները: Տե՛ս Հայրենասիրություն: Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (Հոդվածների ժողովածու), Եր, 2012, էջ 28: Մարուքյան Ա. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր, 2014, էջ 139–140:

48 Տե՛ս Մարուքյան Ա., նշվ. աշխ., էջ 143–145, Պապյան Ա. Սևրի և Լոզանի պայմանագրերի իրավական փոխհարաբերությունները: Տե՛ս Հայրենասիրություն, էջ 66:

Այսպիսին էր Սևրի պայմանագրից մինչև Լոնդոնի և Լոզանի միջազգային խորհրդաժողովներն ընկած ժամանակահատվածում Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի քաղաքականության աստիճանական փոփոխության ընթացքը, քաղաքականություն, որին հայ պետական այրերի ապավինելը կործանարար եղավ թե՛ Հայկական հարցի և թե՛ հայկական անկախ պետականության համար: Լոնդոնի խորհրդաժողովը կարևոր փուլ էր Թուրքիայի հետ դաշնակից տերությունների հաշտության նոր պայմանագրի կնքման ճանապարհին: Այն նաև քաղաքական անիրատեսական ակնկալիքների, անկայունության, ուժի ցուցադրության և անզիջում պայքարի ծանր ժամանակահատված էր, երբ ո՛չ Հայաստանը, ո՛չ Մեծ Բրիտանիան և նրա դաշնակիցները, ո՛չ էլ Խորհրդային Ռուսաստանն անկարող էին համապատասխանեցնել իրենց քաղաքական նպատակները և դրանց հասնելու իրական հնարավորությունները: Այդ մրցապայքարում թերևս միայն Մ. Քեմալն էր կարողանում ճշգրտորեն գնահատել իր երկրի ռազմաստրատեգիական կարևորությունը թե՛ դաշնակիցների, թե՛ Խորհրդային Ռուսաստանի մերձավորարևելյան ծրագրերում և կանխատեսել դրանցից բխող ռազմաքաղաքական ուժն ու հզորությունը: Արդյունքում՝ 1923 թ. Հայաստանը եղավ մեծագույն չափով կորցնողը, իսկ Թուրքիան՝ շահողը:

Եվրոպական պետությունների շահադիտական կեցվածքը, Թուրքիայի քեմալական վարչակարգի հմուտ դիվանագիտությունը, Հայաստանի անորոշ ու խոցելի քաղաքական դրությունը, հայկական ազգային և պաշտոնական պատվիրակությունների ծրագրերում ու նրանց ղեկավարների գործունեության մեջ առկա անմիաբանությունը, դրա հետ մեկտեղ միջազգային իրադրության փոփոխությունները սթափ ու հեռատեսորեն գնահատելու նրանց անկարողությունը այն պատճառներն էին, որոնք հանգեցրին Հայկական հարցի արդարացի լուծման ձախողմանը և, ընդհանրապես, այդ հարցի լուծման անժամկետ հետաձգմանը: Ընդ որում, դա արվեց՝ կոպտորեն ոտնահարելով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմը հայրենիքից զրկված մի ողջ ժողովրդի հայրենիք վերադառնալու իրավունքը հարգելու վերաբերյալ: Մինչդեռ հենց այդ նորմի կիրառումն է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հնարավորություն տվեց հրեաներին համախմբվելու և իրենց պետությունը ստեղծելու Պաղեստինի տարածքում: Եթե հրեաներին հաջողվեց վերադառնալ պատմական հայրենիք ու այնտեղ վերստեղծել ազգային պետականությունը, ապա հայերի ճակատագիրը կիսող, այսինքն՝ դեռևս ոչ վաղ անցյալում տեղի ունեցած զավթողական պատերազմների կամ ցեղասպանության հետևան-

քով իրենց հայրենի օջախներն ու ունեցվածքը հարկադրաբար լքած մարդկային մեծ զանգվածներ կան, որոնք դեռևս երազում ու պայքարում են իրենց ոտնահարված իրավունքների պաշտպանության համար: Այդ պայքարի բովանդակությունն ու ծավալը էապես մեծացել են 2020 թ. սեպտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված ադրբեջանա-թուրքական պատերազմի արդյունքում հայկական կողմի կրած պարտության ու տարածքային նոր կորուստների հետևանքով:

2. Բրիտանական դիվանագիտությունը և քրդական հարցը Փարիզի Խաղաղության վեհաժողովում

Այս տարի լրանում է Սևրի պայմանագրի 100-ամյակը, ինչը կարևոր է ոչ միայն մեզ՝ հայերիս, այլև քրդերի համար, քանզի Փարիզի խաղաղության վեհաժողովն առաջին լուրջ քաղաքական հարթակն էր, որտեղ բարձրացվեց քրդական հարցը, և Սևրի պայմանագրով մասնակիորեն ճանաչվեց քուրդ ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

Առաջին աշխարհամարտից հետո միջազգային դիվանագիտության օրակարգում գտնվող՝ Օսմանյան կայսրության հայկական վեց վիլայեթները Հայաստանի Հանրապետության կազմում ներառելու հեռանկարը քրդերի կողմից դիտվում էր որպես իրական սպառնալիք: Քրդերի դրությունը բարդանում էր նաև նրանով, որ օսմանյան կառավարությունը բացառում էր նրանց անկախություն տալու հնարավորությունը, իսկ քեմալականները Հայոց ցեղասպանության իրականացմանը ակտիվորեն մասնակցած քուրդ ցեղապետերի վախն ու անհանգստությունն օգտագործելու նպատակով քննարկման առարկա էին դարձրել քրդերին ինքնավարություն տալու հարցը:

Ոչ պակաս կարևոր էր նաև այն հանգամանքը, որ Առաջին աշխարհամարտից հետո հիմնականում քրդաբնակ Մոսուլի վիլայեթը, որը քրդերը համարում էին Հարավային Քրդստան, անցել էր բրիտանացիների տիրապետության տակ, իսկ Սիրիայի քրդաբնակ շրջանները՝ Ֆրանսիայի, ինչը թուլացրել էր քրդերի ներուժը և արհեստական խոչընդոտներ ստեղծել նրանց միավորման համար: Ուստի ազգային ընդհանուր տեսլականից զուրկ քրդական վերնախավը բանակցում էր Փարիզի խաղաղության վեհաժողովին մասնակցող տերությունների հետ՝ ինքնաբերաբար դառնալով վերջիններիս գործիքը և սկիզբ առած քաղաքական առևտրում աստիճանաբար վերածվելով պարզ մանրադրամի:

Այս վճռորոշ ժամանակաշրջանում քրդական իրականության մեջ հանդես եկավ **Սուհամեդ Շերիֆ փաշան**, որը, լինելով օսմանյան պաշտոնյա և ամենևին էլ չպատկանելով ազդեցիկ ու հզոր քուրդ առաջնորդների թվին, տարօրինակ կերպով դարձավ Սևրում քրդական պատվիրակության ղեկավարը: Նա մարմնավորում էր միաժամանակ մի քանի ուժերի միջև խուսանավելու անհաջող փորձեր կատարող քրդական քաղաքականության ողջ հակասականությունը, ինչի հետևանքով Սևրում քրդերը ոչ միայն չկարողացան հասնել իրենց պահանջների բավարարմանը, այլև խճճվեցին բրիտանական դիվանագիտության, օսմանյան իշխանությունների և քեմալականների ձեռնարկած դիվանագիտական նուրբ խաղերի մեջ:

Փարիզի խաղաղության վեհաժողովից առաջ քրդաբնակ վիլայեթներում սեփական ազդեցությունը հաստատելու նպատակով բրիտանացիները փնտրում էին այնպիսի ազդեցիկ քուրդ գործչի, որը ունակ կլիներ միավորելու բոլոր քրդերին ու նրանց ենթարկելու իրենց: Առաջին թեկնածուն գեներալ Սուհամեդ Շերիֆ փաշան էր, որի հետ անգլիացիների կապերը ամենահինն էին: Նա Սուլեյմանիեի հայտնի տոհմի ներկայացուցիչ Սայիդ փաշայի որդին էր, որը սուլթան Աբդուլ Համիդ II-ի օրոք օսմանյան կառավարությունում բազմիցս նախարարի պաշտոններ էր զբաղեցրել:

Որպես օսմանյան պաշտոնյա՝ Շերիֆ փաշան իր էությանը հավատարիմ էր սուլթանին, բայց ազատ, ապակենտրոնացված կառավարման կողմնակից էր: Փարիզի օսմանյան տարագիրների շրջանակի ակտիվ անդամներից էր, չնայած որ նրանց շրջանում հայտնի էր որպես «բացառիկ հիմար, մանկամիտ, որի միակ առավելությունն իր փողերն էին»⁴⁹: Երբ սկսվեց պատերազմը, Շերիֆ փաշան կապեր հաստատեց դաշնակիցների, մասնավորապես՝ Ֆրանսիայում Մեծ Բրիտանիայի դեսպանի հետ՝ բարձրացնելով քրդական հարցը: Նա նաև շփումների մեջ էր ֆրանսիացիների հետ: Մարսելում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ Շերիֆ փաշան փորձում էր քրդական պետության ստեղծման երաշխիքներ ստանալ ֆրանսիական կառավարությունից⁵⁰: Սակայն ինչպես բրիտանացիները, այնպես էլ ֆրանսիացիները լուրջ չընդունեցին սուլթանի նախկին դեսպանի, համատեղությամբ՝ նաև թուրքական բանակի գեներալի առաջարկությունները:

49 David McDowall, op. cit., p. 120. Տե՛ս նաև Murat Bardakçı, Boş Herif başaramamıştı, Barzani hiç başaramaz,

<https://www.hurriyet.com.tr/bos-herif-basaramamisti-barzani-hic-basaramaz-132500> (մուտք՝ 23.06.20):

50 Ավելի մանրամասն տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Թուրքիայում Հայկական և Քրդական հարցերի քաղաքական աղերսների պատմությունից՝ միջազգային դիվանագիտության լուսի ներքո (Առաջին աշխարհամարտից մինչև Լոզանի կոնֆերանսը), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. XXIV, Եր., «Ձանգակ-97», 2005, էջ 53:

Պատերազմից հետո Շերիֆ փաշան հաղթող տերություններին ներկայացրեց քրդական հարցի լուծման նախագծի սեփական տարբերակը: Նա խորհուրդ էր տալիս բրիտանացիներին համագործակցելու ոչ թե ցեղային առաջնորդների ու շեյխերի, այլ Եվրոպայում կրթություն ստացած քուրդ ազնվականության ներկայացուցիչների հետ, որոնք զերծ էին ցեղային կապերից: Եվրոպական կրթություն ստացած ազնվականներից պետք է ընտրվեր էմիր, որը քուրդ ցեղային առաջնորդներից ձևավորելու էր խորհուրդ: Նա կառավարելու էր երկիրը բրիտանացի զինվորական և քաղաքացիական խորհրդականների օգնությամբ: Լինելու էր նաև սենատ, որի կազմի կեսը նշանակվելու էր ցեղապետերից, իսկ մյուս կեսը լինելու էր ընտրովի, ինչպես նաև պատգամավորների պալատ և սահմանադրական խորհուրդ⁵¹: Պետք է ստեղծվեր նաև խառը անգլո-թուրքական հանձնաժողով, որը կորոշեր ապագա քրդական պետության սահմանները, իսկ Մեծ Բրիտանիան պետք է ֆինանսական օգնություն ցույց տար քուրդ առաջնորդներին: Այսպիսով Շերիֆ փաշան մտադիր էր ապագա Քրդստանում ստեղծել սահմանադրական միապետություն:

Շերիֆ փաշան 1919 թվականի մայիսին Փարիզում Մեծ Բրիտանիայի դեսպանին հայտնեց, որ եթե Մեծ Բրիտանիան չգտնի այլ թեկնածու Քրդստանի էմիրի պաշտոնի համար, ապա նա «համաձայն է» իր վրա վերցնել այդ ծանր բեռը⁵²: Սակայն բրիտանացիները մերժեցին Շերիֆ փաշայի թեկնածությունը, քանի որ նա երկար էր մնացել Եվրոպայում և, բացի իր հարազատ Մոսուլից, տեղերում ազդեցություն չուներ⁵³: Կարևոր հանգամանք էր նաև նրա տարիքը: Բացի այդ՝ անգլիացիներն անհանգստացած էին Շերիֆ փաշայի խոսքերի ու գործերի միջև եղած մեծ տարբերությունից: Մասնավորապես հասկանալի չէր, թե ինչպես էր նա համատեղում Օսմանյան ապակենտրոնացված կայսրության կազմում ինքնավար Քրդստանի ծրագիրը իր կողմից հռչակված՝ Մեծ Բրիտանիայի հովանավորության տակ ինքնավար կամ նույնիսկ անկախ Քրդստանի հիմնադրույթի հետ, կամ ինչպես էր Հարավային Քրդստանի քուրդը հայերի հետ համերաշխության կոչեր անելու Արևմտյան Հայաստանի քրդերին, որոնք ատելությամբ էին լցված հայերի նկատմամբ, հատկապես Վիլսոնի ծրագրի հրապարակումից հետո: Այդ պատճառով Հնդկաստանի գործերով նախարարը կարծում էր, որ Շերիֆ փաշայի ծառայությունները անգլիական թագին աննշան են, որպեսզի նրան նշանակեն Քրդստանի էմիր: Իսկ Բաղդադում բրիտանական վար-

51 St u **Лазарев М. С.**, Империализм и курдский вопрос, М., 1989, էջ 103:

52 St u **David McDowall**, նշվ. աշխ., էջ 121:

53 St u **Vecdi Demir**, Liberal Bir Kürt Generali: Şerif Paşa,

https://www.academia.edu/7204641/Liberal_Bir_K%C3%BCrt_Generali_%C5%9Eerif_Pa%C5%9Fa
(մուսնք 23.06.20), էջ 8:

չակարգի ղեկավար Առնոլդ Վիլսոնը⁵⁴ գտնում էր, որ Շերիֆ փաշան չի համապատասխանում տվյալ պաշտոնին⁵⁵: Պատահական չէ, որ Կարո Սասունին բնութագրում է Շերիֆ փաշային որպես տակավին թուրքական հին պաշտոնյայի հոգեբանություն ու նկարագիր ունեցողի⁵⁶:

Սակայն ամենահետաքրքիրն այն էր, որ բրիտանացիների հետ ապագա Քրդստանի վերաբերյալ բանակցություններ վարող Մուհամեդ Շերիֆ փաշան միաժամանակ նաև Փարիզի խաղաղության վեհաժողովում քրդաբնակ վիլայեթներն ամեն կերպ օսմանյան պետության կազմում պահելուն ձգտող **օսմանյան պատվիրակության անդամ էր**: Միայն խաղաղության վեհաժողովի աշխատանքների սկսվելու առաջին օրը՝ 1919 թ. հունվարի 16-ին, նա վայր դրեց թուրքական պատվիրակության անդամի իր լիազորությունները և «Քրդստանի վերածնության ընկերություն» կազմակերպության լիազորագրով իրեն հռչակեց քրդական պատվիրակության նախագահ⁵⁷: **Հիշեցնենք, որ այդ ընկերության ղեկավարը օսմանյան սենատի նախագահ սեիդ Աբդուլ Քադիրն էր, ով քրդական վիլայեթները լայն ինքնավարության պայմանով Օսմանյան կայսրության կազմում թողնելու կողմնակից էր**:

Սակայն Շերիֆ փաշայի նոր կարգավիճակը չճանաչվեց, քանի որ Փարիզում քրդական պատվիրակություն որպես այդպիսին, գոյություն չուներ, իսկ Շերիֆ փաշան էլ չէր ներկայացնում քրդական ազդեցիկ ցեղերին: Քուրդ ազդեցիկ ցեղապետերի համոզմամբ՝ նա իր ամբողջ կյանքն անցկացրել էր Ստամբուլում և Եվրոպայում, որևէ գաղափար չուներ քրդաբնակ երկրամասերում տեղի ունեցող իրադարձությունների մասին, այնտեղ ոչ մի ազդեցություն չուներ և նույնիսկ չէր կարողանում խոսել

54 **Առնոլդ Վիլսոն** (1884-1940) - Իրաքի առաջին քաղաքացիական վարչակարգի ղեկավար (1918-1920), Գաղութների նախարարության Մերձավոր Արևելքի բաժնի ղեկավար Փերսի Քոքսի տեղակալը: Նրա խորհրդով էր, որ Բասրայի, Բաղդադի և Մոսուլի վիլայեթներից ստեղծված ենթամանդատային կազմավորումը Փարիզի խաղաղության վեհաժողովում պաշտոնապես անվանվեց արաբական Իրաք երկրանունով (ինչպես Արաբական խալիֆայության ժամանակ), այլ ոչ թե հունական Մետապոտամիա, ինչպես անվանում էին Եվրոպացիները: Ճնշել է 1920 թվականին Իրաքում բռնկված ապստամբությունները, որոնց ժամանակ զոհվել է 10 000 արաբ: Նրա նախաձեռնությամբ բրիտանական իշխանությունները Սիրիայի նախկին թագավոր Ֆեյսալին առաջարկեցին Իրաքի գահը, ինչը հանգստացրեց արաբներին: Սակայն բրիտանական կառավարության հետ հետագա տարածայնությունները ստիպեցին նրան դուրս գալ ժառայությունից: Երկրորդ աշխարհամարտի սկսվելու պես 55 տարեկան հասակում զինվորագրվել և ծառայության է անցել բրիտանական ռազմաօդային ուժերում որպես ռմբակոծիչի գնդացրորդ: Չհովել է Դյունկերկի ռազմագործողության ժամանակ ռմբակոծիչի կործանման պատճառով:

55 Տե՛ս **Лазарев М. С.**, նշվ. աշխ., էջ 104:

56 Տե՛ս **Tessa Hofmann**, *The History of Armenian-Kurdish Relations in the Ottoman Empire*, https://www.academia.edu/11391033/The_History_of_Armenian-Kurdish_Relations_in_the_Ottoman_Empire (մուտք 23.06.20), էջ 38 (20):

57 Տե՛ս **Քայրուրդյան Վ.**, Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Եր., 2008, էջ 267:

քրդերեն⁵⁸:

Մեծ Բրիտանիայի արտոգործնախարար լորդ Քերզոնը⁵⁹ գտնում էր, որ Պոլսից մինչև Բաղդադ հնարավոր չէ գտնել մի քրդի, որը կկարողանար իր ցեղից ավելի ներկայացնել քուրդ ժողովրդին, իսկ Շերիֆ փաշային էլ քրդերը չէին ընդունում⁶⁰: Սակայն քանի որ քրդական հարցը Փարիզում ներկայացնող որևէ մարմին չկար, իսկ բրիտանացիները շահագրգռված էին դրա խաղարկմամբ, Շերիֆ փաշային, այնուամենայնիվ, թույլ տրվեց ներկայացնել այն: Պատվիրակության նպատակն էր բարձրաձայնել քրդական հարցը և աշխատել դաշնակից տերություններից քրդերի համար ստանալու անկախություն և հողեր, որոնց մեծ մասը պետք է լիներ Արևմտյան Հայաստանի տարածքը՝ Դիարբեքի, Խարբերդի, Բիթլիսի և Մոսուլի վիլայեթները, Ուրֆայի սանջակը⁶¹: Այսինքն՝ քրդական պատվիրակության պահանջներն արտաքուստ ուղղված էին Օսմանյան կայսրությանը, բայց փաստորեն դրանք հակադրվում էին հայկական շահերին:

1919 թվականին Փարիզի խաղաղության վեհաժողովում Օսմանյան կայսրության հետ պայմանագիր չկնքվեց: Հաղթանակած տերությունների համար եվրոպական խնդիրներն առաջնահերթություններ էին: Իմանալով, թե ինչ ծանր բեռ է թուրքական հարցը՝ իր ենթաձյուղերով (հայկական, Պոնտոսի հույների, արաբական, քրդական, ասորական և այլն), նրանք գիտակցում էին, որ անհրաժեշտ կլինի բավական երկար ժամանակ՝ բոլոր կնճռոտ խնդիրները համաձայնեցնելու և ընդհանուր հայտարարի գալու համար: Մինչև եվրոպական հարցերի լուծումը կողմերը թուրքական հարցը քննարկում էին հպանցիկ կերպով՝ հետախուզելով միմյանց մտադրությունները և չցանկանալով սրել հարաբերությունները:

1919 թ. հունվարի 30-ին ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի առաջարկով ընդունվեց սկզբունքային որոշում՝ անջատել Թուրքիայից բոլոր ոչ թուրքական երկրամասերը՝ Հայաստանը, Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը, Արաբիան և Քրդստանը⁶²: Այս փաստը հատկանշական էր նրանով, որ առաջին

58 Sté u **Ayşe Hür**, Osmanlı'dan bugüne Kürtler ve Devlet: Kürt milliyetçiliğinin 'geç' doğumu, <http://file.setav.org/Files/Pdf/osmanlıdan-bugüne-kurtler-ve-devlet-ayse-hur-taraf.pdf> (մուտք՝ 27.06.20):

59 **Ջորջ Նաթանիել Քերզոն** (1859-1925) - պահպանողական, Հնդկաստանի փոխարքա (1899-1905 թթ.): Առաջին աշխարհամարտի ժամանակ ծառայել է վարչապետ Լյոյդ Ջորջի փոքր պատերազմական կաբինետում, 1916 թվականից Լորդերի պալատի նախագահն էր: 1919-1924 թվականներին եղել է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարը:

60 Sté u **Ղահրիյան Մ.**, Քրդական հարցի ծագումը 19-րդ դարի ապստամբություններից մինչև Սևր-Լոզան, <http://publications.yso.am/wp-content/uploads/2015/12/6Mushex-Ghahriyan1.pdf> (մուտք՝ 27.06.20), էջ 8 (114):

61 Sté u **Բայբուրդյան Վ.**, Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, էջ 266:

62 Sté u **Лазарев М. С.**, նշվ. աշխ., էջ 132:

անգամ Քրդստան անվանումը մուտք գործեց միջազգային դիվանագիտության ասպարեզ: Կայացնելով նման սկզբունքային որոշում՝ վեհաժողովը ստիպված էր լսել այդ ժողովուրդների ներկայացուցիչների պահանջները և ցանկությունները: Բայց այդ քայլն ավելի շուտ ձևական բնույթ էր կրում, քանի որ որևէ կերպ չէր ազդելու Անտանտի տերությունների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից ընդունված որոշումների վրա: Սակայն դա անհրաժեշտ էր **նախ**՝ ցույց տալու համար, որ Անտանտի երկրները հավատարիմ են պատերազմի տարիներին իրենց կողմից հնչեցված կոչին, ըստ որի՝ նրանք պատերազմում էին ժողովուրդներին թուրքական ատելի լծից ազատագրելու, այլ ոչ թե գաղութացնելու համար, և **երկրորդ**՝ պարզելու համար հարևան ժողովուրդների վերաբերմունքը միմյանց և հատկապես սահմանային հողերի նկատմամբ, որտեղ նրանք ապրում էին համատեղ:

1919 թ. փետրվարի 26-ին Տասի խորհրդի նիստում ելույթ ունեցավ հայկական պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանը, իսկ մարտի 22-ին՝ քրդական պատվիրակության ղեկավար Շերիֆ փաշան: Նա նիստին ներկայացրեց դեռևս փետրվարի 6-ով թվագրված «Քուրդ ժողովրդի պահանջների հուշագիրը» վերնագրով պահանջների ցանկը⁶³: Երկու կողմերի ելույթներում ներկայացված պահանջներն աչքի էին ընկնում ծայրահեղություններով՝ հաշվի չառնելով առկա իրողությունները և սեփական ուժերն ու հնարավորությունները: Հայտնի է, որ Ա. Ահարոնյանը Պողոս Նուբարի Ազգային պատվիրակության հետ համախորհուրդ գործելու համար շեղվել էր Հայաստանի Հանրապետության ներկայացրած չափավոր ծրագրից և պահանջում էր ստեղծել «Մեծ Հայաստան», որի մեջ պետք է մտնեին Կիլիկիան (Մարաշի հետ), Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Խարբերդի և Սվազի վիլայեթներն ամբողջությամբ, Դիարբեքիի վիլայեթի հյուսիսային մասը և Տրապիզոնի վիլայեթի արևելյան մասը՝ ելքով դեպի Սև ծով:

Իր հերթին Շերիֆ փաշան իր ելույթում կտրականապես մերժեց հայկական պահանջները՝ դրանք անվանելով «Հայաստանի իմպերիալիստական հավակնություններ»: Նա պահանջում էր քրդական անկախ պետության ստեղծում՝ Վիլսոնի 14 կետերի համաձայն, դեմ էր քրդերի կողմից զավթված հայկական հողերի վերադարձին իրենց օրինական տերերին և կոչ էր անում ստեղծելու միջազգային հանձնաժողով, որը պետք է քրդական պետության մեջ ներառեր այն հողերը, որոնց բնակչության մեծամասնությունը կազմում էին քրդերը: Ելնելով այդ կանխադրությից՝ նա գտնում

63 Հուշագրի տեքստը տե՛ս **Metin Atmaca**, Sherif Pasha's "Memorandum on the Claims of the Kurd People" to the Conference of Peace in Paris on February 6, 1919, https://www.academia.edu/36999073/Sherif_Pasha_s_Memorandum_on_the_Claims_of_the_Kurd_People_to_the_Conference_of_Peace_in_Paris_on_February_6_1919 (մուտք՝ 24.06.20), էջ 328-330:

էր, որ ապագա Քրդստանի մեջ պետք է մտնեն բոլոր չորս պետություններում գտնվող քրդաբնակ տարածքները, այդ թվում՝ նաև Իրանական Քրդստանը⁶⁴: Բայց քանի որ գլխավոր խնդիրը, այսպես կոչված, Թուրքական Քրդստանն էր և պայքարը հայերի դեմ, նա իր պահանջներում գերադասեց չհիշատակել Իրանական Քրդստանի մասին: Իր ելույթում Շերիֆ փաշան ապագա Քրդստանը պատկերացնում էր հետևյալ սահմաններով. արևմուտքում՝ Էրզրում-Երզնկա-Արաբկիր-Դիվրիզ գիծը, հյուսիսում՝ մինչև 1914 թ. ռուս-թուրքական սահմանը, որը տվյալ պահին Հայաստանի Հանրապետության և Օսմանյան կայսրության սահմանն էր, հարավում՝ Սինջարի լեռներով Թեյ-Աֆար, Էրբիլ, Քիրքուք, Սուլեյմանիե, Սեննե, արևելքում՝ Ռևանդուզ-Բաշքալե գծով մինչև իրանական սահման, այնուհետև՝ իրանական սահմանով մինչև Արարատ լեռը⁶⁵: Սակայն սա նրա նվազագույն պահանջն էր, իսկ առավելագույն պահանջով ապագա քրդական պետության կազմում պետք է ընդգրկվեին ավելի մեծ տարածքներ՝ հյուսիսում՝ մինչև կովկասյան հին սահմանները⁶⁶, արևմուտքում՝ մինչև Էրզրում, արևելքում՝ մինչև Ռևանդուզ, իսկ հարավում՝ մինչև Քիրքուք: Այս առաջարկները չընդունվեցին վեհաժողովի մասնակիցների կողմից⁶⁷:

Իր ելույթում Շերիֆ փաշան ամենևին չհիշատակեց այն հանգամանքը, որ նշված հողերի իսկական տերերը՝ հայերը, ոչնչացվել էին ամենադաժան ձևերով, և այդ հարցում քրդերն ունեցել էին շատ մեծ դերակատարում ու պետք է պատժվեին այնպես, ինչպես երիտթուրք առաջնորդները: Իր պահանջները Շերիֆ փաշան փորձում էր «հիմնավորել» տնտեսական դրդապատճառներով: Ըստ նրա՝ քանի որ քրդերի տնտեսության հիմնական ճյուղը անասնապահությունն էր, ուստի բոլոր արոտավայրերը (թե՛ ամառային և թե՛ ձմեռային), որտեղ արածում էին նրանց հոտերը, անպայման պետք է ներառվեին քրդական պետության մեջ, այլապես տնտեսությունը կքայքայվեր, և ժողովուրդը կմատնվեր թշվառության: Հայերի վերադարձը իրենց հարազատ օջախները խոչընդոտելու համար Շերիֆ փաշան դիմում էր բացահայտ շանտաժի՝ դաշնակից պատվիրակությունների համար «բացահայտելով» հայերի՝ ռուս բոլշևիկների հանդեպ «համակրանքը» և քրդերին ներկայացնելով որ-

64 Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Հայ-քրդական հարաբերությունները Հայաստանի առաջին հանրապետության գոյության տարիներին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. XX, Եր., «Զանգակ-97», 2001, էջ 5-40:

65 Տե՛ս The Kurds: An Encyclopedia of Life, Culture, and Society, Santa Barbara – Denver 7/5/2018, Էջ 328-330:

66 Տե՛ս նույն տեղում, էջ 19:

67 Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լուսի ներքո, էջ 280: Տե՛ս նաև «Քրդական հարցը Թուրքիայում և անկախ Քրդստանի ստեղծման ծրագրերը միջազգային դիվանագիտության լուսի ներքո», [http://hpj.asj-qa.am/2494/1/2008-1\(34\).pdf](http://hpj.asj-qa.am/2494/1/2008-1(34).pdf) (մուտք՝ 24.06.20), էջ 11:

պես միակ պատվար Մերձավոր և Միջին Արևելքում բուշնիզմի տարածման դեմ⁶⁸:

Շերիֆ փաշայի ելույթը ոչինչ չարժեր Փարիզի հաշտության վեհաժողովի համար, և նրա պահանջները ոչ ոք չէր պատրաստվում անգամ քննարկելու, քանի որ դրա համար կային մի քանի հիմնավոր պատճառներ: **Նախ**` նրա թիկունքում չկար ոչ մի իրական ուժ. ո՛չ Ստամբուլում գործող քրդական ընկերությունները և ո՛չ էլ Քրդստանում բնակվող ազդեցիկ քրդական տոհմերը նրան չէին լիազորել ներկայացնելու քրդական շահերը Փարիզում: **Երկրորդ**` դաշնակիցները և հատկապես բրիտանացիները նրան դիտում էին ոչ թե որպես քուրդ ազգային գործիչ, այլ ավելի շատ որպես «ազատական թուրքերի ներկայացուցիչ, որոնք պատասխանատու չէին պատերազմի համար և կանգնած էին թուրքիայի ամբողջականության դիրքերում»⁶⁹: Շերիֆ փաշայի դիվանագիտական առաքելության ձախողմանը նպաստեցին (հատկապես 1919 թ. առաջին կեսին) նրա հակահայկական կեցվածքը և բուն հայկական հողերը քրդական պետության մեջ ներառելու պահանջի առաջադրումը:

1919 թ. հունիսի 17-ին ելույթի իրավունք տրվեց թուրքական կողմին` ի դեմս Մեհմեդ Ֆերիդ փաշայի⁷⁰: Օսմանյան կայսրության տարածքային կորուստները նվազագույնի հասցնելու համար Ֆերիդ փաշան առաջարկեց վեհաժողովին ընդունել հուշագիր, ըստ որի` պատերազմի ժամանակ երիտթուրքերի կողմից քրիստոնյաների նկատմամբ իրականացված հանցագործությունները հավասարեցվում էին Անտանտի գործերի կամ քրիստոնյաների կողմից երեք միլիոն մահմեդականների նկատմամբ իրականացված հանցագործություններին: Այս առաջարկը հարուցեց դաշնակիցների զարմանքը, քանի որ թուրքիան առանց որևէ պատճառի կամ սադրանքի, կանխամտածված հարձակվել էր Անտանտի երկրների

68 Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Հայ-քրդական հարաբերությունները Հայաստանի առաջին հանրապետության գոյության տարիներին, էջ 20:

69 **Лазарев М. С.**, указ. соч., с. 137.

70 **Մեհմեդ Ֆերիդ փաշա** (1853-1923) - օսմանյան քաղաքական գործիչ, երկու անգամ եղել է կայսրության մեծ վեզիրը` վարչապետը: Ամուսնանալով Մեհմեդ VI սուլթանի հարազատ քրոջ հետ ստացել է «դամար» տիտղոսը: Սուլթան Աբդուլ Համիդ II-ի օրոք եղել է դիվանագիտական ծառայության մեջ Լոնդոնում, Փարիզում, Պետերբուրգում և Բեռլինում: Հետո որոշ ժամանակ եղել է վեզիր (ճախարար): 1908 թվականին դարձել է օսմանյան սենատի անդամ: 1919 թ. մարտի 10-ից մինչև հոկտեմբերի 4-ը եղել է մեծ վեզիր: 1919 թ. հուլիսի 1-ին պաշտոնապես ձանաչել է հայերի` պետական մակարդակով կազմակերպված զանգվածային կոտորածները և սկսել է հանցագործների դեմ դատավարությունները: Հունական գործերի հաղթանակների պատճառով սուլթանը նրան ազատել է մեծ վեզիրի պաշտոնից, սակայն նոր կառավարություն կազմելու երկու անհաջող փորձերից հետո` 1920 թ. ապրիլի 5-ին, ստիպված է լինում նորից մեծ վեզիր նշանակել Մեհմեդ Ֆերիդ փաշային: Նրա վարչապետության սկիզբը համընկնում է դաշնակիցների կողմից օսմանյան խորհրդարանի գործունեությունը դադարեցնելու հետ: 1920 թ. օգոստոսի 10-ին որպես օսմանյան պատվիրակության ղեկավար ստորագրել է Սևրի պայմանագիրը, որից հետո քեմալականների կողմից հայտարարվել է դավաճան: Միլլի շարժման հաղթանակից հետո տարագրվել է Նիցցա, որտեղ էլ մահացել է 1923 թ.:

վրա, ուստի պետք է տրամադրեր արժանի հատուցում: Ֆերիդ փաշայի առաջարկը մերժվեց, իսկ դա նշանակում էր, որ Թուրքիան՝ որպես անձնատուր եղած երկիր, չէր կարող ոչինչ պահանջել և պետք է անվերապահորեն կատարեր այն ամենը, ինչ կորոշեին հաղթանակած դաշնակիցները:

Սակայն 1919 թվականի երկրորդ կեսին ամրապնդվող քեմալական շարժումը ստիպեց Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներին ջանքեր գործադրել հայկական և քրդական պատվիրակությունները միավորելու համար՝ թուրքերի դեմ ավելի արդյունավետ գործելու նպատակով: Պետք է նշել, որ բրիտանացիները այդ քայլերը ձեռնարկել էին դեռ 1919 թվականի գարնանը: 1919 թ. ապրիլի 18-ին Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովի նախագահ Գ. Դավթյանը, «Քրդական կոմիտեների հետ բանակցությունների սկսման անհրաժեշտության մասին» նամակով դիմելով Ազգային պատվիրակությանը, խորհուրդ էր տվել համաձայնագիր կնքելու Շերիֆ փաշայի հետ՝ հայտնելով, որ առաջարկը գալիս է անգլիական աղբյուրից: Իսկ մինչ այդ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն էր կապվել քրդական ազգային ակումբների հետ և Ազգային պատվիրակությանն առաջարկել բանակցել Շերիֆ փաշայի հետ⁷¹: Ըստ նրանց՝ այս միավորումը թուրքերին կզրկեր Խաղաղության վեհաժողովում քրդերի շնորհիվ մանկրելու հնարավորությունից, ինչպես նաև կդադարեցներ հայ-քրդական արյունահեղ բախումները հայ-թուրքական սահմանի ողջ երկայնքով: Բացի այդ քրդերին միավորելով հայերի հետ, անգլիացիները հույս ունեին քեմալականներին զրկելու քրդերին իրենց դաշնակիցը դարձնելու հնարավորությունից: Նրանց թվում էր, թե փոքրաթիվ և արյունաքամ եղած հայերը քրդերի օգնությամբ կարող էին ավելի արդյունավետ դիմակայել թուրքերին: Սակայն մեզ թվում է, որ բրիտանացիների այս ծրագրում կար նաև չորրորդ պատճառը, այն է՝ թույլ չտալ, որ ֆրանսիացիներին իրենց ազդեցությունը տարածեն քրդերի շրջանում: Ուստի Փարիզում բրիտանական հանձնաժողովի անդամները հանդիպեցին Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշայի հետ և, բացատրելով ստեղծված իրավիճակը, խորհուրդ տվեցին նրան միանալու քրդական պատվիրակությանը: Պողոս Նուբար փաշան անմիջապես համաձայնեց: Իր համաձայնությունը տվեց նաև Շերիֆ փաշան, և 1919 թ. նոյեմբերի 20-ին նրանք հրապարակեցին մի համաձայնագրի տեքստ, որը կազմված էր համատեղ հռչակագրի⁷² տեսքով: Նրանում ասվում էր,

71 Տես Հարությունյան Ա., Հայ-քրդական հարաբերությունները Հայաստանի առաջին հանրապետության շրջանում, «Վէմ», Եր., 2016, N 1, էջ 39:

72 Տես սույն հրապարակման Հավելված 1-ը:

որ երկու պատվիրակությունների ղեկավարները որոշել են միավորել իրենց ջանքերը: Հայկական կողմից փաստաթուղթը ստորագրել էին Պողոս Նուբար փաշան և Հայաստանի Հանրապետության պատվիրակության փոխնախագահ Համո Օհանջանյանը, քանի որ այդ օրը ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանը բացակա էր:

Համաձայնագրում մասնավորապես նշվում էր, որ հայ և քուրդ ժողովուրդները, ցանկանալով ազատագրվել թուրքական դաժան լծից, խնդրում են դաշնակից տերություններին աջակցել միացյալ, անկախ Հայաստանի և անկախ Քրդստանի ստեղծմանը՝ ըստ ազգային սկզբունքի, և օգնել իրենց ինչպես տեխնիկապես, այնպես էլ տնտեսապես: Ինչ վերաբերում է կարևոր՝ հողային խնդրին, ապա ապագա պետությունների միջև սահմանների գծումը կողմերը թողնում էին դաշնակից տերությունների որոշմանը⁷³:

Այս համատեղ հռչակագրի հրապարակումը տարբեր կերպ ընդունվեց հայկական և քրդական շրջանակներում և միանշանակորեն բացասաբար՝ ինչպես Ստամբուլի կառավարության, այնպես էլ Անկարայի քեմալականների կողմից, որոնք հայտարարեցին, թե այդ ամենը ոչինչ չի նշանակում, և ոչ մի թիզ թուրքական հող սակարկության ենթակա չէ:

Ստամբուլի քրդական վերնախավում (սեիդ Աբդուլ Քադիր, Բադրխաններ) այս իրադարձությունը սկզբնական շրջանում ընդունվեց դրականորեն, քանի որ այդ փաստով հայկական կողմը պաշտոնապես ճանաչեց քրդերի իրավունքները, այդ թվում՝ նաև սեփական պետություն ունենալու հարցում:

Հայ քաղաքական կուսակցությունների մի մասը նույնպես դրականորեն արտահայտվեց այս համաձայնագրի մասին, քանի որ հույս կար, որ դրանով վերջ կդրվեր հայ-քրդական բախումներին, և երկու կողմերը կարող էին միասնաբար հանդես գալ քեմալականների դեմ: Սակայն երբ հայկական և քրդական քաղաքական շրջանակներում ծանոթացան այդ փաստաթղթի բովանդակությանը, երկու կողմերում էլ առաջ եկավ դժգոհության ալիք: Քրդական վերնախավը Ստամբուլում և արևելյան վիլայեթներում բացասաբար արձագանքեց դրան: Հավասարապես դժգոհ էին թե՛ Քրդստանի՝ Թուրքիայից լիակատար անկախության կողմնակիցները, թե՛ այն Թուրքիայի կազմում որպես ինքնավար մարզ տեսնել ցանկացողները: Իսկ արևելյան վիլայեթների քուրդ ցեղապետերը, որոնք անընդհատ բախումների մեջ էին հայկական զորքերի հետ, պարզապես չընդունեցին փաստաթուղթը: Նրանցից շատերը, որոնք պայքարել էին երիտթուրքերի դեմ և ցանկանում էին ազատվել թուրքական լծից, այժմ ցան-

73 Տե՛ս Սասունի Կ., Քիւրտ ազգային շարժումները եւ հայ-քրտական յարաբերութիւնները, Պէյրուք, 1968, էջ 235:

կանում էին վերանայել իրենց հարաբերությունները Ստամբուլի կենտրոնական կառավարության հետ:

Հայկական որոշ քաղաքական ուժեր (ինչպես, օրինակ, Հնչակյան կուսակցության ԱՄՆ-ի կառույցը) մեղադրում էին Պողոս Նուբար փաշային, որ նա այդ համաձայնագրով փաստորեն հրաժարվել է հայկական վեց վիլայեթներից, որոնք դաշնակիցները խոստացել էին վերադարձնել Հայաստանին դեռևս 1919 թ. փետրվարին, և դրանք մկրտել «Քրդստան» անունով: Դժգոհ էին նաև Հայաստանում իշխող «ՀՅ Ղազնակցություն» կուսակցությունում, որի անդամները ոչ միայն քննադատում էին համաձայնագրի կնքումը, այլև ցավ հայտնում, որ դրանում կան Հայաստանի Հանրապետության ստորագրությունն ու կնիքը, և ավելացնում, որ եթե համաձայնագիրը չմերժվի կամ անփոփոխ մնա, ապա մեծ հարված կլինի Հայկական հարցին, քանի որ Պողոս Նուբարն աղետալի սխալ է գործել: Իսկ Հնչակյանները գտնում էին, որ պետք է քննադատության արժանանա ոչ միայն Պողոս Նուբար փաշան, այլև ՀՀ ներկայացուցիչ Համո Օհանջանյանը⁷⁴:

Եգիպտոսում լույս տեսնող «Յուսաբեր»-ի 1920 թ. փետրվարի 26-ի խմբագրականում Պողոս Նուբար փաշան ուղղակիորեն մեղադրվում էր, որ ունենալով մեծ տերությունների կողմից տրված երաշխիք՝ որպես փոխատուցում ստանալու Արևմտյան Հայաստանը՝ պատերազմի ժամանակ դաշնակիցներին տրամադրված օգնության և այդ օգնության համար միլիոնից ավելի անմեղ զոհերի դիմաց, նա համագործակցության գնաց քրդերի հետ, որոնք մասնակցել էին կոտորածներին, և նրանց կամովին զիջեց հայկական վիլայեթների մի մասը: **Մինչդեռ այս համաձայնագրով հայկական կողմը ոչ մի վիլայեթից չէր հրաժարվել, քանի որ նրանում տարածքների մասին խոսք չկար: Ավելին՝ դեռևս 1919 թ. կեսերից պարզ էր դարձել, որ արևմտյան դաշնակիցները պատրաստվում են ճանաչելու հայկական հավակնությունները միայն Օսմանյան կայսրության բաժանման վերաբերյալ նախկինում կնքված գաղտնի համաձայնագրերում Ռուսաստանին հատկացված տարածքներում՝ երեք վիլայեթով և ելքով դեպի Սև ծով, որովհետև Արևմտյան Հայաստանի մնացած տարածքներն ու քրդաբնակ երկրամասերը բաժանվելու էին ֆրանսիական ու բրիտանական գոտիների միջև: Բայց դրա մասին գիտեին միայն հայ պատվիրակները: Ուստի ՀՀ պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանը ևս համակարծիք էր Պողոս Նուբար փաշայի հետ: Ամերիկահայ քաղաքական շրջանակներին ուղղված համատեղ հեռագրում նրանք փորձում էին ապացուցել, որ համաձայնագիրը ոչ մի կերպ չի վնասում հայկական շահերին և պահանջներին⁷⁵:**

74 Տե՛ս Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 42-43:

75 Տե՛ս նույն տեղում, էջ 43:

Մինչդեռ, բաց նամակով դիմելով Պողոս Նուբար փաշային, ՀՅԴ նշանավոր գործիչ Գարեգին Փաստրմաձյանը⁷⁶ նրան մեղադրում էր արևմտահայության շահերը և պահանջները անտեսելու մեջ: Ըստ նրա՝ Պողոս Նուբար փաշան այդ քայլով ուզում էր ասել վեհաժողովին, թե իբր **առաջին** հայ և քուրդ ժողովուրդների շահերը համազոր և նույնանման են, **երկրորդ**՝ ոչնչացնում է 1919 թ. փետրվարին հայկական կողմի ներկայացրած հուշագրի նշանակությունը և բարոյական ուժը՝ պատրաստակամություն հայտնելով հայկական տարածքներից ահագին կտոր տրամադրելու նորաստեղծ Քրդստանին: Քանզի Շերիֆ փաշան իր ներկայացրած հուշագրում պահանջել է Արևմտյան Հայաստանի երեք քառորդը, այսինքն՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի ու Դիարբեքիի վիլայեթները և Կարնո վիլայեթի կեսից ավելին: «Շատ հաւանական է, որ մեր «բարեկամ» պետութիւններէն մէկը կամ միւսը ձեզ հրամայած է խորհուրդի ձևով, և դուք ձեր սովորական թեթևամտութեամբ ընդ առաջ էք գացած այդ հրամանին», - կարծիք էր հայտնում Գարեգին Փաստրմաձյանը և ապա հավելում. «...դուք կը յայտնէք Հաշտութեան Վեհաժողովին, թէ հայ և քիւրտ ժողովուրդները հաւասարապէս տուժած են ժէօն Թիւրք կառավարութենէն, իսկ ես ձեզ կ'ըսեմ, որ դուք սուտ կը խօսիք: Հայերն են միայն տուժած և այն ալ ահռելի չափերով, իսկ Քիւրտերը մասնակից և գործակից են եղած այն մեծ ոճիրին, որ տեղի ունեցաւ 1915ին:

...Ենթադրենք ըրալէ մը, որ Օհանջանեան, անծանօթ ըլլալով Շերիֆի անցեալին, չկարողացաւ հասկնալ այս մանուածապատ նախադասութեան նշանակութիւնը, իսկ դուք, որ մօտէն գիտէք այդ ծագումով քիւրտ, բայց իրականութեան մէջ թուրք պետական գործիչին անցեալ ու ներկայ կապերը, ինչպէ՞ս արիութիւն չունեցաք զոնէ այս խայտառակ նախադասութիւնը մերժելու:

Մի՞թէ ձեզ համար պարզ չէ այն խաղը, որ կը խաղայ Շերիֆը Փարիզ նստած և կը փորձէ Հայաստանի մէկ մեծ մասը որպէս Քիւրտիստան միացած պահել ապագայ Տաճկաստանին»⁷⁷:

Հայ-քրդական միացյալ պատվիրակության կազմավորման հակառակորդները որպես իրենց տեսակետի ապացույց վկայաբերում էին Շերիֆ

76 **Գարեգին Փաստրմաձյան** (Արմեն Գարո, 1872-1923) - ՀՅԴ անդամ, ՀՀ պետական գործիչ: Մասնակցել է Օսմանյան բանկի գրավմանը, հայ-թաթարական ընդհարումների ժամանակ ղեկավարել է հայերի ինքնապաշտպանական մարտերը Թիֆլիսում: 1908 թ. Երզրումից ընտրվել է օսմանյան խորհրդարանի պատգամավոր: 1914 թ., երբ այլևս պատգամավոր չէր, գործուն մասնակցություն է ունեցել երկրորդ կամավորական ջոկատի կազմավորմանը, որի հրամանատարն էր Դրոն: 1915 թ. մասնակցել է Վանի ազատագրման կռիվներին: 1917 թ. զարմանք՝ Ռուսական հեղափոխությունից հետո, մեկնել է Պետրոգրադ, իսկ այնուհետև՝ ԱՄՆ: Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո նշանակվել է ՀՀ դեսպան ԱՄՆ-ում՝ հետագայում դառնալով «Նեմեպիս» գործողության ղեկավարը: Մահացել է ժնկում 1923 թ.:

77 «Յուսաբեր», Գահիրե, 24 փետրուար 1920, էջ 2:

փաշայի հակահայկական դիրքորոշումը մինչև 1919 թ. նոյեմբերը և այդ դիրքորոշման՝ ընդհուպ 180 աստիճանի փոփոխությունը նոյեմբերին, երբ նա միացավ հայկական պատվիրակությանը: Վերակազմյալ Հնչակյանները գտնում էին, որ համաձայնագիրը թուրքերի մտահոլացումն է, քանի որ Շերիֆ փաշան հայտնի էր որպես իթիլաֆական⁷⁸: Իսկ նպատակն է քրդերին ներգրավելով վիճարկելի դարձնել արդեն հաստատված՝ հայկական վեց վիլայեթները Հայաստանի Հանրապետությանը տալու որոշումը, քանզի դա փաստորեն ստիպում է պաշտոնապես ընդունել Քրդստանը՝ որպես վավերական տարածք, այլ ոչ թե հայկական հողեր, որտեղ 1915 թվականից հետո բնակվում են քրդեր:

Ինքը՝ Շերիֆ փաշան, չէր էլ ժխտում, որ լայն կապեր ունի օսմանյան վերնախավում և ամենևին էլ դեմ չէ, որ Քրդստանը շարունակի մնալ Օսմանյան կայսրության կազմում ինքնավարության կարգավիճակով: Դեռ 1919 թ. մարտի 22-ին նա Փարիզում անգլերենով հրատարակել էր «Քիրտ ժողովուրդին պահանջներուն յիշատակագիրը» վերնագրով 16 էջանոց մի գրքույկ, որում գրում էր, որ Հայաստանի պահանջները ծայրահեղորեն ծավալապաշտական են, քանի որ հայերը ոչ մի տեղ մեծամասնություն չեն կազմում, այլ քրդերն են մեծամասնություն, և հետևաբար, վիլսոնյան սկզբունքի համաձայն, ամեն ինչ խոսում է ի նպաստ քրդական ազատ և անկախ պետության կազմավորման: Նա ամենևին էլ չէր հիշատակում այն փաստը, որ մինչև 1915 թվականը այդ հողերում բնակչության մեծամասնությունը կազմել են հայերը, և քրդերը գործուն մասնակցություն են ունեցել հայկական ջարդերին: Գրքի վերջում նա սպառնում էր, որ եթե քրդերով բնակեցված տարածքները, հակառակ այն հանգամանքին, որ դրանցում մեծամասնություն են քրդերը, ներգրավեն Հայաստանի կազմում, ապա այդ տարածքներում կլինեն մշտական անկարգություններ, և եթե նույնիսկ Հայաստանի դաշնակից պետությունները գրավեն այդ տարածքները, նրանց զորքերը նույնպես կենթարկվեն հարձակումների քրդական ջոկատների կողմից⁷⁹:

Մինևույն ժամանակ, ըստ բրիտանական «Թայմս» թերթի, Շերիֆ փաշայի նախաձեռնությունը բացասաբար ընդունվեց Ստամբուլում թուրքական պաշտոնական շրջանակների կողմից, իսկ թուրքական մամուլը սկսեց դրա դեմ ուղղված շատ ուժեղ հակաքարոզչություն ծավալել⁸⁰, ինչը մեծացնում էր առանց այդ էլ խոր տարանջատվածությունը քրդական տարբեր ցեղերի և քաղաքական խմբավորումների միջև: **Իսկ այն լուրերը, թե Քրդստանը պետք**

78 Տե՛ս Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 43:

79 Տե՛ս «Յուսաբեր», 9 սեպտեմբեր 1919:

80 Տե՛ս Ceren Çıkm, Yeni gün gazetesi, էջ 114-116, HACETTEPE ÜNİVERSİTESİ SOSYAL BİLİMLER ENSTİTÜSÜ TARİH ANABİLİM DALI, Yüksek Lisans Tezi, Ankara, 2007, 296 էջ:

է կիսվի Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև, ստիպեցին մինչ այդ Քրդստանի՝ Թուրքիայից լիակատար անկախության կողմնակիցներին պահանջել ինքնավարություն Թուրքիայի հովանու ներքո, միայն թե ենթադրյալ Քրդստանը չբաժանվի մասերի: Մինչդեռ թուրքական հասարակությանը հանգստացնելու համար Շերիֆ փաշան թուրքական մամուլին տեղեկացնում էր, որ ինքը «հաջողությամբ չեզոքացրեց հայկական պահանջները և Պողոս Նուբարին զցեց մեծ զիջման մեջ»⁸¹: Բայց Ստամբուլում գտնվող քուրդ ղեկավարներն ընդհանուր առմամբ դեմ չէին անկախ Հայաստանի ստեղծմանը, եթե նրա մեջ չէին մտնելու քրդերով բնակեցված շրջանները⁸²:

Իր հերթին Շերիֆ փաշան մի քանի նամակներ ուղղեց ֆրանսիական «Մատեն» և անգլիական «Թայմս» թերթերին, որոնցում, Թուրքիայի քարոզչական բնույթի հարձակումներից ազդված, խեղաթյուրեց հայերի հետ ստորագրած փաստաթղթի իմաստը և սկզբունքորեն հեռացավ նրա հայեցակետից: Այդ ամենը նա արեց՝ պաշտպանելով սուլթանի գերիշխանության ներքո քրդական ինքնավարության գաղափարը և փաստորեն ընդդիմանալով մինչ այդ առաջադրած անկախ Քրդստանի պահանջին: Պատասխանելով իր դեմ հնչած թուրքական մեղադրանքներին՝ նա ֆրանսիական «Մատեն» թերթում պարզաբանում էր հայկական պատվիրակությանը միանալու իր շարժառիթները: Ըստ նրա՝ պատերազմի վերջում, երբ ակնհայտ էր այլևս Օսմանյան կայսրության պարտությունը, և քրդական հողերը դարձել էին սակարկության առարկա հայկական կազմակերպությունների և դաշնակից տերությունների միջև, որոնք հաշվի չէին առնում այդ երկրի «բնիկ» ազգաբնակչության՝ քրդերի ցանկությունն ու իղձը, նա իր պարտքը համարեց պաշտպանել իր ցեղի օրինական շահերը և հռչակել Քրդստանի անկախությունը ճիշտ այնպես, ինչպես դա արել էին հայերը: Բայց դրան հասնելու համար նախ և առաջ պետք էր արևմտյան տերություններին բացատրել, որ քուրդը լոկ աշխարհագրական մտացածին երևույթ չէ, ինչում, ըստ նրա, հայերը իրենց լավ կազմակերպված քարոզչությամբ կարողացել էին համոզել արևմտյան տերությունների քաղաքական վերնախավին: Ահա այդ նպատակին հասնելու համար նա միացավ հայկական պատվիրակությանը և փաստորեն ստիպեց հայերին ու դաշնակից տերություններին ընդունել Քրդստանի գոյությունը:

Վերջում Շերիֆ փաշան զգուշացնում էր, որ եթե Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, ըստ լուրերի, ցանկանան կիսել Քրդստանը իրար մեջ, ապա, դրան ի պատասխան, յուրաքանչյուր քուրդ իրավունք ունի ձգտելու ապրել

81 Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 42:

82 Տե՛ս «Յուսաբեր», Գահիրե՛, 18 մարտի, 1920:

կրոնակից թուրքիայում ինքնավար կարգավիճակով և պաշտպանելու իր ազգագրական սահմաններն ու կյանքը ամեն ոտնձգությունից, որտեղից էլ որ այն գա⁸³:

Ստացվում է, որ դաշնակիցների կողմից «Մեծ Հայաստանի» ծրագրի մերժումը և Հարավային Հայաստանն ու ապագա Քրդստանի տարածքը իրար մեջ բաժանելու մտադրության բացահայտումը փոխել էին քրդերի վերաբերմունքը նրանց հանդեպ: Կարճ ժամանակ անց՝ 1920 թ. մարտի 11-ին, թուրքական «Ալեմդար» թերթում հայտնվեց Շերիֆ փաշայի քարտուղար Գալիբ բեյի հարցազրույցը, որը նոր բացահայտումներ արեց Շերիֆ փաշայի՝ քրդական պատվիրակության ղեկավար դառնալու առեղծվածի վերաբերյալ: Գալիբ բեյը պնդում էր, որ իրականում Շերիֆ փաշային ոչ ոք՝ ո՛չ Ստամբուլի քրդական քաղաքական կուսակցությունները և ո՛չ էլ Քրդստանի հոգևոր կամ աշխարհիկ վերնախավը, չէր լիազորել Փարիզում պաշտպանելու քրդական շահերը: Բացահայտվեցին նաև նրա՝ հայկական պատվիրակությանը միանալու անսպասելի որոշման իրական նպատակները: Ըստ Գալիբ բեյի՝ «Զինադադարէն յետոյ Ջուիցերիոյ մէջ գումարուած օսմանեան բօնկրէն (արքայազն Սապահեդդինը⁸⁴, Ահմեդ Ռեշիդը⁸⁵, Ջեմիլ փա-

83 Տե՛ս «Յուսաբեր», 5 մարտի, 1920:

84 **Սուլթանզադե Մեհմեդ Սաբահեդդին** (1879-1948) - Աբդուլ Մեջիդ I-ի դստեր՝ Սենիհա Սուլթանի որդին: Հայրը օսմանյան հայտնի ծովակալ Ղանադ Գյուրջյու Խալիլ Ռիֆաթ փաշայի որդին էր՝ Մահմուդ Սելալեդդին փաշան: Օսմանյան մտավորական, սոցիոլոգ: Համարվում է թուրքիայում սոցիոլոգիայի հիմնադիրը: Քաղաքական հայացքներով ընդդիմադիր էր միապետությանը, կողմ էր երկրի ապակենտրոնացմանը, տնտեսության մասնավոր հատվածի ամրապնդմանը, ինչի համար էլ 1899 թվականին հոր և եղբոր հետ վտարվել է թուրքիայից: Մինչև երիտթուրքական հեղաշրջումը սերտորեն համագործակցում էր երիտթուրքերի հետ, սակայն նրա հայացքներն ավելի ազատական էին: Երիտթուրքական հեղաշրջումից հետո վերադառնում է Ստամբուլ և Մեհմեդ Ֆերիդ փաշայի հետ հիմնում «Ազատություն և համաձայնություն» («Հուրիեթ վե իթիլաֆ») կուսակցությունը, որը դառնում է օսմանյան խորհրդարանում երիտթուրքերին ամենագործող ընդդիմադիր ուժը: Սակայն 1913 թվականի երիտթուրքերի ռազմական հեղաշրջումից հետո կուսակցությունը դադարեցնում է իր գործունեությունը, իսկ Սաբահեդդինը փախչում է Շվեյցարիա: Պատերազմի ավարտից հետո, երբ թուրքիայում նորից իշխանության է գալիս «Ազատություն և համաձայնություն» կուսակցությունը, իսկ Մեհմեդ Ֆերիդ փաշան նշանակվում է մեծ վեզիր, նա իր համախոհների հետ ժնկում հիմնում է Օսմանյան կոմիտեն, որի նպատակն էր Փարիզի խաղաղության վեհաժողովում թրքանպաստ որոշումների ընդունումը: Սերի պայմանագրի կնքումը Մեհմեդ Ֆերիդ փաշայի կողմից վերջնականապես հեղինակագրկեց իթիլաֆական կուսակցությունը: Մուստաֆա Քեմալի հաղթանակից հետո 1924 թ. մարտի 3-ի օրենքով օսմանյան դիմաստիայի բոլոր ներկայացուցիչները, այդ թվում՝ նաև Սաբահեդդինը, վտարվեցին թուրքիայից: Մինչև իր մահը բնակվել է Շվեյցարիայում:

85 **Ահմեդ Ռեշիդ բեյ** (1870-1955) - ուշ շրջանի օսմանյան պետական գործիչ, օսմանյան վերջին կաբինետում զբաղեցրել է ներքին գործերի նախարարի պաշտոնը: Նախքան պատերազմը եղել է Երուսաղեմի, Մոնաստիրի և Հալեպի նահանգապետը: 1912-1913 թվականներին Քյամիլ փաշայի կաբինետում եղել է ներքին գործերի նախարար: Երիտթուրքական երկրորդ հեղաշրջումից հետո տարագրվել է Ֆրանսիա: Թուրքիա է վերադարձել 1919 թ., երբ մեծ վեզիր դարձավ Մեհմեդ Ֆերիդ փաշան, որի կառավարությունում նորից զբաղեցրել է ներքին գործերի նախարարի պաշտոնը: Սան Ռեմոյի կոնֆերանսում նշանակվել է Սերում օսմանյան պատվիրակության անդամ: Սակայն Սերում հրաժարվել է ստորագրել պայմանագիրը և հրաժարական է տվել թե՛ պատվիրակության անդամի և թե՛ ներքին գործերի նախարարի պաշտոններից, որից հետո աշխատել է Գալաթասարայի ավագ դպրոցում՝ որպես գրակա-

շան⁸⁶ (Թովուզլու), ինչպես նաև սպաներ, լրագրողներ և այլք - Ա. Ս.)⁸⁷ Շերիֆ փաշային պաշտօն տուաւ թրքական շահերը պաշտպանելու եւրոպական դահլիճներու մօտ: Այս միջոցին կարգ մը դժգոհ տարրեր (Հայերուն և Յոյներուն կ'ակնարկէ - ծ. խ.) ծայրայեղ պահանջներ կը ներկայացնէին Համաժողովին: Շերիֆ փաշան, պատմական փաստերով լեցուն գրքոյկներ հրատարակելով, ջրեց ասոնց պահանջները: Հայերը նախապէս Միջերկրականէն մինչև Սեւ ծով երկարող հողամաս մը կը պահանջէին: Այդ ժամանակ Համաժողովին մէջ ազդեցիկ խօսքի տէր եղող Ամերիկական երբէք ծայրայեղ չէր գտներ հայկական այս պահանջները: Շերիֆ փաշան, կռահելով այս պահանջներուն ընդունելութեան թուրքիոյ համար ունենալիք վնասակար եւ կործանարար արդիւնքը, զոհողութիւն ընելով իր հայրենասիրական զգացումներէն, ուրիշ ազգի մը անունով ներկայացաւ Համաժողովին:

Թուրք հայրենասէրի հանգամանքով իր լսելի ընել չի կրցած ճշմարտութիւնները այժմ կրնար բացատրել քիւրտական պատուիրակ ստորագրութեամբ իր դրկած յիշատակագրերուն մէջ: Շերիֆ փաշայի այս հանգամանքով ըրած պահանջներուն վրայ է, որ Համաժողովը ստիպուեցաւ քննիչ մարմիններ դրկել, ստուգելու համար, թէ պահանջուած հողամասերուն մէջ Հայեր կա՞ն, թէ՞ ոչ»⁸⁸:

Շերիֆ փաշայի՝ օսմանյան գործիչ լինելը հաստատվում է ևս մեկ փաստով. Սևրի պայմանագրի կնքումից ընդամենը երկուսուկես ամիս առաջ՝ 1920 թ. ապրիլի 21-ին, Շերիֆ փաշան Մոնտե Կառլոյից գրած նամակով անսպասելիորեն հրաժարվում է քրդական պատվիրակության դեկավարի պաշտոնից⁸⁹ և ավելացնում, որ հավատարիմ է մնում սուլթանին⁹⁰. լավ իմանալով, որ քրդերը մինչև Սևրի պայմանագրի ստորագրումն ընկած կարճ ժամանակահատվածում չեն կարողանալու պատվիրակության

նության ուսուցիչ: Անցնելով քենայականների կողմը՝ ընտրվել է ԹԱՄԺ պատգամավոր Իզմիրից: Պատգամավորությունից հետո զբաղվել է գրական գործունեությամբ, թողարկել «Շեիրակ» օրաթերթը:

86 **Ջեմիլ Թովուզլու փաշա** (1866-1958) - օսմանյան պետական գործիչ, վիրաբույժ: Եղել է Աբդուլ Համիդի պալատական վիրաբույժը: Երիտթուրքական հեղաշրջումից հետո թողել է զինվորական ծառայությունը: Իթիլաֆականների առաջին կառավարության ժամանակ 1912 թ., նշանակվել է Ստամբուլի քաղաքապետ: 1913 թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո, տարագրվել է Եվեյցարիա: Թուրքիա է վերադարձել 1919 թ. և նորից նշանակվել Ստամբուլի քաղաքապետ, իսկ հետո՝ շինարարության նախարար: Սևրի պայմանագրի կնքումից հետո ստիպված է եղել նորից հեռանալ Եվրոպա, սակայն 1924 թ. վերադարձել է Ստամբուլ և զբաղվել վիրաբուժությամբ:

87 Տե՛ս **Ali Birinci**, Şerif Paşa, Mehmed, <https://islamansiklopedisi.org.tr/serif-pasa-mehmed> (մուտք՝ 24.06.20):

88 «Յուսաբեր», Գահիրէ, 11 մարտ 1920, էջ 4:

89 Տե՛ս **Şerif Paşa, Mehmed**, <https://islamansiklopedisi.org.tr/serif-pasa-mehmed> (մուտք՝ 24.06.20):

90 Տե՛ս **Yalçın Çakmak**, Kürt Tarihi ve Siyasetinden Portreler, https://www.academia.edu/37739503/K%C3%BCrt_Tarihi_ve_Siyasetinden_Portreler(մուտք՝ 24.06.20), էջ 14:

նոր ղեկավար նշանակել: Այսինքն՝ դրանով նա հարվածի տակ էր դնում ոչ միայն հայկական, այլև քրդական շահերը: Որպես արդյունք՝ քրդերը Սևրի պայմանագրի կնքման ժամանակ չունեին պատվիրակություն, և թուրքական կողմը, դրանից հետո օգտվելով, կարողացավ հասնել նրան, որ թեկուզ մեկ տարով, այնուամենայնիվ, քրդաբնակ վիլայեթները թողնվում էին Օսմանյան կայսրության կազմում:

Մինևույն ժամանակ օսմանյան իշխանությունները նախկին շեյխուլ-իսլամի և նախարար Իբրահիմ էֆենդի ալ-Հայդարի⁹¹ գլխավորությամբ Ստամբուլում ստեղծեցին մի կոմիտե, որն ուղիղ կապերի մեջ մտավ սեիդ Աբդուլ Քադիրի «Քրդական վերածնության ընկերության» հետ: Այդ կոմիտեն Ստամբուլի քրդական կազմակերպություններում մեծ աշխատանք տարավ Շերիֆ փաշայի և Պողոս Նուբար փաշայի միջև կնքված համաձայնագրի դեմ, ինչի հետևանքով նրանց միջև առաջացան խոր տարածայնություններ: Ի վերջո այս թուրքական կոմիտեին համակիր քրդերը մուլա Սայիդ Նուրսիի (Քուրդիի)⁹² գլխավորությամբ նույնպես բողոքեցին հայ-քրդական համաձայնության դեմ: Այս քայլով օսմանյան իշխանությունները միաժամանակ մի քանի հարցեր լուծեցին: **Նախ**՝ իրենց ապահովագրեցին Փարիզում Շերիֆ փաշայի կողմից հնարավոր՝ անվերահսկելի քայլերից և զրկեցին նրան քրդերի շրջանում հենարանից: **Երկրորդ**՝ քրդերի մեջ հաջողվեց բորբոքել հակահայկական հերթական հիստերիան և խափանել հայ-քրդական հնարավոր դաշինքը, որն իր սուր ծայրով ուղղված կլիներ թուրքերի դեմ: Եվ **երրորդ**՝ նրանց հաջողվեց Ստամբուլի քրդական ազդեցիկ շրջանակները բաժանել իրար հետ թշնամական հարաբերությունների մեջ գտնվող խմբերի: Այս նուրբ խաղի շնորհիվ շատ քուրդ ցեղապետեր, մասնավորապես՝ Հաքյարիի թվով 21 և Հասանկալայի մի շարք ցեղերի առաջնորդներ, բողոք-հեռագրեր ուղարկեցին Փարիզի խաղաղության վեհաժողով, որոնցում հայտնում էին, որ չեն ընդունելու հայ-քրդական համաձայնագիրը, իսկ բրիտանացիներին հռչակեցին իսլամի թշնամիներ: Այս հեռագրերը անմիջապես տպվեցին թուրքական «Ալբայրաք» թերթի 1920

91 **Իբրահիմ Հայդարիզադե էֆենդի** (1863-1933) - մահմեդական հոգևորական, երկու անգամ դարձել է Օսմանյան կայսրության շեյխուլ-իսլամ: 1920 թ. մարտի 16-ից հետո, երբ դաշնակիցները գրավեցին Ստամբուլը, միացել է քեմալական շարժմանը: «Կանաչ մահիկ»-ի հիմնադիրներից է:

92 **Սայիդ Նուրսի (Քուրդի)**, 1876-1960) - քուրդ աստվածաբան, փիլիսոփա, Ղուրանի մեկնաբան (մուֆասիր): Իր լավ հիշողության և խոր գիտելիքների համար ստացել է Բեդուփզաման (իր ժամանակի հրաշք) պատվանունը: Բազմիցս ենթարկվել է հալածանքների, բանտարկվել է, սակայն ամեն անգամ դատարաններն արդարացրել են նրան: Մեծ ազդեցություն է ունեցել Թուրքիայում իսլամի ժամանակակից ուղղության ձևավորման վրա:

թվականի մայիսի 10-ի համարում⁹³: Սա թուրքական կողմի հաղթանակն էր այն առումով, որ եթե ընդամենը մեկ-երկու ամիս առաջ քրդերի զգալի հատվածը միասնական էր թուրքերից անկախանալու հարցում (բացի թերևս սեիդ Աբդուլ Քադիրից), ապա այժմ, վախենալով հայերին տարածքներ զիջելու հեռանկարից, նրանք համաձայն էին մնալ Թուրքիայի կազմում՝ հայերի և Հայաստանի Հանրապետության վերաբերյալ նորից որդեգրելով բացահայտորեն թշնամական դիրքորոշում: Մյուս խնդիրը, որ հաջողվեց լուծել օսմանյան կառավարությանը, բրիտանացիների հանդեպ թշնամանքի տարածումն էր քրդերի շրջանում:

Շերիֆ փաշայի նկատմամբ անվստահություն ունեին նաև Ստամբուլի քուրդ ազդեցիկ գործիչներից շատերը: «Հարավային Քրդստանը» Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև բաժանելու մասին ահագնացող լուրերը ստիպում էին նրանց այն նորից տեսնել օսմանյան գահի կազմում և համագործակցել թուրքերի ու Շերիֆ փաշայի հետ: Այսպես՝ 1920 թ. հունվարին Ստամբուլի քրդական քաղաքական կազմակերպությունների մի խումբ անդամներ, Քրդստանի ինքնավարության երաշխիքներ ստանալով սուլթանից և թուրքական կառավարությունից, մեկնել էին Շվեյցարիա՝ Շերիֆ փաշայի մոտ: Այնտեղ նրանք համատեղ բողոք-ուղերձ էին հղել Ստամբուլում բրիտանական բարձր հանձնաժողովին, որում քննադատվում էր «Հարավային Քրդստանը» անջատելու փորձը: Մասնավորապես նշվում էր, որ Քրդստանը ազգային և աշխարհագրական մեկ ամբողջություն է, որը նվիրված է խալիֆաթին: Մարտի վերջերին արևելյան վիլայետների քրդական վերնախավը էլյազիղում (Խարբերդ) հանդիպման ժամանակ ընդունեց մի հռչակագիր, ըստ որի՝ իրենց երկիրը չպետք է բաժանվի խալիֆաթից⁹⁴: Նման տրամադրություններ էին տիրում նաև Ստամբուլի քրդական վերնախավում: Ինքը՝ սեիդ Աբդուլ Քադիրը, լինելով օսմանիստ, ցանկանում էր, որ միացյալ Քրդստանը մնա թուրքական գերիշխանության տակ որպես ինքնավար մարզ: Դրա անհնարինության դեպքում նա կողմ էր նաև բրիտանական գերիշխանությանը, միայն թե այն չբաժանվեր տարբեր հատվածների: Իսկ Բադրխանները գրավել էին սպասողական դիրքեր՝ սպասելով տերությունների պաշտոնական հայտարարությանը:

Շերիֆ փաշան քրդական պատվիրակության ղեկավարի պաշտոնից հրաժարվելուց հետո նույնպես սկսեց ակտիվորեն պայքարել Քրդստանի

93 Stü Şerif paşa, [https://eksisozluk.com/serif-pasa--2235146_\(մուտք՝ 24.06.20\)](https://eksisozluk.com/serif-pasa--2235146_(մուտք՝ 24.06.20)), տե՛ս նաև Ayşe Hür, Osmanlı'dan bugüne Kürtler ve Devlet: Kürt milliyetçiliğinin 'geç' doğumu, <http://file.setav.org/Files/Pdf/osmanlidan-bugune-kurtler-ve-devlet-ayse-hur- taraf.pdf> (մուտք՝ 24.06.20), **PARİS BARIŞ (PAYLAŞIM) KONFERANSI'NDA ERMENİ VE KÜRT TALEPLERİNE KARŞI VİLÂYÂT-I ŞARKİYE'DEN PROTİSTOLAR**, <https://dergipark.org.tr/en/download/article-file/936590> (մուտք՝ 25.06.20), էջ 15:

94 Stü David McDowall, նշվ. աշխ., էջ 132:

անգլո-ֆրանսիական բաժանման ծրագրի դեմ: Այժմ նա պայքարում էր, որպեսզի Քրդստանը մնա Թուրքիայի կազմում որպես ինքնավար մարզ: Սակայն միաժամանակ հասկանալով, որ դա գրեթե անհնար է, նա գտնում էր, որ Քրդստանի՝ Թուրքիայից անջատվելու դեպքում նրա մանդատը պետք է վերցնի միայն մեկ երկիր՝ տարածաշրջանի քաղաքական ու տնտեսական զարգացման համար:

Քրդական ազդեցիկ տոհմերից մեկը՝ Բաբանզադեները⁹⁵ նույնպես իրենց ամեն կերպ հեռացնում էին հայերի հետ ստորագրված փաստաթղթից, իսկ ահա Աբդ-ալ Ջավդաթը ցանկանում էր օգտագործել այդ հռչակագիրը՝ հայ-քրդական միությունն էլ ավելի ամրապնդելու համար⁹⁶: Ամին Ալի Բադրխանի գլխավորությամբ քուրդ ազդեցիկ գործիչների մի խումբ բաց նամակ գրեց Լոյդ Ջորջին, որում խնդրում էին բրիտանական կառավարությանը օգնել իրենց հայրենիքին զարգանալու իր սահմանների մեջ: Սեիդ Աբդուլ Քադիրը այդ նամակը չստորագրեց: Նա վիրավորել էր քրդական ակումբի իր գործընկերների ինքնասիրությունը, երբ առանց հաշվի առնելու նրանց կարծիքը հարցազրույց էր տվել ստամբուլյան «Իքդամ» թերթին, որում նվազեցրել էր հայ-քրդական համաձայնագրի նշանակությունը, ժխտել էր քրդերի կողմից որևէ թշնամություն թուրքերի հանդեպ և նշել, որ Քրդստանի ապագան տեսնում է որպես ինքնավար մարզ, օտոմանիզմի ճամբարներից մեկը⁹⁷:

Ահա այսպիսի խոր ճգնաժամի մեջ քրդական հասարակությունը դիմավորեց Սևրի պայմանագիրը: Պայմանագրի կնքման ժամանակ քրդերը չունեին պատվիրակություն, Ստամբուլի քրդական վերնախավը բաժանված էր քաղաքականապես և զբաղված էր ավելի շատ անձնական հաշիվներ պարզելով, քան քրդական հարցը լուծելով: Իսկ Քրդստանում և Արևմտյան Հայաստանի՝ ՀՀ սահմաններին հարող հատվածներում քուրդ ցեղապետերը և շեյխերը մշտական բախումների մեջ էին հայկական, քեմալական, անգլիական ու ֆրանսիական զորքերի հետ և քաղաքականապես բաժանված էին անգլիամետ ու թուրքամետ ճամբարների: Ընդ որում, այստեղ էլ նրանք բաժանված էին Քեմալի և կենտրոնական՝ Ստամբուլի կառավարության կողմնակիցների: Ավելի փոքր խումբ էին կազմում Ֆրանսիայի կողմնակիցները: Սևրի նախօրեին իրերի այսպիսի դրությունը հավասարապես ձեռնտու էր թե՛ Թուրքիային և թե՛ Մեծ Բրիտանիային ու Ֆրանսիային:

95 Տոհմը սերում էր Սուլեյմանիեից: Այդ ժամանակ առավել հայտնի ներկայացուցիչն էր Ահմեդ Նաիմ Բաբազադեն:

96 Տե՛ս David McDowall, նշվ. աշխ., էջ 133:

97 Տե՛ս նույն տեղում:

Չստանալով քրդերի կողմից ներկայացված որևէ միահամուռ պահանջ և, որ ամենակարևորն է, դրան մինչև վերջ հասնելու կամքի առկայության վկայություն՝ դաշնակից երկրները Սևրի պայմանագրում քրդական հարցին նվիրված բաժնին հատկացրին երեք հոդված՝ 62-64-րդը, որոնցով անմիջապես անկախություն տալու փոխարեն ստեղծվում էին երկու հանձնաժողովներ: Դրանցից առաջինը պետք է որոշեր ապագա Քրդստանի սահմանները **Եփրատից արևելք, Հայաստանից հարավ և Իրաքից ու Սիրիայից հյուսիս ընկած տարածքներում**, իսկ երկրորդը պետք է ապահովեր այդ տարածքներում ազգային և կրոնական փոքրամասնությունների անվտանգությունը: Օսմանյան կառավարությունը պետք է երեք ամսվա ընթացքում կատարեր այդ հանձնաժողովների որոշումները: Եվ ամենակարևորը, ինչին այդքան ձգտում էին օսմանյան իշխանությունները՝ 64-րդ հոդվածով Թուրքիայի՝ քրդերին անկախություն տալը հետաձգվեց մեկ տարով: Այն հնարավոր կլիներ իրականացնել հանրաքվեից հետո, իսկ դա էլ տեղի կունենար այն դեպքում, եթե Ազգերի լիգայի խորհուրդը գտներ, որ քրդերը պատրաստ են անկախության: Բացի այդ՝ թուրքերի համար կարևոր հաղթանակ էր նաև այն իրողությունը, որ բրիտանացիները ստիպված էին համաձայնել որ նմանատիպ հանրաքվե անցկացվի նաև Հյուսիսային Իրաքի քրդերի շրջանում⁹⁸:

Այսինքն՝ քրդերի անկախությունը կախված էր աշխարհի հզորների կամքից, իսկ նրանք վարվելու էին այնպես, ինչպես կթելադրեր իրենց շահը, այլ ոչ թե իրենց կողմից հռչակված ազգերի ինքնորոշման սկզբունքը: Սրանով արդեն քրդերի հաշվին սպասվող հերթական առևտուրը դաշնակիցները պատրաստվում էին անելու ոչ թե օսմանյան կառավարության, որը 1920 թ. օգոստոսին այլևս իրական ուժ չէր ներկայացնում, այլ Մուստաֆա Քեմալի հետ, ով դարձել էր Թուրքիայի փաստացի տերը, և որի հետ առևտրաքաղաքական շահավետ գործարք կատարելով՝ ֆրանսիացիները հանձնեցին Կիլիկիան և Հայկական Ասորիքը՝ դառնալով տասնյակ հազարավոր հայերի ոչնչացման մեղսակիցը: Իսկ Մեծ Բրիտանիան մտադիր էր քրդերի հետ միասին Մուստաֆա Քեմալին օգտագործել որպես պատվար ռուս բոլշևիկների դեմ: Այդ համատեքստում քրդերին անկախություն տալու հեռանկարն ավելի քան մշուշոտ էր դառնում:

Համադրելով բերված փաստերը՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

98 Տե՛ս **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 235:

1. Շերիֆ փաշային թշնամի երիտթուրքերի իշխանության տապալումից հետո ժնևում գտնվող Օսմանյան կոմիտեն, օգտվելով նրա փառասիրությունից, հաջողեցնում է ընդգրկել Փարիզի խաղաղության վեհաժողովում գործող օսմանյան պատվիրակության կազմում և ապա առաջադրել գոյություն չունեցող քրդական պատվիրակության ղեկավարի պաշտոնում, որպեսզի Շերիֆ փաշան, ի հակակշիռ Հայկական հարցի, բարձրացնի քրդական հարցը՝ դրանով հնարավորություն տալով նվազեցնելու հայերի պահանջները: Շերիֆ փաշայի թեկնածության հարցում օսմանյան կառավարության ընտրությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ նա երկար տարիներ եղել էր սուլթանի դեսպանը եվրոպական երկրներում, քաջածանոթ էր եվրոպական կառավարություններին և հայտնի էր որպես երիտթուրքերի հակառակորդ ու Անտանտի հետ մերձեցման ջատագով: Միաժամանակ նա քրդերի շրջանում չուներ իրական իշխանություն, ինչը թույլ չէր տա նրան կամ դաշնակիցներին իրական քայլեր անել քրդերին անկախություն տալու նպատակով: **Սակայն շուտով Շերիֆ փաշան սկսում է ինքնուրույն քաղաքական խաղ վարել՝ փորձելով անգլիացիների օգնությամբ դառնալ Քրդստանի էմիր:**

2. Օսմանյան կառավարությունը Շերիֆ փաշայի կողմից հնարավոր երկակի խաղից իրեն ապահովագրելու նպատակով կազմակերպում է Ստամբուլի քրդական կազմակերպությունների և Արևմտյան Հայաստանի քուրդ ազդեցիկ ցեղապետերի բողոք-հեռագրերի ուղարկումը Փարիզ՝ թույլ չտալու դաշնակիցներին նրան հռչակել Քրդստանի կառավարիչ: Օսմանյան կառավարության նման զգուշավորությունը անտեղի չէր, քանի որ Շերիֆ փաշան պատերազմի վերջին ամիսներին պարբերաբար հանդիպումներ էր ունեցել բրիտանական և ֆրանսիական կողմերի ռազմաքաղաքական ներկայացուցիչների հետ, որոնց հետ քննարկել էր նրանց հովանու տակ քրդական պետության ստեղծման ծրագիրը, իսկ իրեն առաջադրել որպես այդ պետության էմիր՝ ղեկավար: Նման հանդիպումները շարունակվել էին նաև 1919 թվականին:

3. Թեև Մեծ Բրիտանիայի համար ոչ մի նշանակություն չունեին Շերիֆ փաշայի պահանջները խաղաղության վեհաժողովում, առավել ևս բրիտանացիները շատ լավ գիտեին, որ նրա թիկունքում իրական քրդական ուժ չկա, անգամ չկա պատվիրակություն, և, որ շատ հավանական է, գիտեին Օսմանյան կոմիտեի կողմից Շերիֆ փաշային գոյություն չունեցող քրդական պատվիրակության ղեկավար նշանակելու թուրքական խաղի իսկական նպատակների մասին, սակայն Մեծ Բրիտանիան իրատեսորեն գի-

տակցում էր, որ Արևմտյան Հայաստանում իրադրության իրական տերերը քրդերն են, իսկ հայերն այնտեղ կազմում են չնչին տոկոս: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա այն ինքնուրույն չէր կարողանում ապահովել իր անվտանգությունը, իսկ Արևմտյան Հայաստանը սեփական ուժերով ազատագրելու հնարավորություն չկար: Տվյալ պատմաշրջանում միակ ուժը, որը երկրի ներսում կարող էր դիմակայել քեմալականներին, քրդերն էին, ուստի նրանց անտեսելը կնշանակեր նվիրել նրանց թուրքերին: **Ուստի նման պայմաններում Մեծ Բրիտանիան ծրագրում էր ստեղծել քրդական պետություն Հարավային Հայաստանի տարածքում՝ քեմալականների և իր ենթամանդատային Իրաք գաղութի միջև բուֆերային գոտի ձևավորելու նպատակով:**

4. Քեմալականների հզորացմանը զուգընթաց՝ բրիտանացիները որոշեցին միավորել հայկական և քրդական պատվիրակությունները, ուստի ոչ միայն Պողոս Նուբար փաշան, այլև Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ստիպված էին ընդունել այդ պահանջը, ինչի պատճառով քրդերը, թուրքերի նման պատժվելու փոխարեն, հավասարեցվեցին հայերին: Ավելին՝ Շերիֆ փաշան ցինիկաբար հայտարարում էր, որ քրդերը ևս շատ են տուժել պատերազմի ժամանակ, այդ թվում՝ հայերից: Այս ամենն արվում էր մի կողմից՝ քրդերին օսմանյան իշխանությունների ազդեցությունից դուրս բերելու, իսկ մյուս կողմից՝ հայ-քրդական դաշինքի մեջ շահագրգիռ Մեծ Բրիտանիայի ծրագրերին նպաստելու համար, որոնք ուղղված էին ուժեղացող քեմալական շարժումը զսպելուն: Թեև նման քաղաքականությունը քննադատության արժանացավ հայկական որոշ շրջանակների կողմից, որոնք մեղադրում էին հայկական զույգ պատվիրակություններին վեց վիլայեթների մի մասը քրդերի օգտին զիջելու մեջ, բայց ամբողջ խնդիրն այն էր, որ տարածքային հարցերի լուծման գործում քրդական պատվիրակությունն իրականում որևէ դերակատարություն չուներ: **Վեց վիլայեթների պահանջատիրությունը, այսպես կոչված, «Փոքր Հայաստանի» ծրագրի էր վերածվել Հարավային Հայաստանն ու քրդաբնակ տարածքները ֆրանսիական ու բրիտանական ազդեցության գոտիների բաժանելու համար:**

5. Տարբեր աղբյուրներ վկայում են, որ Շերիֆ փաշան 1920 թվականի գարնանը հրաժարվեց քրդական պատվիրակության ղեկավարի պաշտոնից՝ տեղի տալով քրդերի և թուրքերի շրջանում եղած դժգոհություններին, սակայն, մեր կարծիքով, դրանք ընդամենը առիթներ էին: Իսկ պատճառներն ավելի խորն էին և ամենևին էլ կախված չէին

Շերիֆ փաշայից: Դրանք երկուսն էին. առաջին՝ 1920 թվականի գարնանը քեմալականներն ու բուլշևիկներն այնքան էին հզորացել, որ դարձել էին իրական սպառնալիք Մերձավոր Արևելքում բրիտանական գերիշխանության համար: Երկրորդ՝ Թուրքիայում երկրի իրական տերերը քեմալականներն էին, որոնց միացել էր Արևմտյան Հայաստանի քրդական ցեղերի մեծ մասը, իսկ օսմանյան կառավարությունը, որի պատվիրակությունը Փարիզում էր, Թուրքիայի բնակչության շրջանում օր օրի կորցնում էր հեղինակությունը և նույնիսկ համարվում էր Անտանտի հետ համագործակցող դավաճանական կառավարություն (հատկապես 1920 թ. մարտի 16-ին դաշնակիցների կողմից Ստամբուլի գրավումից հետո): Շատ կարևոր հանգամանք էր նաև Հյուսիսային Իրաքում բրիտանացիների քրդական քաղաքականության ծախսողունը, ինչը Իրաքի բրիտանական իշխանություններին բերեց այն համոզման, որ քրդերի վրա հույս դնելը վտանգավոր ու հեղհեղուկ քայլ է: Նույն՝ 1920 թվականին նրանց դեմ ապստամբած Մահմուդ Բարզանջին ակտիվորեն համագործակցում էր քեմալականների հետ և բավականին ծանր հարվածներ հասցնում բրիտանական զորքերին: **Այսինքն՝ ստեղծված պայմաններում այլևս խոսք չէր կարող լինել քրդական բուֆերի մասին:**

6. Համադրելով աշխարհաքաղաքական այս իրողությունները՝ գալիս ենք այն համոզման, որ Շերիֆ փաշայի ներկայությունը ոչինչ չէր փոխելու Սևրի պայմանագրի քրդական բաժնում, քանի որ նախ՝ ռազմաքաղաքական իրադրությունը արդեն հիմնովին փոխվել էր ոչ հօգուտ քրդերի (ինչպես նաև հայերի), և ապա՝ քրդերն անմիաբան էին, իսկ Շերիֆ փաշայի թիկունքում չկար որևէ իրական ուժ: Այս պայմաններում բրիտանացի բազմափորձ սպաները և դիվանագետները համոզված էին, որ մոտ ապագայում Հայաստանի Հանրապետությունն ի վիճակի չի լինի դիմակայելու բուլշևիկներին, և միակ ուժը, որը կարող է դա անել, քեմալականներն են, եթե միավորվեն Արևմտյան Հայաստանի քրդերի հետ: Այս լույսի ներքո Շերիֆ փաշայի ներկայությունը Խաղաղության վեհաժողովում 1920 թ. գարնանը կորցրել էր իր իմաստը: **Նա այլևս պետք չէր ո՛չ օսմանյան պատվիրակությանը և ո՛չ էլ բրիտանացիներին:**

7. Ուրեմն ի վերջո ո՞վ էր Շերիֆ փաշան՝ օսմանյան պաշտոնյա՞, ով, իր քարտուղար Գալիբ բեյի բացահայտման համաձայն, կատարեց թուրքական կառավարության առաջադրանքը, թե՞ բախտախնդիր մի անձնավորություն, որը հետապնդում էր Քրդստանի էմիր դառնալու բաղձալի նպատակը, և որին բոլոր շահագրգիռ կողմերն էլ օգտագոր-

ծեցին իրենց նպատակների համար և ապա դեն նետեցին: Վերլուծելով հողվածում ներկայացված նրա գործողությունները և արտահայտած մտքերը՝ կարելի է եզրակացնել, որ առավել հավանական է **երկրորդ տարբերակը**: Նախ՝ Շերիֆ փաշան այդպես էլ չկարողացավ կողմնորոշվել կոնկրետ մեկ ուժի ընտրության հարցում և միշտ էլ փորձում էր խաղալ երկու լարի վրա՝ չհասկանալով, որ երկու կողմերում էլ կորցնում է վստահությունն իր հանդեպ: Սուլթանից ստանալով բարձր պաշտոններ, ինչն ուղեկցվում էր նաև նյութական բարիքներով, նա անցավ վերջինիս ընդդիմադիրների ճամբարը և երիտթուրքերի հետ իր մասնակցությունն ունեցավ Աբդուլ Համիդ II-ի իրավունքների սահմանափակման գործում, երբ Օսմանյան կայսրությունը հռչակվեց սահմանադրական միապետություն: Սակայն մեկ տարի անց գժտվեց երիտթուրքերի հետ և հայտարարեց, որ սուլթանի կողմնակից է (ի դեպ, նա այդ մասին նշեց նաև քրդական պատվիրակության ղեկավարի պաշտոնից իր հրաժարականում): Առաջին աշխարհամարտի տարիներին նա շփումների մեջ էր անգլիացիների հետ՝ նրանց ներկայացնելով քրդական ապագա պետության մասին մեկը մյուսին հակասող առաջարկներ: Իսկ Փարիզի խաղաղության վեհաժողովում, սկզբում լինելով օսմանյան պատվիրակության փաստացի անդամ, նա համագործակցում էր բրիտանացիների հետ: Ուստի քրդական պատվիրակության ղեկավար դառնալուց հետո Շերիֆ փաշան դարձավ բրիտանացիների խաղաքարտը: Նրա մտավոր թույլ կարողությունների մասին է խոսում այն փաստը, որ Փարիզի խաղաղության վեհաժողովի առաջին շրջանում հանդես էր գալիս խիստ ընդգծված հակահայկական հռետորաբանությամբ: Եվ դա այն դեպքում, երբ հայերի հանդեպ կարեկցանքը և նրանց արդարացի պահանջները բավարարելու մտադրությունը վեհաժողովի սկզբում գերիշխող էին դաշնակից տերությունների շրջանում: Հասկանալի է, որ Շերիֆ փաշայի նման դիրքորոշումն իրականում վնասեց քրդական հարցին: Առավել ևս որ նա ապագա քրդական պետության մասին ուներ անորոշ պատկերացումներ և կողմնակից էր միանգամից մի քանի տարբերակների՝ Օսմանյան կայսրության կազմում ինքնավար մարզի կարգավիճակից (ինչպես սեփո Աբդուլ Քադիրը) մինչև բրիտանական մանդատի ներքո մեծ Քրդստանի ստեղծումը, որը կներառեր չորս հարևան պետություններում եղած բոլոր քրդաբնակ երկրամասերը: Իր այսպիսի հեղհեղուկ քաղաքական հայացքներով և հակասական գործողություններով նա նման էր սեփո Աբդուլ Քադիրին, ով նույնպես չկարողացավ ընտրություն կատարել թուրքական կամ բրիտանական գերիշխանության և անկախ քրդական պետության միջև, ինչի պատճառով հատուցեց իր

կյանքով: Ուրեմն Շերիֆ փաշան տվյալ դարաշրջանի գրեթե բոլոր աչքի ընկնող քուրդ գործիչներին բնորոշ էկլեկտիկ ու սահմանափակ մտածողության մարմնացումն էր՝ որպես ազգ կայացած չլինելու իրողության արտահայտությունը, ինչը տևական ճամբարափոխության էր դրդում նրանց:

8. Մի բանում, սակայն, Շերիֆ փաշան հաստատակամ էր. դա նրա հակահայկական դիրքորոշումն էր, լինելով դա օսմանամետության, թե բրիտանամետության ելակետից, քանի որ թե՛ թուրքական և թե՛ հիպոթետիկ քրդական պետությունների համար նա հայկական պետականությունը դիտում էր որպես մահացու սպառնալիք: Այս ամենով հանդերձ՝ պետք է փաստել, որ օբյեկտիվորեն Մուհամեդ Շերիֆ փաշան այն առաջին քուրդ գործիչն էր, որի շնորհիվ քրդական հարցը բարձրաձայնվեց միջազգային ատյաններում, և միջազգային հանրությունը պաշտոնապես ճանաչեց քրդերի իրավունքները Սևրի պայմանագրով Հայաստանի Հանրապետության տարածք ճանաչված երկրամասերից դեպի հարավ ու արևմուտք ձգվող բուֆերային գոտում:

Եվ թերևս վերջին ապացույցը. հետագայում՝ Սևրից հետո, Շերիֆ փաշան, բնակվելով Իտալիայում գտնվող իր ամրոցում, շարունակում էր դիմել տարբեր երկրների ղեկավարներին՝ քրդական հարցը լուծելու առաջարկներով: Իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կապեր էր հաստատել ֆաշիստների, մասնավորապես՝ Մուսոլինիի հետ: Նա բոլշևիզմի դեմ պայքարի նպատակով ցանկանում էր միավորել առանցքի երկրների ղեկավարներին, Հռոմի պապին, Երուսաղեմի մուֆթիին և Թուրքիայի նախագահին՝ նամակներ հղելով վերջիններիս: Դրա համար Շերիֆ փաշան կարևորում էր քրդական պետության ստեղծումը և դիմում նրանց՝ խնդրելով աջակցել այդ հարցում⁹⁹:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայ-քրդական համաձայնագրի տեքստը

«Մենք՝ ներքստորագրեալներս, խորհրդաժողովի հայ եւ քուրդ ազգերի ներկայացուցիչներս, պատիւ ունենք տեղեկացնելու հաշտարար կոնֆե-

⁹⁹ Stü Metin Atmaca, Osmanlıci, Konformist ve Liberal Bir Muhelif: Şerif Paşa, 1865-1951 (Ottomanist, Conformist and Liberal Antagonist: Şerif Pasha, 1865-1951), [https://www.academia.edu/37729139/Osmanlı%20Konformist_ve_Liberal_Bir_Muhelif_S_erif_Pas_a_1865_1951_Ottomanist_Conformist_and_Liberal_Antagonist_%20Şerif_Pasha_1865_1951_\(մուտք՝ 25.06.20\), էջ 140:](https://www.academia.edu/37729139/Osmanlı%20Konformist_ve_Liberal_Bir_Muhelif_S_erif_Pas_a_1865_1951_Ottomanist_Conformist_and_Liberal_Antagonist_%20Şerif_Pasha_1865_1951_(մուտք՝ 25.06.20), էջ 140:)

րանսին, որ մեր երկու ազգերը, երկուսն էլ արիական ցեղից, միեւնոյն շահերն ունեն եւ հետապնդում են միեւնոյն նպատակը՝ իրենց ազատութիւնը եւ անկախութիւնը, մասնաւորապէս հայերի համար՝ ազատագրում թուրքական տիրապետութիւնից եւ ընդհանրապէս երկուսի՝ թէ հայերի եւ թէ քրդերի համար՝ ազատագրումը «Միութիւն եւ յառաջադիմութիւն» կոմիտէի լծից, որի պաշտօնական եւ գաղտնի կառավարութիւններն այնքան չարաղէտ եղան թէ հայերին եւ թէ քրդերին: Մենք բոլորուին համաձայն ենք միասին խնդրելու հաշտարար խորհրդաժողովից, որ կազմուի՝ համաձայն ազգութեան սկզբունքների, Միացեալ եւ Անկախ Հայաստան եւ Անկախ Քրդստան մեծ պետութեան աջակցութեամբ, որ նշանակուելու է երկու ազգերի իղծերը լսելուց յետոյ, որպէսզի կարողանայ տալ մեր երկրներին նրանց վերաշինութիւնների շրջանում իր տեխնիկական եւ տնտեսական օժանդակութիւնը: Ինչ վերաբերում է վիճելի հողամասերի բաժանմանը, որոնք մատնանշուած են մեր երկուսի կողմից հաշտութեան խորհրդաժողովին ներկայացրած յուշագրերի մէջ, եւ երկու ապագայ պետութիւնների սահմանների վերջնական գծմանը, մենք յայտարարում ենք, որ կենթարկուենք հաշտարար խորհրդաժողովի վճիռներին՝ համոզուած լինելով, որ նրա վճիռը հիմնուած է արդարութեան եւ իրաւունքի վրայ: Բացի այդ, մենք յայտարարում ենք, որ բոլորովին համաձայն ենք յարգելու երկու պետութիւնների փոքրամասնութիւնների իրաւունքները»¹⁰⁰:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Սևրի պայմանագրի 64-րդ հոդվածի տեքստը

Եթէ, ներկայ դաշնագրին ուժի մէջ մտնելէն յետոյ տարուան մը ընթացքին, 62րդ յօդուածով որոշուած շրջաններու քիւրտ ազգաբնակչութիւնը դիմէ Ազգերու Ղաշնակցութեան, որ յիշեալ շրջաններու ժողովուրդի մեծամասնութիւնը կը բաղձայ անկախ ապրիլ Թուրքիայէն, եւ եթէ Ազգ. Ղաշնակցութեան Խորհուրդը գտնէ, որ այս ժողովուրդները ընդունակ են այդպիսի անկախութեան մը, եւ յանձնարարէ այդ, անկախութիւնը անոնց պիտի շնորհուի: Թուրքերը ասով կը համաձայնին գործադրել այսպիսի յանձնարարութիւն մը եւ հրաժարիլ բոլոր իրաւունքներէն եւ տիտղոսներէն, որ ունէին յիշեալ շրջաններուն վրայ:

100 Մեքբերումը ըստ՝ Հարութունյան Ա., նշվ. աշխ., էջ 40:

Այսպիսի իրաւունքի հրաժարումի մանրամասնութիւնները պիտի ձեւա-
կերպուին առանձին կարգադրութեամբ մը դաշնակից գլխաւոր պետութիւն-
ներուն եւ Թուրքիոյ միջեւ:

Երբ այս իրաւունքէ հրաժարումը տեղի ունենայ, Դաշնակից գլխաւոր
պետութիւնները որեւէ առարկութիւն պիտի չունենան, եթէ Քիւրտիստա-
նի այն մասին քիւրտ ժողովուրդը, որ հիմա մտած է Մուսուլի վիլայէթին
մէջ, կամաւոր կերպով միանայ այս Քրտական անկախ պետութեան¹⁰¹

101 Մեջբերումը ըստ՝ **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 238:

ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՆՆԱԽՏ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ

1. Սևրի պայմանագիրը 1920-1930-ական թթ. սփյուռքահայ քաղաքական մտքի գնահատմամբ

1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սևրում համաշխարհային պատերազմում հաղթած երկրների և սուլթանական թուրքիայի ներկայացուցիչների միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որը Հայաստանի անունից ստորագրեց Ավետիս Ահարոնյանը¹:

Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածով Հայաստանին էին անցնում Երզրումի, Վանի, Բիթլիսի և Տրապիզոնի նահանգները, ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին էր թողնվում Հայաստանի և թուրքիայի միջև սահմանագծման գործը², որը կատարվեց 1920 թ. նոյեմբերի 22-ին³: Հիշյալ նահանգներից Հայաստանը ստանում էր 90.000 կմ տարածք՝ ելքով դեպի Սև ծով և նրա տարածքը դառնում էր ավելի քան 160.000 կմ:

Սակայն մերժելով Օսմանյան կայսրության օրինական իշխանությունների կողմից ստորագրված այս փաստաթուղթը քեմալականները, որոնք իրենց վերահսկողության տակ էին վերցրել Արևմտյան Հայաստանը, ոչ միայն չձանաչեցին Սևրի պայմանագիրը, այլև հենվելով Խորհրդային Ռուսաստանի գործուն օջակցության վրա՝ Հայաստանի Հանրապետության դեմ ձեռնարկած ագրեսիայի միջոցով նրանից խլեցին նորանոր հողակտորներ: Ուժի գործադրումով ու նրա սպառնալիքով նրանք օկուպացրին ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի տարածքների զգալի մասը: Մեծ տերությունները մտադիր չէին զոհողությունների գնալ Սևրի պայմանագրի իրագործման համար, իսկ նոր միայն ցեղասպանություն ապրած հայ ժողովուրդն ի գորու չեղավ սեփական ուժերով կյանքի կոչել այն:

Այդուհանդերձ, մինչ օրս Սևրի պայմանագիրը ոչ միայն բարոյական, այլև իրավական մեծ նշանակություն ունի հայ ժողովրդի համար: Այս առումով բավականին ճշգրիտ է վաստակաշատ պատմաբան Գալուստ Գալոյանի կարծիք-գնահատականը. «Սևրի պայմանագիրը Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգա-

1 Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 468:

2 Տե՛ս Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне (Полный перевод с французского текста под редакцией проф. Ю. В. Ключникова и проф. А. В. Сабанина), Москва, 1927, էջ 31:

3 Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հատոր IV, Եր., 2016, էջ 48:

յին ճանաչումն էր. անկախ այն հանգամանքից, որ պայմանագիրը կյանքի չկոչվեց»⁴:

Երբ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով⁵ Հայաստանը խորհրդայնացավ, Հայաստանի խորհրդային իշխանությունները հրաժարվեցին Սևրի պայմանագրին հետամուտ լինելուց՝ այն համարելով աջակցություն միջազգային հակակոմունիզմին⁶:

Բայց Հայաստանի խորհրդայնացումից հետո արտասահման անցած ու հայկական Սփյուռքի ձևավորման դժվարին գործն իր ուսերին վերցրած ՀՅ Դաշնակցությունը և մյուս ազգային կուսակցությունները որպես Հայաստանի Հանրապետության ազգային ու ժողովրդավարական ավանդույթների կրողներ շարունակեցին հետամուտ լինել հայոց ազգային իրավունքների միջազգային ճանաչման վկայությունը դարձած Սևրի պայմանագրի ու ԱՄՆ նախագահ Վ Վիլսոնի իրավարար վճռի իրականացման գործին: Ուստի դեռևս Սփյուռքի ձևավորման առաջին տասնամյակներում՝ 1920-1930-ական թվականներին Սևրի պայմանագիրը լայն քննարկման արժանացավ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի կողմից: Այս ընթացքում հատկապես Սևրի պայմանագրի և Հայաստանի կորսված անկախության վերականգնման գաղափարի շուրջն էր տեղի ունենում տարագիր հայ ազգային քաղաքական մտքի բյուրեղացումը: Սա շատ բնական էր, որովհետև այդ գաղափարի տեսական ըմբռնումով էր պայմանավորված նաև հայկական հարցի գործնական լուծման համար պայքարի հունավորումը:

Սփյուռքում Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերող պայմանների իրագործման հիմնական և ամենաեռանդուն ջատագովը ՀՅ Դաշնակցությունն էր: Հայաստանի անկախության կորստից և նրա դեկավարության տարագրությունից հետո 1923 թ. գարնանը Վիեննայում տեղի ունեցավ ՀՅԴ Արտասահմանյան մարմինների խորհրդաժողովը, որը «մեկնելով ՀՅԴ 9-րդ Ընդհ. ժողովի որոշումներէն եւ գտնելով, որ Միացեալ և Անկախ Հայաստանը լաւագոյն միջոցն է հայ ժողովուրդի քաղաքական, տնտեսական և ազգային-կուլտուրական զարգացման ապահովութեան, որ և միանգամայն կը համապատասխանէ հայ աշխատաւորութեան ձգտումներուն», որոշեց Միացյալ և Անկախ Հայաստանի պահանջը շարունակել պահել որպես ՀՅԴ քաղաքական գործունեության գլխավոր առաջադրանք: Միաժամանակ որոշվեց «ժողովրդականացնել և

4 **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 279:

5 Տե՛ս **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրուս, 1968, էջ 315-317:

6 Տե՛ս **Atamian S.**, The Armenian Community: The historical development of a social and ideological conflict, New York, 1955, էջ 345:

զանգաճներու գիտակցութեան մէջ արմատացնել Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարը»⁷:

ՀՅ Դաշնակցության հետագա գործունեության համար ուղենշային դարձավ 1924 թ. նոյեմբերից մինչև 1925 թ. հունվար տեղի ունեցած կուսակցության 10-րդ Ընդհանուր ժողովը: Ի թիվս այլ որոշումների՝ առավել կարևոր էր Միացյալ և Անկախ Հայաստանի մասին բանաձևի ընդունումը: «Հ.Յ. Դաշնակցութիւնը կը շարունակէ մնալ Անկախ եւ Միացեալ Հայաստանի տեսակէտին վրայ: Անկախ Հայաստանի ստեղծումովը պիտի միանան ու ամբողջանան մեր հայրենիքին երկու գլխաւոր հատուածներուն - ռուսահայ եւ թրքահայ - հողերը այն սահմաններով, որ անհրաժեշտ են մեր երկիրը քաղաքականօրէն կենսունակ միաւոր մը դարձնելու եւ այսպէսով ապահովելու հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնն ու աւոր տնտեսական եւ մշակութային բարգաւաճումը»⁸:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի անկախության անկումից և նրա քաղաքական ղեկավարության տարագրությունից հետո անցածի վերարժևորման և ապագա քաղաքական ուղեգծի մշակման գործում ՀՅ Դաշնակցությունը առանցքային համարեց Սևրի պայմանագրով ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռով միջազգային քաղաքականության ասպարեզում քաղաքացիություն ստացած Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը: Կուսակցության ռազմավարական նպատակը դարձած «Միացյալ և Անկախ Հայաստանի» վերաբերյալ բանաձևեր ընդունվեցին նաև ՀՅ Դաշնակցության հաջորդ՝ 11-րդ⁹, 12-րդ¹⁰, 13-րդ¹¹ Ընդհանուր ժողովներում: Դաշնակցության այս հաջորդական Ընդհանուր ժողովներում Միացյալ և Անկախ Հայաստանի մասին բանաձևերի ընդունումը ինքնանպատակ չէր: Դրանով հստակ ամրագրվում էր այն դրույթը, որ կուսակցությունն այդ քաղաքական նպատակի իրագործման մեջ է տեսնում հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգության և լիարժեք վերածննդի երաշխիքները:

Մեկնելով Ընդհանուր ժողովների որոշումներից՝ դաշնակցական մամուլը, դաշնակցական մի շարք մտավորականներ ձեռնամուխ եղան Սևրի պայմանագրով վերահաստատված Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի քարոզչությանը: Կուսակցության պաշտոնաթերթը «Դրօշակ»-ն իր խմբագրականներում սկսեց տարբեր առիթներով քննարկման

7 Քաղաձեռքեր Հ.Յ.Դ. Արտասահմանեան մարմիններու արտակարգ խորհրդատուի որոշումներէն, [Վիեննա], 1923, էջ 3, 5:

8 Քաղաձեռքեր Հ.Յ. Դաշնակցութեան 10-րդ Ընդհ. ժողովի որոշումներէն, ժընև, 1925, էջ 23:

9 Տե՛ս «Յառաջ», Փարիզ, 1929, 9 յունիսի:

10 Տե՛ս Քաղաձեռքեր Հ.Յ. Դաշնակցութեան ԺԲ. Ընդհ. ժողովի որոշումներէն, Փարիզ, 1933, էջ 9:

11 Տե՛ս **Оганесян Э.**, Век борьбы, т. 2, Мюнхен-Москва, 1991, էջ 403:

նյութ դարձնել այդ հարցը: Պարբերականի 1925 թ. հունիսի խմբագրականում նշվում էր, որ «Հայաստանի Հանրապետության հռչակումով եւ փաստով այլեւս վերանում են մեջտեղից Հայկական Ռատի գանազան ձեւակերպումները, ինչպէս օրինակ բարենորոգումների ծրագիր, հայկական ինքնավարութիւն, ֆեդերասիոն Տաճկաստանի եւ Ռուսաստանի սահմաններում եւ այլն, որոնք տարբեր ժամանակներում, մեծ մասամբ արտաքին պայմանների ազդեցութեամբ, առաջ էին քաշուում իբրեւ հարցի լուծման գործնական միջոցներ: Այս բոլորի տեղը ներկայումս տիրականօրէն բռնում է Թուրքահայաստանը եւ Ռուսահայաստանը մէկ անկախ մարմնի մէջ միացնելու գաղափարը, մի գաղափար, որ նւիրագործւած է միջազգային ակտերով եւ հայ ժողովրդի անկախ պետական կեանքի փաստով»¹²: «Ղրօշակ»-ը խնդիր էր դնում հայ ժողովրդի քաղաքական միտքը կենտրոնացնել Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի վրա¹³: **Ղրանով պարբերականն արձանագրում էր, որ Հայաստանի առաջին հանրապետությունը, չնայած իր կարճատև կյանքին, իրականացրել է հայ ժողովրդի ազատագրական պայքարի վերջնակետի հստակեցումը, որն ամրագրվել է Սևրի պայմանագրով:**

Խմբագրականներից մեկում էլ «Ղրօշակ»-ն արժարժում էր այն տեսակետը, որ յուրաքանչյուր ժողովուրդ ինքը պետք է ընտրի իր քաղաքական կարգավիճակը՝ անկախ, ինքնավար, թե որևէ դաշնության անդամ: Ժողովրդի ցանկացած քաղաքական կարգավիճակ պետք է բխի նրա շահերից¹⁴: Սրանով թերթն ուզում էր հասկացնել, որ Սևրի պայմանագրի պայմանների կատարումը և Միացյալ ու Անկախ Հայաստանի գաղափարը որևէ կուսակցության քմահաճ ցանկությունը չէ: Այն բխում է հայ ժողովրդի կենսական շահերից, որին հասնելու համար նախևառաջ ժողովուրդն ինքն է որոշում կայացնողը:

Բոստոնի «Հայրենիք» օրաթերթի խմբագրական հոդվածներում նույնպես հանգամանորեն քննարկվել է Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության գաղափարը: Թերթի կարծիքով հայ քաղաքական միտքը պետք է պտտվի «Մայիսի 28-ի առանցքի շուրջը»¹⁵:

«Հայրենիք»-ը անկախության ձեռքբերման հաջողությունը մեծապես կարևորում է հայ ժողովրդի կամքի հզորացմամբ: «Հայրենիք»-ը հավատում է, որ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի իրականացման համար կլինեն բազմաթիվ առիթներ, այլ բան է, որ սերունդները

12 «Ղրօշակ», 1925, N 1, էջ 1:

13 Տե՛ս նույն տեղում, էջ 2:

14 Տե՛ս «Ղրօշակ», 1928, N 3, էջ 66:

15 Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1933, 28 մայիսի:

պետք է դրանցից օգտվելու բավարար իմաստնություն ունենան¹⁶: Թերթը համոզված է, որ հայ ժողովուրդը, երկուսուկես տարի ազատ և անկախ կյանքի հրաշագործ վայելքն ու միաժամանակ տառապանքն ունենալուց հետո չի կարող այլևս անվրդով կրել ստրկության շղթաները, հանգիստ չպիտի մնա, մինչև որ նորից տիրանա իր կորսված ազատությանը¹⁷: Ինչպես տեսնում ենք, սփյուռքահայ պարբերականը հավատով է լցված հայ ժողովրդի իմաստնության, ազատամտության և անկախ պետականությունը վերականգնելու կորովի հանդեպ:

«Հայրենիք» օրաթերթն իր խմբագրականներում առանձնակի շեշտադրությամբ էր պատասխանում նրանց, ովքեր տարբեր պատճառաբանություններով դեմ էին արտահայտվում Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարին: Թերթի խմբագրի համար աններելի սոփեստություն էր այն միտքը, թե իբր խորհրդայնացումից հետո Հայաստանը շարունակում է անկախ մնալ, և միայն կառավարությունն է փոխվել: «Քաղաքական հայ իմաստակներ այսօր ալ կը շարունակեն տակաւին ողորմելի ճիգեր ընել՝ համոզելու հայ ժողովուրդը, թէ Հայաստանի ներկայ վիճակը գոհացուցիչ է ամէն տեսակէտով եւ կը համապատասխանէ հայ ժողովուրդի կենսական շահերուն ու բաղձանքներուն», - գրում էր թերթը¹⁸: Անվիճելի է՝ խորհրդային Հայաստանն անկախ պետություն չէր, նրա պետական հայեցակարգը չէր բխում Սևրի պայմանագրի ոգուց և այս տեսակետից «Հայրենիք»-ի քննադատությունները տեղին էին:

«Հայրենիք»-ը նպատակադրվում էր վառ պահել Հայաստանի անկախության գաղափարը և անվերապահ հավատով, միասնականությամբ ու զոհաբերության գնալու պատրաստականությամբ նվիրվել դրա իրականացմանը: Օրաթերթի կարծիքով միացյալ և անկախ հայրենիքի գաղափարը կարող է հանդիսանալ այն կռվանը, որի շուրջ պետք է կիսմախիմբվեն հայ տարագիր բոլոր հասարակական-քաղաքական ուժերը: Ցավոք, տվյալ պատմաշրջանում երբեմն հակառակն էր տեղի ունենում, և որպես միմյանց հակադրվելու պատճառաբանություն՝ ներկայացվում էր անկախության գաղափարի հանդեպ ունեցած բացասական վերաբերմունքը:

Ուստի օրաթերթն անկախության համար մղվող անգիջում և հետևողական գաղափարական պայքարում առանձնացնում էր Հայ Յեղափոխական Դաշնակցության դերակատարությունը: Թերթը փորձում էր ցույց տալ, որ Սփյուռքի ոչ դաշնակցական հատվածը Միացյալ և Անկախ

16 Տե՛ս «Հայրենիք», 1924, 28 մայիսի:

17 Տե՛ս «Հայրենիք», 1929, 28 մայիսի:

18 Տե՛ս «Հայրենիք», 1924, 28 մայիսի:

Հայաստանի գաղափարին մոտենում է՝ հիմնակետ ունենալով Ղազնակցության հետ իր ունեցած հարաբերությունները: Քննադատության էր ենթարկվում նաև Սփյուռքում տիրապետող այն տեսակետը, թե իբր Խորհրդային Հայաստանն անկախ պետություն է: Թերթի կարծիքով իրականում այդ կերպ փորձ է արվում քողարկելու անկախության դեմ մղվող բացահայտ պայքարը:

Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի արծարծման առումով պակաս կարևոր չէին նաև Կահիրեի «Հուսաբեր»-ի խմբագրականները: «Հուսաբեր»-ի խմբագիր Վահան Նավասարդյանը սուփեստություն է համարում իրենց ընդդիմախոսների այն փաստարկը, թե բացարձակ անկախություն գոյություն չունի (նույնիսկ Անգլիան բացարձակ անկախ չէ), հետևաբար Հայաստանն էլ կարող է անկախ չլինել կամ լինել այնքան անկախ, որքան է Խորհրդային Միության կազմում¹⁹: Ի դեպ, Սևրի պայմանագրի պայմանների իրագործման կողմնակիցները հաճախ էին ստիպված լինում պատասխանել նմանատիպ փաստարկներին:

«Հուսաբեր»-ը ևս Սևրի պայմանագրի իրագործումը միաձուլում էր Ղազնակցության քաղաքական ռազմավարության հետ: «Շաղախուած Ղազնակցութեան գոյութեան հետ, Միացեալ եւ Անկախ հայրենիքի գաղափարը, կասկած չկայ, պիտի իրագործուի կեանքի մէջ, մաս մաս իր շուրջ համախմբելով ժողովրդական լաւագոյն եւ եռանդուն տարրերը»²⁰:

Թերթի խմբագիրն անկախության գաղափարն ընդհանրապես համարում էր «մնայուն եւ տեսական արժէք»՝ պնդելով, որ այդ նույն ըմբռնումը պետք է ունենալ նաև Հայաստանի անկախության պարագայում²¹: Ուստի Սևրի պայմանագրի իրագործումը հայ ժողովրդի գոյապահպանության տեսակետից պետք է համարել քաղաքական իդեալ: «Ցեղապահպանումի հուրը, անոր յարատեւումի մշտաբեղուն կիրքը, ծլարծակող եւ յաւերժորէն կենսառոյգ ու անսասան բունը ցեղի մը քաղաքական իտէալն է՝ ազատ եւ անկախ կեանքի դիւթիչ ու բեղուն տենչը: Անկախ՝ սեփական հողերուն վրայ, եւ ազատ՝ հարազատ իշխանութեան տակ»²²,- ահա այսպիսի գեղեցիկ նկարագրությամբ էր թերթը հիմնավորում իր պնդումը: Նշենք, որ «Հուսաբեր»-ը նման ոճով հաճախ է արթնացրել իր ընթերցողների հույզերը:

Այսպիսով շնորհիվ իր փորձված և բեղուն գրիչ ունեցող խմբագրի Կահիրեի «Հուսաբեր»-ը իրավացիորեն համարվում էր Սփյուռքում Հայաստանի անկախության քարոզչության գլխավոր խոսափողերից մեկը:

19 Տե՛ս «Յուսաբեր», 1924, 20 նոյեմբերի:

20 «Յուսաբեր», 1929, 4 յուլիսի:

21 Տե՛ս «Յուսաբեր», 1931, 15 յունուարի:

22 «Յուսաբեր», 1931, 17 յունուարի:

«Հուսաբեր»-ի խմբագիր Վահան Նավասարդյանը Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարին անդրադարձել է նաև առանձին գրվածքներով: Հայաստանի անկախության տեսլականը Վ. Նավասարդյանը վերլուծում էր տարբեր տեսանկյուններից: Պետք է հատուկ ընդգծել, որ, լինելով հավատավոր ընկերվարական, նա իր բոլոր ուսումնասիրություններում անկախության գաղափարը սերտորեն կապում էր ընկերվարության գաղափարի հետ:

Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերող մասը մեկնաբանելիս Վ. Նավասարդյանը նախ անդրադառնում էր դեռևս XIX դարավերջին հայ ազգային կուսակցությունների ծրագրերում անկախ և միացյալ պետություն ունենալու դրույթներին: Այս ժամանակաշրջանում կուսակցությունների ծրագրերը թեև իրենց նպատակների ձևակերպումներով տարբերվում էին, սակայն նրանց բոլորի ոգին նույնն էր: Ուստի Հայաստանի ապագա կարգավիճակի մասին ծրագրերում առկա է երբեմն «ազատ», երբեմն «անկախ» եզրույթը:

Խոսելով այս խնդրի շուրջ՝ Վահան Նավասարդյանը հետևյալն է գրում. «Հայկական կուսակցությունների ձեւաւորման շրջանում գաղափարական խնդրումների մէջ իրենց հասարակական մկրտութիւնն ստացած հայ յեղափոխականները, երբ ասում էին «Ազատ Հայաստան»՝ իրենց մտածողութեան մէջ ուրիշ հասկացողութիւն չէին կարող ունենալ, եթէ ոչ՝ «անկախ Հայաստան»²³: Հրապարակագիրն այստեղ ակնարկում էր հայ ազգային կուսակցություններից մեկի՝ Ղաշնակցության անդրանիկ ծրագիրը: Այս կապակցությամբ նա գրում էր. «...Ճամբան հարթել հայրենիքի լիակատար անկախութեան՝ կամ մէկ անգամից (եթէ հնար է այդ) եւ կամ աստիճան առ աստիճան (եթէ մէկ անգամից հնարավոր չէ այդ),- ահա այն հասարակաց նպատակը, որ 1890-ին մէկ ընդհանուր ուխտի եւ «ղաշնակցութեան» մէջ համախմբեց Հայ Յեղափոխականներին: ...Անկախութեան պահանջը որեւէ նորոյթ չունէր իր մէջ: Մեր անդրանիկ դաւանագրի առաքեալները «ազատ Հայաստան» ասելու փոխարէն՝ ամենայն դիւրութեամբ կարող էին «անկախ Հայաստան» ասել»²⁴:

Հայ ազգային մեկ այլ կուսակցության ծրագրի կապակցությամբ Վ. Նավասարդյանը փաստում է, որ «...առաջին կազմակերպուած յեղափոխական հոսանքը, Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը, որ կեանք առաւ հայ իրականութեան մէջ՝ յստակ ու որոշ, պարզ ու մէկին առաջադրած ունէր

23 Նաւասարդեան Վ., Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալին մէջ, «Հայրենիք», 1924, փետրուար, էջ 79:

24 Նաւասարդեան Վ., ՀՅԴ գաղափարաբանութիւնը, Պետրոս, 1983, էջ 39:

Թրքահայաստանի նախ՝ բացարձակ անջատումը Թուրքիայից եւ ապա՝ նրա լիակատար անկախութիւնը»²⁵:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն առանցքը նրա անկախության ձեռքբերման կամ պահպանման համար մղված պայքարի պատմություն է: Այս տեսակետից Վ. Նավասարդյանն առավել ցայտուն էր համարում հայ ժողովրդի պատմության օրինակը: Նրա կարծիքով՝ հայ ժողովրդի ամբողջ պատմությունն անսպառ ու անընդմեջ պայքարի մի ընդարձակ մարտիրոսագրություն է հանուն ազատության²⁶:

Վ. Նավասարդյանը գտնում էր, որ քաղաքակիրթ մարդկության պատկերացմամբ բոլոր ազգերը, անկախ իրենց թվաքանակից, արժանի են և իրավունք ունեն անկախ լինելու: Անդրադառնալով հայ ժողովրդի իրավունքին՝ նա գրում էր. «Պայքարել յանուն Հայաստանի անկախութեան, այդ կը նշանակէ ջահակիրը լինել՝ աշխատաւոր մարդկութեան լուսաւոր գաղափարների, այդ կը նշանակէ՝ զորավիգ հանդիսանալ այն վեհ ու գեղեցիկ պայքարին, որ այսօր տարւում է ընկերվար դոօշի տակ»²⁷: Խմբագիրը փաստում էր նաև, որ Միացյալ և Անկախ Հայաստանը ոչ միայն քաղաքակիրթ մարդկության ցանկությունն է, այլև դրան ձգտում է ինքը՝ հայ ժողովուրդը, «որովհետեւ միայն անկախութեան պայմաններում մեր երկիրը կարող է Հայաստան դառնալ, իսկ մեր ժողովուրդը՝ հայ մնալ»²⁸:

Այսինքն՝ անկախությունը՝ որպէս քաղաքակրթական արժէք, պետք է հասանելի լինի բոլոր ազգերին, այդ թվում՝ հայերին: Եվ միայն բոլոր ազգերի անկախության դեպքում կարող է մարդկությունն առաջ ընթանալ դեպի լուսավոր ապագա: Ջարգացնելով Հայաստանի անկախության համամարդկային նշանակության մասին իր թեզը՝ Վ. Նավասարդյանը գրում էր. «Ձգտել Հայաստանի անկախութեան, պայքարել այդ անկախութեան համար եւ տիրանալ նրան,- այդ կը նշանակէ մէկ լուսաւոր յաղթանակով եւս պսակել մարդկային պատմութիւնը, լաւագոյն տուրքը տալ ընկերվար վարդապետութեան, սկիզբը դնել Մերձաւոր արեւելքի իրական ազատարարութեան եւ անդորր, ազատ ու խաղաղ պայմանների մէջ հայութիւնը լծել իր լուսաւոր եւ ստեղծագործ առաքելութեան»²⁹:

Մեկ այլ առիթով Վ. Նավասարդյանը պնդում էր, որ հայության քաղաքական մտասկզբունքը պետք է լինի մի կետի վրա: Այդ կետն ան-

25 Նաւասարդեան Վ., Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալին մէջ, էջ 82:

26 Տե՛ս Նաւասարդեան Վ., Հայաստանի անկախութիւնը (Տեսական հիմնաւորման թռուցիկ ակնարկ), ժընեւ, 1924, էջ 14:

27 Տե՛ս նոյն տեղում, էջ 53:

28 Նոյն տեղում, էջ 54:

29 Նոյն տեղում, էջ 56:

կախ Հայաստանի պահանջն է, որին պետք է սևեռվեն հայ ժողովրդի բոլոր հատվածների հայացքները³⁰:

Հայ ժողովրդի հետագա պայքարը պետք է ընթանա միայն այդ ուղիով: Եվ եթե այս ուղուց տեղի ունեցած շեղումները զուտ ժամանակավոր մարտավարական բնույթի չեն, ապա ամեն ինչ կորած պետք է համարել: Ուստի եզրակացնում էր. «Միայն անկախութեան պայմաններում մեր երկիրը կարող է Հայաստան դառնալ, իսկ մեր ժողովուրդը՝ հայ մնալ»³¹:

Վ. Նավասարդյանը քննադատաբար էր մոտենում խորհրդահայ գործիչների այն պնդումներին, թե իբր ազգի գոյության պահպանումը հնարավոր է նաև առանց անկախության: Ընդհակառակը, ըստ նրա՝ «... քաղաքական անկախութիւնից դուրս գծուած բոլոր ուղիները շեղումն են ազգութեանց պահպանման նուիրական սկզբունքից... ազգերը պէտք է լինեն ազատ եւ անկախ,- որովհետեւ այդ է ազգութեանց պահպանման ու զարգացման միակ ճշմարիտ ուղին, այդ է ճշմարիտ ընկերվարութեան յստակ, պարզ, մէկին ու խրոխտ պատգամը»³²:

Այսպիսով Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո հայտնվելով տարագրության մեջ՝ ՀՅԴ ականավոր գործիչ Վ. Նավասարդյանն իր հրապարակախոսության մեջ մեծ տեղ էր հատկացնում Հայաստանի անկախության վերականգնման հիմնախնդրին: Անկախությունն ի վերուստ տրված իրավունք է, քաղաքակիրթ մարդկության կողմից պաշտելի արժեք, որին արժանի է նաև հայ ժողովուրդը: Վ. Նավասարդյանը միայն ազգերի անկախ գոյությամբ էր պայմանավորում մարդկության խաղաղ զարգացումն ու հարատևումը:

Սկրի պայմանագրով ամրագրված Միացյալ և Անկախ Հայաստան կերտելու անհավասար պայքարի շարքերում առաջիններից մեկը ՀՅԴ մեկ այլ գործիչ Ս. Վրացյանն էր: Մեկնաբանելով ՀՅԴ 10-րդ Ընդհանուր ժողովի որոշումները՝ նա գրում էր, որ նրանում անկախության մասին բանաձևի ընդունումը պարզապես ամրագրումն է հայ իրականության մեջ տարիներ ի վեր խոր արմատներ ունեցող գիտակցված պահանջի³³:

Ս. Վրացյանը, վերլուծելով ՀՅԴ 11-րդ ընդհանուր ժողովի որոշումները, եզրակացնում էր. «Միացեալ եւ Անկախ Հայաստանի պահանջը վերացական գաղափար չէ մեզ համար, այլ գործնական պայքարի դրօշակ: Այդ պահանջի իրագործումով միայն հնարաւոր է լինելու հայկա-

30 Տե՛ս **Նավասարդեան Վ.**, Հ.Յ.Ղաշնակցութեան անելիքը (մտքեր եւ յուշեր մի գրքոյկի առիթով), Գաիրիէ, 1924, էջ 278:

31 Նույն տեղում, էջ 279:

32 Նույն տեղում, էջ 21:

33 Տե՛ս **Վրացեան Ս.**, Հ.Յ.Ղաշնակցութեան 10-րդ Ընդհ. ժողովը, «Դրօշակ», 1925, N 1, էջ 7:

կան հարցի արմատական լուծումը... Վերացրէք այսօր Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարը, եւ հայկական հարցը կը դառնայ անբովանդակ խօսք, իսկ գաղութահայութիւնը կընկնի յուսահատութեան անդունդ եւ արագ կը դիմէ դէպի կորուստ»³⁴: Ինչպէս տեսնում ենք, Ս. Վրացյանը նույնպէս համոզված էր, որ Սփյուռքում հայապահպանութեանը զարկ տալու, հայութեանը համախմբելու, նրան դէպի հայրենիք ուղղորդելու նպատակով խիստ կարևոր է հայկական միացյալ և անկախ պետականութեան վերականգնման գաղափարի բյուրեղացումը:

Այսպիսով ՀՀ տարագիր վարչապետ Ս. Վրացյանն իր գրվածքներում մեծ տեղ է հատկացնում Սևրի պայմանագրով միս ու արյուն ստացած Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարին՝ համոզված լինելով, որ այդ գաղափարի շուրջ համախմբվելով՝ ոչ միայն հեշտ կլինի սփյուռքահայութեանը փրկել ուժացումից, այլև հնարավոր է տեսական հիմք ապահովել Հայկական հարցի գործնական լուծման համար:

Սփյուռքում Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը մեծապէս արծարծվում էր նաև մեծանուն հասարակական-քաղաքական գործիչ, գրող-հրապարակախոս Լևոն Շանթի (Նահաշպետյան, Սեդրոսյան) կողմից: Նրա «Մեր անկախությունը» գրվածքը՝ մեծարժեք գործ է հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման ուսումնասիրության տեսանկյունից և այսօր էլ չի կորցրել իր այժմեականությունը:

Լ. Շանթի համոզմամբ որևէ ազգի անկախությունը կարող է բխել տվյալ ազգի ու նաև այլ ազգերի շահերից, սակայն միաժամանակ կարող է աննպաստ համարվել մեկ-երկու այլ ժողովուրդների համար: Հետևաբար յուրաքանչյուր ժողովուրդ փորձելու է խանգարել կամ օժանդակել տվյալ ազգի անկախությանը³⁵: Այս առումով նա սխալ էր համարում միջազգային առյուծկալների վրա հույս դնելով՝ անկախություն ակնկալելը, մինչև որ «... մենք ինքներս որեւէ ուժ ներկայացնենք եւ մեր հարցը դառնայ ուժեղ պետութեան մը հաշիւներուն մէկ մասը (ընդգծումը մերն է - Խ. Ս.) մտնէ անոր ծրագիրներուն մէջ»³⁶: Ըստ էության հայ հրապարակախոսը հանգում էր այն պարզ ճշմարտությանը, որ միայն մենք պետք է ի գործու լինենք տեր լինելու մեր անկախությանը, որը ձեռք է բերվում հարատև մաքառումների, համառ կամքի և վճռականության շնորհիվ միայն:

Լ. Շանթն անդրադառնում էր հայ հասարակության այն հատվածի տեսակետներին, որոնց կարծիքով Սփյուռքում Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի քարոզչությամբ զբաղվողների պայքարն արիես-

34 Վրացյան Ս., Քաղաքական խնդիրները ՀՅԴ XI Ընդհանուր ժողովում, «Դրօշակ», N 4-5, էջ 77, հմմտ. «Յուսաբեր», 1929, 27 մայիսի:

35 Տե՛ս Շանթ Լ., Մեր անկախութիւնը, Պոսթըն, տպարան «Հայրենիք»ի, 1925, էջ 9:

36 Նույն տեղում, էջ 17:

տական է և չի բխում հայ ժողովրդի կենսական շահերից: Նա պատմական համոզիչ փաստերով ցույց էր տալիս, որ միացյալ և անկախ հայրենիք ունենալու ձգտումը հայ ժողովրդի մեջ այնքան հին է, որքան ինքը՝ հայ ժողովուրդը: Այդ քննադատներին Լ. Շանթը պատասխանում էր հետևյալ կերպ. «Առանց պետական անկախութեան՝ հայ քաղաքակրթութիւն ունենալու գաղափարը անճար ինքնախաբէութիւն մըն է, կամ ծպտուած խաբէութիւն մը, կամ կէս-գիտակից խոստովանութիւն մը, որ ինքը հայ ժողովուրդի օրերը համրուած կը կարծէ»³⁷: Լ. Շանթն ամբողջ հայոց պատմությունը համարում էր հայ ժողովրդի անկախության համար մղված պայքարի պատմություն: Երբ հայն անկախություն չունի, հայ մտավորականությունը պետք է ծրագրի Հայաստանի անկախությունը³⁸:

Լ. Շանթն առանձին անդրադառնում է Հայաստանի անկախության հանդեպ մեր հարևանների ունեցած վերաբերմունքին: Խոսելով Հայաստանի հանդեպ թուրքերի որդեգրած թշնամության պատճառների մասին՝ նա դրանց շարքում թվարկում է հայերի քրիստոնյա լինելը, որը պատրվակ է հանդիսացել ռուսների համար արշավելու դեպի Հայաստան, հայերի անկախության ձգտումը, որը պատճառ է դարձել Թուրքիայի ներքին ցնցումների, ինչպես նաև եվրոպական միջամտության³⁹: Մինչդեռ Հայաստանի և Թուրքիայի ապագա հարևանությունը, իրական խաղաղությունը հնարավոր են միմիայն Հայաստանի անկախ գոյությամբ և Հայկական հարցի ամբողջական ու արդարացի լուծմամբ: Շանթը նշում էր նաև, որ անկախություն պետք է ունենան մեր մյուս փոքրիկ հարևանները⁴⁰:

Բազմակողմանի վերլուծության ենթարկելով Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի տարբեր կողմերը՝ նա եզրահանգում էր, որ հանուն հայ ժողովրդի հարատևության, Հայաստանի հզորացման և տարածաշրջանային խաղաղության անկախությունը պատմական անհրաժեշտություն է:

Սևրի պայմանագրի քննարկմանը մասնակից դարձավ նաև Բոստոնի «Հայրենիք» ամսագրի խմբագիր Ռուբեն Դարբինյանը: Նրա կարծիքով հայ քաղաքական մտքի առանցքը պետք է լինեն ոչ թե սոցիալ-տնտեսական և պատմափիլիսոփայական քննարկումները, այլ ազգային գոյության և անկախության վերաբերյալ կենսական խնդիրները⁴¹: Իսկ այդպիսի քննարկման գլխավոր թեման կարող էր լինել Սևրի պայմանագիրը: Ռ. Դարբինյանը Սևրի պայմանագրից բխող Միացյալ և Անկախ Հա-

37 Նույն տեղում, էջ 151:

38 Տե՛ս նույն տեղում, էջ 153:

39 Տե՛ս նույն տեղում, էջ 167:

40 Տե՛ս նույն տեղում, էջ 172:

41 Տե՛ս **Դարբինյան Ռ.**, Հայ քաղաքական մտքի դեգերումները, «Հայրենիք», 1923, յուլիս, էջ 121:

յաստանը համարում էր հայ ժողովրդի քաղաքական երկու կողմնորոշումներից մեկը: Մյուս կողմնորոշումը հեղինակի կարծիքով Խորհրդային Ռուսաստանի հետ լինելն է⁴²: Պատճառն այն է, որ «Հայրենիք»-ի խմբագիր Ռուբեն Դարբինյանը Հայաստանի ապագայի ընկալման հարցում երբեք չնահանջեց հակաբոլշևիզմի դիրքերից: Նրա համար անկախության համար պայքարը և հակաբոլշևիզմի պայքարը հոմանիշներ էին:

Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության գաղափարի ջերմեռանդ քարոզիչ էր ականավոր մտավորական Արտաշես Աբեղյանը: Բեռլինում Հայաստանի անկախության 5-ամյակին նվիրված հանդիսության ժամանակ նա ասում էր. «Տարակոյս չունենանք, որ այսօր էլ Հայոց Աշխարհի քաղաքացին եւ գիւղացին, աշխատաւորն ու մտաւորականը, որչափ եւ կաշկանդուած ու կծկուած, իրենց հոգու խորքերում, իրենց սրտի ծալքերում, իրենց հարազատներով շրջապատուած, իրենց գորշ խրճիթների տակ մայիս 28-ի նուիրական տօնն են սրբազնագործում, իրենց ողջ էութեամբ ազատ ու անկախ կեանքը վերապրում, նրան վերանուաճելու ուխտը երդնում»⁴³: Նա նույնպես համոզված էր, որ հայ ազգային քաղաքականության գլխավոր խնդիրը Սևրյան Հայաստանն է լինելու: Ընդ որում ապագայում այդ ասպարեզում հիմնական առաջ մղող ուժը լինելու է Հայաստանի ժողովուրդը, իսկ գաղութահայությունն ու արտաքին նպաստավոր պայմանները միայն օժանդակ ազդակ կարող են հանդիսանալ⁴⁴:

Հայկական միացյալ և անկախ պետության վերականգնման հավատավոր գաղափարախոսներից էր Հայկ Ասատրյանը, որը մեծագույն ջանքեր էր ներդնում Սփյուռքում հայապահպանության համար: Հայկ Ասատրյանի ուսումնասիրություններն իրավամբ կարելի է համարել իր ժամանակաշրջանի հայ հասարակական-քաղաքական մտքի արժեքավոր նմուշներից մեկը: Նրա մտորումներում բավական մեծ և լուրջ տեղ էր հատկացված Հայկական բարձրավանդակին, հայ ժողովրդի կյանքում նրա ունեցած դերին, նշանակությանն ու խորհրդին: Հայաստանի անկախության գաղափարը Հ. Ասատրյանը մեծապես կապում էր Հայկական բարձրավանդակի ուսումնասիրության հետ: Նա իրեն յուրահատուկ հարցադրումներով փորձում էր ընթերցողին համոզել, որ անկախ Հայաստանի գրավականը նաև Հայկական բարձրավանդակի խոր ուսումնասիրությունն է⁴⁵:

42 Տե՛ս նույն տեղում, հոկտեմբեր, էջ 137:

43 «Հայրենիք», 1923, 30 յունիսի:

44 Տե՛ս **Աբեղյան Ա.**, Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան, «Հայրենիք», 1927, սեպտեմբեր, էջ 114:

45 Տե՛ս **Ասատրյան Հ.**, Հայաստանի սահմանները, «Ցեղ եւ Հայրենիք», Սոֆիա, 1936, N 1, էջ 3, 4:

Տարագիր հայ փիլիսոփան կարծում էր, որ մեր անկախության կորստի, ինչպես նաև այն վերանվաճելու դժվարությունների հիմնական պատճառը քաղաքական անմիաբանությունն է: Նրա բնորոշմամբ՝ Հայաստանում ի սկզբանե տեղի չունեցավ «ցեղային ներդաշնակություն»: Մեր նախնիները հետապնդեցին տարբեր իդեալներ, «ես հենց դրա շնորհիվ էլ հայոց մշակութային եւ քաղաքական «ես»-ը մնաց պառակտուած»⁴⁶: Փոքր-ինչ փիլիսոփայական, առասպելական նկարագրումներով ու բացատրություններով Հ. Ասատրյանը ներկայացնում էր նաև իր ապրած ժամանակաշրջանը, երբ հայ ժողովրդի պառակտվածության պատճառով Հայաստանի անկախության գաղափարը միասնական քաղաքական օրակարգ չդարձավ: Սակայն հեղինակը կոչ էր անում չհուսալքվել և զինվել համբերությամբ:

Հ. Ասատրյանը նույնպես Հայաստանի անկախության գաղափարի շուրջ ստեղծված բանավեճը որակում էր որպես դաշնակցականություն-հակադաշնակցականություն պայքար: Հատկանշական է, որ լինելով արևմտահայ դաշնակցական՝ նա հակադաշնակցականության մեջ մեղադրում էր հատկապես արևմտահայերին: Նրա կարծիքով հատվածամոլությունը կործանարար կարող է լինել ամբողջ ժողովրդի համար: Պաշտպանելով Սևրի գաղափարը՝ Հ. Ասատրյանը գրում էր, որ կուսակցության երազած «Միացյալ և Անկախ Հայաստանը» միայն հողի պահանջ է, այլ ազգային ուժերի համադրման, ցեղի ցրված զավակների համախմբման, հայության քաղաքական և հոգեբանական ամբողջացման տենչանք: Ըստ հեղինակի՝ դաշնակցականը Հայաստանը պատկերում է մեկ և ընդհանուր, հակադաշնակցականը Հայաստան ասելով հասկանում է մերթ միայն Տաճկահայաստան, մերթ միայն Կիլիկիա, մերթ էլ միայն Երևան⁴⁷:

Միացյալ Հայաստանի գաղափարի հիմնավորման ասպարեզում իր կարևոր ներդրումն ունեցավ Առաջին Հանրապետության ռազմական նախարար Մինաս Տեր-Մինասյանը (Ռուբեն): Այս թեմայի շուրջ նա հանդես եկավ բազմաթիվ հրապարակումներով: Ռուբենն իր առանձին հոդվածներով հիմնավորում էր Սևրի պայմանագրին համապատասխան Միացյալ Հայաստանի կենսական անհրաժեշտությունը:

«Միացյալ Հայաստանը» հոդվածում⁴⁸ Ռուբենը թվարկում էր այն պատճառները, որոնցից բխում է ՀՅԴ Միացյալ Հայաստանի համադրույթը: Դրանք էին Հայաստանի և հայ ժողովրդի պատմական անցյալը, հայ-

46 Ասատրյան Հ., Նախնական ծանոթություններ ցեղի մասին, «Ցեղ եւ Հայրենիք», 1936, N 1, էջ 19:

47 Տե՛ս Հ. Ա., Ցեղանենգ Շէյթանը..., էջ 53:

48 Տե՛ս «Դրոշակ», 1926, N 7, էջ 208-214:

կական ազատագրական շարժման հետևողական ընթացքը, հայ ժողովրդի և սերունդների անապաստան, հայրենագուրկ վիճակը, Հայաստանի անվտանգության անհրաժեշտությունը, Հայաստանի տնտեսական և աշխարհագրական ամբողջություն կազմելու ձգտումը, Առաջավոր Ասիայում վերջնականորեն խաղաղություն հաստատելու պահանջը: Ռուբենն առանձնապես կենտրոնանում էր անվտանգության և սփյուռքահայությանը ուժացումից փրկելու անհրաժեշտության վրա: Նրա կարծիքով՝ միայն Սևրի պայմանագրին համապատասխան Միացյալ Հայաստանի պայմաններում է հնարավոր ապահովել հայ ժողովրդի և հայոց պետականության տնտեսական ու քաղաքական հզորությունը, անվտանգությունը, միայն Միացյալ Հայաստանի մեծ տանիքի ներքո համախմբվելով՝ սփյուռքահայությունը պիտի փրկվի վերջնական ուժացումից:

Ռուբենը կարևորում էր Միացյալ Հայաստանի կազմում Երզրումի ընդգրկումը: «Հայաստան միջ-ցամաքային ուղիներու վրայ» հիմնարար ուսումնասիրության մեջ հեղինակը Երզրումի մասին գրում է. «Եթէ կուզէք հասկնալ Թուրքիոյ հայաջինջ քաղաքականութեան բուն պատճառը, որոնեցէք Երզրումի մէջ: Եթէ կուզէք հասկնալ Ռուսիոյ շահախնդրութեան բուն պատճառը Հայկական հարցի վերաբերմամբ, պատճառները որոնեցէք Երզրումի մէջ: Եթէ կուզէք հասկնալ Անգլիոյ կամ Կենտրոնական Եւրոպայի ընդդիմութիւնը՝ Երզրումի այլ աշխարհակալ պետութեանց ձեռք անցնելուն եւ կամ Թուրքիոյ ամբողջականութեան տեսակետները եւ կամ Անկախ Հայաստան ստեղծելու անոնց շահագրգռութիւնը, ինչպէս պատահեց Սեւրի մէջ, նորէն պատճառները որոնեցէք Երզրումի մէջ: Եթէ կուզէք հասկնալ հայկական դիւցազներգութիւնը, մարտիրոսութիւնը, ծախողութիւնը եւ յաջողութիւնը, մի որոնէք այլ տեղ բացի Երզրումէն»⁴⁹:

Ռուբենը Երզրումի հարցի լուծումով էր պայմանավորում Հայկական հարցի լուծումը: Ուստի պատահական չէր համարում Սևրի պայմանագրով նախատեսված Երզրումի (Արևմտյան Հայաստանի գլխավոր կենտրոնի) միացումը Հայաստանի Հանրապետությանը: Այս կերպ Սևրի պայմանագրով երաշխավորվող Հայաստանի անվտանգությունն առավել անխոցելի կլիներ:

Ռ. Տեր-Մինասյանը պատմական անհրաժեշտություն է համարում Սևրի պայմանագրով նախատեսված Միացյալ Հայաստանի ծրագրի իրականացումը՝ դրանով պայմանավորելով ոչ միայն հայ ժողովրդի ազատ և անկախ զարգացումն ու հարատևումը իր պատմական հայրենիքում, այլև տարածաշրջանային անվտանգությունն ու խաղաղությունը:

49 Ռուբեն, Հայաստան միջ-ցամաքային ուղիներու վրայ, Պէյրուս, 1948, էջ 44:

Այսպիսով՝ քննելով Սևրի պայմանագրի վերաբերյալ դաշնակցական մտքի 1920-1930-ական թվականներին արտահայտած տեսակետները կարելի է եզրակացնել որ Սփյուռքի դաշնակցական շրջանակներն իրենց գաղափարաքաղաքական գործունեության առանցքը դարձրին Սևրի պայմանագրով նախատեսված Միացյալ և Անկախ Հայաստանի տեսլականը: Անկախ գոյություն ունեցող ուժերի իրական դասավորությունից և Հայաստանի անկախությունը վերականգնելու համար ստեղծված միջազգային աննպաստ իրավիճակից ՀՅԴ-ի համար Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը մնում էր գերագույն արժեք: Այդ գաղափարի շուրջ համախմբվում էր տարագիր հայությունը, որին սպառնում էր ծուլման վտանգը: Անկախ պետությունը վերականգնելու հույսով բազում հայորդիներ ոչ միայն համախմբվեցին, այլև կարևոր շարժառիթ ունեցան՝ հայ մնալու և իրենց սերունդներին հայ դաստիարակելու համար: Բազմաթիվ դաշնակցական գործիչներ տեսական լուրջ հիմնավորումներով ապացուցում էին, որ հայ ժողովրդի շարունակականությունը երաշխավորելու տեսակետից հայկական միացյալ և անկախ պետականությունն այլընտրանք չունի:

Սևրի պայմանագիրը, Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը բոլորովին հակառակ մեկնաբանությունների արժանացան Ռամկավար-ազատական կուսակցության կողմից: Այս կուսակցության ընդհանուր պատգամավորական և շրջանային ժողովները հավատարիմ էին մնում խորհրդային կողմնորոշմանը՝ գտնելով, որ Հայաստանի արտաքին քաղաքականության առանցքը պետք է ընդունել Ռուսաստանը, ինչպիսի պետական ռեժիմ էլ այնտեղ գործելիս լինի⁵⁰: Իսկ խորհրդային ռեժիմը, ինչպես գիտենք մերժեց Սևրի պայմանագիրը: Ամերիկաբնակ պատմաբան Մանուկ Ճիզմեճյանը գրում էր, որ տարագիր հայությանը դեպի Խորհրդային Հայաստան տրամադրելու «առողջ գաղափարին յառաջապահը կը հանդիսանայ այսօր Ռամկավար-Ազատական Կուսակցությունը»⁵¹:

ՌԱԿ առաջին ընդհանուր պատգամավորական ժողովը, որը տեղի ունեցավ 1922 թ. հունիսին, արտահայտել է խորհրդայնամետ դիրքո-

50 Տե՛ս **Ղալլաջյան Կ.**, Ա. Չոպանյանը և հայոց քաղաքական կողմնորոշման հարցերը, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 1996, N 1-2, էջ 54, 55:

51 **Ճիզմեճյան Մ.**, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրեզնո, 1930, էջ 552:

րոշում⁵²: 2-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը բանաձև ընդունեց՝ «ձանձնալ Հայաստանի կառավարությունը»⁵³: Բացի այդ կուսակցության համար ընդունելի էր «այն բնական հանգամանքը, որ Հայաստանի կառավարությունը կը դասէ Անդրկովկասեան եւ ընդհանուր Սովետական պետականութեան մէջ՝ նկատելով, որ սովետական երկիրներու հետ կապակցութիւնը եւ Արեւելքի բոլոր ժողովուրդներու հանդէպ խաղաղասիրական քաղաքականութեան հետապնդումը բնական հետեւանքն է մեր աշխարհագրական դիրքին եւ տնտեսական ու քաղաքական պահանջներուն»⁵⁴: Իսկ ահա կուսակցության Եգիպտոսի Բ. շրջանային պատգամավորական ժողովը հայտարարում էր, որ Հայաստանը պետք է ապավինի Ռուսաստանի աջակցությանը և դաշնակցի նրա հետ⁵⁵: Ժողովը միաժամանակ քննադատում էր նույն թվականին Վիեննայում տեղի ունեցած ՀՅ Դաշնակցության խորհրդաժողովի բանաձևը, որը կոչ էր անում հետապնդել «Անկախ եւ Միացեալ Հայաստանի քաղաքականութիւնը»⁵⁶: Ըստ թանկավարների՝ այս վերջինը վտանգավոր կարող էր լինել հայ ժողովրդի համար:

ՌԱԿ 4-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը (1929 թ. հունիս) վերահաստատեց այն որոշումը, որ «կընդունի հայ ազգային պետականության համար ռուսական օրիանթասին, կուսակցութեանս հիմնական նպատակներէն առաջինը կը նկատէ օժանդակել խորհրդային Հայաստանի զարգացման եւ բարգաւաճման, Ռուսիոյ հետ ֆէտէրատիֆ կապերով կապուած ազգերու միութեան մէջ»⁵⁷: Կուսակցությունը հայտարարում էր, որ խորհրդային Միության կազմում լինելը Հայաստանի անվտանգության միակ երաշխիքն է և բավարարվում էր միայն խորհրդային Հայաստանի իշխանությունների հանդեպ բարյացակամ քննադատությամբ⁵⁸: Իսկ կուսակցության 5-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը (1931 թ. սեպտեմբեր) որոշում է պահպանել իր դրական վերաբերմունքը դեպի խորհրդային Հայաստանը, քանի որ խորհրդային Միության պայմաններում Հայաստանը տնտեսական և մշակութային վերելք է ապրում⁵⁹:

ՌԱԿ ժողովներում Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի դեմ և խորհրդային Ռուսաստանի հովանավորությանը սատարելու կողմ

52 Տե՛ս **Դավաթյան Կ.**, Ռամկավար Ազատական կուսակցության պատմություն, Եր., 1999, էջ 62-66:

53 Նույն տեղում, էջ 83:

54 «Պայքար», 1924, 3 մարտի:

55 Տե՛ս «Արեւ», 1923, 15 մայիսի:

56 **Դավաթյան Կ.**, Ռամկավար Ազատական կուսակցության պատմություն, էջ 74:

57 «Ապագայ», 1929, 5 հոկտեմբերի:

58 Տե՛ս նույն տեղում:

59 Տե՛ս «Արեւ», 1931, 24 սեպտեմբերի, հմմտ. «Պայքար», 1931, 27 սեպտեմբերի:

արտահայտվելու հիմնական պատճառաբանությունները ֆիզիկական անվտանգության երաշխիքներն էին: Բոլորովին անհիմաստ էր համարվում այն միտքը, որ Սևրի պայմանագրով նախատեսված Միացյալ և Անկախ Հայաստանի անվտանգությունն անվելի անխոցելի կլիներ: Ռամկավարները գտնում էին, որ պետք է հրաժարվել Սևրը հետապնդելուց, անկախություն երազելուց, երկրի պաշտպանությունը վստահել Խորհրդային Ռուսաստանին, փոխարենը մեր ներուժը կենտրոնացնել երկրի տնտեսական ու կրթամշակութային զարգացման վրա⁶⁰:

Խնդիրն այնքան էր խորացել, որ ՌԱԿ քարոզչամիջոցները հաճախ դեմ էին արտահայտվում նույնիսկ մայիսի 28-ի տոնակատարությանը: Ռամկավար պաշտոնաթերթերից Բոստոնի «Պայքար»-ը, խոսելով այդ օրվա մասին, գրում էր, որ այն «անկախութեան տօն մը չէ, այլ սխալ ու մոլորեցնող մեկնութիւնն է պատմական իրողութեան մը եւ վտանգաւոր նշանացոյց մը՝ ապագայ քաղաքական ուղղութեան մը, որուն կը կապէ ինքզինք այդ կուսակցութիւնը»⁶¹: Ըստ էության կուսակցական ատելությունից կուրացած պարբերականը չէր ընդունում Հայաստանի անկախության տոնը: Թերթի կարծիքով մայիսի 28-ի տոնակատարությունը ոչ թե անկախության գաղափարի փառաբանություն է, այլ Հայաստանը գերեզմանի դուռ տանելու արկածախնդրություն⁶²:

Ռամկավար գործիչներից Հրաչ Երվանդը, խոսելով Ղազնակցության կողմից առաջ քաշվող Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի մասին, այն անվանում էր «կեղծ անկախասիրություն» և հավելում. «Ռամկավար ազատական կուսակցութիւնը իր վճռական ու յստակ ոչը արտասանած է այդ կեղծիքին դէմ եւ իր բոլոր ուժերովը պիտի պայքարի, պիտի աշխատի որ այս ժողովուրդին մէջ մշակուի իրական ու անկեղծ անկախասիրութիւն»⁶³: Մեր կարծիքով սա պարզապէս քարոզչական հնարք էր՝ հերթական անգամ Ղազնակցությանը քարկոծելու համար:

Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը քննարկեցին նաև մյուս ռամկավար-ազատական թերթերը: Փարիզի ռամկավարների պաշտոնաթերթ «Ապագայ»-ի խմբագրական հոդվածներից մեկում կարծիք էր հայտնվում, որ նույնիսկ «գեղեցիկ իտէալի մը անունով «Միացեալ եւ անկախ Հայաստան»ի տարեդարձեր տօնելը» նշանակում է շեղվել իրատեսության ճանապարհից և ժողովրդին սին հույսերով փայփայել⁶⁴:

60 Տե՛ս «Արեւ», 1923, 15 մայիսի, 1931, 7 յուլիսի, 24 սեպտեմբերի, «Ապագայ», 1924, 23 փետրուարի, 1938, 1 յունուարի:

61 Տե՛ս «Պայքար», 1928, 18 օգոստոսի:

62 Տե՛ս նույն տեղում:

63 «Ապագայ», 1933, 4 նոյեմբերի:

64 Տե՛ս «Ապագայ», 1929, 1 յունիսի:

Ընդհանրապես այս հարցի վերաբերյալ «Ապագա»-ն իր տեսակետներով ու գնահատումներով չէր տարբերվում Եգիպտոսի «Արև»-ից: Օրինակ՝ այս թերթը ՀՅԴ 1923 թ. արտասահմանյան մարմինների խորհրդաժողովի հայտարարության վերաբերյալ կասկածանք էր հայտնում, թե ինչպես է Ղաշնակցությունը վերանվաճելու Հայաստանի անկախությունը: «Արև»-ի խմբագիրը կարծում էր, որ Սևրի պայմանագրի, Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի քարոզը Ղաշնակցության կողմից արվում է միայն ժողովրդի ազգայնական զգացումները գրգռելու և այս կերպով «միամիտների» շարքերի համակրանքը շահելու համար: Թերթը թերահավատությամբ էր մոտենում անկախության պայմաններում հարևան բոլոր ժողովուրդների հետ համերաշխ ապրելու հավանականությանը⁶⁵:

Հայաստանի անկախության գաղափարի հանդեպ ունեցած իր վերաբերմունքով ռամկավար-ազատական թերթերից չէր տարբերվում Բոստոնի «Պայքար»-ը: Նրա խմբագրականներից մեկը համոզում էր, որ որևէ փաստ չունեն, որը հերքում է Խորհրդային Հայաստանի ազգային քաղաքական ինքնուրույնությունը⁶⁶: Թերթի խմբագիրը կարևորում էր Խորհրդային Միության դերն Անդրկովկասում ազգամիջյան հակամարտությունները «մոռանալու» գործում: «Ամէն պարագայի տակ ուրախալի է, որ Անդրկովկասի վարիչներն ու Խորհրդային Միութեան Կեդրոնական Կառավարութիւնը արժանի կարեւորութիւնը կուտան այս կենսական խնդրոյն, որու յաջող ընթացքէն կախում ունի երեք հանրապետութիւններու, մասնաւորաբար Հայաստանի ապագայ բարօրութիւնն ու բարգաւաճումը»⁶⁷, - գրում է թերթը: Խորհրդային Միության «պետական դրութիւնն ու սահմանադրութիւնը», «Պայքար»-ի խմբագրի պնդմամբ, նպաստավոր պայմաններ են ստեղծել նրա մեջ մտնող բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայերի ինքնուրույնության պահպանման համար⁶⁸:

Ինչպես տեսնում ենք, ռամկավար պարբերականն արժևորում էր Խորհրդային Հայաստանի կարգավիճակը և ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնելու իրողությունը՝ այն համարելով հայ ժողովրդի երազանքների իրականացման լավագույն տարբերակ: Վերջում ավելացնենք, որ «Պայքարի» այս խորհրդամետ դիրքորոշումը ոչ համարժեք գնահատականի էր արժանանում խորհրդային իշխանությունների կողմից: Ա. Մյասնիկյանը կասկածամտորեն հեզնում էր, որ ռամկավարներին գոհացնում է Խորհրդային Հայաստանը, որովհետև այն նրանց «հույս է տալիս Մեծ Հայաստան

65 Տե՛ս «Արև», 1923, 20 յունիսի:

66 Տե՛ս «Պայքար», 1931, 25 յունուարի:

67 «Պայքար», 1931, 4 ապրիլի:

68 Տե՛ս «Պայքար», 1931, 7 յուլիս:

դառնալու»⁶⁹: Պարզ է, որ Ա. Մյասնիկյանը ծաղրում էր Մեծ Հայաստանի գաղափարը: Բոլշևիկ գործիչը, չհավատալով ռամկավարների անկեղծությանը, իր կասկածները հիմնավորում էր ռամկավարների հովանավորությամբ գործող ազգային պատվիրակության գոյությամբ: Նրա կարծիքով «մինչև որ չլուծվի այդ ազգային պատվիրակությունը, մենք չենք դադարի նրան համարել անկոչ, դավաճանական, արկածախնդրական ու խաբեյական»⁷⁰:

Իսկ Աթենքում հրատարակվող «Սևան» թերթն առանց հիմքի գրում էր, թե իբր՝ «հայ ժողովուրդի պետական օրկանիզմը եւ հաւաքական մեծամասնութիւնը դէմ է Միացեալ Անկախ Հայաստանի գաղափարին»⁷¹:

Այսպիսով Սփյուռքում գործող ռամկավար-ազատական կուսակցության մամուլը ոչ միայն իրատեսական չէր համարում Սևրի պայմանագիրը, Միացյալ և Անկախ Հայաստանը, այլև անհիմաստ էր գտնում այդ գաղափարի քննարկումը: Սփյուռքի քաղաքական գունապնակի այս հատվածն իր մոտեցումը հիմնավորում էր Հայաստանի ժողովրդի անվտանգության վերաբերյալ ունեցած մտահոգություններով: ՌԱԿ-ը կուսակցական ամենաբարձր մակարդակներով դրական էր տրամադրված Խորհրդային Հայաստանի կարգավիճակին: Կուսակցական գործիչներն ու թերթերը գտնում էին, որ դա նախևառաջ ապահովում է տնտեսապես և քաղաքականապես թույլ երկրի և ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը: Ի տարբերություն դաշնակցական տեսակետի՝ ռամկավարները համոզում էին, որ Խորհրդային Հայաստանը կամավոր է խորհրդայնացել՝ ավելի ուշ մտնելով խորհրդային դաշինքի մեջ: Միաժամանակ նրանք անհիմաստ էին համարում կենտրոնանալ Սևրի պայմանագրով նախատեսված Արևմտյան Հայաստանի խնդրի վրա:

Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարին բացասաբար էին վերաբերվում նաև հնչակյանները: 1924 թ. վերջին տեղի ունեցած կուսակցության 8-րդ Ընդհանուր պատգամավորական ժողովի որոշումներում ասվում էր «Խորհրդային Հայաստանը մեր կուսակցութեան 38 տարիներէ ի վեր հետապնդած նպատակի իրականացումն է, որ ան կը կազ-

69 Մարտունի Ա., Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924, էջ 14:

70 Նույն տեղում, էջ 27:

71 «Սեւան», Աթենք, 1933, 16 յուլիսի:

մէ գլխաւոր կռուանը մեր բոլոր յոյսերուն, ցանկութիւններուն եւ առաջարկութիւններուն եւ իրական ու պաշտոնական ներկայացուցիչն է հայ աշխատաւորութեան հաւաքականութեանը, Ս. Ղ. Հնչակեան կուսակցութիւնը անվերապահօրէն կը կանգնի խ. Հայաստանի կողքին, կը ջանայ ամէն միջոցով ու եղանակով սատարել անոր բարգաւաճումին ու վերաշինութեանը»⁷²: Խորհրդային Հայաստանի իշխանութիւններին աջակից լինելու ոգով որոշումներ ընդունեց նաև 1934 թ. օգոստոսին Մարտելում տեղի ունեցած կուսակցութեան 9-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը⁷³:

Ըստ էության Հնչակյան կուսակցութիւնն ամենաբարձր մակարդակով իր աջակցութիւնն էր հայտնում Խորհրդային Հայաստանի իշխանութիւններին բռնած ուղուն՝ չընդունելով Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը: Ամերիկայի հնչակյան պարբերական «Երիտասարդ Հայաստան»-ը, որի խմբագիրն էր Ստեփան Սապահ-Գյուլյանը, նույնպէս դեմ էր Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարին և եռանդուն կերպով պաշտպանում էր Խորհրդային Ռուսաստանի հետ լինելու գաղափարը: Հայաստանում Խորհրդային իշխանութիւնը հռչակելու առաջին օրերին Ս. Սապահ-Գյուլյանը պնդում էր, որ հայկական պետականութիւնն անկախ է, պարզապէս գտնվում է «Ռուսական օրիէնտացիայի մէջ»⁷⁴: Սակայն մի քանի ամիս անց նա մոռանում է անկախութեան մասին և սկսում է համոզել, որ քանի կա Խորհրդային Ռուսաստանը, սխալ է անկախ և ինքնուրույն քաղաքականութիւն վարելը: Հայ Ղատը համարելով միայն սոցիալական խնդիր՝ նա առաջարկում էր դրա լուծումը վերապահել հեղափոխական Ռուսաստանին⁷⁵: Ս. Սապահ-Գյուլյանը գրում էր, որ իզուր են դաշնակցականները սպասում Խորհրդային կարգերի տապալմանը և Խորհրդային Ռուսաստանի քայքայմանը: Ղա տեղի չի ունենալու, և Խորհրդային Հայաստանը մշտապէս կապված է մնալու Խորհրդային Ռուսաստանին⁷⁶: Հնչակյանները Խորհրդային Հայաստանի ապագան պատկերացնում էին պրոլետարական դիկտատուրայի մասը կազմելու շահադիտությամբ⁷⁷: Հնչակյան պաշտոնաթերթը, ի տարբերութիւն ռամկավար պարբերականների, որոնք Խորհրդային Հայաստանը գերադա-

72 «Արծազանք Փարիզի», 1925, 8 փետրուարի, հմմտ. «Սուրիական մամուլ», 1925, 25 փետրուարի, «Երիտասարդ Հայաստան», 1925, 25 փետրուարի, Յիսնամեակ Սօց. Դէմոկրատ Հնչակեան կուսակցութեան (1887-1937), Փրովիտէն, 1938, էջ 331, 332, Պատմութիւն Ս. Ղ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962), խմբ. Արսէն Կիտուր, Ա հատոր, Պէյրուս, 1962, էջ 516:

73 Տե՛ս Պատմութիւն Ս. Ղ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962), խմբ. Արսէն Կիտուր, Ա հատոր, էջ 522:

74 «Երիտասարդ Հայաստան», Չիկագո, 1920, 22 դեկտեմբերի:

75 Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1921, 5 օգոստոսի:

76 «Երիտասարդ Հայաստան», Բոստոն, 1924, 19 ապրիլի:

77 Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1924, 9 օգոստոսի:

սում էին տեսնել ԽՍՀՄ-ի կազմում, Հայաստանի կարգավիճակի խնդիրը դիտարկում էր համաշխարհային հեղափոխության երազանքի խորապատկերում: Թերթի թղթակիցներից մեկն էլ հույս էր հայտնում, որ Հնչակյան կուսակցության միջոցով սփյուռքահայ աշխատավորությունը կկապվի Խորհրդային Հայաստանի հետ և կդառնա նրա զինակիցը⁷⁸:

Իր հետագա համարներից մեկում «Երիտասարդ Հայաստան»-ի խմբագիրը «հպարտանում» էր, որ խորհրդային կարգերի հաստատումով Հայաստանում «բուրժուական կուսակցությունները» կորցրել են «իրենց ոտքի տակի նացիոնալիստական հողը»⁷⁹: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս ազգային խնդիրներն ու նպատակները հետին պլան էին մղվում:

ԱՄՆ-ում լույս տեսնող ավետարանական պարբերական «Հայաստանի կոչնակ»-ը, անդրադառնալով ՀՅԴ 10-րդ Ընդհանուր ժողովի կողմից ընդունված Ազատ եւ անկախ Հայաստանի բանաձևին, գրում էր, որ կարևորը Հայաստանի վերաշինության խնդիրն է: Թերթը փորձում էր համոզել, որ մեզ անկախություն պետք չէ, որովհետև «... մեր բազմադարեան անցեալին մէջ մի քանի կարճատեւ շրջաններէ դուրս, մենք դժբախտաբար չենք ունեցած Հայաստան մը, որ վայելած ըլլայ բացարձակ ազատութիւն եւ անկախութիւն»⁸⁰: Թերթը կարծում էր, որ Խորհրդային Ռուսաստանի հետ դաշինք կազմելը ոչ միայն աղետ չէ մեզ համար, այլև «ապահովութեան եւ փրկութեան երաշխիք է»⁸¹: Մեկ այլ դեպքում «Հայաստանի կոչնակ»-ը «Ազատ և Անկախ Հայաստան»-ն անվանում էր «բանաստեղծական եւ հռետորական ֆրեզ»⁸²:

«Հայաստանի կոչնակ»-ի խմբագիրը, չհավատալով բուլշևիկյան վարդապետությանը, այնուամենայնիվ ընդունում էր, որ հայ ժողովուրդը պետք է երախտապարտ լինի որ «Հայաստանի ձակատագիրը կապուած է Ռուսիոյ հետ: Այս է հայութեան ուղղափառ դաւանանքը: Այն Հայը, որ տարբեր քաղաքականութիւն կը քարոզէ՝ իր ազգին եւ հայրենիքին դէմ դաւաճանած կ'ըլլայ, գիտակցաբար թե անգիտակցաբար: «Ազատ եւ անկախ Հայաստան»ի դատին անունով մղուած պայքարը անտեղի է, վտանգաւոր է, աղիտաբեր է»⁸³, - գրում էր հնչակյան պաշտոնաթերթը:

Մեկ այլ դեպքում «Հայաստանի կոչնակ»-ի հոդվածագիրը (Խ. Գուրյան) գտնում էր, որ Դաշնակցությունը հայ ժողովրդից իրավունք չի

78 Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1925, 11 ապրիլի:

79 Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1924, 12 նոյեմբերի:

80 «Հայաստանի կոչնակ», Բոստոն, 1925, 7 մարտ, N 10, էջ 292:

81 Նույն տեղում:

82 «Հայաստանի կոչնակ», 1927, 19 մարտ, N 12, էջ 358:

83 Տե՛ս ույն տեղում:

ստացել «Միացեալ եւ անկախ Հայաստանի պահանջով» սուր ճոճելու թուրքիայի և Ռուսաստանի դեմ⁸⁴: Դրանից տպավորություն էր ստեղծվում, որ հնչակյան գործիչները թուրքիային և Խորհրդային Ռուսաստանին պաշտպանում են Դաշնակցությունից:

«Հայաստանի կոչնակ»-ը հայ ժողովրդի պարտականությունն էր համարում հավատարիմ մնալ Խորհրդային իշխանությանը՝ անտեղի և նույնիսկ վտանգավոր համարելով «Ազատ եւ Անկախ Հայաստան»-ի դատի անունով մղվող պայքարը⁸⁵: Թերթը Խորհրդային Միության կազմում մնալը պայմանավորում էր թուրքիայի հարձակումից ապահովագրված լինելու խնդրով⁸⁶: Փաստորեն որոշ դեպքերում հնչակյանների՝ Խորհրդային իշխանությանը պաշտպանելու քարոզչությունն առարկայական հիմնավորում էր ստանում: Այսպիսով պարբերականը դեմ էր արտահայտվում Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարին և բոլշևիկյան իշխանության ու Խորհրդային Ռուսաստանի հովանավորությունն էր համարում հայ ժողովրդի միակ փրկությունը: Այս դիրքորոշումը անշուշտ բացատրվում է Հայաստանի տնտեսական և քաղաքական ծանր կացությամբ՝ առանց հաշվի առնելու, որ այդ կացության պատճառներից մեկը նույն բոլշևիկյան կամ ռուսական կայսերապաշտությունն էր:

Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի մասին լսել անգամ չէր ուզում կոմունիստական ուղղվածություն ունեցող Փարիզի «Երևան» թերթը: Պարբերականն անխնա քննադատում էր դաշնակցական, հնչակյան և ռամկավար կուսակցություններին ու նրանց ազդեցության տակ գտնվող մամուլի միջոցներին՝ ծայրահեղ դրական ներկայացնելով Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատման գործընթացը և հրաժարումը Սևրի պայմանագրից:

«Երևան»-ը տարբեր առիթներով ներկայացնում էր Հայաստանի Խորհրդայնացման, Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի «առավելությունները»: Օրինակ՝ թերթի՝ 1925 թ. դեկտեմբերի համարներից մեկում առանձնակի եռանդով էր խոսվում Փարիզում Հայաստանի Խորհրդայնացման հնգամյակի տոնակատարության մասին: Հանդիսությունը վարում էր Շիրվանզադեն՝ ասելով «Հինգ տարի է գոյութիւն ունի անկախ Հայաստանը՝ հայ աշխատաւորութեան հայրենիքը»⁸⁷: Հանդիսությանը ներկա է գտնվել նաև Ֆրանսիայում Խորհրդային Միության դեսպան Ռկոստովսկին, որը հանդես է եկել առանձին ելույթով և գովերգել է Խորհրդային կարգերն ու Հայաստանի Խորհրդայնացումը: Նույն հանդիսության ժամանակ ելույթ է

84 Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1926, Նյու Յորք, 7 յուլիս, N 29:

85 Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1927, 19 մարտ, N 12:

86 Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1927, 2 յուլիս, N 27:

87 «Երեւան», 1925, 3 դեկտեմբերի:

ունեցել նաև «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր Եղիա Չուբարը, ով հավաստիացրել է, թե քանի Հայաստանում իշխում են բանվորն ու գյուղացին, այն անկախ է լինելու⁸⁸:

Անդրադառնալով Հայաստանի անկախությունը պահանջող իր ընդդիմախոսներին՝ թերթը գրում էր. «Խորհրդային Հայաստանի անարժան թշնամիներն, «Միացեալ եւ անկախ Հայաստանի» ցնորքի «տեսաբանները» կը կակազեն, որ Հայաստան միանալով Անդրկովկասի եւ Ռուսաստանի ու միւս խ. Հանրապետութիւններուն՝ կորսնցուց իր անկախութիւնը: Անոնց ըմբռնած «ազատութիւնն» ու «անկախութիւնը» Հայաստանի բանւորներու եւ գիւղացիներու ըմբռնած իսկական ազատութեան ու անկախութեան հետ կապ չունին: Շնորհիւ ստեղծուած ներկայ սիստեմին միայն՝ մեր աշխատաւորութիւնը տէրը դարձաւ իր ճակատագրին եւ հնարաւորութիւն ունեցաւ ազատօրէն բարգաւաճելու տնտեսական ու կուլտուրական ամէն ասպարէզներու մէջ»⁸⁹: Ըստ էության համայնավար թերթի այս մեկնաբանությունները կուրորեն գովերգում էին խորհրդային իշխանությանը՝ առանց հաշվի առնելու իրականությունը:

Այսպիսով՝ սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը Սևրի պայմանագրի և Միացյալ ու Անկախ Հայաստանի գաղափարի քննարկման հարցում ուներ միմյանց հակադիր մոտեցումներ, որոնք կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ.

-ՀՅԴ-ն իր տարաստիճան ժողովների որոշումներով, ինչպես նաև տարբեր գործիչների և մամուլի միջոցով ամեն ինչ անում էր Սփյուռքում Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը սփյուռքահայության քաղաքական օրակարգի առաջին կետում պահելու համար: Դաշնակցականների պատկերացմամբ այս հանգամանքը ոչ միայն պատմական անհրաժեշտություն էր հայկական անկախ պետականության վերականգնման առումով, այլև կարևոր գործոն՝ սփյուռքահայությանը համախմբելու և հայապահպանությանը նպաստելու տեսակետից:

-Հայ Յեղափոխական Դաշնակցությունը և նրա համակիր շրջանակը դեմ են արտահայտվել խորհրդային զանազան դաշինքներին Հայաստանի անդամակցությանը: Նման դիրքորոշման հիմնական պատճառը եղել է այն, որ այդ քայլով Խորհրդային Հայաստանը գործնականում զրկվել էր անկախությունից: Ինքնիշխանության կորուստը տրամաբանորեն ենթադրում էր բազմաթիվ այլ վտանգավոր հետևանքներ: Օրինակ՝ դաշնակցականների մեկնաբանությամբ Արևմտյան Հայաստանի հարցի

88 Տե՛ս «Երեւան», 1925, 6 դեկտեմբերի:

89 «Երեւան», 1929, 31 յուլիսի:

լուծման գործում միջազգային աջակցություն ունենալն էլ մեծապես պայմանավորված էր Հայաստանի անկախությամբ:

-Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարին դեմ արտահայտվող սփյուռքահայ մյուս կուսակցություններն ու հասարակական-քաղաքական հոսանքները ոչ միայն ժամանակավրեպ էին համարում հարցի քննարկումը, այլև Հայաստանի բարօրությունը, նրա ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը տեսնում էին Խորհրդային Միության կազմում:

2.Սևրի պայմանագրի և Վ. Վիլսոնի իրավարար վճռի արծարծումները Հայ Ղատի հետապնդման գործընթացում (1943 -1991 թթ.)

Սևրի հաշտության պայմանագիրը և ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը հայոց նոր պատմության այն կարևորագույն փաստաթղթերն են, որոնք կարող են նպաստել Հայկական հարցի արդարացի լուծմանը՝ հայ ժողովրդին տրամադրելով նրա ազգային համախմբման համար բավարար տարածք: Ուստի Սևրի հաշտության պայմանագիրը միշտ էլ հայոց քաղաքական օրակարգում է եղել որպես հայ ժողովրդի իրավունքների մասին անժամկետ պահանջագիր:

Աշխարհասփյուռ հայության համար Սևրի ստորագրված, բայց սառեցված պայմանագիրը հետագա տասնամյակների ընթացքում դարձել էր հայկական հողերի՝ հայրենիքին վերադարձնելու համար պայքարի խորհրդանիշ: 1943-1991 թթ. սփյուռքահայության ներկայացրած փաստաթղթերը, սփյուռքահայ գործիչների հայտարարությունները և մամուլի հոդվածները ցույց են տալիս, որ արտերկրում ապրող հայության համար ցեղասպանության ճանաչումը ինքնանպատակ չէր: Որովհետև դրա հետ միասին ու մանավանդ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, նա պահանջում էր նյութական և հողային հատուցում մատնանշելով, որ Սևրում այդ հարցը իր լուծումը ստացել է: Ուստի տվյալ պատմաշրջանում Սևրի պայմանագիրը օրակարգային հարց դարձնելու փորձերը պետք է դիտարկել երկու փուլով՝ 1943-1948 թթ. և 1960-1980-ական թթ.:

Դիտարկելով 1943-1948 թթ. իրադարձությունները նկատենք, որ Թուրքիայի հանդեպ Խորհրդային Միության համակրանքն ի չիք էր դարձել Քեմալ Աթաթուրքի մահից հետո: Դրան անմիջապես հաջորդած Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական կառավարության կողմից նացիստական Գերմանիային ցուցաբերված բազմակողմանի օգնությունն ուղղված էր հիմնականում ԽՍՀՄ-ի դեմ, ինչը պատե-

րազմի ավարտից հետո հանգեցրեց խորհրդա-թուրքական հարաբերությունների վատթարացմանը: Արդյունքում՝ Թուրքիային պատժելու նպատակով հետպատերազմյան տարիներին ԽՍՀՄ-ը առաջ քաշեց հայկական տարածքների մի մասը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու հարցը: Բայց Խորհրդային Հայաստանի կողքին անակնկալ կերպով հայտնվեց նաև Խորհրդային Վրաստանը: Ուստի ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիային տարածքային պահանջների առաջադրման գործընթացն ունեցավ մի քանի փուլեր, որոնց ընթացքում Կարսից, Արդահանից և Արդվի-նից բացի՝ առաջ քաշվեց նաև Սևրի պայմանագրով Հայաստանին տրված տարածքների հարցը:

Հետպատերազմյան ժամանակահատվածում հայկական հողերի պահանջատիրոջ դերում հանդես էին գալիս ինչպես ԽՍՀՄ-ը, այնպես էլ հայկական Սփյուռքը: Դեռևս 1944 թ., երբ խորհրդահայ հասարակությունը նեղ շրջանակում քննարկում էր հայկական տարածքների վերադարձի հարցը, սփյուռքահայությունը ակտիվ միջոցների դիմեց այն միջազգային հանրությանը ներկայացնելու համար: Սփյուռքում սկսվել էր մի շարժում, որը մի կողմից գլխավորում էր Հայ Յեղափոխական Դաշնակցությունը (ՀՅԴ), մյուս կողմից՝ Ռամկավար Ազատական կուսակցությունը (ՌԱԿ), խորհրդամետ այլ կազմակերպությունների՝ Սոցիալ Դեմոկրատական Հնչակյան կուսակցության (ՍԴՀԿ) և Ամերիկահայերի առաջադիմական լիգայի հետ համատեղ: Արդյունքում՝ վերջիններիս նախաձեռնությամբ սփյուռքահայերի շրջանում ստեղծվում են Ազգային խորհուրդներ, իսկ ՀՅԴ-ն էլ իր հերթին 1944-ից ձևավորում է Հայ Դատի շարժումը՝ հիմք դնելով Հայ Դատի հանձնախմբերին: Միացյալ Նահանգներում այն գործում էր որպես ԱՄՆ Հայկական ազգային կոմիտե (Armenian National Committee of America) (ANCA)՝ Ռուբեն Դարբինյանի և Սիմոն Վրացյանի ղեկավարությամբ:

Վերոնշյալ կազմակերպություններն այդ տարիներին հրատարակեցին գրքեր, տպագրեցին հոդվածներ ու թերթիկներ, պատրաստեցին հուշագրեր և դիմումներ, բացի այդ ի նպաստ Հայ դատի կազմակերպեցին հանրահավաքներ ու հավաքույթներ: Հիմնականում սփյուռքահայ կազմակերպություններն ու գործիչները հուշագրեր և դիմումներ ուղղեցին հաղթող տերությունների ղեկավարներին, Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) Սան Ֆրանցիսկոյի հիմնադիր խորհրդատու-վին (1945 թ. ապրիլ), ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի խորհրդատու-վին (1945 թ. օգոստոս), արտաքին գործերի նախարարների խորհրդի Լոնդոնի նստաշրջանին (1945 թ. սեպտեմբեր), ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Լոնդոնի 1-ին նստաշրջանին (1946 թ.

հունվար) և այլն: Այդ բոլոր փաստաթղթերում հիշատակելով Սևրի պայմանագիրը հեղինակները նշում էին՝ «Հաշվի առնելով հայերի զոհերի թիվը և ցուցաբերած ծառայությունները մեծ դաշնակիցները պաշտոնապես խոստացել էին ազատագրել նրանց պատմական հողերը: Իրականում դաշնակից տերությունների Գերագույն Խորհուրդը 1920 թ. հանձնարարեց ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին գծել Հայաստանի սահմանները, որը թույլ էր տալու հայերին ազատվել թուրքական լծից: Նա գծեց սահմանները, որոնք ընդգրկում էին պատմականորեն հայկական տարածքները: Մինչդեռ Սևրի պայմանագիրը, որը ստորագրվել էր Թուրքիայի կառավարության կողմից ևս, մնաց թղթի վրա»⁹⁰:

Նկատենք, որ 1945 թ. ներկայացված բոլոր փաստաթղթերը հիմնականում երկու ուղղվածություն ունեին: Ուսումնասիրելով դրանց բովանդակությունը կարելի է եզրակացնել, որ այդ գրություններում Ամերիկահայ ազգային խորհուրդը և Հայկական ազգային կոմիտեն, ի տարբերություն ֆրանսահայ, սիրիահայ ու լիբանանահայ, եգիպտահայ ազգային խորհուրդների, հիմնականում մեծ կարևորություն էր տալիս Սևրի պայմանագրին, իսկ ահա վերջինները՝ հիշեցնում էին հայկական կոտորածների մասին: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ կերպ ամերիկահայ հասարակությունը ցանկանում էր հիշեցնել պաշտոնական Վաշինգտոնին, որ ժամանակին Ազգերի լիգան հանձնարարել է ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին գծել հայ-թուրքական սահմանագիծը, որը հայտնի է «Վիլսոնի իրավարար վճիռ» անունով: Այլ կերպ ասած իրենց գնահատմամբ՝ Միացյալ Նահանգները որոշակի պարտավորություն ունեն հայ ժողովրդի առջև:

Բացի այդ ամերիկահայ գործիչների գործունեության արդյունքում 1945 թ. մի խումբ նշանավոր ամերիկացիներ ստեղծեցին Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտեն, որը ևս փորձում էր օրակարգ բերել Սևրի պայմանագիրը՝ բարձրացնելով այն հարցը, որ մինչ խորհրդային կարգերի հաստատումը ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնն անձամբ է գծել Հայաստանի քարտեզը, և որ թուրքերի իրականացրած ոճրագործության հետևանքով մեկուկես միլիոն հայ ցրված է աշխարհի տարբեր ծայրերում⁹¹: 1945-1947 թթ. կոմիտեն ՄԱԿ-ում գործող ԱՄՆ-ի պատվիրակություններից «պահանջում էր Հայաստանին վերադարձնել

90 Armenian National Council of America, The Case of the Armenian People, Memorandum to the United Nations Conference on International Organization in San Francisco, June 4, 1945, New York, 1945, p. 5.

91 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 326, գ. 100a (Հայաստանի ԽՍՀ արտգործնախարարության տեղեկագիրը՝ «Արտասահմանյան մամուլի և օտարերկրյա գործիչների Թուրքիայի կողմից խլված հայկական տարածքների պահանջատիրության արձագանքի մասին»), թ. 249:

Սևրի պայմանագրով նախատեսված թուրքիայի կողմից բռնազավթված տարածքները՝ այդ կերպ կատարելով ԱՄՆ-ի նախկին նախագահ Վ. Վիլսոնի 1920 թ. «իրավարար վճիռը»⁹²:

Կոմիտեի անդամներից սենատոր Չարլզ Թոբին իր ելույթներում նշում էր. «Ես հուսով եմ, որ Թուրքահայաստանի այն մասը, որ Սևրի համաձայն առանձնացվել էր նախագահ Վիլսոնի կողմից, կգիջվի Հայաստանի Հանրապետությանը, իսկ հազարավոր հայ փախստականները, որ թուրքական գաղթի և հալածանքների զոհն են, կվերադարձվեն»⁹³: 1946 թ. մայիսի սկզբին «Նյու Յորք Թայմս»-ը հրապարակել էր Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտեի նախագահ Ա. Սմիթի բաց նամակը, որտեղ նա խոսելով պատմական արդարության մասին մեծ տեղ էր հատկացրել Սևրի պայմանագրին և Վիլսոնի իրավարար վճռին⁹⁴:

Նույն ժամանակահատվածում՝ 1945-1947 թվականներին, սփյուռքահայ մամուլում հրատարակվեցին բազմաթիվ հոդվածներ, որով արտերկրի հայ գործիչները փորձում էին աշխարհասփյուռ հայությանը հիշեցնել Սևրի պայմանագրի մասին՝ քարոզելով այն գաղափարը, որ Հայկական հարցը կարող է լուծվել միայն Սևրի պայմանագրի շրջանակում:

Արդյունքում՝ 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 4-ը Նյու Յորքում Ամերիկահայ ազգային խորհրդի նախաձեռնությամբ հրավիրված Համաշխարհային հայկական կոնգրեսի աշխատանքներում վերստին արծարծվեց թուրքիայի բռնազավթած հայկական տարածքների վերադարձման հարցը, որտեղ ներկաները իրենց ելույթներում շեշտում էին, որ «արդարությունը պահանջում է, որ Հայաստանը ընդգրկվի նախագահ Վիլսոնի գծած սահմաններում»⁹⁵: Այդ արտահայտությունը տեղ է գտել Համաշխարհային հայկական կոնգրեսի մասնակիցների կողմից պատրաստված խնդրագրերում, որը ներկայացվել է ՄԱԿ-ին և մեծ տերությունների կառավարություններին՝ պահանջելով Հայկական հարցի վերջնական ու արդարացի լուծում⁹⁶:

Բայց եթե սփյուռքահայությունը պահանջում էր իրականություն դարձնել «Վիլսոնյան Հայաստանի ստեղծման ծրագիրը», կրկին օրա-

92 Vertanes Ch., Armenia Reborn, New York, 1947, p.122.

93 Armenian National Council of America, Press Release No 112, Text of Speech of Senator Chareles W. Tobey in Carnegie Hall, April 28, 1946, p. 4.

94 Տե՛ս New York Times, 3. V. 1945.

95 Համառոտ տեղեկատուութիւն Համաշխարհային հայկական քոնկրէսի ապրիլի 30 - մայիսի 4, 1947, Նիւ Եորք, Ամերիկա, 1947, էջ 11-12:

96 Տե՛ս Armenian National Council of America, A Memorandum on the Armenian Question, Presented to the Council of Foreign Ministers, March 7, 1947, New York, 1947, էջ 1-7, The Resolution to the United Nations Submitted by the World Armenian Congress, New York, 1947, էջ 1-11, An Appeal, To the Member Governments and Their Delegates to the United Nations, July 1, 1947, New York, 1947, էջ 1-5:

կարգ բերել Սևրի պայմանագիրը և վերադարձնել Թուրքահայաստանի մյուս տարածքները ևս, ապա 1945 թ. Մոսկվան Անկարայից պահանջում էր Խորհրդային Հայաստանին վերադարձնել միայն 1921 թ. Կարսի պայմանագրով Թուրքիային տրված տարածքները: Այլ կերպ ասած՝ պաշտոնական Մոսկվան, ի տարբերություն Սփյուռքի, իրավականորեն իրեն իրավասու էր համարում խոսել միայն Կարսի պայմանագրի մասին, քանի որ վերջինս կնքվել էր Հայաստանի խորհրդայնացումից հետո: Սևրի պայմանագիրը, ընդհակառակը, ստորագրվել էր Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից և խորհրդային ղեկավարությունը պաշտոնապես այն չէր ճանաչել: Այսինքն՝ ԽՍՀՄ-ի կողմից ոչ պատշաճ քայլ կլիներ Սևրի պայմանագրի վերաբացումը: Հնարավոր է դա էր պատճառը, որ 1945 թ. մայիսի 3-ին Խորհրդային Հայաստանի արտգործնախարար Ս. Կարապետյանը ԽՍՀՄ-ի արտգործնախարարի տեղակալ Ս. Քավթարաձեին ուղղված «Թուրքիային անցած նախկին հայկական տարածքների վերադարձման և արտասահմանում ապրող հայերի հայրենիք վերադառնալու հնարավորությունների մասին» գրության մեջ առաջարկում էր տարածքների վերադարձման երեք տարբերակ՝

1. Կարսի, Արդահանի և Սուրմալուի վերամիավորումը ԽՍՀՄ-ին, այլ խոսքով՝ վերականգնել 1878-1914 թթ. ռուս-թուրքական պետական սահմանը:
2. Վերականգնել ռուս-թուրքական սահմանը համաձայն 1878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագրի: Այսինքն՝ առաջին տարբերակում վերը նշված տարածքներից բացի վերադարձնել նաև Ալաշկերտի հովիտը՝ Բայազետ քաղաքի հետ միասին:
3. Կարսից, Սուրմալուից և Ալաշկերտի հովտից բացի ԽՍՀՄ-ին վերադարձնել նաև 6 հայկական վիլայեթներից 3-ը, այն է՝ Էրզրումի, Վանի և Բիթլիսի⁹⁷:

Երրորդ կետը վերաբերում էր Սևրի պայմանագրով Հայաստանին վերադարձվելիք տարածքներին: Մինչդեռ խորհրդային կողմը նախընտրությունը տվեց առաջին կետին: Այսինքն՝ 1914 թ. ռուս-թուրքական պետական սահմանի վերականգմանը, սակայն սփյուռքահայերի՝ Թուրքահայաստանը Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջը ավելի ուշ Կրեմլին հնարավորություն է ընձեռում ոչ պաշտոնապես հայերի անունից շահարկել Վանի, Բիթլիսի և Էրզրումի հարցը ևս:

97 Стів Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг., под ред. А. Киракосяна, Ереван, 2010, էջ 75:

Դրան նախևառաջ նպաստեց Խորհրդային Հայաստանի հասարակության տարածքային պահանջատիրության հարցում ունեցած դիրքորոշումը: Պաշտոնական Երևանին չէր հուզում, որ կենտրոնական կառավարությունը սահմանափակվում էր միայն Կարսի և Արդահանի պահանջով: Հայ քաղաքական և մշակութային գործիչներն իրենց հրապարակային ելույթներում բարձրացնում էին սփյուռքահայերի պահանջը: Օրինակ՝ Ամերիկահայերի ազգային խորհրդի «Հայ ժողովրդի գործը» խորագրով հուշագրի հրապարակումից հետո «Սովետական Հայաստան» թերթը տպագրել էր անվանի գրող Ղ. Ղեմիրձյանի նամակը, որում նա հետևյալ հարցադրումն էր արել. «Արդյո՞ք հասել է ժամանակը: Մի՞թե ժամանակը չէր, երբ Ազգերի լիգան պրիզիդենտ Վիլսոնին հանձնարարեց որոշել ազատ, անկախ Հայաստանի սահմանները, երբ դա ընդունվեց բոլոր տերությունների կողմից՝ ներառյալ նաև Թուրքիայի: Եվ հաստատվեց Սևրի պայմանագրով... ժամանակը միշտ էլ եղել է, հայերի արյան հերթական հեղեղումը միշտ հիշեցրել է ժամանակը: Բայց միշտ է-գոյստական շահերի մոլուցքների մթնոլորտում խեղդվել է հայերի ձայնը»⁹⁸: Հեղինակը փորձում էր պարզել, թե ինչու հարցը չլուծվեց 25 տարի առաջ և ինչ է այդ տարիների ընթացքում փոխվել: Վիպասանը վստահ էր, որ 25 տարի առաջ ընդունված որոշումը ԽՍՀՄ-ի աջակցությամբ իրականություն կդառնա և կհաղթանակի արդարությունը⁹⁹: Հետաքրքիր է, որ պաշտոնական Մոսկվան նույնիսկ խրախուսել է Երևանում հնչող նմանատիպ հրապարակային հայտարարությունները: Այդ է վկայում ԽՄԿԿ Կենտկոմի օրգան «Պրավդա» օրաթերթի հետևյալ արձագանքը. «Կասկած չկա, որ Խորհրդային Հայաստանի ժողովուրդն ու կառավարությունը չէր կարող այլ կերպ պահել արտասահմանի իրենց եղբայրների հանդեպ. եթե ոչ նրանց առջև լայն բացել հայրենիքի դռները և պաշտպանել նրանց խնդրանքը տարածքների հարցում:Կովկասահայության իրավունքն է Սուրմալուի, Կարսի ու Արդահանի, իսկ թուրքահայության՝ Վան, Բիթլիս ու Կարին վիլայեթների պահանջելը»¹⁰⁰:

Երևանում հնչած հրապարակային ելույթներից հատկապես լայն արձագանք էր ստացել 1946 թ. փետրվարի 1-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Գրիգոր Հարությունյանինը: Նա ընտրողների հետ հանդիպման ժամանակ խոսելով «Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերի» խնդրի մասին շեշտը չի դրել միայն Կարսի և Արդահանի

98 «Սովետական Հայաստան», Եր., 15. VI. 1945:

99 Տե՛ս նույն տեղում:

100 «Правда», М. 8. VIII. 1945.

վրա, այլ պահանջել է ամբողջ Արևմտյան Հայաստանը «Թուրքիայի կողմից հայկական հողերի վերադարձը նրանց իսկական տիրոջը՝ Սովետական Հայաստանին, արդարացի է: ...Թուրքիայի կողմից բռնի կերպով զավթված այդ (խոսքը գնում է Կարսի և Արդահանի մասին - Ք. Մ.) և մյուս հայկական մարզերը վերադարձնելու վերաբերյալ հարցի պահանջը արդարացի պահանջ է»¹⁰¹: Հարությունյանի ելույթն ամբողջությամբ տպվել է սփյուռքահայ մամուլում¹⁰², բացի այդ քննարկվել է արևմտյան դիվանագետների շրջանում: Վերջիններիս անհանգստացնում էր, որ հայկոմկուսի ղեկավարը չէր հստակեցնում, թե հատկապես որ հայկական տարածքների մասին է խոսքը գնում: Բացի այդ փորձում էին պարզել՝ Հարությունյանը արտահայտել է ԽՍՀՄ-ի պաշտոնական դիրքորոշումը, թե՞ դա ընդամենը քաղաքական գործչի անհատական տեսակետն է: Այդ առիթով 1946 թ. փետրվարի 8-ին Մոսկվայում Մեծ Բրիտանիայի դեսպանատունը գրություն էր ուղարկել Լոնդոն, որում նշվել էր, թե առաջին անգամն է, որ Թուրքահայաստանի հարցը ուղղակիորեն արծարծվում է բացահայտ ակնարկելով նաև, որ չնայած ելույթ ունեցողը հնարավոր է չունենա խորհրդային կառավարության թույլտվությունը նման ձևակերպման համար, սակայն վերջինս հանդիսանում է կարևոր կուսակցական պաշտոնյա, ինչն էլ դիվանագետների գնահատմամբ այս ելույթը դարձնում է արժեքավոր¹⁰³: Մեկ ամիս անց՝ մարտի 7-ին Լոնդոն ուղարկած մեկ այլ գրությունում բրիտանացի դիվանագետները կրկին գնահատական են տվել Գրիգոր Հարությունյանի ելույթին և ակնարկել, որ հայկոմկուսի ղեկավարը հստակ չէր տարածքային պահանջատիրության հարցում և «ելույթում անհասկանալի է Վիլսոնյան Հայաստա՞նն է պահանջում, թե Կարսը և Արդահանը»¹⁰⁴: Նկատենք, որ Հարությունյանի ելույթը ևս ամբողջությամբ հրապարակվել է «Պրավդա» թերթում¹⁰⁵, ինչը մեկ անգամ ևս հաստատում է, որ Խորհրդային կառավարությունը թույլատրել էր Արևմտյան Հայաստանի մյուս տարածքների հարցի ոչ պաշտոնական առաջ քաշումը փորձելով ցույց տալ, թե դա ընդամենը հայ հասարակության կամ էլ քաղաքական գործչի անհատական տեսակետն է:

Մինչդեռ պաշտոնական Մոսկվան այդ ժամանակահատվածում՝ 1945-1946 թթ., Թուրքիային արդեն երկու տարբեր պահանջներ էր ներ-

101 «Правда», М. 2. II. 1946.

102 Տե՛ս «Արարատ», Պեյրուք, 7. II.1946; «Լրաբեր», Նյու Յորք, 8. II.1946; «Ժողովուրդ», Փարիզ, 13. II.1946:

103 Տե՛ս Anita L.P. Burdett, Armenia, Political and Ethnic Boundaries, 1875-1948, London, 1998, էջ 758:

104 Նույն տեղում:

105 Տե՛ս «Правда», М. , 2. II. 1946.

կայացրել: Կարսից և Արդահանից բացի՝ օրակարգում հայտնվել էր Սևրի պայմանագրով Հայաստանին հատկացված տարածքների մի մասը ևս:

Նախ՝ նշենք, որ 1945 թ. հուլիսին Պոտսդամում ընթացած քննարկումներում խոսվում էր միայն Կարսի և Արդահանի մասին: Խորհրդածոլովի հուլիսի 23-ի նիստում Ստալինը հայտարարել էր. «Սակայն խոսքն այն մասին է, որ վերականգնվեն մինչև Առաջին համաշխարհային պատերազմը եղած սահմանները: Ես նկատի ունեմ Կարսի մարզը, որը մինչև պատերազմը գտնվում էր Հայաստանի կազմում և Արդահանի շրջանը, որը մինչև պատերազմը գտնվում էր Վրաստանի կազմում»¹⁰⁶: Ավելի ուշ՝ 1945 թ. օգոստոսին ԽՍՀՄ արտգործնախարարության պատրաստած փաստաթղթի համաձայն՝ Թուրքիան պարտավոր էր Հայաստանին և Վրաստանին վերադարձնել 26000 կմ² տարածք, որից 20500 կմ² Հայաստանին էր նախատեսված, իսկ 5500 կմ²՝ Վրաստանին¹⁰⁷: Սակայն տարածքների նման բաժանումը չի բավարարել Վրաստանին: Այդ պատճառով սեպտեմբերի 1-ին Վրաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Չարկվիանին այդ հարցը քննարկել է երկրի ղեկավարության հետ և երկրի գիտական կենտրոններին հանձնարարականներ տվել պատրաստելու պատմական, ազգագրական և աշխարհագրական բնույթի փաստաթղթեր, որոնք կապացուցեին, որ Արդվինը, Արդահանը և Օլթին վրացական են և մտել են Բաթումի շրջանի մեջ¹⁰⁸: Սեպտեմբերի 4-ին էլ Վրաստանի ներքին գործերի նախարար Կ. Կիկնաձեն նամակով դիմել է ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Լ. Բերիային, որտեղ պնդել է, որ Խորհրդային Վրաստանին տրվի ոչ թե նախատեսված 5500 կմ² տարածքը, այլ 12760 կմ², իսկ Խորհրդային Հայաստանին՝ 20500 կմ² փոխարեն 13190 կմ², ինչը ըստ վրացական կողմի ավելի արդարացի կլինի¹⁰⁹: Այն, որ վրացական կողմը հասել է իր նպատակին, վկայում է 1945 թ. դեկտեմբերի 14-ին Թիֆլիսի «Կոմունիստ» թերթում հրապարակված վրացի ակադեմիկոսներ Ս. Ջանաշիայի և Ն. Բերձենիշվիլու «Թուրքիայի նկատմամբ ունեցած մեր օրինական պահանջների մասին» խորագրով նամակը, որում վրացական կողմը ներկայացրել է իր նոր տարածքային պահանջները¹¹⁰: Դրանում ասվում է. «Վրացի ժողովուրդը ետ պետք է ստանա իր հողերը, որոնցից երբեք չի հրաժարվել և երբեք էլ չի հրաժարվի: Մենք նկատի ունենք Արդահանը, Արդվինը, Օլթին, Թորթումը,

106 Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, т. VI, М., 1980, с. 149.

107 Տե՛ս Արխив внешней политики Российской Федерации, ф. 06, оп. 7, п. 47, д. 762 (К советско-турецким отношениям 18. 08. 1945), л. 16-17.

108 Տե՛ս Արխив президента Грузии, ф. 14, оп. 19, д. 209 (Г.Кикнадзе – Л.Берия. 04.09.1945 г.), л.49.

109 Տե՛ս նույն տեղում, թ. 51:

110 Տե՛ս «Правда», М. 20. XII. 1945.

Սպերը, Բայբուրթը, Գյումուշհանեն և Արևելյան Լազիստանը՝ ընդգրկելով իր մեջ Տրապիզոնը և Կերասունտը, այսինքն Վրաստանից խլված տարածքների ընդամենը մի մասը»¹¹¹:

Անշուշտ, հասկանալի է, որ այս պահանջները Ստալինի գիտությանը են ներկայացվել, քանի որ առանց նրա նախօրոք թույլտվության ոչ ոք չէր համարձակվի նման բովանդակությամբ հողված տպագրել: Իսկ դա վկայում է, որ 1945 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ կառավարությունը վերանայել էր տարածքային պահանջատիրության հարցը և վրացի ակադեմիկոսների անունից 1914 թ. ցարական Ռուսաստանի կազմի մեջ մտնող Արդահանից, Արդվինից և Օլթիից բացի պահանջում էր մի շարք նոր տարածքներ: Հետաքրքիր է, որ այդ առաջադրված տարածքներից Վիլսոնի գծած սահմանի մեջ չէր ընդգրկված միայն Կերասունը: Մնացածները, այսինքն՝ Թարթուսը, Սպերը, Բայբուրթը, Գյումուշհանեն, Տրապիզոնը և Արևելյան Լազիստանը, որոնք մտնում էին Էրզրումի և Տրապիզոնի նահանգների մեջ, 1920 թ. Սևրի պայմանագրի համաձայն տրվելու էին Հայաստանին: Այլ խոսքով՝ 1945 թ. դեկտեմբերին Խորհրդային Միությունը չէր սահմանափակվում միայն 1914 թ. Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև եղած սահմանի վերականգնմամբ, ուստի օգտվելով դրանից՝ Խորհրդային Վրաստանն էլ փորձում էր մաս պոկել Սևրի պայմանագրով ու Վ. Վիլսոնի իրավարար վճռով Հայաստանին պատկանող տարածքներից:

Ավելի ուշ՝ 1948 թ. Թուրքիայում ԽՍՀՄ նորանշանակ դեսպան Ա. Լավրիշչևի Անկարա ժամանումից հետո արևմտյան դիվանագետները, թուրք քաղաքական գործիչները և թուրքական մամուլը կրկին սկսեցին խոսել խորհրդային տարածքային պահանջների մասին, որոնք անմիջականորեն վերաբերում էին Սևրի պայմանագրով Հայաստանի համար նախատեսված հողերին: 1948 թ. մայիսի 4-ին թուրքական «Վաթան» թերթը «Լավրիշչևի գործունեությունը» խորագրի տակ հրապարակեց հողված, որում գրել էր, թե Լավրիշչևը ժամանել է Անկարա բավականին մեծ իրավասություններով¹¹²: Այդ ժամանակաշրջանում դեսպանի քայլերին ուշադիր հետևող օտարերկրյա դիվանագետները իրենց գրություններում որոշակի տեղեկություններ են հայտնել նոր տարածքային պահանջների մասին: Օրինակ՝ 1948 թ. ապրիլի 24-ին Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Դ. Քելլին Լոնդոն է ուղարկել «ԽՍՀՄ-ի Թուրքիային ներկայացրած Թուրքահայաստանը հայերին վերադարձնելու պահանջի վերաբեր-

111 Տե՛ս նույն տեղում:

112 Տե՛ս ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор турецкой прессы, 1948, Деятельность Лаврищева, «Ватан», էջ 3-4:

յալ» խորագրով նամակ, որում իր կառավարությանը իրազեկել է, որ Մոսկվան Անկարայից այսօր պահանջում է Վանը, Բիթլիսը և Էրզրումը: Նա գրում է. «Եթե նախկինում Խորհրդային Միությունը Թուրքիայից պահանջում էր Կարսը, Արդահանը և Արդվինը, ապա 1948 թ. դրանց ավելացել են Վանը, Բիթլիսը և Էրզրումը»¹¹³: Այլ կերպ ասած՝ ԽՍՀՄ-ը ցանկացել է իր կազմում տեսնել ամբողջ Վիլսոնյան Հայաստանը: Քելլին իր նամակում թվարկել է, թե տարածքային հավակնություններ հետապնդելով ինչի է ձգտում Ռուսաստանը¹¹⁴: Բրիտանացի դիվանագետի գնահատմամբ նոր պահանջներ առաջադրելը հաստատել է, որ ԽՍՀՄ-ը հետապնդում է ծավալապաշտական ծրագրեր¹¹⁵: Հնարավոր է, որ այս նամակը իրենից ոչինչ չի ներկայացնում և արևմտյան տերություններն այս կերպ մեկ անգամ ևս փորձել են հաստատել այն վարկածը, թե ԽՍՀՄ-ը նոր տարածքային հավակնություններ ունի: Սակայն, այս նամակին համատեղ՝ 1948 թ. թուրքական մամուլը, անդրադարձնալով տարածքային պահանջատիրության խնդրին, ակնարկել է, որ օրեցօր Մոսկվայի ախորժակը մեծանում է¹¹⁶: Ավելին, Քելլիի նամակից մի քանի շաբաթ անց՝ մայիսի 16-ին Հանրապետական Ժողովրդավարական կուսակցության համագումարում պրոֆեսոր Նեհատ Էրինը խոսելով Խորհրդային Միության Թուրքիայից պահանջած արևելյան վիլայեթների մասին, շեշտել է, որ «Եթե տրվի դրանցից մեկը, ապա մյուսներն էլ կվերցվեն» և իմիջիայլոց նկատել է, թե այսօր ԽՍՀՄ-ը նման նպատակներ է հետապնդում, ինչը անընդունելի է իրենց համար¹¹⁷: Իսկ մայիսի 25-ին Թուրքիայի արտգործնախարար Նեջմեթթին Սադաքը Սիվասում ունեցած ելույթում չի թաքցրել, որ ԽՍՀՄ-ը Թուրքիայից պահանջում է արևելյան շրջանի հինգ նահանգները և վստահեցրել, որ չնայած Թուրքիան ցանկանում է բարելավել իր հարաբերությունները հարևան Խորհրդային Միության հետ, սակայն իր նպատակին հասնելու համար չի պատրաստվում զոհաբերել ո՛չ Թուրքիայի հինգ նահանգները, ո՛չ էլ երկրի ինքնիշխանությունը¹¹⁸: Թե որ հինգ նահանգների մասին է խոսքը գնում, Սադաքը չի հստակեցրել: Պարզ է միայն, որ 1948 թ. Հայկական հարցը դեռևս օրակարգում էր և չի

113 Anita L.P. Burdett, նշվ. աշխ., էջ 157:

114 Տե՛ս Նույն տեղում, էջ 156:

115 Տե՛ս Նույն տեղում, էջ 159:

116 Տե՛ս ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор турецкой прессы, 1948, Турецкая печать о советско-турецких отношениях, էջ 1:

117 Տե՛ս ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор турецкой прессы, 1948, Речь Нихат Эрима о внешней политике Турции, «Улус», էջ 30:

118 Տե՛ս ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор турецкой прессы, 1948, Господин Неджметтин Садак заранее ответил на зондаж господина Лаврищева, «Иstanbul», էջ 32:

բացառվում, որ ԽՍՀՄ-ը առաջ էր քաշում նաև մյուս նահանգների՝ Վանի, Բիթլիսի և Էրզրումի հարցը, որոնք Հայաստանին էին տրվել Սևրի պայմանագրով:

Այսպիսով կարող ենք ենթադրել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Խորհրդային Միության՝ Թուրքիայի հանդեպ տարածքային պահանջատիրության գործընթացն ընթացել է մի քանի փուլերով՝

Առաջին՝ 1945 թ. սկզբին պաշտոնական Մոսկվան Անկարայից պահանջում էր վերանայել Կարսի պայմանագիրը և վերականգնել 1914 թ. ցարական Ռուսաստանի ու Օսմանյան կայսրության միջև եղած սահմանը: Այսինքն՝ վերադարձնել Կարսը, Արդահանը և Արդվինը:

Երկրորդ՝ 1945 թ. դեկտեմբերին վրացի ակադեմիկոսների նամակի հրապարակումից հետո, ԽՍՀՄ-ը Խորհրդային Կրաստանի անունից Թուրքիային ներկայացրել է տարածքային նոր պահանջներ: Դրանով Կարսի պայմանագրով Թուրքիային տրված տարածքներից բացի՝ Մոսկվան ցանկանում էր վերադարձնել նաև վրացի ակադեմիկոսների հիմնավորմամբ իբր՝ վրացիների պատմական տարածքներ՝ Թարթուսը, Սպերը, Բայբուրթը, Գյումուշհանեն և Արևելյան Լազիստանը՝ ընդգրկելով իր մեջ Տրապիզոնը և Կերասունը: Մինչդեռ ինչպես արդեն վերը նշվել է, ըստ 1920 թ. Սևրի պայմանագրի՝ Տրապիզոնի և Էրզրումի նահանգների մեջ մտնող այս տարածքները, բացի Կերասունից, տրվելու էին Հայաստանին:

Երրորդ՝ 1948 թ. ԽՍՀՄ-ը հավակնում էր անգամ Վիլսոնյան Հայաստանին, ավելի ստույգ՝ Կարսից և Արդահանից բացի պահանջում էր Վանը, Բիթլիսը և Էրզրումը, որոնք Սևրի պայմանագրով տրվել են Հայաստանին:

Սրանով հանգում ենք հետևյալ եզրակացությանը. չնայած Մոսկվան երբեք պաշտոնապես չի պահանջել 1920 թ. Սևրի պայմանագրով Հայաստանին վերադարձված տարածքները, սակայն ժամանակ առ ժամանակ այդ տարածքների նկատմամբ հավակնություններ է դրսևորել: Բայց հիմնականում՝ Սևրի պայմանագրի օրակարգ բերելու հարցը բարձրացրել է սփյուռքահայությունը, իսկ խոսելով Վիլսոնի կողմից գծված սահմանի մասին՝ փորձել է այդ կերպ ԱՄՆ-ին հիշեցնել Առաջին համաշխարհային պատերազմից հետո իր վերցրած պարտավորությունները:

Ավելի ուշ՝ 1953 թ., խորհրդային կողմը հրաժարվեց Թուրքիային ներկայացրած տարածքային պահանջներից, քանզի 1946 թ. սկսված «սառը պատերազմը» բացասական անդրադարձ ունեցավ Հայկական հարցի լուծման գործընթացի վրա: Թուրքիան, ի դեմս ԱՄՆ-ի և Մեծ Բրի-

տանիայի, ծեռք բերեց դաշնակիցներ, որոնք պարտավորվեցին պաշտպանել նրա տարածքային ամբողջականությունը: Ստեղծված պայմաններում Հայկական հարցը հայտնվեց փակուղում, և 1950-ականներին վերջինիս լուծման ուղղությամբ զարգացումներ չգրանցվեցին: Նույնիսկ միջազգային հանրության կողմից այն մոռացության տրվեց, չնայած սփյուռքահայ մամուլը շարունակում էր խոսել ինչպես Հայկական հարցի, այնպես էլ Սևրի պայմանագրի մասին:

Ավելին՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկիզբ առած սառը պատերազմը երկփեղկեց հայ իրականությունը նաև աշխարհաքաղաքական առումով: Խորհրդային պետության սահմաններում բնակվող հայությունը և Սփյուռքը փաստացի հայտնվեցին երկու հակադիր ճամբարներում: Իսկ Հայ Դատի արդարացի լուծման համար սփյուռքահայության պայքարն առավել գործուն դարձավ 1960-ական թվականների կեսերից՝ Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի նախօրեին:

Դիտարկելով Սևրի պայմանագրի շուրջ 1960-1980-ական թթ. քննարկումները՝ նկատում ենք, որ սփյուռքահայ մամուլը և գործիչները ժամանակ առ ժամանակ էին հիշատակում Սևրի պայմանագիրը՝ համաշխարհային հանրությանը հիշեցնելով, որ մեծ տերությունները դեռ 1920 թվականին այդ պայմանագրով փորձել են վերականգնել պատմական արդարությունը, ինչն այդպես էլ չի իրականացվել: Ուստի կոչ էին անում վերջիններիս հետևողական լինել և պահանջել, որ Հայաստանը ընդգրկվի նախագահ Վիլսոնի գծած սահմաններում: Պետք է արձանագրել նաև, որ 1960-1980-ական թթ. ամերիկյան գործիչները հայերին շողոքորթելու համար երբեմն անդրադառնում էին Վիլսոնի իրավարար վճիռին, սակայն միաժամանակ հասկացնում էին, որ ԱՄՆ-ը թույլ չի տա Թուրքիայի մասնատումը:

Այսպես՝ Սևրի դաշնագրի ստորագրման 57-ամյակի առթիվ՝ 1977 թվականին, Սփյուռքում գործող հայ քաղաքական ուժերը՝ Ս.Դ. Հնչակյան, ՀՅԴ և Ռամկավար ազատական կուսակցությունները, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կ. Վալդիայմին ներկայացրին մի միասնական փաստաթուղթ, որում ասվում էր. «Այս առթիւ ՄԱԿ-ի ուշադրութեան կը յանձնենք թէ՛ հայ ժողովուրդը տակաւին կը սպասէ արդարութիւն, որ այս պարագային կը նշանակէ, հայկական պատմական հողերու վերադարձը Թուրքիոյ կողմէ՛ իրենց իրաւատիրոջ՝ հայ ժողովուրդին, հայկական ցեղասպանութեան դատապարտութիւնը, ինչպէս նաեւ մէկ ու կէս միլիոն կեանքերու եւ անհաշիւ նիւթական ու մշակութային վնասներու հատուցու-

մը»¹¹⁹: Նկատենք, որ այս դիմումը որևէ արդյունք չունեցավ, այլ ընդամենը հերթական փորձն էր՝ համաշխարհային հանրությանը մեկ անգամ էլ հիշեցնելու Հայկական հարցի և Սևրի պայմանագրի մասին:

Սակայն նմանատիպ միջոցառումները նաև իրենց դրական կողմնունեին, քանի որ միջազգային հանրության շրջանում ձևավորվում էր հստակ պատկերացում Հայոց ցեղասպանության իրողության և Սևրի պայմանագրով Հայաստանին տրված տարածքների վերադարձի պատմական արդարության մասին:

Նույն շրջանում՝ 1970-ական թվականներին, Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման ուղղությամբ զգալի աշխատանք էր կատարում Ամերիկայի հայկական համագումարը, որը ևս իր գործունեության ընթացքում բազմիցս բարձրացնում էր Սևրի պայմանագրի հարցը: Դեռևս 1976 թ. վերջինիս պատվիրակությունը (անդամներ՝ Վ. Դադրյան, Դ. Փափազյան, Լ. Սարգիսյան, Տ. Սմաթյան, Ռ. Հովհաննիսյան, Ա. Սանջյան, Շ. Թորիկյան) հանդիպումներ է ունենում ԱՄՆ-ի կոնգրեսականների հետ, նրանց հիշեցնում Սևրի պայմանագրի մասին՝ նշելով, որ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին էր վստահված գծելու հայ-թուրքական սահմանը¹²⁰: Նույն թվականին՝ ԱՄՆ-ում նախագահական ընտրությունների նախօրեին, կազմակերպության անդամները կապ են հաստատում Դեմոկրատական կուսակցությունից ԱՄՆ-ի նախագահի թեկնածու Ջ. Քարթերի հետ: Հոկտեմբերին Նյու Ջերսիի օդանավակայանում վերջինս հանդիպում է Հ. Տերտերյանի և Լ. Սարգիսյանի հետ: ԱՄՆ-ի նախագահի թեկնածուին նրանք ծանոթացնում են Հայկական հարցին¹²¹: Մի քանի օր անց՝ հոկտեմբերի 21-ին, Ջ. Քարթերն ամերիկահայերին դիմում է ուղերձով, որում ասվում էր. «Ես կը համակրիմ հայ ժողովուրդի ձգտումին եւ կըմբռնեմ իրենց հայրենիքը դարձյալ ազատ տեսնելու անոնց մղումը: Աւելին եւ ուժգնօրեն կողմնակից եմ Ցեղասպանութեան Միջազգային Դաշնագիրը բարեփոխելու պահանջին: Իբրեւ ղեկավար Դեմոկրատական կուսակցութեան - կուսակցութիւնը Վուտրօ Ուիլսընի, մարդ մը՝ որ խոր գուրգուրանք ցուցաբերեց հայութեան հանդէպ, ժամանակի մէջ, երբ անոնք ենթարկուած էին ծայրագոյն անարդարութեան - ես պիտի աշխատիմ որ հայ ժողովուրդի ձայնը լսելի դառնայ, եւ թէ՛ Լիբանանի հայութեան օգնութեան հասնելու հարցին նման խնդիրներ կարելորութեամբ նկատի պիտի առնուին: Բայց այս նպատակները իրագործելու համար,

119 «Ջարթօնք», Պէյրութ, 10. VIII. 1977:

120 «Ազդակ», Պէյրութ, 01. I. 1977:

121 «Ազդակ», Պէյրութ, 14. XII. 1976:

ես պէտք պիտի ունենամ ձեր թէ՛ աջակցութեան եւ թէ՛ ցուցմունքներուն»¹²²:

Արձանագրենք, որ 1970-1980-ական թվականներին ԱՄՆ-ի քաղաքական գործիչների կողմից Սևրի պայմանագրի հիշատակումները հիմնականում կապված էին Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացի հետ: Այդ տասնամյակներում սփյուռքահայ քաղաքական միտքը պայքարի առաջին պլան էր մղել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը՝ գտնելով, որ Եղեռնի ընդունումն ու դատապարտումը հանգեցնելու է տարածքային հարցի լուծման անհրաժեշտությանը, ինչը պետք է իրականացվի Սևրի պայմանագրի համաձայն: Ավելին՝ այդ տարիներին հայերի պահանջները սկսեցին լայնորեն քննարկվել արտասահմանյան մամուլում, տարբեր պետությունների խորհրդարաններում և կառավարություններում, ինչպես նաև միջազգային կառույցներում: Քննարկումներում հիմնականում անդրադարձ էր կատարվում Վիլսոնի իրավարար վճիռին: Արդյունքում՝ 1970-ական թվականների վերջին և 1980-ականներին Հայկական հարցի շուրջ ընթացող գործընթացներն անհանգստացնում էին ոչ միայն Թուրքիային, այլև Հյուսիսատլանտյան դաշինքի՝ ՆԱՏՕ-ի բարձրաստիճան պաշտոնյաներին: Այդ մասին է վկայում 1978 թ. այս կազմակերպության Գլխավոր քարտուղար Յոզեֆ Լունսի նամակը կառույցի անդամ երկրների կառավարություններին, որտեղ հստակ հրահանգ էր տրվում զսպել հույների և հայերի գործունեությունն «ընդդեմ թուրք ազգի»: Ըստ նրա՝ փորձ է արվում ներկայիս թուրքերի ուսերին դնել «նախորդ սերնդի մեղքերը»: Ավելին՝ ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարը հասկացնում էր, որ հայերի պահանջած տարածքները՝ Բիթլիսը, Էրզրումը և Կարսը, կենսական նշանակություն ունեն ոչ միայն Թուրքիայի, այլև արևմտյան պետությունների համար¹²³: Այլ կերպ ասած՝ այդ տարածքները Արևմուտքին պաշտպանում են ԽՍՀՄ-ից, ըստ այդմ՝ կարևոր հենակետեր են, որոնք չեն պատրաստվում զիջել Խորհրդային Միության կազմի մեջ մտնող Խորհրդային Հայաստանին:

Ինչ վերաբերում է ԽՍՀՄ-ին, ապա վերջինիս պահվածքը չէր տարբերվում ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի թուրքամետ քաղաքականությունից: 1921 թ. Մոսկվայի պայմանագրի 60-ամյակի առթիվ ԽՍՀՄ-ի առաջնորդ Լ. Բրեժնևի՝ Թուրքիայի ղեկավար Ք. Էվրենին 1981 թ. հղած շնորհավորական հեռագրում մասնավորապես ասվում էր. «Խորհրդային Միությունը ցանկանում է էլ ավելի զարգացնել խորհրդա-թուրքական հարաբերությունները,

122 «Զարթոնք», Պէյրուք, 01. I. 1977:

123 Տե՛ս «Ազատ օր», Աթէնք, 05. V. 1978:

հիմնվելով հավասարության, գերիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության սկզբունքների հիման վրա»¹²⁴։ Այսինքն՝ պաշտոնական Մոսկվան դարձյալ հաստատում էր, որ ճանաչում է Թուրքիայի տարածքային ամբողջականությունը և տարածքային որևէ պահանջ չունի նրանից։

Մինչդեռ այդ ժամանակահատվածում սփյուռքահայերի գործունեության արդյունքում մեծանում էր համաշխարհային հանրության հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության պատմության, ինչպես նաև Սևրի պայմանագրի նկատմամբ։ 1970-ականների վերջերին և 1980-ականներին եվրոպական մի շարք երկրներում, հատկապես Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող իրավապաշտպան կազմակերպությունները ճնշում էին գործադրում իրենց կառավարությունների վրա Հայոց ցեղասպանությունը ճանաչելու պահանջով։ Այսպես՝ Լոնդոնում գործող «Փոքրամասնությունների պաշտպանության միջազգային խումբը»¹²⁵, որը գրքույկներ էր հրատարակում՝ միջազգային հասարակական կարծիքին ներկայացնելով ազգային փոքրամասնությունների խնդիրները, դրանցից 32-րդը՝ «The Armenians»¹²⁶ նվիրում է հայերին։ Դրա հեղինակներն էին անգլիացի պատմաբաններ Դ. Լանգը և Բ. Ջ. Ուոքերը։ Գրքույկում խոսվում էր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի նկատմամբ իրականացված զանգվածային սպանությունների մասին, այդ թվում՝ անդրադառնալով Սևրի պայմանագրին և ակնարկելով, որ Ռուսաստանն օգնեց Քեմալին նրա կատարումը թույլ չտալու գործում¹²⁷։ Ջեկուցագրի տեսքով հրատարակված այս գրքույկը լույս է տեսել 1976 թ., այնուհետև վերահրատարակվել է 1977, 1978, 1981 և 1987 թվականներին¹²⁸։

Նկատենք, որ 1980-ական թվականներից ու մանավանդ ԽՍՀՄ փլուզումից հետո միջազգային հանրության շրջանում ավելի հաճախ են սկսում քննարկել Սևրի պայմանագիրը և գիտական շրջանակներից ան-

124 «Правда», М., 16. III. 1981.

125 «Փոքրամասնությունների պաշտպանության միջազգային խումբը» («Minority Rights Group International») ստեղծվել է 1969 թ. Լոնդոնում «The Observer» թերթի գլխավոր խմբագիր և սեփականատեր Դեյվիդ Ասթորի կողմից։ Հիմնական նպատակն էր պաշտպանել ազգային փոքրամասնությունների իրավունքները՝ նրանց նկատմամբ իրականացվող ոտնձգությունների մասին փաստերը հրապարակումների միջոցով հասանելի դարձնելով միջազգային հանրությանը և դրանով իսկ ստիպելով կառավարություններին փոխել իրենց քաղաքականությունը։ Կազմակերպությունը խորհրդատվական կարգավիճակ ունի ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդում (ECOSOC) և դիտորդի կարգավիճակ՝ Մարդու և ժողովուրդների իրավունքների Աֆրիկայի հանձնաժողովում։ Մանրամասն տես <http://minorityrights.org/>

126 The Armenians, by David Marshall Lang, Christopher J. Walker, London: Minority Rights Group, MRG Report No. 32, fifth edition, 1987, <http://minorityrights.org/wp-content/uploads/old-site-downloads/download-871-Download-full-report.pdf>

127 Տես նույն տեղում, էջ 8։

128 Տես նույն տեղում, էջ 24-25։

ցում է կատարվում քաղաքական գործիչներին: Ղա վկայում է, որ չնայած այն հանգամանքին, որ պայմանագրի ստորագրումից անցել են տասնամյակներ, սակայն այն չի կորցրել իր գաղափարական, բարոյական, իրավական ուժը: Ղա կրկին անհանգստություն էր առաջացնում Թուրքիայի քաղաքական և հասարակական շրջանակներում, որովհետև Սառը պատերազմից հետո այդ երկիրը աստիճանաբար կորցնում էր իր անփոխարինելիությունը ՆԱՏՕ-ի ու ողջ Արևմուտքի համար: Վախը, որ որոշակի պայմանների հասունացման պարագայում այն կարող է կյանքի կոչվել, Թուրքիայում ընդունված է անվանել «Սևրի սինդրոմ»:

Այսպիսով՝ 1945-1991 թթ. Սևրի պայմանագիրն օրակարգային հարց դարձնելու փորձերը հիմնականում ձեռնարկվել են սփյուռքահայության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ իր հետևողական գործունեության ընթացքում: Քաղաքական նախաձեռնությունների այդ համաժիրում իրականացված միջոցառումների արդյունքում Սևրի պայմանագիրը մոռացության չտրվեց և աշխարհասփյուռ հայության համար դարձավ հայկական հողերի վերադարձի համար պայքարի հիմնական փաստաթուղթ, որով Առաջին համաշխարհային պատերազմից հետո Թուրքիան ճանաչել էր Հայաստանի անկախությունը և հայոց պատմական հայրենիքի մի մասը վերադարձնելու պարտավորություն էր ստանձնել:

3. Սևրի պայմանագրի դրույթների կիրառման իրավաքաղաքական հնարավորությունները Հայաստանի անկախության վերականգնումից հետո

Թեև ժամանակին Թուրքիայի քեմալական իշխանությունները Սևրի պայմանագիրը չեղարկելու ուղղությամբ հետևողական քայլեր են ձեռնարկել, բայց չվավերացված և իրավական ուժի մեջ չմտած այդ պայմանագիրը, այդուհանդերձ, չեղյալ չի հայտարարվել այն ստորագրող պետությունների կողմից:

Ինչպես հայտնի է, 1921 թ. Լոնդոնի խորհրդածողովի արդյունքում Սևրի պայմանագիրը վերափոխող որևէ նոր փաստաթուղթ այդպես էլ չընդունվեց, իսկ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի, 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերը միջազգային պայմանագրային իրավունքի աղաղակող խախտումներով կնքված լինելու պատճառով չեն կարող դիտարկվել որպես Սևրի պայմանագիրը վերանայող կամ չեղարկող փաստաթղթեր: 1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագիրը նույնպես չի փոխարինել Սևրի պայմանագիրը, քանզի ոչ

միայն տարբեր են այդ երկու փաստաթղթերի առարկաները, այլև նույնական չեն դրանք ստորագրող կողմերը¹²⁹:

1991 թվականին՝ Հայաստանի վերանկախացումից հետո էլ Թուրքիան մեր երկրի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար առաջ է քաշել որոշակի նախապայմաններ, որոնցից մեկը Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչման, այսինքն՝ Սևրի պայմանագրով և հայ-թուրքական սահմանի հարցով ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռով Արևմտյան Հայաստանի մի մասի նկատմամբ հայ ժողովրդին վերապահված իրավունքից հրաժարվելու պահանջն էր:

Սևրի պայմանագրից և Վիլսոնի իրավարար վճռից հրաժարվելու նախապայմանը թուրքական կողմը քողարկված ձևով փորձեց ամրագրել նաև 2009 թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանի և Թուրքիայի արտգործնախարարների միջև Ցյուրիխում ստորագրված արձանագրությունների տեքստում: «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» արձանագրության մեջ նշվում էր, որ կողմերը վերահաստատում են «երկու երկրների միջև գոյություն ունեցող ընդհանուր սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանված միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով»¹³⁰: Մինչդեռ ակնհայտ է, որ երկու երկրների միջև գոյություն ունեցող ընդհանուր սահմանի վերաբերյալ պայմանագրերի տակ, առանց ուղղակիորեն մատնանշելու, հասկացվում են միջազգային պայմանագրային իրավունքի նորմերի աղաղակող խախտումներով ստորագրված 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի* և հոկտեմբերի 13-ի Կարսի** պայմանագրերը, որոնց դրույթներով փորձ է արվում չեղարկել հայրե-

129 Տե՛ս **Մարուքյան Ա.**, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., 2014, էջ 121-145:

130 Տե՛ս ՀՀ և ԹՀ ԱԳ նախարարների միջև 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» արձանագրություն, https://www.mfa.am/u_files/20091013_protocol.pdf

* Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածով պայմանավորվող կողմերը չէին ճանաչում ոչ մի հաշտության պայմանագիր, թե՛ այն հարկադրել են ընդունել կողմերից որևէ մեկին: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 11: Տվյալ հոդվածում հստակ ակնարկվում էր Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունն արձանագրող Սևրի հաշտության պայմանագիրը, որը, ըստ թուրքական կողմի, իբրև թե պարտադրվել էր թուրքական պետությանը:

** Կարսի պայմանագրի 1-ին հոդվածի համաձայն բացի մինչ այդ պայմանավորվող կողմերի միջև ստորագրված փաստաթղթերից, ուժը կորցրած են համարվում երրորդ երկրների կողմից կնքված պայմանագրերը, որոնք վերաբերում են Անդրկովկասյան հանրապետություններին: Տե՛ս ՀԱԱ ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 69: Ի լրումն Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածի՝ Կարսում ստորագրված փաստաթղթի տվյալ հոդվածի հատուկ ձևակերպումներից նույնպես հասկացվում է Սևրի պայմանագիրը, որը փորձ էր արվում չեզոքացնել տվյալ փաստաթղթով: Ասվածը հաստատվում է նրանով, որ նույն հոդվածը բացառություն էր անում միայն 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի համար, քանզի հենց այդ անօրինական գործարքն էր հանդիսանում Կարսում պարտադրված փաստաթղթի հիմքը:

նիքի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքները հաստատող Սևրի պայմանագիրը:

Փաստաթղթերի ստորագրումից հետո ՀՀ Սահմանադրական դատարանը վերապահումներ կատարեց ՀՀ Սահմանադրությանն այդ փաստաթղթերի համապատասխանելիության հետ կապված¹³¹, ինչից հետո սառեցվեց ՀՀ Ազգային ժողովում դրանց վավերացման գործընթացը: Հետագայում Հայաստանի նախագահի հրամանագրով դադարեցվեց հայ-թուրքական արձանագրությունների կնքման ընթացակարգը՝ դրանք համարելով առ ոչինչ¹³²: Այսպիսով կարող ենք արձանագրել, որ Սևրի պայմանագիրը չեղարկելու թուրքական կողմի փորձերն ապարդյուն են անցել, քանզի միջազգային պայմանագրային իրավունքի տեսակետից դրանք ազդեցություն չեն ունեցել տվյալ պայմանագրի ինչպես առարկայի, այնպես էլ կարգավիճակի վրա:

Ավելին՝ Սևրի պայմանագիրն այն ստորագրող եվրոպական պետությունների կողմից առանց վավերացման մասնակիորեն գործադրվել է, ինչի հետևանքով Օսմանյան կայսրությունից անջատված Արաբական թերակղզու և Հյուսիսային Աֆրիկայի տարածքներում առաջացան արաբական անկախ պետություններ, որոնց սահմաններն անցած մեկ դարի ընթացքում որոշ վերափոխումների ենթարկվեցին: Հետագա տարածքային փոփոխություններից անկախ Օսմանյան կայսրությունից անջատված արաբական երկրների անկախ պետականության հաստատման և դրանց ներկայիս գոյության՝ Սևրի պայմանագրի համապատասխան հողվածների վրա խարսխված լինելու իրողությունն* իրավունք է տալիս պնդելու, որ անգամ վավե-

131 Տե՛ս ՀՀ ՍԴ 2010 թ. հունվարի 12-ի որոշումը,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=56033>

132 Տե՛ս ՀՀ նախագահի 2018 թ. մարտի 1-ի հրամանագիրը,
<https://www.president.am/hy/decrees/item/4359/>

* Սևրի պայմանագրի 94-րդ հոդվածի համաձայն Սիրիան և Միջագետքը (Սիրիայի, Լիբանանի և Իրաքի ժամանակակից տարածքները) ժամանակավորապես ձանաչվում էին անկախ պետություններ՝ պայմանով, որ դրանց կառավարումը պետք է իրականացվեր մանդատատար պետության խորհրդով և օժանդակությամբ, մինչև այն ժամանակը, երբ նրանք ի վիճակի կլինեն ինքնակառավարման: Այս հոդվածի հիման վրա Ազգերի լիգայի որոշմամբ Սիրիայում և Լիբանանում հաստատվեց Ֆրանսիայի, իսկ Իրաքում՝ Մեծ Բրիտանիայի մանդատային իշխանությունը, իսկ Երկրորդ աշխարհամարտից հետո երկու երկրներն էլ լիակատար անկախություն ստացան: 95-րդ հոդվածով Պաղեստինի կառավարումը նույնպես հանձնվում էր ստորագրող պետությունների կողմից ընտրված մանդատարարին, որը պետք է կենսագործեր բրիտանական կառավարության 1917 թ. նոյեմբերի 2-ի հռչակագրի (Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Բալֆորի՝ լորդ Ռոտշիլդին ուղղված նամակի) դրույթները Պաղեստինում հրեաների համար ազգային օջախ ստեղծելու վերաբերյալ: Պայմանագրի 113-րդ հոդվածով Թուրքիան կորցնում էր իր իրավունքները նաև Սուդանի նկատմամբ, իսկ 121-րդ հոդվածով հրաժարվում էր Բելիայում սուլթանի ունեցած իրավունքներից և առանձնաշնորհումներից: Թուրքիան հրաժարվում էր Արաբական թերակղզու տիրույթներից և 98–100-րդ հոդվածներով պարտավորվում էր ձանաչել Հեջազը, որի տարածքների հետագա ընդարձակման հետևանքով առաջացավ Սաուդյան Արաբիան: Պայմանագրի 101-րդ հոդվածով Թուրքիան հրաժարվում էր Եգիպտոսի նկատմամբ իր իրավունքներից և ձանաչում Եգիպտոսի նկատմամբ 1914 թ.

րացված չլինելով՝ ներկայումս այն որոշ առումով գործող միջազգային իրավական փաստաթուղթ է: Այս տեսակետից իրավաչափ պետք է համարել Սևրի պայմանագրի համապատասխան հողվածներով նախատեսված՝ Օսմանյան կայսրության նախկին տարածքների անջատման գործընթացի շարունակությունն ու ավարտին հասցնելը: Իսկ դա ենթադրում է 62–64-րդ հողվածներով Քուրդիստանի ինքնավարության, հետագայում՝ պետականության ստեղծումը, իսկ 88-90-րդ հողվածներով Արևմտյան Հայաստանի Վանի, Էրզրումի, Բիթլիսի նահանգների և Տրապիզոնի նահանգի մեկ երրորդի միացումը Հայաստանի Հանրապետությանը:

Արտաքուստ անիրականանալի թվացող Սևրի պայմանագրի այս դրույթների հնարավոր գործադրումը լիովին չի կարելի բացառել, քանի որ Թուրքիայի շուրջ ներկայումս ընթացող աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումները միջնաժամկետ կամ երկարաժամկետ հեռանկարում կարող են հանգեցնել Օսմանյան կայսրության իրավաժառանգորդ թուրքական պետության հետագա կազմաքանդման գործընթացին: Աշխարհաքաղաքական կամ տարածաշրջանային համապատասխան նախադրյալների ստեղծման դեպքում թուրքական պետության հետագա տրոհման համար միջազգային իրավական հիմք կարող է ծառայել Սևրի պայմանագիրը, եթե այն ստորագրած պետությունները* սկսեն վավերացնել արդեն իսկ մասնակիորեն գործադրված փաստաթուղթը: Սևրի պայմանագիրը իրավական ուժի մեջ մտցնելու տեսակետից խոչընդոտ չի կարող հանդիսանալ անգամ ներկայիս Թուրքիայի իշխանությունների անհամաձայնությունը, քանի որ Թուրքիայի իրավանախորդ Օսմանյան կայսրության խորհրդարանի վերին պալատը՝ Սենատը 1920 թ. դեկտեմբերի 23-ին, իսկ ստորին պալատը՝ 1921 թ. հունվարի 30-ին արդեն իսկ համաձայնություն են տվել Սևրի պայմանագիրը վավերացնելուն ¹³³:

Այս համատեքստում պետք է նշենք, որ Սևրի պայմանագրի դեռևս չիրագործված դրույթների կենսագործման հնարավորությունները շարու-

դեկտեմբերի 18-ից հաստատված անգլիական պրոտեկտորատը, իսկ 118–120-րդ հողվածներով ճանաչվում էր Ֆրանսիայի պրոտեկտորատը Մարոկկոյի և Թունիսի նկատմամբ: 115-րդ հողվածով Թուրքիան ճանաչում էր Մեծ Բրիտանիայի կողմից 1914 թ. նոյեմբերի 5-ի Կիպրոսի անբքսիայի ակտը, իսկ 122-րդ հողվածով՝ Իտալիայի իրավունքներն ու տիտղոսը Էգեյան ծովի կղզիների վրա: Տե՛ս Treaty of Peace with Turkey, Signed at Sevres. August 10, 1920, p. 26-29. <http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>

* Սևրի պայմանագիրը ստորագրել են Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան, Հայաստանը, Բելգիան, Հունաստանը, Հեջազը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբա - Խորվաթա - Սլովենական պետությունը և Չեխոսլովակիան: Առաջինը պայմանագիրը կարող է վավերացվել Թուրքիայի հետ առավել լարված հարաբերություններ ունեցող Սևրի պայմանագիրը ստորագրած պետությունների, օրինակ՝ Հունաստանի կամ Հեջազի իրավաժառանգորդ համարվող Սաուդյան Արաբիայի կողմից, ինչին կհետևեն մյուս պետությունները:

133 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1917), խմբ. **Զ. Կիրակոսյան**, Եր., 1972, էջ 59:

նակում են արդիական մնալ: Պատահական չէ, որ Սևրի պայմանագրի դրույթների լիարժեք կենսագործման, այսինքն՝ Քուրդիստանի ինքնավարության կամ անկախ պետության ստեղծման, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի Վանի, Էրզրումի, Բիթլիսի նահանգների և Տրապիզոնի նահանգի մեկ երրորդի Հայաստանի Հանրապետությանը միացնելու հեռանկարների նկատմամբ Թուրքիայի ներկայիս իշխանությունների վախերն ու բարդույթները մասնագիտական գրականության մեջ յուրատեսակ ախտորոշման՝ «Սևրի սինդրոմի» կամ «Սևրաֆոբիայի»¹³⁴ անուն են ստացել:

4. Իսպանիայի թագավոր Ալֆոնս XIII-ի իրավարարության վերաբերյալ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի որոշումը՝ որպես Վ Վիլսոնի իրավարար վճռի կիրառման միջազգային- իրավական նախադեպ

Չնայած այն հանգամանքին, որ 1920-ական թթ. ստեղծված նոր աշխարհաքաղաքական պայմաններում հնարավոր չեղավ կենսագործել Վ. Վիլսոնի իրավարար վճիռը, այն շարունակում է մնալ Հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքը՝ հայրենագրկույնը հաղթահարող ու հայ-թուրքական տարածքային-սահմանային վեճը կարգավորող ուժը չկորցրած միջազգային իրավական փաստաթուղթ:

«Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի՝ դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ» ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռի մեզանից շուրջ 100 տարի առաջ՝ 1920 թ. նոյեմբերի 22-ին ընդունված լինելու հանգամանքը որևէ կերպ չի կարող ազդել դրա իրավականության կամ գործադրման միջազգային իրավական հնարավորությունների վրա: Միջազգային իրավունքի պատմության ընթացքում և պրակտիկայում հայտնի են դեպքեր, երբ հարևան պետությունների միջև տարածքային վեճի հետ կապված անգամ տևական ժամանակ առաջ ընդունված իրավարար վճիռները դրանց ընդունումից տասնամյակներ անց կյանքի են կոչվել և տարածքային վեճի լուծման միջազգային իրավական հիմք են հանդիսացել:

Նման օրինակներից է «Հոնդուրասն ընդդեմ Նիկարագուայի» նույնաբովանդակ սահմանային վեճի գործով ՄԱԿ-ի Միջազգային դատարանի որոշումը, որով Իսպանիայի թագավոր Ալֆոնս XIII-ի կայացրած իրավարար վճիռն ընդունվեց որպես այդ վեճը կարգավորելու իրավա-

134 Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ (Սևրի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական քննարկումներում), Եր., 2012:

կան հիմք: Այս գործը կարող է պատշաճ նախադեպ ծառայել հայ-թուրքական սահմանի սահմանագծման հարցով ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած իրավարար վճռի օրինականությունը ճանաչելու համար:

Իսպանիայի թագավոր Ալֆոնս XIII-ը 1906 թ. դեկտեմբերի 23-ին կայացրել է իրավարար վճիռ Հոնդուրասի և Նիկարագուայի միջև սահմանի սահմանագծման հարցով: 1958 թ. հուլիսի 1-ին Հոնդուրասը Նիկարագուայի դեմ դատական հայց ներկայացրեց ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան՝ խնդրելով ճանաչել, որ վերջինս պարտավորվի կատարել տվյալ իրավարար վճռի պահանջը: Նիկարագուան իր հերթին պահանջում էր, որ դատարանը որոշի, որ Իսպանիայի թագավորի իրավարարությունը իր համար չի կարող ունենալ պարտադիր բնույթ: 14 «կողմ», 1 «դեմ» ձայների հարաբերակցությամբ դատարանը 1960 թ. նոյեմբերի 18-ին որոշեց, որ այդ իրավարար վճիռն օրինական է, պարտադիր կատարման համար, և Նիկարագուան պարտավոր է կատարել դրա պահանջը¹³⁵:

Իր որոշման մեջ դատարանը հաստատված համարեց, որ 1894 թ. հոկտեմբերի 7-ին Հոնդուրասն ու Նիկարագուան կնքել են, այսպես կոչված, Համես-Բոնիլլի պայմանագիրը, որով սահմանային խառը հանձնաժողովին հանձնարարվել է իրականացնել երկրների սահմանի սահմանագծումը: Հանձնաժողովի կողմից չլուծված հարցերը պետք է փոխանցվեին արբիտրաժային դատարանին, որը բաղկացած էր լինելու յուրաքանչյուր երկրից մեկական և Գվատեմալայի դիվանագիտական կորպուսում հավատարմագրված մեկ ներկայացուցչից: Դիվանագիտական կորպուսից ներկայացուցիչ նշանակելու անհնարինության դեպքում կողմերը համաձայնվում էին, որ վիճելի հարցերը փոխանցվեն Իսպանիայի կառավարության կամ, հակառակ դեպքում, Հարավային Ամերիկայի ցանկացած պետության կառավարության լուծմանը¹³⁶: 1900-1901 թթ. խառը հանձնաժողովին հաջողվեց սահմանագծել երկու պետությունների միջև սահմանը, սակայն Ատլանտյան օվկիանոսի ափամերձ հատվածի հետ կապված առաջացան տարաձայնություններ: Այդ հատվածի վերաբերյալ էլ Իսպանիայի թագավորը 1906 թ. դեկտեմբերի 23-ին կայացրեց իրավարար որոշում:

Տարիներ անց՝ 1912 թ. մարտի 19-ին, Նիկարագուայի արտգործնախարարն իր բողոքի նոտայում կասկածի տակ դրեց այդ իրավարա-

135 Տե՛ս **Մարուլյան Ա.**, Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Եր., 2014, էջ 130:

136 Տե՛ս Краткое изложение решений, консультативных заключений и постановлений Международного суда (1948-1991), Нью-Йорк, 1993, էջ 69:

րության օրինականությունն ու պարտադիր լինելն իր երկրի համար, ինչն էլ դարձավ նոր վեճի առարկա: Ուղիղ բանակցությունների և միջնորդների օգնությամբ հարցը լուծելու ձախողված փորձերից հետո 1957 թ. հուլիսի 21-ին Վաշինգտոնում ձեռք բերված համաձայնությամբ Հոնդուրասն ու Նիկարագուան պայմանավորվեցին հարցի լուծումը փոխանցել ՄԱԿ-ի Միջազգային դատարանին: Հոնդուրասը նշում էր, որ կան բոլոր հիմքերը պնդելու, որ այդ իրավարարությունը պարտադիր է, քանի որ որոշումը կայացվել է պատշաճ ձևով, և որ իրավարարությունը վիճարկելու համար Նիկարագուան պետք է ներկայացնի դրա անօրինականության ապացույցները: Նիկարագուան հակադարձում էր, թե քանի որ իրենց միջև առկա սահմանային վեճի լուծման հարցում Հոնդուրասն է հիմնվում այդ իրավարարության վրա, ուրեմն հենց ինքն էլ պետք է ապացույցներ ներկայացնի դրա օրինականության վերաբերյալ, և որ իրավարար որոշում կայացրած անձը՝ Իսպանիայի թագավորը, օժտված է եղել նման լիազորություններով¹³⁷:

Նիկարագուան գտնում էր, որ Իսպանիայի թագավորի՝ իրավարարի կարգավիճակում հաստատվելը կատարվել է Համես-Բոնիյիի պայմանագրի III և V հոդվածների խախտումներով, սակայն դատարանը եզրակացրեց, որ Համես-Բոնիյիի պայմանագրի պահանջները կատարվել են, քանի որ 1904 թ. հոկտեմբերի 6-ին և 7-ին երկու երկրների նախագահները իրենց գոհունակությունն են հայտնել Իսպանիայի թագավորի իրավարար նշանակվելու կապակցությամբ, որը իրավարար դառնալու իր համաձայնության մասին հայտարարեց հոկտեմբերի 17-ին: Այս փաստերից ելնելով՝ դատարանը չէր կարող այլ որոշում կայացնել, քան այն, որ Իսպանիայի թագավորի իրավարար նշանակվելը եղել է օրինական:

Նիկարագուան փորձում էր ներկայացնել, որ Համես-Բոնիյիի պայմանագիրը կորցրել էր իր ուժը մինչև Իսպանիայի թագավորը տվեց իրավարար լինելու իր համաձայնությունը, և որ պայմանագրի XI հոդվածի համաձայն՝ 1894 թ. հոկտեմբերի 7-ին 7 տարով կնքված պայմանագրի ժամկետը 1904 թ. հոկտեմբերի 7-ին արդեն լրացել էր: Հոնդուրասն էլ հայտարարեց, որ պայմանագիրն ուժի մեջ է մտել ավելի ուշ՝ 1896 թ. դեկտեմբերի 24-ին, վավերացման փաստաթղթերի փոխանակման պահից, հետևաբար պայմանագրի ժամկետը լրացել է ոչ թե 1896 թ., այլ 1906 թ. դեկտեմբերի 24-ին: Չնայած այն հանգամանքին, որ պայմանագրում նշված չէր դրա ուժի մեջ մտնելու ժամկետը, դատարանը հիմք ըն-

137 St'u Краткое изложение решений, консультативных заключений и постановлений Международного суда, էջ 70:

դուներով վավերացված փաստաթղթերի փոխանակման մասին հղումը պայմանագրում, օրինաչափ համարեց Հոնդուրասի փաստարկները և անհավանական համարեց, որ 1904 թ. հոկտեմբերի 2-ին Իսպանիայի թագավորին՝ որպես իրավարար դառնալու կողմերի դիմելուց 5 օր հետո պայմանագրի ժամկետը դադարեցվելու էր:

Ինչ վերաբերում է Իսպանիայի թագավորի կայացրած իրավարար վճռի արդարացիությանն ու օրինականությանը, ապա պետք է նշել, որ իրավարարությունից հետո Իսպանիայի թագավորը Նիկարագուայից չի ստացել վճիռը պարզաբանելու որևէ պահանջ, ինչը նշանակում է, որ նա ընդունել ու համակերպվել է դրա հետ և միայն տարիներ անց՝ 1912 թ. մարտի 19-ին, Նիկարագուայի արտգործնախարարն առարկեց վճռի դեմ¹³⁸: Իր փաստարկների մերժումից հետո Նիկարագուան փորձում էր հիմնավորել, թե իբր Իսպանիայի թագավորը գերազանցել է իր իրավասությունները և որ նրա որոշումը բավարար հիմնավորված և արդարացված չի եղել, սակայն դատարանը պատասխանեց, որ դա արդեն իրավարարի որոշում կայացնելու իրավասությունների դաշտում է և վիճարկման ենթակա չէ, քանի որ կողմերը վեճը հանձնելով իրավարարին, արդեն իսկ համակերպվել են նրա ցանկացած որոշման հետ:

Եթե Հոնդուրասի և Նիկարագուայի միջև տարածքային վեճի կարգավորման համար որպես անաչառ և անշահախնդիր իրավարար ընտրվեց Իսպանիայի թագավոր Ալֆոնս XIII-ը, ապա Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի սահմանազատման հարցով իրավարար ընտրվեց ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը: Վիլսոնին Հայաստանի սահմանի հստակեցման հարցում իրավարարի կարգավիճակ առաջարկելը, անշուշտ, ուներ իր հիմնավորումները, որոնք պայմանավորված էին միջազգային արբիտրի ընտրության համար պարտադիր հանդիսացող արդարության ու անաչառության սկզբունքներով: Ելնելով այն հանգամանքից, որ ԱՄՆ-ը չէր պատերազմել Օսմանյան կայսրության դեմ և հարաբերությունների մեջ է եղել ոչ միայն Օսմանյան կայսրության պաշտոնական կառավարության, այլև թուրք ազգայնականների հետ, ԱՄՆ-ի նախագահի թեկնածությունը դիտվում էր իբրև առավել հարմար Հայաստանի և Թուրքիայի սահմանի հստակեցման իրավարարի դերում¹³⁹: Այսպիսով՝ ապահովվում էր չեզոքության և անշահախնդրության սկզբունքը վեճի կողմերի նկատմամբ, ինչը տվյալ ժամանակ գործող համապատասխան միջազգային իրավական նորմերի, մասնավորապես՝ Հաագայի 1899 թ. և 1907 թ. «Միջ-

138 Краткое изложение решений, консультативных заключений и постановлений Международного суда, т. 2 71:

139 Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, М., 2000, с. 181.

ազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիայի՝ վեճերի արբիտրաժի միջոցով լուծելու պարտադիր պայմաններից մեկն էր:

Դժվար չէ նկատել, որ Իսպանիայի թագավորի և Վուդրո Վիլսոնի կողմից կայացված իրավարար վճիռների միջև կան որոշակի ընդհանրություններ: Նախ՝ երկու իրավարար վճիռներն էլ կայացվել են սահմանային-տարածքային վեճերի հետ կապված, առաջինը՝ Հոնդուրասի ու Նիկարագուայի, երկրորդը՝ Հայաստանի և Թուրքիայի միջև: Բացի այդ՝ երկու դեպքում էլ վեճը կարգավորելու համար ընտրվել են չեզոք և անշահախնդիր իրավարարներ, որոնք անմիջական շահագրգռվածություն չեն ունեցել այդ վեճի հետ կապված:

Այս ամենից ելնելով՝ կարծում ենք, որ սահմանային հարցերով այս իրավարարության քննությունը ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանում չափազանց կարևոր նախադեպային հիմք կարող է հանդիսանալ նույն այդ դատական մարմնում հայ-թուրքական սահմանի սահմանագծման հարցով ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի օրինականությունը և դրա պարտադիր լինելը քննելու առումով:

Զնայած ակնհայտ սմանություններին՝ այդուհանդերձ, կան նաև էական տարբերություններ, որոնք հարկ է հաշվի առնել: Նախ՝ պետք է նշել, որ երկու լատինամերիկյան երկրների միջև առկա էր սովորական սահմանային-տարածքային վեճ, ինչը չի առաջացել այնպիսի ծանր միջազգային հանցագործության հետևանքով, ինչպիսին ցեղասպանությունն է: Ուստի բնական է, որ լատինաամերիկյան երկրները՝ Հոնդուրասը և Նիկարագուան փոխադարձ համաձայնությամբ են իրենց միջև առկա վեճը հանձնել իրավարարին՝ Իսպանիայի թագավորին, իսկ Հայաստանի և Թուրքիայի սահմանագծման հարցը ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին հանձնվել է Առաջին աշխարհամարտում հաղթանակած տերությունների Գերագույն խորհրդի կողմից, որով նպատակ էր հետապնդվում քաղաքական պատասխանատվության ենթարկել հանցագործ պետություն Թուրքիային՝ նրան զրկելով ցեղասպանության զոհ դարձած հայերի նկատմամբ իր իշխանությունը տարածելու հետագա հնարավորությունից և վերականգնել բռնազավթված հայրենիքի մեծ մասի նկատմամբ հայ ժողովրդի օրինական շահերն ու իրավունքները¹⁴⁰:

Հաշվի առնելով Հոնդուրասի և Նիկարագուայի միջև սահմանային վեճի ժամանակ Իսպանիայի թագավորի իրավարար վճռի վիճարկման փորձերը՝ կարելի է ենթադրել, որ ընդդեմ իրավարար վճռի Նիկարագուայի բերած նույն փաստարկները Թուրքիան բերելու է Վիլսոնի իրա-

140 Տե՛ս **Մարուլյան Ա.**, Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, էջ 134:

վարարության դեմ, և մենք պետք է պատրաստ լինենք պատասխանելու դրանց: Հարկավոր է նկատի ունենալ, որ Վիլսոնի իրավարարության օրինականությունը և իր համար պարտադիր լինելը Թուրքիան կփորձի վիճարկել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանում:

Հատկանշական է, որ ինչպես Նիկարագուան չի բողոքել ու համա-կերպվել է Իսպանիայի թագավորի իրավարարության հետ, այնպես էլ Թուրքիան իրապարակայնորեն և պաշտոնապես չի վիճարկել Վիլսոնի ի-րավարար վճիռը, այլ հակաօրինական ու Հայաստանին պարտադրված Ալեքսանդրապոլի, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով փորձել է հար-կադրել իրաժարվելու Սևրի պայմանագրից, որը թեև առնչվում է նույն հարցերին, սակայն, ինչպես նշեցինք, իրավական առումով Վիլսոնի իրա-վարարությունից առանձին միջազգային իրավական փաստաթուղթ է, ուս-տի մենք պետք է կարողանանք միջազգային իրավունքի տեսակետից ճիշտ հիմնավորել հարցը ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դա-տարանում: Այս տեսակետից Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա, ՄԱԿ-ի կառույցների միջոցով, կարող է դի-մել Արդարադատության միջազգային դատարան՝ ԱՄՆ-ի նախագահ Վուդ-րո Վիլսոնի իրավարար վճիռի օրինականության և վավերականության հետ կապված խորհրդատվական եզրակացություն տալու խնդրանքով:

«Էստոպպելի» սկզբունքը* մշտապես աչքի առաջ ունենալով՝ միջա-զգային իրավական փաստաթղթերով իր հայրենիքի նկատմամբ իրա-վունքներ ստացած Հայաստանն աշխարհին հետևողականորեն պետք է հիշեցնի, որ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը գծված է ոչ թե Մոսկվայի կամ Կարսի պայմանագրերով, այլ երկու երկրների միջև իրա-վական սահմանի հիմքը կազմում են ինչպես Սևրի պայմանագիրը, այն-պես էլ Վիլսոնի իրավարար վճիռը: Եթե Հայաստանը հետևողականորեն հետամուտ չլինի իր իրավունքի իրացմանը, ապա միջազգային ասպա-րեզում կընկալվի այնպես, որ իրաժարվել է նշված փաստաթղթերով իրեն վերապահված այդ իրավունքից:

Գաղտնիք չէ, սակայն, որ միջազգային իրավունքի և հատկապես դրա նորմերի կիրառման վրա որոշակի ազդեցություն ունեն աշխարհա-քաղաքական զարգացումները, տարածաշրջանային գործընթացները, մի-

* «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թ. կոնվենցիայում ամրա-գրված «Էստոպպելի» սկզբունք նշանակում է պետության կողմից իր միջազգային պահանջները հաստատող որևէ փաստ կամ հանգամանք վկայակոչելու իրավունքի կորուստ: Պետության նկատմամբ «Էստոպպելի» իրավական սկզբունքը կարող է կիրառվել այն դեպքում, երբ նա տևական ժամանակ չի վկայակոչել այս կամ այն փաստը կամ հանգամանքը, այսինքն՝ հաշտ-վել է եղած վիճակի հետ, ինչից ելնելով՝ զրկվում է հետագայում դրանք վկայակոչելու իրա-վունքից: Տե՛ս Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիան, Եր., 1997:

ջազգային հարաբերություններում ուժերի ու շահերի վերադասավորումները և այլն: Այդ իսկ պատճառով միջազգային իրավական գործընթացը պետք է լրջորեն նախապատրաստված ու ապահովագրված լինի դրան նախորդող և զուգահեռ տարվող քաղաքական գործընթացով:

Ինչպես տեսնում ենք, թե՛ Սևրի պայմանագիրը և թե՛ Վիլսոնի իրավարար վճիռը պահանջատիրության համատեքստում կիրառելու տեսակետից առկա են ինչպես իրավական, այնպես էլ քաղաքական հնարավորություններ: Սակայն պետք է լուրջ ուշադրություն դարձնել Հայաստանի և Սփյուռքի կողմից այս ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերի մարտավարական և ռազմավարական կողմերին այն առումով, թե ինչը ինչից հետո պետք է կատարվի, որպեսզի տարվող աշխատանքների արդյունավետությունը լինի ավելի բարձր և կարողանանք խուսափել ժամանակի ու ջանքերի անիմաստ կորուստներից:

Վերջաբան. իրավունքի ուժը և ուժի իրավունքը

Սևրի պայմանագրով ու Վ. Վիլսոնի իրավարար վճռով ամրագրված Հայաստանի ու հայության իրավունքները վերահաստատող ներկա քննական ուսումնասիրությունը թերի և անավարտ կլիներ, եթե դրանում բացակայեր մեր իրավունքների իրացման ուղիների ու աշխատակարգերի ուրվագծերն ամփոփող **ապագայի տեսլականը**:

Այս առումով չենք կարող չարձանագրել, որ Հայ Դատի պայքարում 70 տարի շարունակ հայկական Սփյուռքի դրսևորած անկտրում կամքն ու համառությունը Հայաստանի անկախության վերականգնումից հետո որոշակի տեղապտույտի են ենթարկվել: Որովհետև նոր պայմաններում առաջին հերթին հենց ինքը՝ հայոց անկախ պետականությունը պետք է առաջադրեր ու հետապնդեր մեր անժամանցելի **իրավունքի ուժը ուժի իրավունքի** փոխարկելու համազգային տեսլականի իրականացման խնդիրը: Սակայն Ղարաբաղյան շարժումն ու պատերազմը տեղայնացրին այդ խնդրի լուծումը՝ այն պարփակելով Հայ Դատի պայքարի **առաջին հանգրվան** հռչակված Արցախի ինքնորոշման հարցի շրջագծում: Բայց այդտեղ մենք բախվեցինք նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների անկախությունն ու տարածքային ամբողջականությունը ճանաչող միջազգային հանրության կամքին, ինչը թելադրված էր Ռուսաստանի կայսերական նկրտումները զսպելու նպատակադրմամբ: Եվ միայն 30 տարի անց տարածաշրջանը թուրքիայի հետ կիսած նույն Ռուսաստանի կայսերական նոր նկրտումներն արձանագրելուց հետո, սկսում ենք գիտակցել այն իրողությունը, որ անցած տարիների ընթացքում մենք ունեինք ո՛չ թե միջազգային **իրավունքի ուժը** Արցախի վրա տարածելու, այլ սոսկ հարավկովկասյան տարածաշրջանում մեր **ուժի իրավունքը** չզիջելու խնդիրը: Բայց այսօր անգամ այդ սահմանափակ խնդիրն է բախվել Սևրի պայմանագրի ստորագրումից հետո Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ 1920 թվականի աշնանը սանձազերծված թուրք-հայկական պատերազմի ծանոթ սցենարի կրկնությանը: Հայաստանի Հանրապետության դեմ քեմալական հորդաների՝ 1920 թվականի աշնան, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ադրբեջանա-թուրք-ահաբեկչական միացյալ զորախմբի՝ 2020 թվականի աշնան ցեղասպանական հարձակումները Միացյալ Հայաստանի գաղափարն ու դրա կոնկրետ կերպավորումները խորտակելու զինարշավներ էին, որոնցից առաջ թուրքիան ու Ռուսաստանը նախապես իրար մեջ բաժանել էին մեր երկիրը կամ դրա մի մասը:

Պատճառն այն է, որ ինչպես 20-րդ դարի սկզբներին, այնպես էլ հետխորհրդային իրականության մեջ գործում էր ոչ թե միջազգային իրավունքի ուժը, այլ մայրցամաքային կայսրությունների կողմից պարտադրվող **ուժի իրավունքը**: Դա ցույց է տալիս, որ անցած 30 տարվա ընթացքում ռուս-թուրքական հարաբերությունների տիրույթում փնտրելով իրավունք ու արդարություն՝ մենք մոռացել ենք մեր նախնիների իմաստուն նախազգուշացումները՝ «մուրճի ու սալի» արանքում ձգմվելու վտանգի մասին:

Ավելին՝ անցած 30-ամյակում մենք անտեսել ենք այն իրողությունը, որ եթե 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը չուներ իր իրավունքի ուժը ուժի իրավունքի վերածելու ռեալ հնարավորություններ, ապա Հայաստանի 1991 թ. անկախացումը ստեղծեց նման խնդրի լուծման բոլոր անհրաժեշտ նախադրյալները, որոնցից այդպես էլ չփորձեցինք օգտվել: 1970-1980-ական թվականներին Հայաստանում աննախադեպ մակարդակի էր հասել անօդաչու թռչող սարքերի նախատիպերը պատրաստող ավիամոդելիզմը, անկախացումից ընդամենը մի քանի տարի առաջ մեր գործարաններում ատոմային սուզանավերի մասեր էին արտադրվում, գործում էր լազերային տեխնիկայի ինստիտուտ, իսկ հայ գիտնականներն առանցքային դիրքեր էին զբաղեցնում միջուկային ֆիզիկայի բնագավառի առաջամարտիկ մերձմոսկովյան Դուբնայում և խորհրդային ռազմաարդյունաբերության նախագծային ու արտադրական ամենակարևոր հաստատություններում: Այսինքն՝ 1991 թվականին Հայաստանն ու հայությունը իրենց որակական ռեսուրսներով ու դրանց ընծեռած գիտատեխնոլոգիական հնարավորություններով գերազանցում էին ոչ միայն Ադրբեյջանին, այլև Թուրքիային, որից շարունակում էինք ակնկալել իրավունք՝ մեր ուժը բազմապատկելու փոխարեն:

Մինչդեռ նոր հազարամյակի մոտենալուն զուգահեռ՝ ձևավորվում էր մի նոր մրցակցային միջավայր, որտեղ ազգ-պետությունների հզորությունը չափվում էր ոչ թե երկրի բնակչության և համախառն ներքին արդյունքի քանակական ցուցանիշներով, այլ մարդկային մտքի և նորագույն տեխնոլոգիաների վրա հիմնվող որակական ռեսուրսների առկայությամբ, որոնք շարունակաբար կուտակելու փոխարեն՝ մենք փոշիացրինք այդ ասպարեզում ունեցած առեղծվածի հնարավորությունները՝ հույսներս դնելով խորհրդային ժանգոտած տանկերի վրա:

Տեսանելի ապագայում ևս ուժի քանակական ցուցանիշներով ոչ միայն չենք կարող համեմատվել մեր հիմնական հակառակորդների հետ, այլև բնական ռեսուրսների սակավության ու ժողովրդագրական աղետալի կացության պատճառով շարունակելու ենք հետ մնալ նրանցից: Ուստի՝ միջազգային ասպարեզում մեր իրավունքի ուժը հիմնավորող դիվա-

նագիտական ու լոբբիստական գործունեությանը զուգահեռ, այսօրվանից պետք է պատրաստվենք մեր ուժի իրավունքը հաստատելու համար անհրաժեշտ՝ հրատապ քայլերի իրականացմանը, որոնք անցած 30-ամյակում մոռացության ենք մատնել: Դա տեղի է ունեցել Ռուսաստանի պաշտպանական վահանի տակ ընդարմանալու, նրա կողմից Հայաստանում հաստատված իշխանության քրեաօլիգարխիկ բնորոշին տրվելու, իսկ վերջում էլ Թուրքիայի հետ առևտրի մանրադրամի վերածվելու պատճառով:

Ժամանակն է, որ ուղղենք նաև մեր իսկ ձեռքով արված ռազմավարական սխալը՝ 1991 թվականին միմյանցից տարանջատված ու հանգրվանային ռազմավարության տիրույթ տեղափոխված Արցախի հարցը և Սևրի պայմանագրով ու Վ. Վիլսոնի իրավարար վճռով ամրագրված՝ մեր հիմնական իրավունքների վերականգնման խնդիրը դիտարկելով որպես **մեկ ամբողջություն**: Այդ մեկ ամբողջության՝ Միացյալ Հայաստանի դիրքերից հանդես գալու նախնական և առաջնահերթ պայմանը նրա ձևավորումը Հայոց ցեղասպանության միջոցով կասեցվելու անհերքելի իրողության քաղաքականացումն ու միջազգայնացումն է **կյանքի իրավունքի** գերակայության սկզբունքի առաջադրման միջոցով: Այն ենթադրում է նոր ցեղասպանության սպառնալիքին անհամաչափ պատասխան տալու մեր պարտականությունը հիմնավորելու համար ցանկացած միջոցի դիմելու, այդ թվում՝ ատոմային զենք ունենալու իրավունքի լեգիտիմացում: Իսկ նույն առաջադրանքի իրականացման քաղաքական ուղին հստակեցնելու համար պետք է արձանագրենք, որ մինչ մենք փորձում էինք ԵԱՀԿ Մինսկի խմբի միջոցով «մազի կամուրջ» գցել իրավունքի ուժի և ուժի իրավունքի միջև, մեր զարմացած աչքերի առջև սկիզբ առավ հետխորհրդային հակամարտությունների ականապատված գոտիների պայթեցման գործընթացը: Ուստի այսօր, երբ միջազգային իրավունքի դաշտում կոլեկտիվ Արևմուտքն ամրագրում է ԽՍՀՄ-ից առանձնացած երկրների տարածքային ամբողջականության սկզբունքը, մենք պետք է ունենանք դրա իրացման սեփական բանաձևը: Արցախը եղել է 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված տարածքը, և դեռևս 1920 թ. փետրվարին՝ Սևրի պայմանագրի ստորագրումից առաջ, Ազգերի լիգայի համապատասխան հանձնաժողովը ճանաչել է այն Հայաստանի Հանրապետությանը միավորելու մեր իրավունքը, իսկ փոքր-ինչ ավելի ուշ Ազգերի լիգան հրաժարվել է Ադրբեջանին ընդունել իր շարքերը Արցախի հարցի պատճառով: Ավելին՝ Սևրի պայմանագիրն ու Վ. Վիլսոնի իրավարար վճիռն իր տրամաբանական ավարտին են հասցրել Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության իրավաքաղաքական հիմքերի ձևավորումը:

Ուրեմն՝ միջազգային իրավունքի դաշտում մենք իրականում ունենք ոչ թե բոլշևիկների 1921 թվականի դարաբաղյան սխալն ուղղելու, այլ Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված տարածքային ամբողջականությունը վերականգնելու խնդիրը, որը ջնջում է «ներքին» ու «արտաքին» հողերի միջև ստեղծված արհեստական անջրպետը:

Անշուշտ, Հայաստանի վերանկախացումից հետո ստիպված էինք հետխորհրդային տարածքում առկա հակամարտությունների գոտիները տարանջատել Սևրի պայմանագրով ու Վ. Վիլսոնի իրավարար վճռով մեզ պատկանող տարածքների հանդեպ պահանջատիրությունից, քանի որ դրանք աշխարհաքաղաքական տարբեր դաշտերում էին հայտնվել: Բայց երբ այժմ Լենին-Աթաթուրք նոր գործարքի միջոցով փորձ է արվում վերականգնել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ակնհայտ է դառնում, որ մենք գործ ունենք հետխորհրդային աշխարհաքաղաքական իրողությունների խարխլված շենքի փլուզումը կանխելու անհմաստ ջանքերի հետ: Ուստի պատահական չէ, որ այսօր Ռուսաստանի ընդդիմությունն ու մտավորականությունը խիստ դժգոհ են Ղարաբաղյան երկրորդ պատերազմում սեփական երկրի ղեկավարության որդեգրած պահվածքից: Այստեղ տեղի է ունենում առաջադիմական ու հայրենասիրական ընտրախավերի համախմբումը՝ մոսկովյան վարչակարգի դեմ, որը շարունակում է համառել Թուրքիային արվող զիջումների միջոցով արևմտյան քաղաքակրթական տարածքի ընդլայնումը կանխելու իր անհեռանկարային քաղաքականության մեջ: Դրան գումարվող՝ ԱՄՆ-ում դեմոկրատների հաղթանակն անխուսափելի է դարձնում իր «կայսերական հմայքը» կորցրած Ռուսաստանի քաղաքակրթական դիմաշրջումն ու վերադարձը եվրոպական մեծ ազգերի ընտանիք: Արդեն հասունացած այդ մեծ շրջադարձը ստեղծելու է Հայկական հարցի վերաբացման համար անհրաժեշտ աշխարհաքաղաքական նոր միջավայրի հիմքը, որովհետև ԽՍՀՄ կարոտախտի փոխարեն՝ սեփական ազգային շահերը բյուրեղացնող նոր Ռուսաստանը դառնալու է Թուրքիայի մահացու թշնամին:

Նման պայմաններում Հայ Դատի պայքարի հեռանկարները կախված են նրանից, թե որքանով մեզ կհաջողվի պահպանել Հայաստանի արտաքին ու մանավանդ ներքին անկախությունը և նրա քաղաքական ղեկավարության ու հիմնական քաղաքական ուժերի շրջանում ձևավորել համազգային կոնսենսուս՝ տեխնոլոգիական հասարակություն դառնալու համար անհրաժեշտ տնտեսական ու մշակութային առաջնահերթությունների շուրջ: Միայն հայոց մտավոր ու ճարտարագիտական հանձարի վրա հիմնվող մրցունակ հասարակության ձևավորման և մեզանում տասնամյակնե-

րով կուտակված որակական ռեսուրսների՝ գիտության ու նորագույն տեխնոլոգիաների զարգացման միջոցով մեր հակառակորդների հանդեպ գիտատեխնոլոգիական գերակայության հասնելով, մենք կարող ենք երաշխավորել Արցախի անվտանգությունը և ապահովել Սևրի պայմանագրով ու Վ. Վիլսոնի իրավարար վճռով մեզ պատկանող տարածքների ազատագրումը՝ իրավունքի ուժը ուժի իրավունքի հետ զուգորդելու ճանապարհով:

Summary

THE TREATY OF SÈVRES AND THE ARBITRARY AWARD OF US PRESIDENT W. WILSON

A critical view from a distance of 100 years

Until 1918, the subject of the Armenian Issue was the liberation of Western Armenia, which bore the country name “Armenia” in international diplomatic documents. The geographical borders of Armenia (Western Armenia) were specified in the documents submitted by the Armenian delegation to the Congress of Berlin in 1878, and especially in the May 1895 reform program adopted by the representatives of the European powers – Russia, Great Britain and France on May 11, 1895. The May Reform Program marked the specific borders of Armenia (Western Armenia) within the six vilayets of the Ottoman Empire. However, on the eve of World War I, when the task of partitioning the Ottoman Empire began to be on the agenda of the great powers, their diplomatic struggle ended with the signing of a Russian-Turkish agreement on Armenian reforms as of January 26, 1914 (February 8), in Constantinople, by the Grand Vizier Said Halim Pasha and the Russian Chargé d’Affaires Kostandin Gulkevich. According to that agreement, Armenia (Western Armenia) was divided into two regions: a) Sebastia, Erzurum, Trabzon vilayets and b) Bitlis, Van, Kharberd, Diyarbakir vilayets. Thereby, Trabzon was added to the six vilayets of Western Armenia. Armenia’s independence on May 28, 1918, and the defeat of the Ottoman Empire in World War I brought the vision of a United and Independent Armenia to the diplomatic agenda. At the initial stage of the Paris Peace Conference, it was discussed as a “Great Armenia” project, including Armenian Cilicia with access to the Black and Mediterranean seas. But the aggravation of the struggle between France and Great Britain led to the emergence of a project to create “Little Armenia” through joining with the Republic of Armenia most of the Van, Bitlis and Erzurum vilayets and part of the Trabzon vilayet to ensure access to the Black Sea. The peace treaty signed in Sèvres on August 10, 1920 between the victorious States and the Ottoman Empire

legally secured the rights of the Republic of Armenia over these territories.

Thus, all the arguments about the creation of “Great Armenia” under the Treaty of Sèvres do not have a scientific basis. On the contrary, according to the Treaty of Sèvres, Western Armenia and Armenian Cilicia were divided into three parts between the Republic of Armenia, the Ottoman Empire and the future Kurdish state.

The Treaty of Sèvres signed as of August 10, 1920 was considered by Armenian socio-political thought exclusively in the context of Articles 88-93, which are directly related to Armenia. This was quite natural, as these articles restored the right of the Armenian people to their homeland, a part of Western Armenia. Mentioned articles of the Treaty of Sèvres de jure recognized not only the Republic of Armenia including the Armenian provinces of Transcaucasia, but also the United Armenia uniting Eastern and Western Armenia. The signatory states, including the Turkish state that was defeated in the First World War, recognized the independence of the United Armenia and agreed to expand the borders of Armenia by annexing most of the territories of the provinces of Erzurum, Van and Bitlis, as well as part of the province of Trabzon, thus ensuring the exit of Armenia to the Black Sea.

In addition to these articles, the peace Treaty of Sèvres contains a number of important articles on the restoration of the violated rights of the non-Turkish population of the Ottoman Empire including the Armenians. Although the words “Armenia” or “Armenian” are missing in Articles 125, 142, 144, 285 and 288 of the Treaty of Sèvres, it is obvious, that they also directly refer to the restoration of the violated rights of the Ottoman Armenians and their descendants.

According to Articles 226, 228 and 230 of the Treaty, criminal liability was provided against high-ranking Turkish officials not only for war crimes, but also for crimes against humanity, which primarily meant genocide against Armenian population of the Ottoman Empire. A comprehensive analysis of these articles will make it possible to clarify the international obligations undertaken by the criminal Turkish state under the Treaty of Sèvres, as well as to discuss the prospects for implementing the mechanisms proposed in the document to restore the violated rights and property damage of the Armenian population who became victims of the crime of genocide.

Although the Treaty of Sèvres was not ratified, some of its provisions were partially implemented by the signatory states. The Treaty of Sèvres was not replaced by the Treaty of Lausanne, since both the parties to these two documents, also their subject matter, are not identical.

The decision to delimit the territories of the Ottoman Empire and the Republic of Armenia was to be implemented by US President Woodrow Wilson on the basis of the April appeal of the conference of the victorious powers in San Remo and the corresponding article of Treaty of Sèvres. The Committee upon the Arbitration of the Boundary between Turkey and Armenia had been raised by the U. S. Department of State in July, 1920, as far as the President W. Wilson had accepted on May 17 a proposal, made by the Supreme Council of the Paris Peace Conference to arbitrate the frontier between two States. The Committee got documentation of the Commission upon the Armenian Borders of the London Conference (convened on February 12 – April 10, 1920), including three notes “On the Borders of Armenia”, produced with participation of Major General G. Korganian and submitted by the Armenian Integral Delegation of A. Aharonian and Boghos Nubar, as well as the materials of the San Remo Conference (convened on April 18 – 26 of the same year). On May 22 the Department of State got a memorandum with the map, composed by the Chief of the Military Mission of the Republic of Armenia into the USA, Major General H. Bagratuni which was officially approved at the Governmental session in Yerevan by August 19, 1920.

The first meeting of the Committee upon the Boundary took place on August 10, 1920. Its experts W. L. Westerman, L. Martin and H. G. Dwight actively collaborated with H. Bagratuni; they shared his approaches and cartographic solutions. On September 28 experts had delivered their “Full Report” to the Department of State; they included recommendations on the demilitarization of the boundary and their version of the map. On November 11 their work had been handed to the White House. W. Wilson had signed the final copy as a “Decision of the President of the United States of America Respecting the Frontier Between Turkey and Armenia, Access for Armenia to the Sea and the Demilitarization of the Turkish Territory Adjacent to the Armenian Frontier” on November 22, 1920. This document is based upon the

project of H. Bagratuni, although the U.S. President's design had allotted Armenia more territory, especially on the coast of the Black Sea. Thus, published on November 22, 1920, the Arbitral Award of US President Woodrow Wilson is to this day the only legal document defining the border between the heiress of the Ottoman Empire – the Republic of Turkey and the Republic of Armenia.

The arbitration initiated on the issue of the Armenian-Turkish border started on the basis of the political decision and will of the victorious powers was carried out in accordance with the current international legal norms of the time. Thus, Article 54 of the 1899 Hague Convention for the "Peaceful Settlement of International Conflicts" amended in 1907, states that if the arbitral award has been rendered in accordance with the procedure, the agents of the parties have been notified and the dispute shall be settled. is not subject to reversal once and for all. In the spirit of arbitration, the decision of the arbitrator is accepted by the parties as obligatory, of course, it is not subject to ratification. The arbitral award shall give rise to appropriate legal repercussions for its participants. Applying for arbitration, the parties agreed that the arbitrator's decision would be final, and therefore undertook to respect it. The arbitral award made by US President Woodrow Wilson on the demarcation of the Armenian-Turkish border is an international legal document by which Ottoman-era Turkey, subject to legal rights, was held politically responsible for the Armenian Genocide. This document deprives Turkey of its sovereignty over its former territories. By the logic of the arbitral award, only the exclusion of the Turkish rule over the former victim in that area and the restoration of the rights of the Western Armenians who were victims of the genocide in a part of their historical homeland can become a basis for their return and normal life. Therefore, from the point of view of international law, the arbitral award of US President Woodrow Wilson is a very relevant document, which can be a serious challenge not only to condemn the Armenian Genocide but for the Armenian claim to solve the problem of overcoming the consequences of this crime against the Armenian people.

Резюме

СЕВРСКИЙ ДОГОВОР И АРБИТРАЖНОЕ РЕШЕНИЕ ПРЕЗИДЕНТА США В. ВИЛЬСОНА:

аналитический взгляд со 100-летнего расстояния

До 1918 года предметом Армянского вопроса была проблема освобождения Западной Армении, которая в дипломатических документах фигурировала под названием «Армения». Географические рамки Армении (Западной Армении) были уточнены в документах армянской делегации, представленных Берлинскому конгрессу в 1878 году и особенно в программе Майских реформ 1895 года, принятой представителями европейских держав - России, Великобритании и Франции 11 мая 1895 года. Программа Майских реформ обозначила конкретные границы Армении (Западной Армении) в рамках шести вилайетов Османской империи. Но когда накануне Первой мировой войны на повестку великих держав встал вопрос раздела Османской империи, дипломатическая борьба завершилась подписанием русско-турецкого соглашения о реформах в Армении, подписанного 26 января (8 февраля) 1914 года в Константинополе великим везиром Саид Халим-пашой и поверенным в делах России Константином Гулкевичем. В соглашении 26 января (8 февраля) 1914 года Армения (Западная Армения) была разделена на два сектора: а) Сивасский, Эрзерумский и Трапезундский вилайеты, б) Битлисский, Ванский, Харбердский и Диарбекирский вилайеты. Таким образом, к шести вилайетам Западной Армении присоединялся и Трапезундский вилайет.

После восстановления независимости Армении в мае 1918 года и окончания Первой мировой войны встал вопрос создания Единой и Независимой Армении. На первом этапе Парижской мирной конференции обсуждался проект создания Великой Армении путем присоединения к шести собственно армянским вилайетам Армянской Киликии с выходом к Черному и Средиземному морям. Но обострение борьбы между Францией и Великобританией привело к тому, что возник проект создания Малой Армении путем присоединения к Республике Армения большей части Ванского, Бит-

лисского и Эрзерумского вилайетов и части Трапезундского вилайета для обеспечения выхода к Черному морю. Подписанный в Севре 10 августа 1920 года мирный договор между странами-победителями и Османской империей юридически закрепил права Республики Армения именно на эти территории.

Таким образом, все рассуждения о том, что по Севрскому договору предусматривалось создание Великой Армении, не имеют научного основания. Наоборот, по Севрскому договору Западная Армения и Армянская Киликия были разделены на три части между Республикой Армения, Османской империей и будущим курдским государством.

В армянской историографии и общественно-политической мысли Севрский договор 10 августа 1920 года обсуждался главным образом в контексте статей 88-93, непосредственно относящихся к Армении. Это было вполне естественно, поскольку этими статьями восстанавливалось право армянского народа на его родину - часть Западной Армении. Упомянутыми статьями Севрского договора де-юре признавалась не Республика Армения, включающая армянские области Закавказья, а Единая Армения, объединяющая Восточную и Западную Армению. Подписавшие договор государства, в том числе потерпевшее поражение в Первой мировой войне турецкое государство, признавали независимость Единой Армении и соглашались на расширение границ Армении за счет присоединения большей части территорий Эрзерумского, Ванского и Битлисского вилайетов, а также части Трапезундского вилайета, таким образом обеспечивая выход Армении к Черному морю.

Помимо этих статей, Севрский мирный договор содержит также ряд важных статей о восстановлении нарушенных прав нетурецкого населения Османской империи, в том числе армян. Хотя слова «Армения» или «армяне» в статьях 125, 142, 144, 285 и 288 Севрского договора отсутствуют, очевидно, что они непосредственно относятся также к проблеме восстановления нарушенных прав османских армян и их потомков.

Согласно статьям 226, 228 и 230 договора была предусмотрена уголовная ответственность для высокопоставленных турецких чиновников не только за совершение военных преступлений, но и преступлений против человечества, под которым в первую очередь

предполагался геноцид, совершенный в отношении армянского населения Османской империи. Всесторонний анализ этих статей позволяет уточнить международные обязательства, взятые на себя преступным турецким государством по Севрскому договору, а также обсудить возможности и перспективы реализации предложенных в документе механизмов восстановления нарушенных прав и возмещения материального ущерба, причиненного армянскому населению.

Несмотря на то, что Севрский договор не был ратифицирован, некоторые из его положений были частично реализованы подписавшими его государствами. Севрский договор не заменен Лозанским договором, поскольку как стороны этих двух документов, так и их предмет не идентичны.

Решение по разграничению территорий Османской империи и Республики Армения должен был осуществить президент США Вудро Вильсон на основе апрельского обращения конференции держав-победителей в Сан-Ремо. Комитет по арбитражу границы между Турцией и Арменией был сформирован в июле 1920 года Госдепартаментом США после того, как президент В. Вильсон принял 17 мая предложение Верховного совета Парижской конференции стать арбитром пограничного размежевания между двумя государствами. Комитет получил документы Комиссии по армянским границам Лондонской конференции (12 февраля – 10 апреля 1920 года), включая три ноты «О границах Армении», проработанные генерал-майором Г. Корганяном и представленные Единой армянской делегацией А. Агароняна и Погоса Нубара, а также материалы конференции в Сан-Ремо (18 – 26 апреля того же года). 22 мая в Госдепартамент были направлены меморандум и карта начальника военной миссии Республики Армения в США генерал-майора А. Багратуни, официально одобренные 19 августа 1920 года правительством РА.

Первое заседание Комитета по границе состоялось 10 августа 1920 года. Его эксперты В. Л. Вестерман, Л. Мартин и Г. Г. Дуайт тесно сотрудничали с А. Багратуни, разделяя его подходы и картографические решения. 28 сентября они вручили Госдепартаменту «Полный доклад» с рекомендациями демилитаризации новой границы и своим вариантом карты. 11 ноября их работу передали в

Белый дом. 22 ноября 1920 года В. Вильсон подписал окончательный экземпляр как «Решение президента Соединенных Штатов Америки относительно границы между Турцией и Арменией, выхода Армении к морю и демилитаризации турецкой территории, прилегающей к армянской границе». В основе этого документа лежит разработка А. Багратуни, хотя вариант президента США выделил Армении больше территории, в частности, на черноморском побережье.

Таким образом, опубликованное 22 ноября 1920 года Арбитражное решение президента США Вудро Вильсона по сей день является единственным юридическим документом, определяющим границу между наследницей Османской империи - Турецкой Республикой, и Республикой Армения.

Предпринятый и реализованный по вопросу армяно-турецкого размежевания арбитражный процесс был начат на основе политического решения и воли победивших держав на конференции в Сан-Ремо и проведен в соответствии с действующими в то время международными юридическими нормами. Так, в статье 54 Гаагской конвенции 1899 года «О мирном решении международных столкновений» и статье 81 той же конвенции в редакции 1907 года отмечается, что если арбитражное решение было вынесено в установленном порядке и об этом были проинформированы агенты сторон, то обсуждаемый спор разрешается окончательно и беспелляционно. Согласно духу арбитража, стороны воспринимают решение арбитра как обязательное и, естественно, оно не подлежит ратификации. Из арбитражного решения вытекают юридические последствия для участников. Потому что обращаясь к арбитражу, стороны согласились, что решение арбитра будет окончательным, и соответственно обязались уважать его.

Арбитражное решение, вынесенное президентом США Вудро Вильсоном по размежеванию армяно-турецких границ, представляет собой международно-правовой документ, которым правопреемница Османской империи Турция была привлечена к политической ответственности за осуществление Геноцида армян. Этим документом Турция лишается господства над частью своих бывших территорий. По логике арбитражного решения, только исключение власти турок над своей жертвой на этой территории и восстано-

ление прав западных армян, являющихся жертвами геноцида на части их исторической родины, могут стать основой для их возвращения и нормальной жизнедеятельности. Следовательно Арбитражное решение президента США Вудро Вильсона с точки зрения международного права является вполне актуальным документом, могущим быть серьезным аргументом не только для осуждения Геноцида армян, но и для армянских требований, направленных на решение проблемы преодоления последствий этого преступления в отношении армянского народа.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան (Գևորգ Ս. Խուդինյան)Յ

Գլուխ առաջին

ՀԱՅԿԱ ԿԱՆ ՀԱՐՑԻ ԶԵՎԱԿՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ՝

Սան Ստեֆանոյի պայմանագրից մինչև Սան Ռեմոյի կոնֆերանս

1. Հայաստանի (Արևմտյան Հայաստանի) սահմանների ու կարգավիճակի միջազգային-քաղաքական ընկալումները 1878-1895 թթ.
(Սամվել Ա. Պողոսյան).....13
2. Առաջին աշխարհամարտի նախօրեին Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման փորձերը և դրանց արդյունքները
(Սամվել Ա. Պողոսյան).....22
3. Դիվանագիտական պայքարը Առաջին աշխարհամարտի տարիներին
(Սամվել Ա. Պողոսյան).....26
4. Հայաստանի անկախացումը և Միացյալ ու Անկախ Հայաստանի տեսլականը (Սամվել Ա. Պողոսյան)34
5. Սան Ռեմոյի կոնֆերանսը որպես Սևրի պայմանագրի և Վ. Վիլսոնի իրավարար վճռի քաղաքական մեկնակետ (Արմեն Ց. Մարուքյան).....45

Գլուխ երկրորդ

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ.

քաղաքական բովանդակությունն ու

միջազգային-իրավական կարգավիճակը (Արմեն Ց. Մարուքյան)

1. Հայրենիքի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների ճանաչումը.....50
2. Հայաստանի Հանրապետության և ապագա քրդական պետության սահմանների հստակեցումը.....56
3. Օսմանահպատակ հայերի անհատական իրավունքների վերականգնման խնդիրը58

4. Օսմանահպատակ հայերին հասցված նյութական վնասների հատուցման խնդիրը	60
5. Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածները	63
6. Սևրի պայմանագիրը վերանայելու 1921 թ. ձախողված փորձը և դրա հարաբերակցությունը Լոզանի պայմանագրի հետ	70
7. Մասամբ գործադրված Սևրի պայմանագրի միջազգային-իրավական լեգիտիմությունը	76

Գլուխ երրորդ

**ԱՆՆ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՎԻՍՈՆԻ ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃԻՌՆ ԵՎ
ԴՐԱ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Հայաստանի սահմանի հարցով Վ. Վիլսոնի կոմիտեի գործունեությունը (Գայանե Գ. Մախմուրյան)	81
2. Հայաստանի սահմանի հարցով Վ. Վիլսոնի կոմիտեի զեկուցումը (Գայանե Գ. Մախմուրյան)	90
3. Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի էությունն ու միջազգային-իրավական կարգավիճակը (Արմեն Ց. Մարության)	99

Գլուխ չորրորդ

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՒՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԱՊԱՆՄԱՆ
ՀԱՄԱՐ (Արարատ Մ. Հակոբյան)103**

1. 1920 թ. օգոստոսի 24-ի Մոսկվայի ռուս-թուրքական «բարեկամության» նախնական պայմանագիրը որպես առաջին լուրջ հակազդեցություն Սևրին.105	
2. Սևրի պայմանագիրը որպես 1920 թ. թուրք-հայկական պատերազմի գլխավոր շարժառիթ	112
3. Բ. Լեգրանի առաքելությունը և 1920 թ. հոկտեմբերի 28-ի հայ-ռուսական համաձայնագիրը	117

4. Սևրի պայմանագրի հարցը 1921 թ. Մոսկվայի ռուս-թուրքական 2-րդ խորհրդաժողովի նախապատրաստական փուլում: Գ. Զիչերինի «հիմարությունը» 123
5. Անդրադարձներ Սևրի պայմանագրին Մոսկվայի ռուս-թուրքական 2-րդ խորհրդաժողովում և 1921 թ. մարտի 16-ի (18-ի) պայմանագրում 127

Գլուխ հինգերորդ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԵՎՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԼՈՋԱՆ

1. Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը Հայկական հարցում՝ 1920-1923 թթ (Լիլիթ Հ. Հովհաննիսյան)..... 133
2. Բրիտանական դիվանագիտությունը և քրդական հարցը՝ Փարիզի Խաղաղության վեհաժողովում (Արամ Ս. Սայիյան)..... 158

Գլուխ վեցերորդ

ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՆԽԱՒՏ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ

1. Սևրի պայմանագիրը 1920-1930-ական թթ. սփյուռքահայ քաղաքական մտքի գնահատմամբ (Խաչատուր Ռ. Ստեփանյան)..... 185
2. Սևրի պայմանագրի ու Վ. Վիլսոնի իրավարար վճռի արժարժույթները Հայ Դատի հետապնդման գործընթացում (1943-1991 թթ.) (Քրիստինե Ֆ. Մելքոնյան)..... 208
3. Սևրի պայմանագրի դրույթների կիրառման իրավաքաղաքական հնարավորությունները Հայաստանի անկախության վերականգնումից հետո (Արմեն Ց. Մարուքյան) 223
4. Իսպանիայի թագավոր Ալֆոնս XIII-ի իրավարարության վերաբերյալ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի որոշումը՝ որպես Վ. Վիլսոնի իրավարար վճռի կիրառման միջազգային-իրավական նախադեպ (Արմեն Ց. Մարուքյան) 227

Վերջաբան. իրավունքի ուժը և ուժի իրավունքը (Գևորգ Ս. Խուդինյան).....	234
Summary	239
Резюме	243

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ
ՈՒ
ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՎԻՍՈՆԻ
ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃԻՌԸ.

քննական հայացք 100-ամյա հեռավորությունից

Ստորագրուած է տպագրութեան՝ 25.12.2020:
Չափսը՝ 70X100 1/16, 16.25 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 500:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ



հրատարակչություն

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Հեռ.՝ 055-52-79-74

Էլ. փոստ՝ lusakn@rambler.ru